

Լ. Եգեկյան

Ա. Սարգսյան

Ռ. Սարապետյան

Հայոց Եզու

10

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075)

ԳՄԴ 81.2h g72

Ե 192

Ե 192

Հայոց լեզու 10: Ավագ դպրոցի հումանիտար հոսքի 10-րդ դասարանի դասագիրք /Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաբապետոյան/ -Եր.: Մակմիլան-Արմենիա, 2009. - 224 էջ:

Խմբագիր՝ Լ. Հովսեփյան
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



ISBN 978-9939-62-006-0

ԳՄԴ 81.2h g72

© Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաբապետոյան, 2009

© Մակմիլան-Արմենիա, 2009

© Պետական գնումների գործակալություն, 2009



ՀԱՅՈՑ ԼԵՉՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայերենը աշխարհի հնագույն լեզուներից է: Նրա ձևավորումը համընկնում է հայ ժողովրդի կազմավորմանը և գալիս է վաղնջական ժամանակներից: Խեթական և ասուրաբաբելական արձանագրությունները վկայում են, որ հայերը՝ իբրև ցեղային առանձին խմբավորումներ, Հայկական բարձրավանդակում երևացել են Ք.ա. երրորդ հազարամյակում, սակայն իբրև էթնիկ ամբողջականություն՝ նրանք հայտնի են դառնում Ք.ա. 8-7-րդ դարերից: Այդ շրջանում ստեղծված նպաստավոր պայմանների շնորհիվ նախահայկական պարզ ցեղային միությունները և առանձին ցեղերը միավորվելով ստեղծում են իրենց պետականությունը և կազմավորում հայ ժողովրդին, որին ժամանակի մի շարք ժողովուրդների անվանել են **արմեններ**, իսկ երկիրը՝ **Արմենիա**: Այս անվանումը հետագայում տարածվել է աշխարհի շատ լեզուներում: Իսկ մեր ժողովրդի **հայ** ինքնանվանումը ավանդությունը կապում է **Հայկ Նահապետի** անվան հետ: Անցնելով պատմական զարգացման երկարատև ընթացք՝ հայերենը միշտ էլ եղել է աշխարհի առաջավոր լեզուների շարքում և համընթաց է քայլել ժամանակին: Եվ այսօր էլ մեր լեզուն բռնել է ժամանակի քննությունը. նա առաջավոր գիտության, մշակույթի ու գրականության, հանրակրթության և բարձրագույն դպրոցի, կինոյի ու թատրոնի լեզու է:

Վարժություն 1: Սովորե՛ք անգիր Ե. Զարենցի «Մեր լեզուն» բանաստեղծությունը:

Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին
Պայծառ է նա որպես մշտաբորբոք փարոս՝
Վառված հրով անշեջ դարերում հին: –

Եվ վարպետներ՝ խոնարհ ու հանճարեղ,
Հղկել են այն դարեր, որպես մարմար,
Եվ փայլել է նա մերթ ինչպես բյուրեղ,
Մերթ կոպտացել, ինչպես լեռնային քար:



Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին, –
Եվ եթե մենք այսօր կոտրատում ենք այն մերթ –
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր
Նոր խոհերի վրա ժանգ չչոթի: –

Այդ նրանից է, որ մեր այսօրվա ոգուն
Այլևս չի կարող լինել պատյան
Ո՛չ Տերյանի բարբառը նվագուն,
Ո՛չ Նարեկի մրմունջը մագաղաթյա:

Եվ ո՛չ անգամ Լոռու պայծառ երգիչ
Թումանյանի բարբառը գեղջկական, –
Բայց նա կգա – լեզուն այս երկաթյա բերքի
Եվ խոհերի այս խոր ու երկրակամ...

Գիտե՞ք, որ...

Աջխարհի ժողովուրդները խոսում են շուրջ 2000 լեզուներով,
որոնց մեջ հայերեն խոսողները գրավում են 38-րդ տեղը՝ շուրջ 7
միլիոն մարդ:

Միայն 13 լեզուներով խոսում է ավելի քան 3 միլիարդ մարդ:
Դրանք են ջինարենը, անգլերենը, իսպաներենը, ռուսերենը, գերմա-
ներենը, ճապոներենը, ինդոնեզերենը, պորտուգալերենը, ֆրանսե-
րենը, արաբերենը, բենգալերենը և իտալերենը: Հետևաբար, ովքեր
տիրապետում են այս լեզուներին, կարող են հաղորդակցվել մոլո-
րակի բնակչության կեսի հետ:

Կան լեզուներ, որոնցով հաղորդակցվում են տարբեր ժողովուրդ-
ներ: Այսպես՝ անգլերեն խոսում են ԱՄՆ-ում, Անգլիայում, Կանադա-
յում, Ավստրալիայում, Նոր Չելանդիայում: Գերմաներենով հաղոր-
դակցվում են Գերմանիայում և Ավստրիայում: Պատահում է նաև
հակառակը, Բելգիայում խոսում են և՛ ֆրանսերեն, և՛ ֆլամանդերեն:
Սուդանում գոյություն ունեն 117, իսկ Դադստանում՝ 60 լեզու-
ներ:

Այս առումով հետաքրքիր պատկեր ունի հայոց լեզուն. նրա
արևելահայ տարբերակը գործում է ՀՀ-ում և իրանի հայության մեջ,
իսկ արևմտահայերենը Սփյուռքի հաղորդակցման լեզուն է:

Մեծերը՝ հայոց լեզվի մասին

Ախ, լեզուն, լեզուն, լեզուն որ շըլի, մարդ ընչի՞ նման կըլի: Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը... Չեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնեմ, ձեր արևին դուրբան, տանը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը դայի՛մ բռնեցեք:

Խաչատուր Աբովյան

** * **

Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը:

Հովհաննես Թումանյան

ԼԵՉՈՒՆԵՐԻ ՃԵՂԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Տարբեր լեզուներով խոսող ժողովուրդները իրար չեն հասկանում, թեև նրանց լեզուները կարող են ցեղակից լինել, այսինքն՝ ծագած լինել մեկ աղբյուրից: XIX դարի սկզբին ձևավորվեց պատմահամեմատական լեզվաբանությունը, որի նպատակն էր պարզել լեզուների ծագումնաբանական կապերը և ուսումնասիրել դրանց պատմական զարգացումը: Լեզուների ցեղակցությունը որոշվում է պատմահամեմատական մեթոդի օգնությամբ:

Համաձայն այդ մեթոդի՝ աշխարհի լեզուներն ըստ ծագման խմբավորվում են տարբեր լեզվաընտանիքներում: Որոշ բառերի թռուցիկ համեմատությունն իսկ ի հայտ է բերում դրանց ծագումնաբանական ընդհանրությունը. գինի – вино, գիշեր – вечер, միս – мясо, սիրտ – сердце, ջիլ – жила, տասը – десять, դու – ты և այլն: Առանձնացվում են հնդեվրոպական, ֆիննաուգրական, թյուրքական, չին-տիբեթական և այլ լեզվաընտանիքներ, որոնցից յուրաքանչյուրի մեջ խմբավորվում են միևնույն մայր լեզվից սերող լեզուները:

Հնդեվրոպական լեզվաընտանիքը ամենալայն տարածում ունեցողն է: Նրա մեջ մտնող լեզուներով խոսող ժողովուրդները սփռված են Հնդկաստանից մինչև Եվրոպայի ծայր հյուսիս-արևմուտքը. այստեղից էլ գալիս է լեզվաընտանիքի անվանումը: Լեզվաընտանիքները բաղկացած են լինում լեզվախմբերից, որոնք միավորում են համեմատաբար ավելի

սերտ ազգակցական կապեր ունեցող լեզուները: Հնդեվրոպական լեզվա-
ընտանիքի մեջ են մտնում սլավոնական, ռոմանական, գերմանական,
հնդկական, իրանական և այլ լեզվախմբեր: Յուրաքանչյուր լեզվախմբի
մեջ մտնում են առավել մերձավոր ցեղակից լեզուներ: Սլավոնական
լեզվախմբի մեջ են մտնում ռուսերենը, ուկրաիներենը, բելառուսերենը,
սերբերենը, չեխերենը, սլովակերենը, սլովեներենը և այլն, ռոմանական
լեզուներից են ֆրանսերենը, իտալերենը, իսպաներենը, ռումիներենը և
այլն, իրանական են պարսկերենը, թաջիկերենը, քրդերենը, աֆղանե-
րենը, բելուջերենը և այլն:

Իսկ ի՞նչ դիրք է գրավում հայերենը հնդեվրոպական լեզվաընտա-
նիքում: Պատմահամեմատական մեթոդի առաջին նշանավոր ներկա-
յացուցիչները՝ Յ. Պետերմանը, Ֆ. Վինդիշմանը և ուրիշներ, առաջ էին
քաշում այն դրույթը, որ հայերենը պատկանում է հնդիրանյան (արիական)
լեզվախմբին: Նման եզրակացության նրանց հանգեցնում էր հայերենի ու
պարսկերենի բառային ընդհանրությունների մեծ թիվը: Իրոք, շուրջ 1600
տարվա համատեղ կյանքը չէր կարող անհետևանք անցնել: Լեզուները
փոխադարձաբար պիտի ազդվեին իրարից: Թվե՞նք մի քանի օրինակներ,
որոնք իրանյան փոխառություններ են. *ազատ, ազգ, ազդ, ախոռ, ախտ,
ամբար, ամբարտակ, ամբոխ, անապատ, աշակերտ, աշխարհ, աշխատել,
առատ, արագ, արձակ, ավան, ավանդ, բախտ, բժիշկ, գանձ, գույն, գունդ,
գրպան, դույլ, դրամ, զգույշ, ժամ, ժամանակ, կարագ, կարմիր, նվազ,
շապիկ, վնաս, վտանգ, քանդել, քուռակ, քսակ, օտար, օրենք* և այլն:

Սրանք ընդամենը մի չնչին մասն են իրանական փոխառությունների,
որոնց ամբողջությունն օտար հայագետներին մղում էր հայերենը համա-
բելու պարսկերենի մի ճյուղը: Սակայն 19-րդ դարի երկրորդ կեսին պատ-
մահամեմատական լեզվաբանությունը նոր, ավելի բարձր աստիճանի է
հասնում. հատուկ ուշադրություն են սկսում դարձնել լեզուների հնչյու-
նական օրենքներին, որոնց օգնությամբ հնարավոր էր տարբերել ծա-
գումնաբանական ընդհանրությունները փոխառություններից: Այդ նոր
մոտեցման կարկառուն ներկայացուցիչներից էր գերմանացի լեզվաբան
Հայնրիխ Հյուբշմանը, որը 1875թ. հրատարակած «Հայերենի դիրքը
հնդեվրոպական լեզուների շրջանում» հոդվածում ապացուցում է, որ
հայերենը հնդեվրոպական լեզուների մեջ ինքնուրույն լեզվաճյուղ է, իսկ
պարսկերենի հետ բառային ընդհանրությունները ոչ թե ծագմամբ են
պայմանավորված, այլ հետագա շրջանի փոխառություններ են: Այս
տեսակետը հետագայում լայն տարածում գտավ և այսօր ընդունված է
բոլորի կողմից: Այսպիսով՝ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի
մի առանձին ճյուղ է, ինչպես հունարենը և ալբաներենը:

Հայերենը
հնդեվրոպական
լեզուների
մեջ



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարժություն 2: Հնդեվրոպական լեզուների տոհմաճառի վրա ցոլյց տվեք հայերենի տեղը:

Վարժություն 3: Հր. Աճառյանի «Արմատական բառարանից» դ՛րս գրեք 10 բնիկ հայերեն բառ:

Վարժություն 4: Նույն բառարանից դ՛րս գրեք պարսկերենից փոխառյալ բառեր և դրանցով կազմե՛ք նոր՝ բարդացված կամ ածանցված բառեր:

ՀԱՅԵՐԵՆԻ ՉԱՐԳԱՃՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Հայերենը անցել է զարգացման երկարատև ուղի, սակայն մեր բուն գիտելիքները նրա մասին սկսվում են 5-րդ դարից, այսինքն՝ գրերի գյուտի պահից, երբ հայերենը դարձավ գրային լեզու, և այն հնարավոր դարձավ ամրագրել գրավոր հուշարձաններում և այդպես ավանդել ապագա սերունդներին: Մինչև գրերի գյուտը հայերենն անշուշտ գոյություն ուներ և զարգացած լեզուների կարգին էր պատկանում, քանի որ Տիգրան Մեծի աշխարհակալ կայսրության, Արտավազդի օրոք սեփական թատրոն ունեցող թագավորության լեզուն էր, սակայն նրա մասին մեզ շատ քիչ բան է հայտնի: Հայերենի այդ շրջանը, որ կոչվում է **Նախագրային հայերեն**, մեզ չի ավանդվել որևէ գրավոր հուշարձանի միջոցով: Այդ պատճառով էլ մեր փաստական-նյութական գիտելիքները հայերենի այդ փուլի մասին անբավարար են: Սուս պատմահամեմատական և վերականգնողական այլ մեթոդների շնորհիվ հնարավոր է դատողություններ անել հայերենի նախագրային շրջանի վերաբերյալ:

Գրերի գյուտից (405թ.) մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանի մեջ ընդունված է առանձնացնել հայոց լեզվի զարգացման երեք շրջան.

- ա) հին հայերենի,
- բ) միջին հայերենի,
- գ) աշխարհաբարի կամ նոր հայերենի:

Գրաբարը հայերենի հին շրջանի գրական մշակված տարբերակի անվանումն է, թեև հաճախ գործածվում է ընդհանրապես *հին հայերեն* իմաստով: Հին հայերենը հայ ժողովրդի համընդհանուր հաղորդակցման միջոցն է եղել 5-11-րդ դարերում:

Միջին հայերենը հաջորդել է գրաբարին և գործել է մինչև 16-րդ դարը: Այն կոչվել է նաև **կիլիկյան հայերեն**, քանի որ առավելաբար տարածված է եղել Կիլիկիայի հայկական թագավորությունում:

Աշխարհաբարը կամ **նոր հայերենը**, սկիզբ առնելով 17-րդ դարում, զարգացել ու վերջնականապես ձևավորվել է 19-րդ դարի առաջին կեսում և այսօր էլ հայ ժողովրդի հաղորդակցման միջոցն է: Աշխարհաբարը այսօր աշխարհին ներկայանում է երկու ճյուղով՝ **արևելահայերեն** և **արևմտահայերեն**:

ՓՐԱԲԱՐՅԱՆ ՇՐՅԱՆ

Մեր նախնիները իրենց լեզուն միշտ անվանել են **հայերեն**, իսկ **գրաբար** անվանումը առաջացել է ավելի ուշ, երբ ակներև եր դարձել հին գրական լեզվի և ժողովրդի խոսակցական լեզվի տարբերությունը:

Միջին հայերեն անվանումը ևս առաջացել է հետագայում, երբ առկա եր հայերենի երրորդ գոյավիճակը՝ աշխարհաբարը, ուստի լեզվի հին և նոր վիճակների միջև ընկած լեզվափուլը անվանվեց միջին հայերեն:

Հայերեն տառերով գրված առաջին նախադասությունը եղել է «Աստվածաշնչի»՝ «Առակաց գրքի» հետևյալ հատվածը, որի թարգմանությունը կատարել է Մեսրոպ Մաշտոցը. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ...»: Պատգամ հիշեցնող այս նախադասությունը հայ ժողովրդի ողջ գոյության ընթացում եղել է ուղենիշ, խոնարհում և ակնածանք Լույսի, Մտքի, Գիտության և Հանճարի նկատմամբ:

5-րդ դարում գրաբարը նախ եկեղեցական-կրոնական գրականության լեզու եր: Նրանով առաջին հերթին թարգմանվեցին «Աստվածաշունչ» մատյանը և կրոնական բովանդակությամբ այլ գրքեր: Ապա հանդես են գալիս հայ պատմիչները՝ ստեղծելով պատմագրական երկեր: Դրանք ունեն գիտական և գեղարվեստական բարձր արժանիքներ և մինչև այսօր էլ համաշխարհային բաղաբաղկություն մեջ պահել են իրենց ուրույն տեղը: Այդ երկերից են Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Կորյունի, Ղազար Փարպեցու և այլոց ստեղծագործությունները: Գրաբարը եղել է նաև գիտության լեզու: Այդ լեզվով են գրվել հայ նշանավոր փիլիսոփաներ Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի երկերը:



Գրաբարի գրությունն ու արտասանությունը

Գրաբարն ունեցել է արդի հայերենից տարբեր գրություն և արտասանություն: Գրերի ստեղծման ժամանակ բառերի գրությունը և արտասանությունը լիովին համընկնում էին, որը, սակայն, հետագայում խախտվեց: Լեզվի պատմական զարգացման ընթացքում կատարվեցին հնչյունափոխական տարբեր երևույթներ, որոնք խզում առաջացրին գրության և արտասանության միջև: Այսօր գրաբարյան բնագրերն ավելի ուշ ձևավորված ավանդական արտասանությամբ հնչում են մի փոքր այլ կերպ, քան գրաբարի կենդանի գործածության շրջանում: Նշենք գրաբարի գրության և արտասանության առավել կարևոր մի քանի կանոններ, որոնք կօգնեն գրաբար բնագրերը ճիշտ կարդալուն և արտասանելուն:

- Բառավերջում **ո** և **ա** ձայնավորներից հետո գրվում է **յ**, որն այսօր չի կարդացվում (*արքայ, շղթայ, ընծայ, երեկոյ*): **Յ**-ն չի գրվում մի քանի դեպքերում (*ասա՛, ապրեցո՛ր, սա, դա, նա, ապա, ահա* և այլն): Ինչպես տեսնում ենք, չի գրվում մի քանի դերանունների, հրամայական եղանակի բայերի և մի քանի այլ բառերի դեպքում:

- **Յ**-ն բառասկզբում և բառամիջում (եթե արմատի սկզբնատար է) արտասանվում է **հ**, օրինակ՝ *Յիսուս, յստակ, յղկել, անյայտ, սալայատակ* բառերը արտասանվում են *Հիսուս, հստակ, հղկել, անհայտ, սալահատակ* և այլն:

- **Ի** (և) (վյուն) տառը գրվում է բառամիջում երկու ձայնավորների միջև և բառավերջում **ա**, **ե**, **ի** ձայնավորներից հետո. արտասանվում է **վ**. *աւազ - ավազ, աւազ - ավազ, անիւ - անիվ, հարաւ - հարավ, արեւ - արև* և այլն:

- **Ու**-ն բառամիջում ձայնավորից առաջ արտասանվում է **վ**, օր.՝ *Աստուած - Աստված, տուի - տվի, արուեստ - արվեստ, պատուէր - պատվէր* և այլն:

- Բառավերջում միշտ գրվում է **է** և ոչ թե **ե**, օր.՝ *ափստ, բազէ, թուպէ, թէ, եթէ*:

Բառամիջում մի շարք բառերում գրվում է **է**, ինչպես օրինակ՝ *սէր, տէր, պարտեզ, գէս, սէզ, վէպ*: Բառերի այս ցանկը ավելի հեշտ է հիշել նրանց մեջ **է-ի** շեշտափոխական հնչյունափոխության շնորհիվ. *սէր - սիրել, տէր - տիրոջ, պարտեզ - պարտիզայան* և այլն:

- **Չ** նախդիրը բաղաձայնից առաջ պետք է արտասանել **ըզ**: Օր.՝ *զտուն - ըզտուն, զհաց - ըզհաց, զբանս - ըզբանս, զնա - ըզնա* և այլն:



Չրաբարի երկբարբառներն ու եռաբարբառները

Չրաբարում նույն վանկի սահմաններում **ա, ե, ի, ո** ձայնավորների և **ւ, յ** ձայնորդների կապակցություններով կազմվում էին երկբարբառներ և եռաբարբառներ:

Ոյ երկբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է **ույ**, ուստի *բոյս* պետք է կարդալ *բույս*, *գոյն՝ գույն*, *բոյր՝ բույր*, *նոյն՝ նույն* և այլն:

Իւ երկբարբառը բաղաձայնից առաջ կարդացվում է **յու**, հետևաբար *նիւթ* պետք է կարդալ *նյութ*, *սիւն՝ սյուն*, *արիւն՝ արյուն*, *քաջութիւն՝ քաջություն* և այլն:

Եւ երկբարբառը հնչումով նույնացել է **իւ** երկբարբառին: Մի բանի բառերի մեջ պահպանվում են դրանց գրության զուգահեռ ձևերը՝ *ալելւր – ալիւր (ալլուր)*, *հարեւր – հարիւր (հարյուր)* և այլն:

Աւ երկբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է **օ**. *աւձ՝ օձ*, *կարաւտ՝ կարօտ*, *աւր՝ օր* և այլն: Ներկայումս նաև զրաբարյան բնագրերում **աւ**-ը հաճախ փոխարինվում է **օ** գրով: Նման բառերից են՝ *ակօս*, *աղօթք*, *ամօթ*, *անօթ*, *դրօշ*, *թափօր*, *ծանօթ*, *կարօտ*, *ծօն*, *նօսր*, *սօսի*, *տօթ*, *ցօղ* և այլն: Բացառություն են *նաւթ*, *աղաւնի* բառերը, որոնցում այս հնչյունակապակցությունը կարդացվում է **ավ**:

Եա երկբարբառն արտասանվում է **յա**. *մատեան՝ մատյան*, *ատեան՝ ատյան*, *Սահակեան՝ Սահակյան* և այլն:

Եաւ եռաբարբառն արտասանվում է **յո** և հաճախ գրվում է նաև **եօ** տառերով. *արդեաւք (արդեօք) – արդյոք*, *ընտանեաւք (ընտանեօք) – ընտանյոք*, *կարծեաւք (կարծեօք) – կարծյոք* և այլն:

Եայ եռաբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է **յայ**. *հրեայք – հրյայք*, *քրիստոնեայք – քրիստոնյայք* և այլն: Այն բառավերջում արտասանվում է **յա**. *պաշտօնեայ – պաշտոնյա*, *քրիստոնեայ – քրիստոնյա* և այլն:

Իոյ եռաբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է **վույ**. *տեղւոյն – տեղվույն*, *պատանւոյն – պատանվույն* և այլն:



Գրաբարի բառապաշարը

Գրաբարի բառապաշարը պարունակում է երկու հիմնական բառաշերտ: Դրանցից առաջինը անվանում ենք **ընդհանուր հայերեն բառեր**: Մոտավոր հաշվարկներով ժամանակակից հայերենին է փոխանցվել գրաբարյան ընդհանուր բառապաշարի 40 տոկոսը: Սրանք այն բառերն են, որոնք հայ ժողովուրդը գործածել է հնագույն ժամանակներից մինչև այսօր, ինչպես՝ *հայր, մայր, եղբայր, հաց, ջուր, գնալ, վազել, ես, դու, հինգ, տասն, դեղին, արագ, դանդաղ* և այլն:

Նման բազմաթիվ բառեր պահպանել են իրենց հիմնական իմաստները, որոշ բառեր էլ, իմաստափոխվելով, ժամանակակից հայերենում հանդես են գալիս նոր իմաստներով, ինչպես հետևյալ օրինակներում.

ահագին նախապես նշանակում էր *ահագդու, ահեղ*, այսօր նշանակում է *հսկայական, վիթխարի*,

հաստոց նշանակում էր *անջրպետ*, այսօր նշանակում է *դազգահ*,

զվարթ նշանակում էր *հրեշտակ* (այստեղից էլ Չվարթնոց տաճարի անվանումը), այսօր՝ *ժիր, կայտառ*,

կառավարել բառն ուներ *կառք վարել*, իսկ այսօր՝ *ուղղություն տալ, դեկավարել* իմաստը,

օդապարիկ՝ *օդում սավառնող* (ծիուն տրվող մակդիր), այսօր՝ *թռչող սարք*:

Երկրորդ բառաշերտը կազմում են այն բառերը, որոնք գործածվել են միայն գրաբարում, ինչպես *յաղագս* (մասին, համար), *յազել* (զոհաբերել), *այտնուլ* (ուռչել), *անագան* (ետին), *անխայել* (խնայել), *արկանել* (1. ներել, 2. դիպչել) և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարժություն 5: Կարդացե՛ք ավանդական արտասանությամբ:

ա) Անյապաղ, Յակոբ, յաղագս (մասին, համար), յաղթել, յաճախ, յամառ, յայտնի, յանկարծ, յանցանք, յաջորդ, յառաջ, յատուկ, յարգել, յարմար, յետ, յիսուն, Յիսուս, յօգուտ, յոյն, յոյս, յորդ, յուշարար, յուսալ:

բ) Ագռաւ, անիւ, աւագանի, աւագ, բնաւ, խոնաւ, կաւ, հաւ, նաւ, շաւիղ, սակաւ, տաւիղ, տերւի, տիւ (ցերեկ):

գ) Անուանել, արուեստ, դժուար, Դուին, զանգուած, զինուոր, թշուառ, կռուել, յունուար, նուագ, նուէր, սուին, սրուակ, փետրուար:

դ) Ակամայ, անզգայ, անխնայ, արտաքոյ, արքայ, բացօթեայ, երկաթեայ, ընծայ, լումայ, խաբեբայ, ձուլածոյ, ներկայ, ներքոյ, շղթայ, պողոտայ:

Վարժություն 6: Գրե՛ք գրաբարյան ուղղագրությամբ:

Արբա, երեկո, ասա՛, կեցո՛, լումա, ակամա, գևա՛, շղթա, սա, մշտակա, անզգա, դա, Սառա, ընծա, ակամա, Եվդոկիա, ներքո, Ասիա, պատմեա՛, քուրա, ևոցա, շնաբարո, բացակա, մեծարգո, արեղա:

Վարժություն 7: Որոշե՛ք, թե նշված բառերում և բառաձևերում վ հնչյունը ի՞նչ տառով պետք է գրել՝ վ՛, և՛, թե՞ ու:

Արտասվել, ավագ, թիվ, հարավ, հովիվ, առվակ, թավ, լեզվի, նվագ, կավիճ, հարված, Աստված, Դավթի, նվաճել, բովանդակ, նավավար, ազնիվ, ծով, խավ, արթոռով, պատիվ, կողով, եվ, նվաճել, Նվարդ:

Վարժություն 8: Կարդացե՛ք ավանդական արտասանությամբ:

ա) Ալելը, աղիւս, առիւծ, արիւն, բիւր, գիւղ, գիւտ, գոչիւն, եղջեր, իւղ, իւր, իւրաքանչիւր, կորիւն, հարիւր, հիւր, նիւթ, սիւն, քաջութիւն:

բ) Ահեակ (ձախ), անցեալ, առաքեա՛, առաքեալ, դարձեալ, Դիմաքսեան, դղեակ, լեռոն, ծննդեան, մատեան, վայրկեան, ցորեան, որդեակ:

գ) Ախոյեան, անյոյս, ապացոյց, առոյգ, բարոյական, բոյս, գոյն, դոյլ, գայրոյթ, թոյն, լոյս, կոյտ, հաճոյանալ, համբոյր, հանգոյց, մակոյկ, յոյն, նշոյլ, ողկոյգ, ողջոյն, ուրոյն, քոյր:

դ) Ընտանեաւք, կարծեաւք, պատանեաւք, սիրելեաւք, տեղեաւք:

ե) Այգեստանւոյն, այգւոյն, երանելւոյն, լռելեայն, հոգւոյս, հրեայք, պաշտօնեայք, տարւոյն, քաւդեայք:

Վարժություն 9: Գրե՛ք գրաբարյան ուղղագրությամբ:

ա) Ազատություն, ավյուն, արյուն, դյուրին, թյուր, կորյուն, հյուր, հյուսել, մյուս, մրջյուն, յուր, յուրովի, նյուր, քաջություն:

բ) Երևույթ, զգույշ, թույն, լույս, կապույտ, կույս, համբույր, հույժ, հույն, հույս, ճկույթ, նույն, սառույց, քույր:

գ) Ատյան, արյան, արևելյան, լյարդ, կղզյակ, հոգյակ, մանյակ, մատյան, պատյան, սենյակ, սիրյա՛, տասնյակ, տեսյալ, քաջության:

ԴԱՊՈՒՆ
ԳՐԱԴԱՐԱՆ



Վարժություն 10: Գտե՛ք տրված բառերում հանդիպող երկբարբառները և նշե՛ք դրանց արտասանությունը:

Կարաւտ, կոյս, սիւն, ծնաւտ, հաճոյք, քոյր, ազատութիւն, դայեակ, լեառն, հայր, զաւրաւոր, պաշտաւն, մեւս, հարեւր, լոյս, աներեւոյթ, եղեամն, բոյն, մանեակ, լեարդ, հիւթ, մրջիւն, մեհեան, ուրոյն, գեւղ, ար, անձ:

Վարժություն 11: Զ նախդիր ունեցող հետևյալ բառերը կարդացե՛ք ճիշտ արտասանությամբ:

Զբանս, գտուն, գիաց, գերկիր, գանուն, գբոյր, գգիրս, գշանթ, գմեգ, գիս, գձեգ, գբաղաբ, գջուր, գկին, գամուսին, գծառ, գգետին, գփորձ, գառիւծ:

Վարժություն 12: Կարդացե՛ք, անգի՛ր սովորե՛ք ուսուցչի ընտրած գրաբար հատվածները:

ԳՐԱԲԱՐ

Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ:

Առակաց գիրք, Ա, 1-2

Թեպէտ և ենք ածու փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ և զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով անգամ նուճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս և արժանի գրոյ յիշատակի:

Մովսէս Խորենացի

Քանզի ոչ եթէ կողմ էր, որ յաղթեաց, և կողմ էր, որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան:

Եղիշէ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

Ճանաչել իմաստութիւն և խրատ, իմանալ հանճարի խոսքերը:

Թեպէտ մենք փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու զօրութեամբ թույլ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպէս մեր երկրում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել:

Որովհետև ոչ թէ մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին:

ԳԱՐՈՒՆԻ
ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս, ասէ, Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ: Սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ և ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց:

Մովսէս Խորենացի

Չայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեքթանանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ և փչէ զոգին:

Մովսէս Խորենացի

Սահմանք քաջաց զէք իւրեանց:

Մովսէս Խորենացի

Ոչ է պատմութիւն ստոյգ առանց ժամանակագրութեան:

Մովսէս Խորենացի

Որպէս և ասաց ոմն ի հնումն, մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է:

Եղիշէ

Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, գեղագանգուր մագերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մէջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների ու դյուցազունների վրա տիրապետելու:

Աղեղնավոր Հայկը, այս բանը հասկանալով, իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, մինչև վերջը քաշում է լայնալիճ աղեղը, երեքթանան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը, շեշտակի անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում. և գոռոզացած Տիտանյանը այս կերպով կործանվում, ընկնում է գետինն ու շունչը փչում:

Քաջերի սահմանը իրենց զէքն է:

Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության:

Ինչպէս որ հնում մեկն ասել է, չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն:



Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք:
Եղիշէ

Լավ է աչքով կոյր լինել, քան
մտքով կոյր:

Մի՛ տրտմեցուցաներ զոք և մի՛
տրտմիր յումեք:
Եզնիկ Կողբացի

Ոչ ոքի մի՛ տրտմեցնիր և ոչ ոքից
մի՛ տրտմիր:

Դեւք յինչսն ժողովին, և
հրեշտակք ի բաշխելն:
Եզնիկ Կողբացի

Դևերը հավաքվում են հարստու-
թյուն (կուտակելիս), իսկ հրեշ-
տակները՝ բաշխելիս:

Որ լաւն է և զուարթ երեւի:
Եզնիկ Կողբացի

Ով լավ է (սերքուստ), նաև
զվարթ է երևում (արտաքուստ):

Մեծերը՝ հայոց լեզվի մասին

... Գրաբարը... ոսկի է, դա լեզու չէ, այլ երկնային երաժշտություն,
պերճություն, ուժ, ճկունություն, այդ ամենը նոր եմ սկսում զգալ:
Եվ ինչպիսի ձախորդությունների էլ հանդիպեմ, և որքան էլ ինձ
համար դժվար լինի, ես պատրաստ եմ ամեն ինչի, միայն թե
իրագործեմ երազանքս՝ կատարելապես ուսումնասիրեմ այդ
արքայական լեզուն:

Վահան Տերյան

Եթե նկատի առնենք պատմական այն բացառիկ ծանր իրադրու-
թյունը, որի մեջ Մաշտոցը կարողացավ արթնացնել հայ ժողովրդի
ազգային գիտակցությունը... և նրա այդ գործը համեմատենք
Պիպինոսի ու նրա զինակից Վինֆրիդի գործունեության հետ, որ
նրանք կատարեցին գերմանական ժողովրդի համար, այս վերջին-
ները «խեղճ թզուկներ» կերևան մտքի այդ հսկայի՝ Մեսրոպ
Մաշտոցի համեմատությամբ:

Յոզեֆ Մարկվարտ (գերմանացի հայագետ)

հայոց
լեզու



ՀԱՅՈՑ ԿՐԹՕՑԱԽՆԵՐ

ՄՍԻԽՅԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայոց ինքնությունը պահպանելու և այն սերնդեսերունդ փոխանցելու համար հայ ժողովուրդը դիմել է ամենափորձված միջոցին՝ ուսումնական հիմնարկներ ու կրթօջախներ հիմնելուն: Դրանք այնքան էլ շատ չեն եղել, սակայն մեծ դեր են խաղացել ժողովրդական կրթության, ինչպես նաև գիտության ու լուսավորության տարածման գործում:

Դրանց մեջ կարևորագույն դեր է խաղացել և մինչև այսօր էլ պահպանում է իր դիրքերը Մխիթարյան միաբանությունը, որն այդպես է կոչվել իր հիմնադրի՝ Մխիթար արքա Սեբաստացու անունով: Մխիթար Սեբաստացին ծնվել է 1676 թվականին Սեբաստիայում, սովորել է ծննդավայրի Ս. Նշան, ապա՝ 1691-92 թվականներին՝ Էջմիածնի, Սևանի և Կարինի վանքերում: 1696թ. ձեռնադրվել է քահանա, 1699-ին՝ վարդապետ: Հայ ժողովրդի հոգևոր և իմացական կարիքները



Մխիթար
Սեբաստացի


հոգալու համար մտադրվել է հիմնել կրոնական միաբանություն, որն իրականացնելու համար 1697թ. մեկնել է Պոլիս՝ Խաչատուր Կարնեցու հետ իր ակնկալած միաբանությունը հիմնելու նպատակով: 1701թ. համախոհների հետ ժողով է գումարում և հիմնում է կաթոլիկական միաբանություն, որը Մխիթար Սեբաստացու մահվանից հետո կոչվել է նրա անունով: Նա միաբանության գործունեության վայր է ընտրում Վենետիկին ենթակա Մեթոն բերդաքաղաքը և 1705-ին այցելում է Հռոմ, ձեռք բերում տեղական իշխանության թույլտվությունը՝ վանք հիմնելու համար: Սակայն հետագայում նա ամբաստանվում է Հռոմի պապի առաջ, որի հետևանքով չեն հաստատվում միաբանության համար նրա կազմած կանոնները: Խուսափելով թուրքական առաջիկա հարձակումից՝ Սեբաստացու միաբանությունը տեղափոխվում է Վենետիկ և 1717-ի սեպտեմբերի 8-ին սենատի արտոնությամբ հաստատվում է Վենետիկի Ս. Ղազար կղզում: Այստեղ նա իր պատկերացումներով ու նախագծերով կառուցում է վանք, եկեղեցի և օժանդակ շինություններ:

Հետևում են համառ և ջանադիր աշխատանքի տարիներ, և Մխիթար արքայի ղեկավարությամբ ասպարեզ են գալիս այնպիսի միաբաններ, որոնք հաջողությամբ սկսում են զբաղվել վարչական, դաստիարակչակրթական, գիտամատենագիտական աշխատանքներով, կատարում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
«ՄԻՒԹՅԱՐ ՍԵԲԱՍՏԱՅԻ»
17 կրթական Համալիր
ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԹՅԱՐ

են թարգմանություններ՝ հրատարակելով տարաբնույթ գրքեր: Մխիթար արքան հեղինակում է «Դուռն քերականության աշխարհաբար լեզուին հայոց» (1727), «Քերականութիւն գրաբառ լեզուի հայկազեան սեռի» (1730), որը երկրորդ հրատարակությամբ լույս է տեսել 1770 թվականին: Այս ուսումնասիրությունը հետագայում դարձել է վրաց Անտոնի կաթողիկոսի գրած վրացերենի առաջին քերականության հիմքը: Սակայն Մխիթար Սեբաստացու կարևորագույն ներդրումը հայագիտության մեջ «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանն է, որի վրա նա աշխատել է շուրջ քսան տարի (1749–69): Այս երկհատոր բառարանում նա հավաքել է հայ մատենագիրների տպագիր և անտիպ երկերում գործածված բառերը (շուրջ հարյուր հազար բառահոդված): Նա բացատրել է այդ բոլոր բառերի իմաստները, բերել դրանց կիրառության տարբեր վկայություններ, նշել դրանց աշխարհաբար, ինչպես նաև թուրքերեն, հունարեն, լատիներեն համարժեքները: Այս բառարանը իր ժամանակի եզակի կոթողային աշխատություն է համաշխարհային մակարդակով:

Մխիթար Սեբաստացին հեղինակ է նաև բանաստեղծական երկերի («Տաղարան»), որոնք թեև կրոնական բովանդակություն ունեն, սակայն որոշ առումով ներկայացնում են այդ շրջանի հայ գրականության զարգացման միտումները: Մխիթար Սեբաստացին վախճանվում է՝ իրենից հետո թողնելով բարգավաճ և գործուն միաբանություն, որը եռանդով շարունակում է իր հիմնադրի ավանդույթները: Միաբանության ամենանշանավոր մշակութային ու գիտական գործիչներից էին Գ. Ավետիքյանը, Մ. Չամչյանը, Մ. Ավգերյանը, Զ. Ավգերյանը, Ղ. Ինճիճյանը, Մ. Ջախջախյանը, Ե. Թովմաճյանը, Ղ. Ալիշանը, Գ. Չարբանայանը և շատ ուրիշներ: Նրանց ջանքերով հմուտ մեկնաբանություններով ու



*Լևոնյան վարժարանը
Իտալիայում*

բնագրագիտական ճշգրտումներով լույս տեսան Գրիգոր Նարեկացու, Բարսեղ Կեսարացու, Փավստոս Բուզանդի, Մխիթար Չերացու, Դավիթ Անհաղթի, Եղիշեի, Մովսես Խորենացու երկերը, ինչպես նաև հայ և համաշխարհային դասականների բազմաթիվ գործեր: Մխիթարյան հայրերի ստեղծած գործերից հատկապես նշանավոր են Մ. Չամչյանի «Պատմութիւն հայոց» (հ. 1–3), Մ. Ավգերյանի «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց» (հ. 1–12), Ղ. Ինճիճյանի «Դարապատում» (հ. 1–8), Ղ. Ալիշանի «Քաղաքական աշխարհագրութիւն», «Միսուան»,

«Այրարատ», «Միսական» աշխատությունները: Առանձնապես հարկ է նշել հայ բառարանագրության գլուխգործոցը՝ Գ. Ավետիքյանի, Խ. Սյուրմեյանի և Մ. Ավգերյանի «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» վերնագրով գրաբարի կոթողային բացատրական բառարանը, որը հայ բանասիրության մեջ ավանդաբար կոչվեց «Նոր հայկազյան բառարան»՝ ի տարբերություն Մխիթար Սեբաստացու բառարանի, որը սկսեցին անվանել «Հին հայկազյան բառարան»: Հետագայում լույս տեսավ «Առձեռն բառարանը», որը «Նոր հայկազյան բառարանի» վերամշակումն է՝ առանց բնագրային օրինակների, բայց ավելի լրացված բառացանկով:

Բեղմնավոր էր նաև Մխիթարյան միաբանության գործունեությունը գեղարվեստական գրականության ասպարեզում, որի բարձրակետը դարձավ Արսեն Բագրատունու «Հայկ Դիւցազն» պոեմը: 19-րդ դարի երկրորդ կեսին կլասիցիստական, խորթին և դժվար ընկալելի գրաբարով գրված երկերը տեղի տվին նոր ուղղությանը՝ ռոմանտիզմին, որի հիմնադիրը եղավ Ղևոնդ Ալիշանը իր «Հայոց աշխարհիկ», «Պլպուլն Ավարայրի», «Հրազդան» բանաստեղծություններով և մի շարք պատմագեղարվեստական արձակ երկերով:



*Մխիթարյան վարժարանը
Ֆրանսիայում*

*Մուրատ Ռափայեյան
վարժարանի սրահը Իտալիայում*

Մխիթարյան միաբանությունը հետևողականորեն զբաղվում էր նաև ուսումնակրթական գործունեությամբ: Փոխարինողներ աճեցնելու նպատակով 1832թ. Ս. Ղազարում հիմնադրվեց «Վարժարան» անունով դպրոցը: Մի տարի անց Հյուսիսային Իտալիայի Պադուա քաղաքում սկսեց գործել Մուրատյան, իսկ 1836-ից՝ Վենետիկի Ռափայեյան վարժարանը, որոնք 1873-ին միավորվեցին Մուրատ Ռափայեյան վարժարան անունով: Այժմ Վենետիկի Մխիթարյանների տնօրինության տակ գործում են Սամվել-Մուրատյան վարժարանը (Ֆրանսիա), Մուրատ Ռափայեյան վարժարանը (Իտալիա), Բուենոս Այրեսի և Հալեպի

Գրադարան

Մխիթարյան վարժարանները: Միաբանությունն ունի երկու ընծայարան (հոգևոր ուսուցիչներ պատրաստող դպրոց)՝ Բեյրութում և Ս. Ղազարում: Վիեննայի միաբանները նույնպես ունեն առանձին ընծայարաններ, որոնց հովանավորությամբ Պոլսում գործում է Բանկալթիի լիցեյը:

Գիտե՞ք, որ...

Վանականների տքնաքան աշխատանքով ցամաքից կղզի են տեղափոխվում խիճ, քար ու ավազ՝ կղզու սահմաններն ընդարձակելու համար: Երկու անգամ՝ 1815թ. և 1948–52 թվականներին, կղզին զգալիորեն ընդարձակվել է:

1810 թվականին Նապոլեոն Բոնապարտը Վենետիկը նվաճելուց հետո այցելում է Ս. Ղազար կղզի և, ծանոթանալով միաբանության գիտահրատարակչական գործունեությանը, հիանում է նրանց աշխատանքով և կայսերական հատուկ հրովարտակով Մայրավանքը ճանաչում է իբրև Ակադեմիա:



Սուրբ Ղազար կղզին

Անգլիացի մեծ բանաստեղծ լորդ Ջորջ Բայրոնը 1817–20 թվականներին ապրել է Վենետիկում, Ս. Ղազար կղզու Մայրավանքում հայերեն է սովորել Զ. Ավգերյանի մոտ և նրա հետ հրատարակել «Քերականութիւն անգլիերէն–հայերէն (1817թ.) և «Քերականութիւն հայերէն–անգլիերէն» (1819թ.) դասագրքերը, օգնել է անգլիերէն–հայերէն և հայերէն–անգլիերէն թարգմանական

բառարանների ստեղծմանը (1821), որոնց առաջաբանը գրել է ինքը: Նա հատվածներ է թարգմանել Նաև Խորենացուց և Լամբրոնացուց:

Մեծերը՝ հայոց լեզվի մասին

Սկսել և շարունակում եմ հայոց լեզվի ուսումնասիրությունը... Սա մի հարուստ լեզու է, և լիովին փոխհատուցվում են սովորողի շարժարանքները: Հայերի առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետևանք: Հայոց լեզուն ավելի խոր ուսումնասիրություն է պահանջում ավելի գրավիչ դառնալու համար:

Ճոխ է հայոց լեզուն, և առատորեն կվարձատրվի նա, ով կուսումնասիրի այն:

Ջորջ Բայրոն (անգլիացի քանաստեղծ)

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ւմ անունով է կոչվում Մխիթարյան միաբանությունը:
2. Ե՞րբ և որտե՞ղ է գործել Մխիթար արքան:
3. Ի՞նչ նշանավոր երկեր է ստեղծել Մ. Սեբաստացին:
4. Ի՞նչ նշանավոր հայագետներ են գործել Մխիթարյան միաբանությունում:
5. Թվե՞ք մի քանի հայագիտական կոթողային երկեր, որոնք ստեղծվել են Մխիթարյան միաբանությունում:
6. Թվե՞ք Մխիթարյան միաբանության կողմից ստեղծված նշանավոր ուսումնական կենտրոնները:

ՊԵՎՈՐԳՅԱՆ ՆԵՍՈՐԱՆ

Այս հոգևոր ուսումնական հաստատությունը անվանակոչվել է իր հիմնադրի՝ Գևորգ Դ կաթողիկոսի անունով: Ծննդարանը բացվել է 1874թ. սեպտեմբերի 28-ին Էջմիածնում և, ինչպես գրված է նույն թվականին ռուսաց կայսեր կողմից հաստատված կանոնադրության մեջ, նպատակ ուներ պատրաստելու հայ եկեղեցու սպասավորներ և դպրոցների ուսուցիչներ: Ծննդարանը սկզբնապես փակ գիշերօթիկ էր և ուներ երկու բաժին՝ դասարանական՝ վեցամյա ուսուցմամբ, և լսարանական՝ եռամյա ուսուցմամբ, որը հոգևոր բարձրագույն կրթություն էր տալիս:

Ճեմարանը գոյատևում էր վանքի եկամուտներով և բարերարների նվիրատվություններով: Նախապես դասավանդվում էր 23 առարկա, որից ինը՝ կրոնական: Հետագայում ավելացան նաև ֆիզիկամաթեմատիկական և բնագիտաաշխարհագրական առարկաներ: Սաներն ավարտական աշխատանքները հիմնականում գրում էին հայոց պատմությունից, լեզվից ու գրականությունից: Ճեմարանում աստիճանաբար սկսում է իշխել աշխարհիկ ոգին:

Գևորգյան ճեմարանը մեծ դեր է ունեցել հայ մշակույթի, երաժշտության, գրականության զարգացման գործում: Տարբեր տարիների այստեղ դասավանդել են Կոմիտասը, Կարա-Մուրզան, նկարիչներ Վ. Սուրենյանցը, Ե. Թադևոսյանը, ականավոր հայագետներ Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը,



Գևորգյան ճեմարանը Էջմիածնում

և շատ ուրիշներ: Այստեղ են իրենց ուսումնառությունը ստացել Ա. Միկոյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Մռավյանը, Պ. Մակինցյանը, Գ. Հովսեփյանը, Ա. Շահմուրադյանը, Ավ. Իսահակյանը և շատ ուրիշներ:

Գիտե՞ք, որ...

Հայ մեծ քնարերգու Ավ. Իսահակյանը իբրև բանաստեղծ ձևավորվել է Գևորգյան ճեմարանում: Պատմում են, որ դրանում շատ մեծ է եղել բանաստեղծի ուսուցիչ՝ հայ Նոր քնարերգության երախտավորներից մեկի՝ Հովհաննես Հովհաննիսյանի դերը: Մի անգամ ճեմարանի ծաղկազարդ ծառուղիներում գբոսելիս պատանի Ավետիքը ուսուցիչ դատին է ներկայացնում իր Նոր գրած բանաստեղծություններից մեկը: Ուսուցիչը կարդում է այդ բանաստեղծությունը՝ «Օաղիկ էի Նորաբողոքը...», ապա ոգևորված գրկում է պատանուն և բացականջում. «Կեցցեն, հիմա բանաստեղծ ես»:

Հ. Հովհաննիսյանի այս մարգարեությունը շատ շուտով իրականանում է. Ա. Իսահակյանը դառնում է հայ Նոր գրականության աստղերից մեկը:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ գիտեք Գևորգյան ճեմարանի նշանավոր սաների մասին:
2. Ովքե՞ր են դասավանդել Գևորգյան ճեմարանում:

ՄՈՍԿՎԱՅԻ ԼԱՉԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Հայոց կրթօջախների մեջ իր երկարամյա և արգասավոր ուսումնագիտական գործունեությամբ առանձնահատուկ տեղ է զբաղում Մոսկվայի Լազարյան ճեմարանը: Այն հիմնադրվել է 1815 թվականին Մոսկվայում մեծահարուստ Լազարյանների ջանքերով և միջոցներով: Նախապես եղել է տարրական մասնավոր դպրոց և կոչվել է Հայկական Լազարյան (Եղիազարյան) ուսումնարան, որտեղ սովորել են միայն Լազարյան որդեգիրները: Կրթօջախի ուսումնական ծրագրերը համապատասխանել են ռուսական գիմնազիաների մակարդակին: Հանրակրթական առարկաների հետ դասավանդվել են ռուսերեն, հայերեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, ինչպես



*Լազարյան ճեմարանը
Մոսկվայում*

նաև պարսկերեն, արաբերեն և թուրքերեն: Ընդունվել են տարբեր ազգերի (հիմնականում հայեր և ռուսներ) 10-14 տարեկան երեխաներ: Սկզբնապես նպատակը եղել է սաներին համալսարան ընդունվելու համար կրթելը, ինչպես նաև պաշտոնյաներ և հայկական դպրոցների ուսուցիչներ պատրաստելը: 1827 թվականին դպրոցը վերանվանվել է Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ, ապա ստացել է երկրորդ աստիճանի ուսումնական հաստատության իրավունք՝ հնգամյա ուսուցմամբ: 1841թ. ճեմարանին կից բացվել է հոգևոր բաժին՝ հոգևոր դպրոցների ուսուցիչներ և հայ եկեղեցու սպասավորներ պատրաստելու համար: 1848թ. կանոնադրությամբ Լազարյան ճեմարանը դասվել է պետական առաջին աստիճանի դպրոցների՝ լիցեյների կարգը՝ ութամյա ուսուցմամբ՝ գիմնազիական 6 և լիցեյական 2 դասարաններով: Նոր կանոնադրությամբ ճեմարանն ամբողջովին ստացել է արևելագիտական թեքում. պատրաստվել են թարգմանիչներ, դիվանագետներ, արևելյան լեզուների ուսուցիչներ: Սակայն անկախ դրանից ճեմարանը միշտ պահպանել է իր հայկական դիմագիծը. հայերենով են դասավանդվել հայագիտական

բոլոր առարկաները, դասախոսական կազմի և սաների մեծ մասը եղել է հայ: 1844 թվականին ճեմարանում սովորել են 105 սաներ, որոնցից 73-ը՝ հայ, 30-ը՝ ռուս, 2-ը՝ այլ ազգի: Արևելյան լեզուների ֆակուլտետը աչքի է ընկել իր բարձր մակարդակով և համապատասխանել է բարձրագույն ուսումնական հաստատություններին: Տարբեր ժամանակներում ճեմարանում դասավանդել են Ս. Կարնեցին (առաջին ռեկտորը), Զ. Ալամդարյանը, Մ. Նալբանդյանը, Մ. Սալլանթյանը, Ս. Տիգրանյանը, Ս. Շահագիզը, Ն. Ռիբկինը, Ի. Սիլիսիչը, Վ. Միլլերը և ուրիշներ, որոնցից շատերը ճեմարանի նախկին սաներ էին: Այստեղ են սովորել բանաստեղծներ Ռ. Պատկանյանը, Գ. Դողդիսյանը, Զ. Հովհաննիսյանը, Վ. Տերյանը, մանկավարժներ Գ. Աբովյանը, Ս. Մանդիկյանը, Ա. Բահաթրյանը, նկարիչներ Վ. Սուրենյանցը, Ե. Թադևոսյանը, դերասաններ ու թատերական գործիչներ Ս. Տիգրանյանը, Ռ. Սիմոնովը, Է. Տեր-Գրիգորյանը, Գ. Չուբարը, Խորհրդային Հայաստանի հեղկոմի առաջին նախագահ Ա. Մյասնիկյանը, գիտնականներ Ց. Խանզադյանը, Պ. Մակինցյանը, Մ. Բարխուդարյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը:

Ճեմարանի շուրջը համախմբված հայ մտավորականների շնորհիվ (Ս. Նազարյանց, Մ. Նալբանդյան) հիմնադրվել է Մոսկվայի հայ մամուլը:

1919թ. ՌՍՖՍՀ կառավարության դեկրետով Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտը վերածվել է Հայկական, այնուհետև՝ Առաջավոր Ասիայի ինստիտուտի, այնուհետև վերանվանվել է Արևելյան կենդանի լեզուների, ապա՝ Մոսկվայի արևելագիտության ինստիտուտի: ԶԿԳԿ-ի (Հահամիութենական կենտրոնական գործադիր կոմիտե) 1921թ. որոշմամբ ճեմարանի շենքում ստեղծվել է Խորհրդային Հայաստանի մշակույթի տուն, և շենքը իր ողջ ունեցվածքով հանձնվել է հայ ժողովրդին:

Այսօր Մոսկվայի Հայկական նրբանցք կոչվող փողոցում գտնվող Լազարյան ճեմարանի շենքը Հայաստանի սեփականությունն է, և այնտեղ է գտնվում ՌԴ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանատունը:

Գիտե՞ք, որ...

Մոսկվայի Լազարյան ճեմարանի առաջին ռեկտոր Սերոլմե Կարնեցուն Վենետիկի Մխիթարյան միաբանությունից Մոսկվա հրավիրեց ճեմարանի հիմնադիր Հովակիմ Լազարյանը: Ս. Կարնե-

ցին ութ տարի ապրեց Մոսկվայում, ֆրանսիացի Օգյուստ Սեմենի տպարանում հրատարակեց իր հեղինակած «Ծաղիկ գիտութեան» հանրագիտական բնույթի գիրքը, որը հայերեն առաջին տպագիր գիրքն էր Մոսկվայում:

ՀԱՐՅԵՐ

1. Ի՞նչ դեր է խաղացել Մոսկվայի Լազարյան ճեմարանը հայ ժողովրդի կյանքում:
2. Լազարյան ճեմարանի ի՞նչ նշանավոր սաների գիտեք:
3. Հանրագիտարանում գտե՛ք և սովորե՛ք Լազարյան ճեմարանի սաների և ուսուցիչների մասին տվյալներ:

ԹԻՖԼԻՍԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՃ

Այս դպրոցը հիմնադրվել է Ներսես Ե Աշտարակեցու նախաձեռնությամբ 1824 թվականին և նախապես կոչվել է **Թիֆլիսի հայոց ուսումնարան**: Շինության նախագիծը կազմել է պետերբուրգցի ճարտարապետ Լիմկուրը, իսկ ծախսերը հոգացել է մեծահարուստ բարերար Ալ. Մանթաշովը (Մանթաշյանց): Առաջին ուսումնական տարում դպրոցն ունեցել է 3 դասարան և 80 աշակերտ: Հետագայում աշակերտների թիվը հասնում է 360-ի: Առաջին տեսուչը եղել է Հ. Ալամդարյանը, որը թողել է հարուստ ավանդույթներ: Հիմնադրման օրվանից դպրոցն ունեցել է տպարան: Կաթողիկոս դառնալով՝ Ներսես Աշտարակեցին վերակառուցել է դպրոցը միջնակարգի ծրագրով: Դպրոցն առանձնահատուկ բարգավաճում է ապրել 1852–57թթ., երբ տեսուչն էր Պ. Շանշյանը: 1869–71թթ. դպրոցի տեսուչ է նշանակվում Ս. Նազարյանցը, որը կատարում է մի շարք բարեփոխումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով աշխարհաբարի ուսուցմանը, սակայն դիմադրության հանդիպելով՝ հեռանում է Թիֆլիսից: Ս. Մանդինյանի տեսչության ընթացքում (1874–79թթ.) դպրոցը դառնում է լրիվ միջնակարգ, ապա բացվում է մասնագիտական-մանկավարժական 7-րդ դասարանը, որը նպատակ ուներ ուսուցիչներ պատրաստելու հայոց ծխական դպրոցների համար:

1906–07 ուսումնական տարում 3 նախապատրաստական և 7 հիմնական դասարաններում (Հավլաբարի և Սուլուակի բաժանմունքների հետ) դպրոցն ուներ 1071 աշակերտ: 1924 թվականին դպրոցը տվել է իր վերջին 25 շրջանավարտները: 1925 թվականին այն վերանվանվել է Աշխատանքային դպրոց:

Ներսիսյան դպրոցը եղել է Անդրկովկասի ամենահայտնի հայկական դպրոցը: Ազգային, մշակութային ու պետական գործիչների զգալի մասը սովորել է այս դպրոցում: Ներսիսյան դպրոցի սաներ են Խ. Աբովյանը, Ս. Նազարյանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Յ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը, ինչպես նաև Յ. Բժշկյանցը (Գայ), Ա. Միկոյանը: Այստեղ տարբեր ժամանակներում դասավանդել են Ղ. Աղայանը, Պ. Պռոշյանը, Գ. Սունդուկյանը, Ս. Պալասանյանը, Ծերենցը, Լեոն, Ս. Աբեղյանը, Ս. Մալխասյանցը և բազմաթիվ հանրահայտ գործիչներ:



Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ւմ նախաձեռնությամբ է հիմնադրվել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը:
2. Ե՞րբ է գործել Ներսիսյան դպրոցը:
3. Թվե՞ք դպրոցի նշանավոր սաներից մի քանիսին:
4. Հանրագիտարանի օգնությամբ լրացրե՞ք ձեր գիտելիքները Ներսիսյան դպրոցում դասավանդած ուսուցիչների մասին:

Մեծերը՝ հայոց լեզվի մասին

Լեզուն ժողովրդի հոգու, բնավորության արտահայտիչն է: Կուլտուրականության առաջին պայմանը զարգացած, հարուստ ու ճկուն լեզուն է: Շքեղ շենքերը, պալատներն ու տաճարները այնքան ցայտուն կերպով չեն ցոլացնում ժողովրդի կուլտուրան, որքան լեզուն: Տնտեսական-տեխնիկական և քաղաքական-իրավական ձևերը կարելի է վերցնել, ընդունել դրսից, չուրացնել, բայց լեզուն պետք է ստեղծագործել: Այստեղ ամենից ցայտուն կերպով է արտահայտված մի ժողովրդի ստեղծագործական զորությունը:

Վահան Տեղյան

ԴԱՄԱՊ
ԿՈՒՐՍԵՐ

ԼԵՉՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ՝ ՀՆՉՅՈՒՆ, ԲԱՌ, ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ, ՏԵՄՍ

Լեզուն մարդկանց հաղորդակցման հիմնական միջոցն է: Մարդիկ մտքերը ձևավորում և արտահայտում են լեզվի միջոցով: Նրանք իրենց հայտնի բոլոր առարկաներն ու երևույթները, հատկանիշներն ու գործողությունները, զգացմունքները անվանում են բառերով և բառերը տարբեր միջոցներով կապակցելով՝ միտք և խոսք են կազմում: Հնարավոր չէ առանց բառ գործածելու մտածել: Օրինակ՝ տեսել ենք մի նկար, և այն մեզ դուր է եկել: Մենք մտածում ենք. «Նկարը գեղեցիկ է»: Կարող ենք նաև բարձրաձայն ասել այդ միտքը, բայց բոլոր դեպքերում անպայման գործածում ենք բառեր: Կարող ենք «նկար» բառի փոխարեն գործածել «սա», «դա», «այս առարկան» կամ էլի ինչ-որ բառեր, բառակապակցություններ, բայց կարևորն այն չէ, թե ինչ բառ ենք գործածում, այլ այն, որ որևէ բառի գործածությունը պարտադիր է:

Բառը հնչյուն է կամ հնչյունախումբ, որն արտահայտում է կոնկրետ իմաստ և ունի առանձին՝ ինքնուրույն գործածություն: Օրինակ՝ **ա, ո, յ, ու, ծ** հնչյունները միասնաբար ձևավորում են *առյուծ* բառը, որը կոնկրետ իմաստ ունի և որպես ինքնուրույն միավոր գործածվում է խոսքում: Իմաստ կարող են արտահայտել նաև այլ հնչյունախմբեր: Օրինակ՝ **-ություն** հնչյունախումբն արտահայտում է հավաքականության իմաստ, **-արան** հնչյունախումբը՝ տեղի, **-ուհի-ն**՝ իգական սեռի և այլն: Սակայն դրանք ոչ թե կոնկրետ, թանձրացական, այլ ընդհանուր, վերացական իմաստներ են և կոնկրետանում են միայն որոշ բաղադրիչների միանալու դեպքում, ինչպես՝ *մեծություն, դասարան, աշակերտուհի* և այլն: Այդ պատճառով էլ նշված հնչյունախմբերը ոչ թե բառեր են, այլ ածանցներ:

Ինչպես տեսանք, բառերը կազմվում են հնչյուններից: **Հնչյունը լեզվի ձայնային նվազագույն միավորն է, որը միայնակ կամ այլ հնչյունների հետ բառ է ձևավորում:** Օրինակ՝ **ծ, ա, ո** հնչյունները միանալով կազմում են **ծառ** բառը, իսկ **ու, է, օ՛** հնչյունները առանձին էլ կարող են բառի արժեք ունենալ որպես շաղկապ, օժանդակ բայ և ձայնարկություն: Այսպիսով՝ լեզվում կան հնչյուններ և նրանցից կազմվող բառեր: Սակայն միայն հնչյուններն ու նրանցից կազմված բառերը բավարար չեն մտածելու և հաղորդակցվելու համար:



Մտածելիս և խոսելիս բառերն իրար ենք կապակցում և կազմում նախադասություններ: Օրինակ՝ «Աշակերտը մի հիանալի շարադրություն գրեց» նախադասությունը կազմելու համար անհրաժեշտ է կապակցել *աշակերտ, մի, հիանալի, շարադրություն, գրել* բառերը: Բառերը, կապակցելու համար, փոփոխում ենք անհրաժեշտ ձևերով, այսինքն՝ հոլովում ենք, դնում ենք եզակի կամ հոգնակի թվով, խոնարհում ենք և այլն: Նախադասությունը կարող է արտահայտվել նաև միայն մեկ բառով, օրինակ՝ «Գնացի»: **Նախադասությունը բառ է կամ բառերի կապակցություն, որն ունի ստորոգում, արտահայտում է ամփոփ միտք և ասվում է ավարտուն հնչերանգով:** Հիշենք, որ կան նաև նախադասություններ, որոնք չունեն նշված այս կամ այն հատկանիշները (օրինակ՝ միակազմ նախադասությունները, թերի նախադասությունները և այլն):

Այսպիսով՝ առանձնացան **հնչունը, բառը և նախադասությունը**՝ որպես լեզվական միավորներ: Սակայն նախադասությունը լեզվական առավելագույն միավորը չէ: Ինչպես հնչուններից կազմվում են բառեր, բառերից՝ նախադասություններ, այնպես էլ նախադասություններից կազմվում է տեքստ: Ուրեմն նախադասությունից հետո էլ հաջորդ միավորը տեքստն է: **Տեքստ** բառը լատինական ծագում ունի (textus). Նրա նախնական իմաստն է՝ *հյուսվածք, գործվածք*: Այս իմաստն այժմ էլ պահպանվել է, օրինակ՝ *տեքստիլ (մանածագործական) արդյունաբերություն*: Որպես լեզվաբանական հասկացություն՝ տեքստը նշանակում է լեզվական միավորների հյուսվածք: **Տեքստը իմաստով և բերականորեն կապակցված նախադասությունների ամբողջություն է:** Այդ ամբողջության միջոցով էլ հաղորդվում է ասելիքը: Երբեմն մեկ նախադասությունը կարող է հանդես գալ որպես տեքստ (օրինակ՝ հայտարարություններում):

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են լեզվի հիմնական միավորները:
2. Ի՞նչ է հնչունը:
3. Ի՞նչ է բառը և ի՞նչ հիմնական հատկանիշներ ունի:
4. Ի՞նչ հիմնական հատկանիշով են տարբերվում ածանցներն ու բառերը:
5. Ի՞նչ է նախադասությունը:
6. Ի՞նչ է տեքստը:

Վարժություն 1: Պահպանելով նշված հերթականությունը՝ տրված բառերն ըստ անհրաժեշտության բերականորեն այնպե՛ս փոփոխեք, որ ստացվեն նախադասություններ:

- ա) Ես, ընկեր, հոկտեմբեր, վերջ, վերադառնալ, արտասահման:
- բ) Դու, համար, ես, դասարան, աշակերտ, անակնկալ, պատրաստել:
- գ) Հոգնել, ճամփորդ, կանգ առնել, ժայռ, մեջ, բիսել, աղբյուր, մոտ:
- դ) Ո՞վ, համար, է, դու, այդ, չարչարանք:
- ե) Գետ, սկիզբ առնել, լեռ, կատար, ծածկել, ձյուն:

Վարժություն 2: Տրված գլխավոր նախադասությունները շարունակե՛ք ստորադաս նախադասություններով:

- 1. Ճամփորդները երեկոյան հասան աղբյուրին,
- 2. Հավաքվածները մոտեցան իրենց դասընկերոջը,
- 3. Շատրվանից բխող փրփրացայտ ջուրը լցվում էր ավազանը,
- 4. Տղան անջատեց հեռուստացույցը,
- 5. Աշակերտները առավոտյան հավաքվել էին դպրոցի բակում,
- 6. Շենքերի բակերում փոքրիկ խաղաղաշտեր են կառուցվում,
- 7. Վայրէջքից հետո բազմությունը մոտեցավ ինքնաթիռին,
- 8. Աղմուկը միանգամից դադարեց,
- 9. Ամռանը նա հեռացավ քաղաքից,
- 10. Այցելեցինք վաստակավոր նկարչին,

Վարժություն 3: Նշե՛ք, թե յուրաքանչյուր նախադասության մեջ բերականորեն փոփոխված բանի բառ կա:

- ա) Ընկերոջս հետ քայլում էի ամառանոցային քաղաքի գողտրիկ փողոցներից մեկով, որը լցված էր ծաղկած ծառերի՝ թարմություն պարզևող բույրով և զբոսնող երիտասարդների ու օրիորդների անընդմեջ խոսք ու ծիծաղով:
- բ) Աղավնիների երամը քամիների ու մրրիկների ժամանակ պատսպարվում էր ուղղաձիգ ժայռերի զանազան ճեղքերում ու խոռոչներում, իսկ արևոտ օրերին ճախրում էր ջինջ լազուրում:
- գ) Բարձրաբերձ լեռներից փչում էր վաղորդյան սարսռեցնող զովությունը, և կնճռոտվում էր լճի վիթխարի կապույտ հայելին, արևի դեղնագոծ սկավառակը ելնում էր Այծեմնասարի խորդուբորդ թիկունքից, և այդ պահին լիճն առկայծում էր երփնավառ ծփանքով:



- դ) Գավառական փոքրիկ բաղաբի հետաքրքրասեր բնակիչների մեծ մասն այդ թույլտվություն գտնվում էր բակերում ու պարտեզներում, ոմանք էլ նստած էին տներում լուսամուտների բաց փեղկերի առջև, ու նրանց ապշահար ու զարմացած հայացքներն ուղղվում էին անակնկալ հայտնված անցորդի կողմը:

ԲԱՐԻ, ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՔՍՏԻ ԲԱԳԱԳՐԻՉՆԵՐԻ ԴՄՍՍՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հնչյուններից կազմվում են բառեր, բառերից՝ նախադասություններ, իսկ նախադասություններից՝ տեքստեր: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր կազմության օրինաչափությունները, որոնք պետք է անպայման պահպանվեն: Բառ կազմող հնչյունների, նախադասություն կազմող բառերի, տեքստ կազմող նախադասությունների տեղափոխումից կա՛մ խաթարվում է ամբողջ կազմության իմաստը, կա՛մ արտահայտվում են ուրիշ իմաստներ: Օրինակ, եթե այլ ձևերով դասավորենք *Նամակ բառի* հնչյունները, ապա կստանանք *մական* բառը կամ *նական*, *կաման* և այլ հնչյունախմբեր, որոնք իմաստ չեն արտահայտում: Նույն ձևով, եթե *«Մարդիկ տարբեր ապրանքներ էին գնում խանութներից»* նախադասության բառերի դասավորությունը փոփոխենք, ապա կստանանք *«Տարբեր մարդիկ ապրանքներ էին գնում խանութներից»*. *«Մարդիկ ապրանքներ էին գնում տարբեր խանութներից»* նախադասությունները, ինչպես նաև *«Տարբեր գնում էին խանութից ապրանքներ մարդիկ»* և այլ բառախմբեր: Վերջիններս նախադասության իմաստ չեն արտահայտում, թեև յուրաքանչյուր բառ պահպանում է իր իմաստը: Տեքստ կազմող նախադասությունների դասավորությունը փոխելիս կա՛մ տեքստն ուրիշ իմաստ կարտահայտի, կա՛մ էլ տեքստային ընդհանուր իմաստ չի արտահայտվի: Օրինակ՝ *«Մտանք սենյակ: Հախճապակե մի ծաղկաման դրված էր սեղանին: Այն շատ գեղեցիկ էր: Սեղանի մոտ դրված էր ձիու մի բրոնզաձուլյ արձանիկ»*: Այս նախադասությունների մեկ այլ դասավորությամբ կարող ենք ստանալ հետևյալ տեքստը. *«Մտանք սենյակ: Հախճապակե մի ծաղկաման դրված էր սեղանին: Սեղանի մոտ դրված էր ձիու մի բրոնզաձուլյ արձանիկ: Այն շատ գեղեցիկ էր»*: Եթե առաջին դեպքում նշվում է ծաղկամանի գեղեցիկ լինելը, ապա երկրորդ դեպքում գեղեցիկ լինելը վերագրվում է արձանիկին, այսինքն՝ ստացվում

ԳԱՐՈՒՆ



Է իմաստով փոքր-ինչ տարբեր մեկ այլ տեքստ: Վերը նշված նախադասությունները դասավորենք հետևյալ ձևով. «Այն շատ գեղեցիկ էր: Սեղանի մոտ դրված էր ձիու մի բրոնզաձուլյ արձանիկ: Հախճապակե ծաղկամանը դրված էր սեղանին: Ստանք սենյակ»: Ընդհանուր իմաստը լիովին խաթարվեց, թեև յուրաքանչյուր նախադասություն արտահայտում է իր նախկին իմաստը: Ուրեմն տեքստ կազմող նախադասությունները կապակցվում են միայն որոշակի դասավորությամբ, որը պայմանավորված է նրանց իմաստներով, դրանց տրամաբանական հաջորդականությամբ, քերականական հատկանիշներով և այլն: Կապակցական կարևոր դեր ունեն ցուցական իմաստով բառերը, զեղչումներն ու կրկնությունները, դերանունների գործածությունը, դիմավոր բայերի ժամանակային համաձայնությունը, գործողությունների կատարման հերթականությունը և այլն: Օրինակ, եթե տեքստում գործածում ենք *նա* դերանունը կամ զեղչում ենք որևէ բառ, ապա դրանց մասին պետք է նշված լինի նախորդ նախադասություններում, այլապես իմաստն անորոշ կմնա:

Հետևաբար խոսելիս ու գրելիս պետք է հետևել, որ լեզվական միավորները ճիշտ դասավորվեն և արտահայտեն հենց այն իմաստը, որն անհրաժեշտ է սովյալ դեպքում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպե՞ս են ձևավորվում բառը, նախադասությունը, տեքստը:
2. Ի՞նչ դեր ունի բառի, նախադասության, տեքստի բաղադրիչների դասավորությունը:
3. Տեքստի նախադասությունների կապակցման համար ո՞ր իրողություններն են կարևոր:

Վարժություն 4: Տրված նախադասություններն այնպե՞ս դասավորեք, որ ստացվի տեքստ:

- ա) Կառուցման համար օգտագործվել է երկու միլիոն երեք հարյուր հազար քար, որոնցից յուրաքանչյուրի միջին քաշը երկուսուկես տոննա է:
- բ) Դահլիճում բազմազան ոսկեծուլյ գանձերի հետ գտան նաև մի քանի առագաստանավեր, որոնցով հանդերձյալ կյանքում փրավոնը իբր թե պետք է նավարկեր Նեղոսով:



- գ) Հին եգիպտացիները այն կառուցել են մեզանից մոտ հիսուն դար առաջ:
- դ) Զեոփսի բուրգը՝ աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը, գտնվում է Կահիրե քաղաքից ոչ հեռու՝ Գիզայում:
- ե) Այս ամենամեծ բուրգի պեղումներից մեկի ժամանակ՝ հազար ինը հարյուր հիսունչորս թվականին, հայտնաբերվեց մի փակված դահլիճ:

II

- ա) Նա ուսումնասիրում էր Չամբեգի գետը և հայտնաբերեց մի հողակապ ջրվեժ, որը կոչվեց Վիկտորիա՝ ի պատիվ Անգլիայի թագուհու:
- բ) Պատահական չէ, որ բնիկների՝ այս ջրվեժին տված անունը՝ Մոգի-ճատունիա, նշանակում է շառաչող ծուխ:
- գ) Չամբիայի հարավային սահմանի մոտ՝ Չամբեգի գետի վրա, գտնվում է բնության հիասքանչ կերտվածքներից մեկը՝ Վիկտորիա ջրվեժը, որը հայտնաբերել է աշխարհահռչակ ճանապարհորդ Դավիթ Լիվինգստոնը:
- դ) Թագավորական անվանում ստացած այս ջրվեժը Աֆրիկայի բնության հրաշքներից է, որն առաջին հերթին ապշեցնում է իր չափերով:
- ե) Ջրային այդ մեծ հոսքի աղմուկը լսվում է շատ հեռվից, և ծխի նման թրթռալով՝ բարձրանում է ջրափոշին:
- զ) Հորդահոս գետը գահավիժում է հարյուր քսան մետր բարձունքից, և գոյանում է մի ջրվեժ, որի լայնությունը հազար ութ հարյուր մետր է, իսկ ջրի ծախսը մեկ վայրկյանում հավասար է հազար չորս հարյուր խորանարդ մետրի:

III

- ա) Աշխարհում շատ տարատեսակ պետություններ կան՝ մեծ ու փոքր, բայց մի քանիսն այնքան փոքր են, որ հնարավոր է տեսնել միայն քարտեզը մանրագնին ուսումնասիրելիս:
- բ) Մոնակոն գտնվում է Միջերկրական ծովի հյուսիսային ափին և հիմնվել է այսպես:
- գ) Հետագայում քրիստոնեական շրջանում, այդ հինավուրց ամրոցի փոխարեն կառուցվել է մի վանք, որն էլ անուն է տվել այս պետությանը, որովհետև լատիներեն «մոնակոս» բառը նշանակում է վանական:

- դ) Այդ բաղաբաժնի պատճառներից մեկի՝ Մոնակոյի տարածքը մեկ և կես բառակուսի կիլոմետր է:
- ե) Դրանք բաղաբաժնիներ են:
- զ) Մեր թվականությունից առաջ փյունիկեցի վաճառականները ներկայիս Մոնակոյի տեղում ամրոց էին հիմնել:

Վարժություն 5: Այնպե՛ս շարունակեք նախադասությունները, որ բերականորեն և իմաստներով կապակցվեն, ու ստացվի տեքստ:

Ջուրը կյանքի աղբյուրն է, քանի որ.....: Թե՛ մարդիկ, թե՛ կենդանիները, թե՛ բույսերը գոյություն չէին ունենա, եթե.....: Բնության մեջ ազատորեն հոսող ջրերը նկատի ունենալով՝ մարդիկ ստեղծել են «ջրի գին» արտահայտությունը, որը նշանակում է.....: Սակայն երկրագնդի խմելու ջրի պաշարներն անսպառ չեն, և օրեցօր.....: Ասում են, թե յուրաքանչյուր սերունդ ջուրը ոչ թե ժառանգում է նախնիներից, այլ պարտք է վերցնում հաջորդ սերունդներից, ուստի.....:

Վարժություն 6: Նշվածներից ո՞ր միտքը արտահայտված չէ տրված տեքստում:



Ալպինիզմը մարզածն է: Այս մարզածնով զբաղվողները՝ ալպինիստները, բազում խոչընդոտների հաղթահարելով, վերելք են կատարում դեպի դժվարամատչելի լեռնագագաթները: Ալպինիզմի ձևավորման սկիզբը համարվում է 1786 թվականը, երբ երկու շվեյցարացի՝ Ժ. Բալման և Մ. Պակկարը, առաջին անգամ

բարձրացան Ալպերի ամենաբարձր գագաթը՝ Մոնբլանը: Ալպեր տեղանունից էլ ծագել է մարզածնի ալպինիզմ անվանումը:

- ա) Ալպինիզմի ձևավորման սկիզբը 1786 թվականն է:
- բ) Ալպինիստները ալպինիզմով զբաղվողներն են:
- գ) Ալպինիզմ մարզածնի անունը ծագում է Ալպեր տեղանունից:
- դ) Ալպերի ամենաբարձր գագաթի՝ Մոնբլանի բարձրությունը 4810 մետր է:

ԴԱՄԱՑ

Վարժություն 7: Նշվածներից ո՞ր միտքն է հակասում տրված տեքստի իմաստին:

Հին հույները հունաստանից արևելք ընկած տարածքներն իրենց աստվածուհու անունով կոչել են Ասիա: Ենթադրվում է, որ անվանումն առաջացել է ասորերեն «ասու» արմատից, որը նշանակում է արևելք: Հույները, այնուհետև հռոմեացիները Ասիա անվանում էին միայն Փոքր Ասիա թերակղզին: Հետագայում այդպես անվանվեց ամբողջ աշխարհամասը:

- ա) Ասիա տեղանունը ծագել է աստվածուհու անունից:
- բ) «Ասու» ասորերեն նշանակել է արևելք:
- գ) Ասիան հռոմեացիների գերագույն աստվածուհին էր:
- դ) Սկզբնապես Ասիա անվանվել է միայն Փոքր Ասիա թերակղզին:

Վարժություն 8: Տրված բառերը, անհրաժեշտության դեպքում բերականորեն փոփոխելով, այնպե՛ս դասավորեք, որ ստացվեն նախադասություններ, ապա՝ տեքստ:

Ափ, և, ելնել, գարուն, գետ, ողողել, շրջակայք: Հուզել, շփոթել, նայել, ու, մարդ, ալիք, պղտորել: Նկատել, մարդ, մեկ, մի, երեխա, հանկարծ, որ, ալիք, ընկնել, մեջ: Բոլոր, մտածել, մի, մինչ, թե, երիտասարդ, նետել, ինչ, ջուր, անել: Երեխա, իսկ, հերոսական, փրկել, արարք, շուտով, էր, մարդ, գովաբանել, երիտասարդ, խիզախ:

Մեծերը՝ հայոց լեզվի մասին

Մայրենի լեզուն մարդու հետ է միշտ: Լեզուն այն միջոցն է, որով գիտակցութունը մարմին է առնում, մտածմունքը՝ նյութականանում:

Հրաչյա Աճառյան

* * *

...Իմ իմացած լեզուների մեջ հայերենը բացառիկ է. նախ՝ որպես դարմանալի տրամաբանական լեզու, ապա նաև՝ իր ճկունությամբ, նոր բառեր կազմելու դյուրութուններով:

Ֆրեդերիկ Ֆեյդի (ֆրանցիացի հայագետ)

Մեր լեզուն բարձր լեռներից և խորունկ ձորերից ծնած լեզու է՝
բարձունքների ու խորությունների լեզու:

Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար
լեզվինը՝ հավանում, սովորում, հիշում:

Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի հոգին: Ամեն մի
բառը նրա հոգու մի կտորն է: Այդ բառերի մեջ են նյութացած,
առարկայացած մեր վիշտը, զրկանքները, դառն ու զվարճալի
ապրումները, մեր երազները, հույսերը, իղձերը, սերը, մեր ողջ
ժողովուրդը:

Լեզուն մշակույթի ամենագորեղ մղիչն է: Մարդու ամենահա-
վատարիմ ու անդավաճան մխիթարիչն ու սփոփիչը՝ անխոս
բնության, անբարբառ տիեզերքի առջև:

Լեզուն ամենագորեղ զենքն է մարդու, որովհետև նա միացնում
է նրան մյուս մարդկանց հետ:

Վահան Տերյան

Հայերենը, իբրև Արարատյան լեզու, կոչվում է «Աղոթքի լեզու»,
այն աստվածային ճոխ ու աննման լեզու է:

Նիկողայոս Մառ (արևելագետ-ազգագրագետ)

Աշխարհի լեզուները գրության տարբեր ձևեր ունեն: Գրությունը լինում է **գաղափարագրական**, երբ հասկացությունը կամ բառն է արտահայտվում մեկ գրանշանով, օրինակ՝ չինարենինը, **վանկային**, երբ վանկն է արտահայտվում մեկ գրանշանով, օրինակ՝ հին հնդկերենինը, **հնչյունական**, երբ հնչյունն է արտահայտվում մեկ գրանշանով:

Ժամանակակից հայերենի գրությունը հնչյունական է: Գրավոր խոսքն արտահայտվում է տառերով, կետադրական նշաններով և բացատներով կամ միջակայքերով, այսինքն՝ լեզվական միավորների միջև ըստ անհրաժեշտության բաց թողնվող տարածություններով: Մարդկության համար խոսքի գրավոր արտահայտության առաջացումը մեծ նշանակություն ունեցավ: Գրավոր խոսքի միջոցով հնարավոր դարձավ խոսքը հաղորդել տարածության և ժամանակի մեջ, քանի որ գրավոր ձևով արտահայտվածը հնարավոր է ուղարկել տեղից տեղ կամ ընթերցել տարիներ, դարեր, հազարամյակներ հետո: Եթե չլիներ խոսքի գրավոր արտահայտությունը, ապա մարդիկ իրենց բոլոր գիտելիքները, նվաճումներն ու ձեռքբերումները չէին կարողանա հաղորդել հաջորդ սերունդներին, չէր ստեղծվի նաև գեղարվեստական գրականություն, այլ կլիներին սոսկ բանավոր ստեղծագործություններ, իսկ բանավոր տեղեկությունները, ինչպես հայտնի է, ժամանակի ընթացքում փոփոխվում են, աղավաղվում կամ ընդհանրապես կորչում: Այժմ 21-րդ դարում, երբ կատարվել են գիտատեխնիկական մեծ նվաճումներ, ոչ միայն չի նվազել գրավոր խոսքի դերը, այլև, ընդհակառակը, ավելի է մեծացել:

Գրավոր հաղորդակցման արդյունավետ իրականացման համար մշակվել են գրության որոշակի կանոններ: **Այդ կանոնների ամբողջությունը ուղղագրությունն է:** Ուղղագրական դժվարություններ սովորաբար առաջանում են այն դեպքում, երբ տարբերություններ կան արտասանության և գրության միջև, օրինակ՝ **նուրբ** բառի վերջում արտասանվում է **փ**, որը գրվում է **բ** տառով: Ժամանակակից հայերենում ուղղագրական դժվարություններն ավելի շատ առնչվում են բաղաձայնների գրությանը, քանի որ վեց ձայնավորներից երեքը (ա, ի, ու) գրության և արտասանության տարբերություններ չունեն, իսկ մյուս երեքի (է, ը, օ) գրության ու արտասանության տարբերությունները համակարգային են, ընդհանուր սկզբունքով որոշված, այլ ոչ թե առանձին-առանձին վերաբերում են տարբեր բառերի:

* Ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերի ցանկերը տրվում են դասագրքի հավելվածում:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրության ի՞նչ ձևեր են գործածվում աշխարհի տարբեր լեզուների համար:
2. Ի՞նչ դեր ունի գրավոր հաղորդակցումը:
3. Ի՞նչ է ուղղագրությունը:
4. Սովորաբար ե՞րբ են առաջանում ուղղագրական դժվարություններ:

Վարժություն 1: Տրված բանաստեղծությունից առանձնացրե՛ք այն բառերը, որոնցում բաղաձայնների գրության և արտասանության տարբերություններ կան:

Բարությանը է լցված առավոտը,
ցորենը, որ ճերմակ արյուն ունի,
և բամին՝
արտի միջով անցնող,
որ քիմքը ծաղկոտել է սարում:

Բարությանը է լցված երկինքը,
նռնենին, որ կարմիր երանգ ունի,
և իմ Յակոբ հորեղբայրը,
որ ոչ մի տող չի կարդացել
իմ երգերից:

Բարությանը է լցված վանդակը,
թութակը, որ կանաչ փետուր ունի,
և տղան, որ վանդակի դուռը փոքրիկ
իբր պատահաբար
բաց է թողել:

Բարությանը է լցված իմ գրիչը,
այս թուղթը, որ ճերմակ լուսանք ունի,
և պոետը, որ առավոտ շուտ
մի փոքրիկ, շատ փոքրիկ
երգ է գրել...

Արևշատ Ավագյան

Վարժություն 2: Յուրաբանյուր տողում գտե՛ք այն բառը, որի արտասանությունն ու գրությունը տարբեր են:

1. կախարդ, թակարդ, գագաթ, սյունազարդ
2. անդունդ, թունդ, նյարդ, ճարմանդ



3. ինքնուս, դաղձ, հունձ, ազատամիտ
4. ծանծաղ, մանգաղ, մայրուղի, օդամուղ
5. հաղարջ, նարինջ, թուրինջ, ընդառաջ
6. արծաթահյուս, նրբահյուս, ծաղկահյուս, նախշահյուս
7. դասացուցակ, ապրանքացուցակ, հարցացուցակ, կարգացուցակ
8. դիմապակի, հախճապակի, սրբապատկեր, սարահարթ
9. լուսաբաց, ծառասունկ, զանգակածաղիկ, արդյունարար
10. ծաղկաստան, Հայաստան, վարդաստան, բուրաստան

Վարժություն 3: Յուրաքանչյուր տողում բաղաձայնի գրության և արտասանության տարբերությունն ունեցող բանի՞ բառ կա:

1. գվարթաձայն, ողկույզ, կարգավորել, վարգել
2. թմբուկ, դարբին, աղբյուր, վերջնական
3. բացօթյա, ջրհեղեղ, ուխտատեղի, բրդատու
4. արփի, բարձրացնել, գավազան, կարկտաբեր
5. ծխնելույզ, նավթատար, նույնքան, հախճասալիկ
6. երդիկ, ամբարիշտ, համակարգիչ, ասֆալտապատ
7. արդարամիտ, խղճալ, մարգարե, շեղջ
8. վարագույր, ջնարակ, խնձորենի, շաբաթօրյակ
9. ուրց, դաղձ, հարց, վարձ
10. օդապարիկ, տորմիդ, ծխնի, կարապ
11. մայրուղի, բարձրաձայն, սյունազարդ, ծառատունկ
12. հյուսիսային, արդարություն, կաթնագույն, խրձակապ
13. անշեղորեն, տնակ, զարդատուփ, պարգևել
14. գործարկում, սրբապատկեր, շրջափակում, վարդապետ
15. հրաշագեղ, առաստաղ, ատաղձագործ, փայտփորիկ
16. սրբակենցաղ, ինքնուսույց, բացօթյա, արձակուրդ
17. ածխահանք, ազդագիր, ագահաբար, առաջնորդ
18. դուստր, լռակյաց, ամբողջություն, պախուրց
19. հատված, քնարական, պղտոր, տաղտկալի
20. պանդուխտ, աշխարհընկալում, հղկել, հանճար

Վարժություն 4: Գրե՛ք հինգ պարզ ընդարձակ նախադասություն, որոնցում չլինի բաղաձայնի գրության և արտասանության տարբերությունն ունեցող ոչ մի բառ:



ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հայերենում **ա, ի, ու** ձայնավորների գրությունն ու արտասանությունը համապատասխանում են, ուստի ուղղագրական դժվարություններ չեն առաջանում, օրինակ՝ *այգի, իմաստ, ուրախ* և այլն: Ուղղագրական դժվարությունները հիմնականում առնչվում են **է, ը, օ** ձայնավորների գրությանը:

Է – Ե

Է հնչյունը բառասկզբում հիմնականում գրվում է **Է** տառով, իսկ բառամիջում և բառավերջում՝ **ե** տառով, օրինակ՝ *էջ, էական, էլեկտրական, սեղան, ափսոս* և այլն: Բառամիջում և բառավերջում **Է** տառը գրվում է այն դեպքում, երբ արմատի սկզբնատառ է, օրինակ՝ *անէական, էլեկտրա-էներգիա, մանրէ* և այլն: Բառասկզբում գրվում է **ե** տառը, երբ արտասանվում է **յե**, օրինակ՝ *երեկո, երկիր, երկաթ* և այլն: **Եմ, ես, ենք, եք, են** (սաև *չեն, չես, չենք, չեք, չեն*) օժանդակ բայերը գրվում են **ե** տառով, որը կարդացվում է **է**: Ճիշտ գրելու համար երբեմն անհրաժեշտ է լինում պարզել բառի բաղադրիչները, օրինակ՝ *առօրեական* բառում գրվում է **ե**, որովհետև կազմված է *առ-օր-յա-ական* բաղադրիչներից, և, ըստ շեշտափոխական հնչյունափոխության կանոնների, բառակազմության ժամանակ **յա**-ն դարձել է **ե**: Նույն ձևով՝ *գործունյա – գործունեություն, քրիստոնյա – քրիստոնեություն* և այլն:

Օ – Ո

Օ հնչյունը բառասկզբում հիմնականում գրվում է **օ** տառով, իսկ բառամիջում և բառավերջում՝ **ո** տառով, օրինակ՝ *օգուտ, օրորել, կարոտ, երեկո* և այլն: Բառամիջում և բառավերջում **օ** գրվում է այն դեպքում, երբ այն արմատի սկզբնատառ է, օրինակ՝ *անօգուտ, մեղմօրոր, ՆԱՏՕ, ՅՈՒՆԵՍԿՕ* և այլն (վերջին երկու հապավումներում **օ**-ն օտար լեզվի բառերի սկզբնատառ է): Բացառություն է **ով** (հոգևակին՝ *ովքեր*) բառը, որի բառասկզբի **ո**-ն կարդացվում է **օ**: Բառասկզբում արտասանվող **վօ**-ն գրվում է **ո** տառով, իսկ բառամիջում արտասանվող **վօ**-ն՝ **վո** տառակապակցությամբ, օրինակ՝ *ոզնի, ոսկի, որակ, բանվոր, հնձվոր* և այլն: Բառամիջում արտասանվող **վո**-ն գրվում է **ո** տառով, եթե նրանով սկսվող արմատը հաջորդում է ձայնավորին, օրինակ՝ *ամենաորակյալ, լեզվաոճական, հնաոճ, մարդաորս* և այլն: Բառասկզբում **վո** գրվում է

օտար լեզուներից անցած բառերում՝ *վոլտ, վոլտջրոլ, վոլֆրամ, վոկալ, Վոլոդյա, Վոլգա, Վորոնեժ, Վոզնեսենսկի, Վորոշիլով* և այլն:

Անցյալում փոխառված **Ռդիսևս, Որմիզդ, Որմիզդուխտ** բառերը գրվում են **ռ** տառով:

Ք

Ը ձայնավորը բառասկզբում գրվում է միայն **դ, մ, ն** բաղաձայններից առաջ և **ըստ** բառում, օրինակ՝ *ըղձալի, ըմպանակ, ընթացք* և այլն: Բառամիջում **ը**-ն գրվում է, եթե արմատի սկզբնատառ է, օրինակ՝ *դասընկեր, օրըստօրե, արագընթաց* և այլն: **Ը**-ն բառամիջում գրվում է նաև այն դեպքում, երբ արմատի սկզբնատառ չէ, սակայն այդ բառում ուրիշ ձայնավորներ չկան, օրինակ՝ *շը՛խկ, խը՛շշ, ճը՛ռռ* և այլն: Եթե բառի մեջ կան մեկից ավելի ձայնավորներ, և բոլորը՝ **ը**, ապա գրվում է միայն վերջինը, օրինակ՝ արտասանվում է *շըրը՛խկ*, բայց գրվում է *շրը՛խկ*: Նույն ձևով՝ *ջրը՛խկ, թրը՛խկ, դրդը՛զ* (նաև՝ *Ղրդըզստան*): *Այտընյան, Չալըխյան* ազգանունների մեջ ավանդաբար գրվում է **ը**: Բառավերջում լավող **ը**-ն գրվում է, օրինակ՝ *սառը, դառը, խառը, մարդը, գիրքը* և այլն: Մյուս դեպքերում բառասկզբում և բառամիջում լավող **ը** ձայնավորը համարվում է գաղտնավանկի վանկարար և չի գրվում, օրինակ՝ *(ը)զգույշ, ն(ը)կար, սան(ը)ր* և այլն: Գաղտնավանկի **ը**-ն գրվում է վանկատման և տողադարձի ժամանակ, օրինակ՝ *զըն-դակ, ըզ-գույշ* և այլն: Գաղտնավանկի **ը**-ն կարող է գրվել նաև բանաստեղծական տողի չափը պահելու համար, ինչպես.

Անպատում վըշտով վերըստին նայեց
Իմ ես մեծ սըրտին՝ աշխարհքից էլ մեծ....

Հովհաննես Թումանյան

ՀԱՐՑՆԵՐ ԵՎ ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ժամանակակից հայերենում ո՞ր ձայնավորների գրությունն ու արտասանությունը չեն տարբերվում:
2. Ժամանակակից հայերենում ո՞ր ձայնավորների գրությունն ու արտասանությունը կարող են տարբերվել:
3. Ո՞ր դեպքերում է բառամիջում գրվում է տառը:
4. Ո՞ր դեպքերում է բառամիջում գրվում **օ** տառը:
5. Ո՞ր դեպքերում է բառամիջում գրվում **ը** տառը:

Վարժություն 5: Նշե՛ք, թե որ շարքերի բոլոր բառերում է գրվում է:

1. ան....անալ, առ....ջ, դող....րոցք, ելև....ջ
2. երբև...., էլեկտրա....ներգիա, գուց...., ան....լանելի
3. ինչև...., լայն....կրան, Սևանհ....կ, ան....
4. հն....աբան, ա....րողպրոց, այժմ....ական, աշտ....
5. միջօր....ական, ովև...., շարունակ....լի, երթև....կ
6. մանր....աբան, որև...., լուսն....ջք, Երևանջ....կ
7. ջր....ջք, փողփող....ջ, գեղուղ....շ, գոմ....շ
8. վայր....ջք, մարմար...., գրեթ...., երբևից....
9. Էմալ...., ինչևից...., ծովահ....ն, է....ինք
10. ողբ....րգակ, ափս...., դող....րոցք, ամենա....ական
11. հ....կ, ջ....կ, հ....ն, ա....կ
12. լայն....կրան, բազ...., առ....ջ, հր....շ,
13. փողփող....ջ, հյուլ...., միջօր...., նախօր....
14. ան....ական, առօր....ական, քրիստոն....ական, վայրկ....նական
15. տար....րք, հով....կ, որևից...., վեր....լք
16. Վարդգ....ս, վայր....ջք, երբև...., գործուն....ություն
17. հն....աբան, ան....անալ, մանր...., ուրև....

Վարժություն 6: Նշե՛ք, թե որ շարքերի բոլոր բառերում է գրվում օ:

1. ազգ....գուտ, զարդա....դ, այս....ր, ան....գնական
2. ան....րեն, հն....տի, ամեն....րյա, աման....րյա
3. ան....թևան, ան....թ, ան....ղնաշար, ան....րակ
4. արծաթազ....ծ, բաց....դյա, բաց....թյա, բն....րրան
5. գիշերուզ....ր, գիշեր....թիկ, թիկն....թոց, բախտ....րոշ
6. կես....ր, հանապազ....րյա, հանր....գուտ, հ....գուտ
7. ան....րեն, օր....րել, հանապազ....րդ, մեղմ....րեն
8. միջ....րե, մի....րինակ, ոսկեզ....ծ, տն....րեն
9. վաղ....րոք, վաղ....րդայն,վևէ, սառն....րակ,
10. օրեց....ր, ապ....րինի, նախ....րե, հն....րյա
11. օրըստ....րե, աշխ....ր, արփիազ....ծ, երիզ....րդ

Վարժություն 7: Նշե՛ք, թե որ շարքերի բոլոր բառերում է գրվում ը:

1. այլ....նտրանք, ամենա....նտիր, ան....նդիատ, ան....ստգյուտ
2. ան....նկեր, գահ....նկեց, ակ....նբախ, ան....նդունելի
3. դաս....նթաց, առ....նթեր, ինքն....ստինքյան, խոչ....նդոտ

4. ան....նդունակ, ակ....նդետ, արագ....նթաց, գիրկ....նդխառն
5. դաս....նկեր, համ....նդհանուր, հակ....նդդեմ, կոր....նթարդ
6. համ....նթաց, գույն....զգույն, համ....նկնել, լուս....նկա
7. ակ....նթարթ, առ....նչվել, երկ....նտրանք, անակ....նկալ
8. հատ....նտիր, հյուր....նկալ, մեկ....նդմիշտ, մերթ....նդմերթ
9. նախ....նտրել, որոտ....նդոստ, օր....ստօրե, մի....ստմիոջե
10. մեջ....նդմեջ, շր....խկ, սր....նթաց, ձեռ....նտու
11. մթ....նկա, չ....խկ, ունկ....նդիր, հնդկ....նկույզ

Վարժություն 8: Արտագրե՛ք՝ ըստ անհրաժեշտության լրացնելով օ, ո, է, ե, ղ տառերը:

Լուս....նկա երեկո է: Չեփյուռը օր....ր է ասում մեղմ....րեն խ....շացող ծառերին: Լուսնի արծաթագ....ծ շողերի ներքո փռված է Սևանա լիճը, և մերթ....նդմերթ լսվում է խայտացող կոհակների ախորժալուր ճողփյունը: Երևում են Սևանի...կի լույսերը, որոնք հեռվից թրթռուն են թվում: Մեղմ....ր....ր քամուց սոսափող ծառի ներքո՝ գույն....զգույն ներկված նստարանին, նստած են երկու նախկին դաս....նկերներ՝սկանը և Վարդգ....սը: Նրանց արձակուրդները համ....նկել են, և նրանք, թողած հանապազ....րյա գործերը, եկել են հանգստյան տուն՝ փոքր-ինչ վայելելու հյուր....նկալ բնության հրաշալիքները: Վարդգ....սը հն....աբան է, իսկսկանը՝ գյուղատնտ....ս: Նրա աճեցրած բարձր....րակ խաղողի տեսակները հայտնի են ամբողջ երկրում: Երկունկերները մի ակ....նթարթ կտրվել են առօր....ական հոգսերից և ան....ացած դիտում են ակ....նապարար տեսարանը՝ կոր....նթարդ լեռների ուրվագծերը, լուսինը մերթ....նդմերթ շղարշող ամպերը, արծաթափայլ լիճը: Քամու մի վայրկ....նական սառը հպում սթափեցնում է նրանց, և վեր....սկսվում է ընդհատված գրույցը:

Արտաշես Սարգսյան

Վարժություն 9: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով է կամ ե:

Քրիստոն....ական, այժմ....ական, երբև..., ան....անալ, աշտ..., միջօր..., առ....ջ, հն....աբան, առօր....ական, գեղուղ....շ, գոմ....շ, գրեթե..., հյոււ..., շր....ջք, դող....րոցք, ելև....ջ, երբևից..., զարկ....րակ, ուրևից..., էլեկտրա....ներգիա, ինչև..., ինչևից..., լայն....կրան, մանր..., մանր....աբան, միջօր....ական, նախօր..., որև..., էմալ..., որևից..., վայր....ջք, վայրկ....նական, ուրև..., փողփող....ջ:

Գրականություն



Վարժություն 10: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով օ կամ ո:

Կես....ր, ազգ....գուտ, օրեց....ր, աման....րյա, ամեն....րյա, մի....րինակ, այս....ր, ան....թ, ան....ղնաշար, ան....րակ, ան....զնական, գիշեր....թիկ, հ....գուտ, ան....թևան, ան....րեն, ապ....րիկ, սառն....րակ, արծաթագ....ծ, բն....րրան, հն....րյա, գիշերուզ....ր, ոսկեզ....ծ, թիկն....թոց, հանապազ....րոյ, հանապազ....րյա, հանր....գուտ, հնա....ճ, միջ....րե, վաղ....րոք, տն....րեն, օր....րել:

Վարժություն 11: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով լ:

Հատ....նտիր, ակ....նբախ, համ....նկնել, ակ....նդետ, ամենա....նտիր, հյուր....նկալ, այլ....նտրանք, անակ....նկալ, ան....նդիատ, ան....նդունելի, ան....նդունակ, ան....ստզյուտ, առ....նթեր, ակ....նթարթ, առ....նչվել, արագ....նթաց, գահ....նկեց, գիրկ....նդիառն, գույն....զգույն, դաս....նթաց, մերթ....նդմերթ, դաս....նկեր, երկ....նտրանք, նախ....նտրել, ինքն....ստինքյան, լուս....նկա, խոչ....նդոտ, կոր....նթարդ, համ....նդիանուր, համ....նթաց, ձեռ....նտու, մեկ....նդմիշտ, մթ....նկա, որոտ....նդոստ, սր....նթաց, ունկ....նդիր, օր....ստօրե:

Հիճե՛ք

Սխալ է՝ հոգեբարձու:

Ճիշտ է՝ հոգաբարձու:

Սխալ են՝ օրեկան, ամսեկան:

Ճիշտ են՝ օրական, ամսական, նաև՝ տարեկան:

Սխալ են՝ հուներեն, չիներեն:

Ճիշտ են՝ հունարեն, չինարեն:

Սխալ են՝ ի օգուտ, ի շնորհիվ:

Ճիշտ են՝ հօգուտ, շնորհիվ:



ԵՐԿՆԵՅՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ Յ ԾԱՅՆԱԿԱՊԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկինյուն է կոչվում յ-ի և որևէ ձայնավորի արտասանական միասնությամբ կազմված կապակցությունը, այսինքն՝ յ-ն և այդ ձայնավորը պետք է լինեն միևնույն վանկում, օրինակ՝ *Հայաստան* բառում կա **յա**, այլ ոչ թե **այ** երկինյունը՝ *Հա-յաս-տան*: Ժամանակակից հայերենի երկինյուններն են՝ **այ, յա, էյ, յե, ույ, յու, օյ (ոյ), յօ (յո), յի, յը**, օրինակ՝ *կայծ, մատյան, Չեյթուն, հայելի, լույս, սյուն, Նոյ, յոթ, գնայի, հայր* և այլն: Բառամիջում և բառավերջում, ըստ ընդունված կանոնների, երկինյունների **է, օ** հնչյունները գրվում են **ե, ո** տառերով, օրինակ՝ *արդյոք, հե՛յ, թեյ* և այլն: Բառասկզբում **յե** երկինյունը գրվում է **ե** տառով, օրինակ՝ *ելակ, երկաթ* և այլն: Բառամիջում **յե** երկինյունը գրվում է **ե** տառով, եթե այդ երկինյունով սկսվում է ձայնավորին հաջորդող արմատ, օրինակ՝ *ամենաերկար, երկրեերկիր, կիսաեզրափակիչ* և այլն:

Երկինյունների արտասանությունն ու գրությունը հիմնականում համընկնում են, և ուղղագրական դժվարություններ մեծ մասամբ առաջանում են ոչ ճիշտ արտասանության հետևանքով, օրինակ՝ *առյուծ*-ը սխալ արտասանվում է *այռուծ, սյունակ*-ը՝ *սունյակ* և այլն, և դա էլ պատճառ է դառնում սխալ գրության:

Որոշ տարբերություններ կան միայն **յո** և **յա** երկինյունների գրության ու արտասանության միջև:

30

Յո երկինյունը հետևյալ բառերում գրվում է **իո՝ ամբիոն, աքսիոմ, Բյուզանդիոն, բրաբիոն, գիլիոտին** (գլխատելու սարք), **էսկուրսիոն, իդիոմատիկ** (դարձվածային), **հետիոտն, մարմարիոն, մեդալիոն, միլիոն, շամպինիոն** (սունկի տեսակ), **չեմպիոն, պանսիոնատ, ռադիո, Սրապիոն, տրիլիոն, օրիորդ**: **Յո** երկինյունը գրվում է **իո** նաև **-ցիոն**-ով սկսվող բառերում, օր.՝ **ավիացիոն, ինդուկցիոն** և այլն:

Ակորդեոն, ամեռա, թերեմ, լեզեոն, Նապոլեոն, քամելեոն բառերում **յո** երկինյունը գրվում **եո**:

31

Յա երկինյունը մի շարք դեպքերում գրվում է **իա** տառերով.

1. հետևյալ բառերում՝ **ալելուիա, ակացիա, բամիա, գիմնագիա, դաստիարակ, զինկոմիսարիատ, էներգիա, էսկուրսիա, խավիար,**

կրիա, հեքիաթ, միլիարդ, մումիա, սերիա, Սիսիան, սոցիալական, փասիան, քիմիա, օլիմպիադա, օվկիանոս (աստիճանաբար տարածվում է դաստիարակ և օլիմպիադա բառերի իա-ով արտասանությունը)։

2. տեղանուններում **Անգլիա, Գերմանիա, Իտալիա, Կիլիկիա** և այլն։

3. արական անձնանուններում **Ազարիա, Անանիա, Բենիամին, Եղիա, Եղիազար, Երեմիա, Սուբիաս** և այլն (կան որոշ բացառություններ՝ *Վոլոդյա, Իյյա, Կոյյա, Վանյա* և այլն)։

4. իգական **Մարիամ** անձնանվան մեջ, իսկ իգական մյուս անուններում գրվում է **յա՝ Ամայյա, Արաբայյա, Օֆեյյա** և այլն։ **Ասյա, Սոֆյա, Վիկտորյա** բառերը որպես իգական անուններ գրվում են **յա-ով**, իսկ որպես աշխարհագրական տեղանուններ՝ **իա-ով՝ Ասիա** (աշխարհամաս), **Սոֆիա** (Բուլղարիայի մայրաքաղաքը), **Վիկտորիա** (ջրվեժ, լիճ և այլն), իգական **Լիա, Լիանա, Մարիա** անձնանունները գրվում և արտասանվում են **-իա-ով**։

5. **Անդրեաս, իդեալ, հրեա, սեանս** բառերում գրվում է **եա**։

3

Բառի իրար հաջորդող ձայնավորների մեջև սովորաբար արտասանվում է **յ** հնչյունը, որը կոչվում է **յ** ձայնակապ։ **3** ձայնակապը գրվում է միայն **ա-ից** և **ո-ից** հետո, երբ նրանց հաջորդում է ձայնավոր, օրինակ՝ *երեկոյան, Իսրայել, Միքայել, Նայել* և այլն։ Բացառություն են **Աիդա, արխաիկ** (հնաբանական), **բառքաք** (վարազածառ), **բոա** (վիշապօձ), **կակաո, կաուչուկ, կոալա** (պարկավոր արջ), **կոալիցիա, Նաիրի, պոեզիա, պոեմ, պոետ, Ուկրաինա** բառերը, որոնցում **ա-ին** և **ո-ին** հաջորդում է ձայնավոր, սակայն նրանց միջև **յ** չի արտասանվում և չի գրվում։ Բաղադրյալ բառերում, եթե **ա-ով** կամ **ո-ով** ավարտվող բաղադրիչին հաջորդում է ձայնավորով սկսվող արմատ, ապա ձայնավորից առաջ **յ** չի գրվում, օրինակ՝ *ամենաարագ, կինոաստղ* և այլն։

Բառավերջի արմատական **յ-ն** և՛ ուղիղ ձևերում, և՛ քերականական փոփոխություններ կատարելիս ու բաղադրյալ բառեր կազմելիս գրվում է, օրինակ՝ *Ալեքսեյ - Ալեքսեյի, թեյ - թեյել - թեյաման, Սերգեյ - Սերգեյի, լիցեյ - լիցեյի* և այլն։

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է երկինջունը:
2. Որո՞նք են ժամանակակից հայերենի երկինջունները:
3. Ո՞ր երկինջունների գրության և արտասանության միջև կարող են տարբերություններ լինել:

Վարժություն 12: Արտագրե՛ք և ընդգծե՛ք երկինջուններ ունեցող բառերը:



Սևանը թողել, հեռացել է այս ժայռերից: Վաղուց է հեռացել, և ժայռերը հիմա մի տեսակ օտար են թվում ջրերից ազատված ավազե հարթության վրա: Ժայռերից մեկի ողորկ մակերեսին ուրարտական շրջանի սեպագրեր են. «Ռուսա Առաջին արքան չորս աշխարհ ծովի այս կողմից, տասնինը աշխարհ ծո-

վի այն կողմից գրավեց ու միացրեց իր տերությանը և ի նշան դրա՝ կառուցեց Թեյշեբա աստծու այս տաճարը»: Տաճարը, հասկանալի է, չկա, իսկ սեպագրերը մաշվել են քամուց, ժամանակից, անձրևներից, ոչ շատ առաջ՝ նաև Սևանի ալիքներից: Տաճարը եղել է բարձունքի վրա՝ շրջապատված պարիսպներով, որոնց հետքերը դեռ մնում են: Ժայռերի տակ ջրերից ազատված հարթությունն աստիճանաբար լցվում է նոր շինություններով: Կապույտ գույնի երկարուկ մի ավտոբուս մեկնվել է ավազներին և բավական խղճալի տեսք ունի. անիվները հանած են. նման է ձիու, որի չորս ոտքն էլ կտրված է: Նախկին ավտոբուսը հիմա շինարարների խորտկարանն է, և հավանորեն նրանցից մեկն էլ կարմիր յուղաներկով գրել է ավտոբուսի ճակատին. «Սրճարան Ուրարտու»: Ես նայում եմ Ռուսա Առաջինի սեպագրերին, հետո՝ ավտոբուսին և տխուր ժպտում ժամանակների այս կոկտեյլի վրա. նույն քառակուսի կիլոմետրի վրա կայացել է տարբեր դարաշրջանների երկու պարծենկոտի հանդիպումը. մեկը՝ արքա, մյուսը՝ հավանորեն վարորդ. միայն թե, ափսո՛ս, որ ավտոբուսը երկար մեկնված չի մնա այս ավազներին. անիվներ կղնեն, կտանեն մի ուրիշ տեղ, որտեղ պետք լինի:

Վարդգես Պետրոսյան

**Վարժություն 13: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրա-
ժեշտության գրելով յո, իո կամ եո:**

Միլ.....ն, ամբ.....ն, հետ.....տն, ամ.....բա, ակորդ.....ն, ավիաց.....ն, արդ.....ք,
տրիլ.....ն, աբս.....մ, Բյուզանդ.....ն, բրաբ.....ն, գիլ.....տին, սենսաց.....ն,
պանթ.....ն, էքսկուրս.....ն, թ.....րեմ, ինդուկց.....ն, լեգ.....ն, կոալից.....ն,
մարմար.....ն, միլ.....նավոր, մուլտիպլիկաց.....ն, շամպին.....ն, չեմպ.....ն,
պանս.....նատ, ռադ.....ցանց, քամել.....ն, օր.....րդ:

**Վարժություն 14: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրա-
ժեշտության գրելով յա, իա կամ եա:**

Անց.....լ, հեք.....թ, ալելու....., եղ.....մ, Ամալ....., ակաց....., Անան.....,
առօր....., Արաբս....., կր....., բամ....., Բեն.....մին, Բուն.....թյան, դաստ.....րակ,
Եղ....., ս.....նս, Երեմ....., կղզ.....կ, Երմոն....., էքսկուրս....., իդ.....լ, լ.....րդ,
խավ.....ր, Կիլիկ....., հր....., Մար.....մ, Ազար....., միլ.....րդ, միմ.....նց, մում.....,
Սիս.....ն, Սուբ.....ս, վայրկ.....ն, փաս.....ն, օվկ.....նոս, Օֆել.....:

**Վարժություն 15: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրա-
ժեշտության գրելով ու, ույ կամ յու:**

Չգ.....շ, ալ.....ր, ադբ.....ր, ողկ.....գ, աղ.....սակ, առ.....ծ, ատամնաբ.....ծ,
արդ.....նք, արծաթահնչ.....ն, ար.....ն, բ.....լ, գ.....ծ, գ.....ծել, դաշ.....ն, դաշ.....նա-
հարել, դ.....զն-ինչ, ս.....նակ, երև.....թ, աշխ.....ծ, զգ.....շանալ, ընկ.....գ,
թ.....ն, թ.....նավորել, համբ.....ր, համբ.....րել, հար.....ր, հ.....ր, հնչ.....ն (գոյակ.),
հնչ.....ն (ածակ.), ձ.....թ, ձ.....ն, ձ.....լարան, մակաբ.....ծ, մեղմահնչ.....ն, մ.....ս,
մշակ.....թ, մշակ.....թային, ողջ.....ն, ողջ.....նել, պա.....սակ, փ.....թաջան,
երև.....թական:

**Վարժություն 16: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրա-
ժեշտության գրելով յ:**

Է.....ական, արխա.....իկ, հա.....ելի, բա.....ոբաբ, բո.....ա, գա.....խոն,
Է.....ակ, կա.....ուչուկ, Է.....ություն, թե.....ել, թի.....ակ, Իսրա.....ել, մի.....ակ,
լի.....ություն, ինա.....ել, կակա.....ո, Ռաֆա.....ել, ուխտադրու.....ծ, կո.....ալա,
կո.....ալիցիա, հա.....ելազարդ, հի.....անալ, մի.....այն, մի.....անալ, մի.....ասին,
Միքա.....ել, Նա.....իրի, նա.....ել, պո.....եմ, պո.....ետ, ձի.....արշավ, ռա.....ուռդ,
Սերգե....., վա.....ել, վա.....ելել, տի.....եզերք, Ուկրա.....ինա, տրամվա.....:



**Վարժություն 17: Որոշե՛ք, թե որ բառերում է բաց թողնված երկ-
հնչյուն, իսկ որ բառերում՝ մեկ հնչյուն:**

Դ....զև-ինչ, ատամնաբ....ժ, ուխտադր....ժ, Օֆել....., ան....շ, զգ....շ,
ար....ն, արդ....ք, թռչ....ն, սր....նք, Ռաֆա....լ, դեղոր....ք, անագոր....ն,
Ն....իրի, գա....սոն, դաշ....նահարել, բ....ժարան, երև....թական, Միքա....լ,
հեք....թ, Եղ....., մշակ....թային, փ....թաջան, ալելու.....:

ԲԱՂԱՅԱՅՆՆԵՐԻ ՈՒՂԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հայերենում գրության ու արտասանության տար-
բերություններն առնչվում են **բ - պ - փ, գ - կ - ք, դ - տ - թ, ձ - ծ - ց,
ջ - ճ - չ, ղ - խ, վ - Ֆ, ռ - ռ, հ** հնչյունների, ինչպես նաև **կրկնակ
բաղաձայնների** գրությանն ու արտասանությանը: Թեև հանդիպում են
սխալներ, որոնք առնչվում են **զ - ս, ժ - շ, մ - ն** հնչյունների գրությանը,
սակայն դրանք սխալ արտասանության կամ մեկ այլ կից հնչյունի
ազդեցության հետևանք են: Օրինակ, եթե **անբասիր** բառը գրվել է մ-ով,
ապա դա **ն**-ին հաջորդող **բ**-ի ազդեցության հետևանք է. **ն**-ն արտասանվել
է մ և այդպես էլ գրվել է: Ուղղագրական և ուղղախոսական կանոններով
նախատեսված չէ, որ գրվի **ն**, սակայն կարդացվի **մ**:

բ - դ - ժ

դ-ի և **փ**-ի գրության ու արտասանության տարբերություններ չկան,
օրինակ՝ *պատգամ, պար, փարոս, փրփուր* և այլն:

բ-ի գրությունն ու արտասանությունը որոշ դեպքերում տարբեր են:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում **ր**-ից, **մ**-ից,
կամ ձայնավորից հետո արտասանվում է **փ** հնչյունը, սակայն գրվում է **բ**
տառը՝ **աբխազ, Գաբրիել, դարբին, երբ, իբր, լիբր, խաբել, Հակոբ,
համբերել, համբույր, հարբել, Նուրբ, շաբաթ, որբ, Սերորբ, սուրբ,
սրբել, ուրբաթ, Զերորբ**:

Աղբ, աղբյուր, եղբայր, ողբ և նրանցից կազմված բառերում գրվող
ղբ-ն կարդացվում է **խպ**:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Վարժություն 18: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրա-
ժեշտության գրելով բ, պ կամ փ:**

եղ....այր, ա....խագ, ալեծու...., հղ....անալ, աղ....յուր, ա....շել, ար....շիռ, ար....ի, Ար....իար, համ....երել, դար....ին, ճամ....րուկ, դար....աս, դա....նեվարդ, եր...., եր....ներանգ, թար...., թմ....կաթաղանթ, ի....րև, լե....-լեցուն, խա....ել, թ....րտալ, խարխա....ել, համ....ուրել, քարակո...., հար....ել, ճամ....ա, ճե....-ճերմակ, ճող....յուն, շամ....ուր, ոսկեծո...., որ...., ող...., ջրար....ի, ս....րդել, ս....րթնել, սուր...., սր....ել, նուր...., ուր....աթ:

Վարժություն 19: Գտե՛ք, թե որ շարքերի բոլոր բառերում է գրվում ք:

1. աղ....յուր, եղ....այր, դար....ին, խա....ել
2. աղ...., ար....շիռ, ի....րև, եր....
3. ա....խագ, Գա....րիել, թմ....կաթաղանթ, ալեծու....
4. Հակո...., Համ....արծում, համ....երել, ար....ի
5. համ....ուրել, ջրար....ի, հղ....անալ, հար....ել
6. նուր...., շա....աթ, թար...., որ....
7. ող...., եր....ներանգ, խա....շիկ, ուր....աթ
8. Սերո...., Ար....իար, սուր...., սր....ել

Վարժություն 20: Գտե՛ք, թե որ շարքերի բոլոր բառերում է գրվում փ:

1. քարակո...., ա....շել, դա....նեվարդ, սոսա....ել
2. ճամ....րուկ, լե....լեցուն, սրտատրո...., սա....որ
3. ալեծու...., ս....րդել, ս....րթնել, խա....շիկ
4. խարխա....ել, ճող....յուն, թա....անցիկ, դա....նեվարդ
5. շամ....ուր, փա....ագ, սա....րիչ, թա....ք
6. Ար....ինե, տար....ողել, անխա....ան, դար....աս
7. կառա....նարան, թ....րտալ, պար....ակվել, հղ....անալ
8. ա....սե, գամ....ռ, շամ....ուր, ոսկեծո....
9. տրո....յուն, թ....ուտ, պա....ակ, ճե....-ճերմակ
10. սթա....վել, կա....կա....ել, ա....սոս, հա....շտապ

Գ - Կ - Ք

Կ-ի և ք-ի գրության ու արտասանության տարբերություններ չկան, օրինակ՝ կատակ, արթա, քուրք և այլն:

Գ-ի գրությունն ու արտասանությունը որոշ դեպքերում տարբեր են:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում ր-ից, ն-ից կամ ձայնավորից հետո արտասանվում է ք հնչյունը, սակայն գրվում է գ տառը՝ անգամ, ավագ, գոգ, երգ, զուգել, էգ, էզուց, թագավոր, թարգմանել, ծագել, ծեգ, կարագ, կարգ, հագնել, հոգնել, հոգի,

Գրություն

հոգնակի, ձագ, ձիգ, ճիգ, ճրագ, ճրագու, մարագ, մարգարե, մարգարիտ, մուգ, նորոգել, շոգ, շոգի, ոգի, ոռոգել, պատարագ, պարզև, սուգ, տեգր, ուրագ, օգնել, օգուտ:

Շաղգամ բառում **ղ**-ից (արտասանվում է **խ**) հետո գրվող **գ**-ն արտասանվում է **կ**, սակայն աստիճանաբար տարածվում է նաև **ղգ**-ով արտասանությունը: Տարածվում է նաև **ճիգ** և նրանից կազմված բառերի (**ճգնել**, **ճգնաժամ** և այլն) **գ**-ով արտասանությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարժություն 21: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով գ, կ կամ ք:

Օ....նել, ան....ամ, ավա...., մու...., գնարբու.... (ծաղիկ), գինարբու.... (խնջույք), գո....ավոր, եր...., զու....ել, հո....ի, տրտմաշու...., թա....ավոր, թար....մանել, ծա....ել, ծե...., կարա...., կար...., հա....նել, տարեր...., պար....և, հո....նել, պատարա...., ձա...., սայթա....ել, շաղ....ամ, ձա....ար, ձի...., ճի...., ճրա...., մարա...., մար....արե, մար....արիտ, նորո....ել, շա....անակ, շո...., ո....ի, ոռո....ել, սու...., վարա....ույր, ուրա...., փեղ...., փող...., փղձու...., քաշկռտու....:

Վարժություն 22: Գտե՛ք, թե որ շարքերի բոլոր բառերում է գրվում գ:

1. ան....ամ, ավա...., զու....ել, շո....
2. գո....ավոր, ձա....ար, ոռո....ել, տրտմաշու....
3. եր...., սայթա....ել, ձա...., շաղ....ամ
4. արտասու...., հո....ի, նորո....ել, ո....ելից
5. թա....ավոր, ճրա...., քաշկռտու...., պատարա....
6. թար....մանել, շա....անակ, պար....և, փող....
7. կարա...., ձի...., փեղ...., մար....արիտ
8. կար...., ճի...., մե...., սու....
9. հա....նել, մարա...., վարա....ույր, տե....ր
10. հո....նել, մար....արե, մու...., ո....ի
11. ծե...., ուրա...., օ....նել, տարեր....

Գ - Տ - Թ

Տ-ի և **թ**-ի գրության ու արտասանության տարբերություններ չկան, օրինակ՝ *տուն*, *ազատ*, *արթնանալ*, *սաղարթ*, *որթ* (խաղողի վազ) և այլն:

Դ-ի գրությունն ու արտասանությունը որոշ դեպքերում տարբեր են:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում **ր-ից, ն-ից** կամ ձայնավորից հետո արտասանվում է **թ** հնչյունը, սակայն գրվում է **դ** տառը՝ **անդամ, արդար, արդեն, արդյոք, արդյունք, արդուկ, բարդ, բերդ, բրդել** (մանրացնել), **բուրդ, դադար, դդում, դրդել, երդիկ, երդում, գարդ, լաջվարդ** (մուգ երկնագույն), **լերդանալ, լյարդ, խնդիր, խորդուբորդ, կարդալ, կենդանի, հաղորդել, մարդ, նյարդ, Նվարդ, որդ** (ճիճուկ), **որդի, վարդ, Վարդան, վարդապետ, Վարդգես, վրդովել, օդ, օրիորդ**:

Թ հնչյունը **դ** տառով է գրվում նաև **-որդ, -ուրդ** ածանցներում՝ **առաջնորդ, ժողովուրդ** և այլն, ինչպես նաև **ընդ-**ով սկսվող բառերում՝ **ընդամենը, ընդհակառակը, ընդհանուր, ընդունակ, ընդունել** և այլն: Բացառություն են **ընդդեմ, ընդդիմություն, ընդարմանալ** բառերը, որոնք արտասանվում են **դ-ով**:

Խեղդել բառում **դ-ից** (արտասանվում է **խ**) հետո **դ-ն** արտասանվում է **տ**:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարժություն 23: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով **դ, տ** կամ **թ**:

Աղո....ք, ար....ար, ար....են, ըն....հանուր, ար....յոք, կար....ալ, ար....յունք, ար....ուն, բար...., բեր...., բուր...., գաղ....նի, դա....արել, դր....ել, եր....իկ, եր...ում, շքեր..., գար..., վար..., ըն....ամենը, ըն....արմանալ, ըն....ունել, թա....երական, լեր....անալ, վար....ապետ, լյար..., խն....իր, ան....ամ, խոր...ուբոր..., խր....վիլակ, կեն....անի, հաղոր...ել, նյար..., Նվար..., լաջվար..., որ....ի, սպր....ել, Վար....գես, փար....ամ, օրիոր..., պայ....:

Վարժություն 24: Գտե՛ք, թե որ շարքերի բոլոր բառերում է գրվում **դ**:

1. ան....ամ, ար....յոք, ըն....հանուր, խոր....անոց
2. ար....են, բուր..., լյար..., օ....ոց
3. բար..., ար....ար, աղո....ք, ար....յունք
4. բեր..., ժողովուր..., դր....ել, գաղ....օջախ
5. դա....արել, եր....իկ, ըն....ունել, միջնոր....
6. եր...ում, գար..., ըն....ամենը, անգայ....
7. Բար....ուղիմես, որ....ատունկ, լեր....անալ, խն....իր
8. ըն....արմանալ, կար....ալ, նյար..., փար....ամ
9. հաղոր...ել, կեն....անի, մար....կային, երիզոր....



10. որ....ի, վաղոր....այն, խր....վիլակ, երկան....ամ
11. Վար....ևան, Վար....գես, Վար....ան, Նվար....
12. վաղոր....յան, վար...., վար....ապետ, խոր....ուբոր....
13. օրիոր...., սպր....ել, օ....ափոխիչ, ար....ուն

Գ - Մ - Ճ

Ծ-ի և **ց**-ի գրության ու արտասանության տարբերություններ չկան, օրինակ՝ *ծաղիկ, կայծ, մեծ, ցորեն, հարց, ուրց* և այլն:

Ձ-ի գրությունն ու արտասանությունը որոշ դեպքերում տարբեր են:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում **ր**-ից, **ղ**-ից (արտասանվում է **խ**) կամ ձայնավորից հետո արտասանվում է **ց** հնչյունը, սակայն գրվում է **ձ** տառը՝ *արձակ* (նաև՝ *արձակուրդ, ընդարձակ, համարձակ* և այլն), *բարձ, բարձել, բարձր, դաղձ, դարձ, դեղձ, դեղձան* (բաց դեղնագուն, խարտյաշ), *դեղձանիկ, դերձակ, դերձան* (կարի թել), *խուրձ, հանդերձ, հարձակվել, համբարձվել, Համբարձում, որձ, վարձ, փորձ, օձ*:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարժություն 25: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով **ձ**, **ժ** կամ **ց**:

Հինավուր...., ամբար....իչ, լար....ուն, ան....ուդար...., ասացվա....ք, ատաղ....ագործ, ար....ակ, ար....ան, բար...., բար....ել, բար....ր, փղ....կալ, գլուխկոն....ի, խ....կել, դաղ...., դար...., դեղ...., դեղ....ան, դեր....ակ, դեր....ան, թխվա....ք, լվա....ք, խուր...., կեղ....ամ, կ....իկ, կ....կել, կո....կել, հանդեր...., վար...., հանդիպակա...., հար....ակվել, համբար....վել, հե....կլտալ, ձևվա....ք, ձվա....եղ, մազապուր...., որ....կալ, որ...., պախուր...., վեհապան...., վր....ին, կ....կտուր, տր....ակ, ուր...., փոր...., քաղ....ր, օ....իք:

Վարժություն 26: Գտե՛ք, թե որ շարքերի բոլոր բառերում է գրվում **ձ**:

1. ատաղ....ագործ, դեր....ակ, վր....ին, ուր....
2. բար...., ար....ան, դեղ...., ձվա....եղ
3. ամբար....իչ, վար...., որ....կալ, դեր....ան
4. ար....ակ, դաղ...., հանդեր...., փղ....կալ
5. անցուդար...., հանդեր...., հար....ակվել, ասա....վածք
6. որ....աբար, համբար....վել, վար...., գլուխկոն....ի
7. դեղ....անիկ, թխվա....ք, որ...., օ....իք

8. բար....ր, խուր....., փոր....., լար....ուն
9. բար....ել, լվա....ք, ար....ան, ար....ակուրդ
10. դաղ...., դար....., դեղ...., ուր....
11. դեղ....ան, դեր....ակ, դեր....ան, կեղ....ամ
12. բար....ունք, օ....ագալար, երկնամեր....., մղ....ավանջ
13. համար....ակ, խր....ակապ, վար....կան, աղան....
14. խ....կել, խոտհուն....., բազմափոր....., բար....րախոս
15. օ....ածուկ, կ....իկ, վար....ակալ, բար....րուղեշ

Վարժություն 27: Գտե՛ք, թե որ շարքերի բոլոր բառերում է գրվում ց:

1. կ....կել, հանդիպակա....., հինավուր....., կ....կտուր
2. պախուր....., տր....ակ, ցն....ուղ, ուր....
3. քաղ....ր, մոլու.....ք, ապաթար....., լռակյա....
4. կո....կել, վաղան....իկ, կառամատույ....., տաղասա....
5. թափան....ել, ցն....ել, հանգու....ել, հե....կլտալ
6. ցան....., դողերո....ք, ձևվա....ք, քղան....ք
7. ընթեր....ել, ձվա....եղ, թրմփո....., թյուրիմա....ություն
8. խե....եգործ, մա....ուցիկ, մր....ակից, մազապուր....
9. փղ....կալ, որ....կալ, հե....կլտալ, ան....ողիկ
10. ար....ունք, քաղ....ու, լու....կի, հնո....

Գ - Կ - Չ

Ծ-ի և **չ**-ի գրության ու արտասանության տարբերություններ չկան, օրինակ՝ *ճանճ, պերճ, չամիչ, թռչել, դարչին, կակաչ* և այլն:

Զ-ի գրությունն ու արտասանությունը որոշ դեպքերում տարբեր են:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում **ր**-ից, **ղ**-ից (արտասանվում է **խ**) կամ ձայնավորից հետո արտասանվում է **չ** հնչյունը, սակայն գրվում է **ջ** տառը՝ **աղչիկ, ամբողջ, աջ, առաջ, առաջին, առաջ-նորդ, արջ, գիջել, թրջել** (խոնավացնել), **իջնել** (սաև վայրէջք), **մեջ** (սաև միջև), **մեջք, ողջ** (սաև ողջույն, առողջ և այլն), **ոչիլ, վերջ, քաջք** (ղև):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարժություն 28: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով ջ, ճ կամ չ:

խոխո....., ակնակապի....., աղ....ատել, դար....ին, աղ....ամուղ....., աղ....իկ, ա....պարար, ամբող....., այծենակա....., անուր....., խուր....ին,



առա....., առե....., առ.....և, գո.....ի, ար....., բաղար....., բա.....կոն, Բ.....նի,
 բուր....., գաղ....., զեղ.....ել, զի.....ել, զղ.....ալ, թր.....ել, լա.....վարդ,
 խառնիճաղան....., խո.....կոր, գա.....ա....., կտրի..... (բաջ), կտրի..... (կտրող),
 հաղար....., հար....., մար.....ան, մի.....և, մին.....և, ող....., որ....., չղ.....իկ,
 պ.....նանք, պ.....րանք, մե....., վեր....., փար....., քա.....ք:

Վարժություն 29: Գտե՛ք, թե որ շարքերի բոլոր բառերում է գրվում ք:

1. աղ.....ամուղ....., գաղ....., զղ.....ալ, թր.....ել
2. աղ.....իկ, Բ.....նի, խառնիճաղան....., այծենակա.....
3. ամբող....., գեղ.....ուկ, լա.....վարդ, խո.....կոր
4. անուր....., զի.....ել, զեղ.....ել, խոխո.....
5. առա....., ակնակապի....., խուր.....ին, հաղար.....
6. ա....., մար.....ան, մե....., մի.....և
7. առե....., մին.....և, ող....., ո.....իլ
8. առ.....և, չղ.....իկ, բա.....կոն, քա.....ք
9. ար....., որ....., վեր....., փար.....
10. բաղար....., բար.....իկ, բուր....., գա.....
11. գաղ....., մի.....ակ, գո.....ի, ող.....ույն
12. այծեղ.....յուր, վեր.....ակետ, եր.....անկություն, դար.....ին
13. քրքի....., վայրե.....ք, հար....., մի.....օրեական
14. ա.....պարար, հոր.....որ.....ել, թր.....ոց, ան.....րդի
15. Է.....միածին, Սո.....ի, սո.....ի, կապար.....

Ղ – Խ

Խ տառը միշտ կարդացվում է **խ**, օրինակ՝ *ախտ* (հիվանդություն), *բախտ*, *դժոխք*, *դրախտ*, *խախտել*, *խխունջ*, *տախտակ*, *ուխտ* (երդում, դաշինք), *փախչել* և այլն:

Ղ տառն էլ հիմնականում կարդացվում է **ղ**, օրինակ՝ *աղ*, *խաղող*, *ղեկ*, *ճաղ*, *մաղ* և այլն:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում **խ** հնչյունը գրվում է **ղ** տառով՝ *աղբյուր*, *Աղթամար* (կղզու և վանքի անվանումը), *աղջիկ*, *աղտ* (կեղտ), *աղբատ*, *բողկ*, *գաղթ*, *դաղձ*, *դեղձ*, *դեղձանիկ*, *եղբայր*, *զեղչ*, *թուղթ*, *կեղտ*, *կողպեք*, *կողք*, *հաղթել* (սաև *հաղթանակ*, *հաղթություն* և այլն), *հղկել*, *ճեղք*, *մաղթել*, *մեղք*, *մղկտալ*, *շաղգամ*, *շաղկապ*, *շղթա*, *ողբ*, *ողջ*, *ողկույզ*, *պղտոր*, *ուղտ* (սապատավոր կենդանի), *փեղկ*, *փողք*, *քաղցր*, *սանդուղք*, *սեղմել*: **Ճաղգամ** բառն արտասանվում է նաև **ղգ**-ով:

Գրականություն



Հովհաննես Թումանյանի հայտնի բալլադի վերնագիրը գրվում է խ-ով՝ «Ախթամար», քանի որ բալլադում այն մեկնաբանվում է որպես *ախ* ծայնարկության և *Թամար* անվան միացումից ծագած բառ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարժություն 30: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով դ կամ իւ:

Տա.....տակ, տա.....տուկ, ա.....տ (հիվանդություն), ա.....տ (կեղտ), ա.....բատ, ապու.....տ, Ա.....թամար (կղզի), բա.....տ, բո...կ, թու.....թ, դա....ձ, թա...տ, դժո....ք, դրա.....տ, ե....բայր, երա.....տիք, հա....ճապակի, զմրու...տ, թ....կի, թու.....ս, վ....տալ, ժ....տել, իա.....տել, իե....դել, ճե....ք, խրո.....տ, ծա....ս, կթ....ա, կ....տար, կմա....ք, կո....պեք, նա....կին, նա....ճիր, նա....շ, ո....կույզ, թու.....պ, պանդու.....տ, Որմիզդու.....տ, պ....տոր, ջա....ջա....ել, սանդու....ք, Վա....թանգ, վա...ճան, վա....կոտ, փա....ջել, ու....տ (դաշինք), ու....տ (կենդանի):

Վարժություն 31: Գտե՛ք, թե որ շարքերի բոլոր բառերում է գրվում իւ:

1. Ա.....թամար (կղզի), ապու.....տ, դրա.....տ, դժո....ք
2. բա.....տ, ա.....տ (կեղտ), բա.....տակ, զմրու.....տ
3. ե....բայր, ա.....տ (հիվանդություն), երա.....տիք, թա.....տ
4. խրո.....տ, ա.....բատ, ծա....ս, ժ....տել
5. կ....տար, դա....ձ, կմա....ք, նա....կին
6. բո...կ, Որմիզդու.....տ, պանդու.....տ, ս....տոր
7. թ....կի, թու.....պ, թու.....ս, իա.....տել
8. նա....ճիր, հա....ճապակի, ո....կույզ, ցողաթաթա....
9. ջա....ջա....ել, վա....ճան, Վա....թանգ, վա....կոտ
10. տա.....տակ, փա....ջել, վ....տալ, սանդու....ք
11. բա.....ել, ժ....տել, Շահանդու.....տ, հո....որտալ
12. ծա....սել, կթ....ա, շաղա....ել, ապ....տել
13. տա.....տուկ, հարբու....., բա.....տավոր, թ....թակից
14. ոսկրա.....տ, Թումանյանի «Ա.....թամարը», կո....կոտել, նա....շ

Ր – Ռ

Բառասկզբում, բառամիջում և բառավերջում գրվող **ր**-ն արտասանվում է **ր**, իսկ **ռ**-ն՝ **ռ**, օրինակ՝ *րոպե, Րաֆֆի, արժանի, արծիվ, արհամարհել, արջ, կրծել, փարթամ, բար, ինտերնետ* (համացանց), *ինտերնացիոնալ, Րաֆայել, ռետին, առակ, դուռ* և այլն:

Երբեմն սխալների տեղիք են տալիս արմատի կրկնությամբ կազմված բառերը: Դրանց վերաբերյալ անհրաժեշտ է հիշել հետևյալը:

Ռ-ով վերջացող արմատի կրկնությամբ կազմված բառերում առաջին արմատի **ռ**-ն հիմնականում փոխվում է **ր**-ի, օրինակ՝ *բարբառ, գրգիռ, թրթիռ, կարկառել, մրմռալ* (կսկծալ), *սարսուռ* և այլն:

Եթե **ռ**-ով վերջացող արմատի կրկնությամբ կազմված բառերը բնածայնական կամ նմանածայնական են, ապա առաջին արմատի **ռ**-ն չի փոխվում, օրինակ՝ *գոռգոռալ* (սաև *ամպագոռգոռ* և այլն), *դռդռալ, խռխռալ, կռկռալ, հռհռալ, ճռճռալ, մռմռալ, փռփռալ* և այլն:

Վառվռուն բառը գրվում է **ռ**-երով:

Թրթուր, կերկերուն, մարմար, փրփուր բառերը գրվում են **ր**-երով:

Արմատի կրկնությամբ բազմապատկականություն արտահայտող բայերում պահպանվում են կրկնվող արմատի վերջին **ռ**-ն կամ **ր**-ն, օրինակ՝ *թռվռալ, ծռմռել, հուրհրալ, մարմրել, փորփրել, քրքրել* և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարժություն 32: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով **ր** կամ **ռ**:

Թ....թալ, թ....վալ, ա....համարիել, բա....բառ, հու....թի, ինտե....նացիոնալ, կա....կառել, կե....կե...ուն, կ....ճիկ, կ....ունկ (թռչուն), կ....ունկ (գարշապար), վա....վռուն, կ....ծել, կ....ճտացնել, ճ....ճ....ալ, մա....մա...., պա....կել, սա....սուռ, ս....թս....թալ, փ....փու..., փ....փ....ալ:

Վարժություն 33: Արտագրե՛ք՝ ըստ անհրաժեշտության լրացնելով **ր** կամ **ռ** տառերը:

Ժամանակները խա....ն են ու խ....թին.
Ինչ-որ տազնապ է ամպն իր հետ տանում,
Ինչ-որ սա....սուռ կա անտառի շու....թին,
Ինչ-որ խո....հուրդ կա, որ չեմ հասկանում:

Ժամանակները խա....ն են ու խ....թին.
Յողմը ննջում է, հովն ըմբոստանում,
Ինչ-որ հա....աչ կա բա....ափի շու....թին,
Ինչ-որ բողոք կա, որ չեմ հասկանում:

Համո Մսիյան



Վ - Ֆ

Ավտո, հարավ, նավթ և նրանցից կազմված բառերում (*ավտոմեքենա, հարավային, նավթամուղ* և այլն) գրվող **վ**-ն արտասանվում է **ֆ**։

Մյուս դեպքերում **վ**-ի և **ֆ**-ի գրությունն ու արտասանությունը համընկնում են, ինչպես՝ *Աղվանք, ասֆալտ, Աֆղանստան, գովք, թավշյա, խոովք, սֆինքս, փլավ* և այլն։

Վարժություն 34: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով վ կամ ֆ:

Թա....շյա, Աղ....անք, աս....ալտ, ա....տո, Ա....ղանստան, խոռ....ք, հարա...., նա....թ, տա....իղ, վոլ....րամ, կարտո....իլ, կաթ....ածահար, հո....տաշուշան, թո....ջանք, ա....տոմատ, Խոսրո...., նզո....ք, հա....ք:

Հ

Աշխարհ, ընդհանուր, խոնարհ, խորհուրդ, Հովհաննես, ճանապարհ, շնորհ և նրանցից կազմված բառերում (*աշխարհագրություն, խոնարհաբար, խորհրդատու, Հովհաննիսյան, ճանապարհորդ, շնորհալի* և այլն) բառամիջում և բառավերջում գրվող **հ**-ն չի արտասանվում կամ թույլ է արտասանվում: **Արհամարհել** բառում առաջին **հ**-ն արտասանվում է, երկրորդը՝ ոչ:

Վարժություն 35: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով հ:



Հայթ....այթել, աշխար....ակալ, աշխար....այացք, ապաշխար....ել, արհամար....ել, ար....ավիրք, խոնար...., խոր....ել, խոր....ուրդ, հեղ....եղ, հեղ....եղուկ, ճանապար....որդ, նախագա...., նշխար...., շնոր...., ընդ....ուպ, սուր....անդակ, հազիվ....ազ, կտավ....ատ, քամա....րել, պատե...., հոպ....ոպ, խոտ....արք:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ժամանակակից հայերենի ո՞ր բաղաձայնները գրության և արտասանության տարբերություններ ունեն:
2. Ո՞ր բառերում է **փ** հնչյունը գրվում **բ** տառով:
3. Ո՞ր բառերում է **ք** հնչյունը գրվում **գ** տառով:
4. Ո՞ր բառերում է **թ** հնչյունը գրվում **դ** տառով:
5. Ո՞ր բառերում է **ց** հնչյունը գրվում **ծ** տառով:

6. Ո՞ր բառերում է **չ** հնչյունը գրվում **ջ** տառով:
7. Ո՞ր բառերում է **խ** հնչյունը գրվում **ղ** տառով:
8. Ո՞ր բառերն են **ր**-ի կամ **ռ**-ի գրության ու արտասանության դժվարություններ առաջացնում:
9. Ո՞ր բառերում է **ֆ** հնչյունը գրվում **վ** տառով:
10. Ո՞ր բառերում գրվող **հ**-ն է թույլ արտասանվում:

Վարժություն 36: Արտագրե՛ք՝ ըստ անհրաժեշտության լրացնելով բաց թողնված տառերը:



Փարիզի նշանավոր կոթողներից է երկնամու... էյֆելյան աշտարակը, որը դարձել է Ֆրանս...այի յուր...րինակ խոր...րդանիշներից մեկը: Այս աշտարակը կառուցվել է Գուստավ էյֆելի նախագծով: Աշխար...ահռչակ էյֆելի նախագծերով կառուցվել են բազմաթիվ շինություններ, որոնցից առավել ուշագրավ է Նյու Յորքի «Ազատություն» ար...անի մետաղյա կմա...քը:


Աշտարակի կառուցումը կատարվել է ա...շեցուցիչ ճշգրտությամբ. այն տևել է երկու տարի, երկու ամիս, երկու օր: Հրապարակային բացումը կատարվել է հազար ութ հար...ր ութսունի...ը թվականին՝ մայիսի տասնհինգին: Կառուցման ամբող... ծախսը կազմել է յոթուկես միլ...ոն ֆրանկ, իսկ աշտարակի կշիռը յոթ հազար հինգ հար...ր տո...ա է: Այնպես որ կարող ենք ասել, թե աշտարակի ամեն մի կիլոգրամն արժեցել է ընդ...ամենը մեկ ֆրանկ:

Կառույցի բար...րությունը երեք հարյուր մետր է: Իհարկե, ժամանակին նման բար...րությունը ռեկորդային էր, իսկ այս...ր այն չի զարմացնում, բայց աշտարակն իր գրավչության շնոր...իվ մնում է գբ...սաշրջիկների նախ...նտրած վայրը, և տարեկան այդտեղ մի քանի միլ...ոն մարդ է այցելում: Շինարարական տեխնիկայի վեր...լքը ստեղծեց շատ կառույցներ, բայց էյֆելյան աշտարակի հմայքը հարատևում է իր խոր...րդավոր ձ...ողական ուժով:

Ըստ Կամսար Ավետիսյանի

Վարժություն 37: Արտագրե՛ք՝ ըստ անհրաժեշտության լրացնելով բաց թողնված տառերը:

Աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը Զեոփսի բարձրաբեր, բուրգն է, որից չորս հարյուր մետր հեռու գտնվում է ամենամեծ սփինքսը: Սփինքսը մի հսկա քանդակապատկեր է՝ առյուծի սառնազդու մարմնով, բայց մարմնու գլխով: Տերեկը, երբ բարձր արևի լույսը պայծառ է, երևում են ժամանակի տառաքնության հետքերը, իսկ գիշերը ավելի հարթ է թվում: Ստվերների մեկնումը փոփոխությունից թվում է, թե սփինքսը հուզվում է, մտածում և զգում: Մարմնու վրա այդ քարեղեն ուրվականը առհասարակ հոգեցուն տպավորություն է թողնում մի քանի ակնթարթ անացնելով ու կտրելով առօրյա ակնխնդիրներից: Ահա բազմել է անապատի եզրին և կարծես խորասուզված է մտքերի մեջ կամ միգուց... շառաչ...ն քամու ելև...ջներում իր վիթխարի ականջներով որսում է անցավի աղմուկը: Մի վաղյան թվում է, թե խորորդավոր այս կերտվաքը լեզու է առնելու և ասելու, որ ինքը տեսել է հզոր փարավոններին: Պատմելու է, որ իր ոտքերի տակով անցել են Ալեքսանդր Մակեդոնացին, Պտղոմեոսը, Յուլիոս Կեսարը, Մարկոս Անտոնիոսը, Կլեոպատրան: Նա հեռվից տեսել է Ալեքսանդր...այի այրվող գրադարանի կայծկ...լտացող բոցերը: Վերապես նրա մոտով անցել են արաբները, որոնք, իրենց փրփաքաշ նժույգներին նստած, նվաճել են Եգիպտոսը: Նրա մոտ եղել է աշխարհառջակ Նապոլեոն իր բանակով: Այդ բոլորին նա ականատես է եղել, իսկ գիշերները շարունակել է ժպտալ լուսնին և արիամար...ել ժամանակը: Չէ՞ որ բոլորը անցել են, և մնացել է ինքը՝ որպես հավերժի խորորդանիշ:



Ըստ Կամսար Ավետիսյանի

Գրքեր
Գրքեր



ԵՎ (Ա)-Ի ՈՐՂՂՍԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենում մեծատառ **և** չկա, ուստի մեծատառի անհրաժեշտության դեպքում գրվում է **ԵՎ** տառակապակցությունը:

Բացի **և**թ, **ևս** բառերից՝ բառասկզբում միշտ գրվում է **ԵՎ** տառակապակցությունը, ինչպես՝ *Եվա, Եվգինե, Եվրոպա, Եվրո* (դրամական միավոր), *Եվրոպական, Եվրոպացի* և այլն: Եթե բառակազմության ժամանակ բառասկզբում **ԵՎ** ունեցող բառերին սկզբից ավելանում է նոր բաղադրիչ, պահպանվում է գրության նույն սկզբունքը՝ **ԵՎ**, օրինակ՝ *արևմտաեվրոպական, համաեվրոպական* և այլն:

Բառամիջում գրվում է **ԵՎ**, եթե **Ե**-ին հաջորդող **Վ**-ն արմատի սկզբնատառ է, օրինակ՝ *ագեվագ, գերեվարել, գինեվաճառ, դափնեվարդ, կարեվեր, հոգեվարք, ոսկեվագ, ոսկեվարս* և այլն: **Վ**-ին նախորդող **Ե**-ն սովորաբար **ի+ա=ե** հնչյունափոխության հետևանք է, օրինակ՝ *տարի+ա+վերջ=տարեվերջ*, բայց՝ *հոգի+ա+վոր=հոգևոր*: Հետևաբար **-վոր**-ով կազմված բառերում գրվում է **և**, ոչ թե **ԵՎ**, որովհետև **-վոր**-ը վերջածանց է, այլ ոչ թե արմատ, օրինակ՝ *ագևոր, այևոր, ոգևորել, ոսկևորել* և այլն:

Վանկատման ժամանակ գրվում է **ԵՎ**, երբ **Ե**-ն և **Վ**-ն պատկանում են տարբեր վանկերի, ինչպես՝ *հա-րե-վան, ա-գե-վոր, ա-լե-վոր* և այլն:

Տողադարձի ժամանակ գրվում է **ԵՎ**, երբ **Ե**-ն պետք է մնա վերևի տողում, իսկ **Վ**-ն անցնի հաջորդ տող, օրինակ՝ *Երե-վան, տերե-վաթափ* և այլն: Այլապես գրվում է **և**, օրինակ՝ *Ե-րևան, տե-րևաթափ, տե-րև* և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեծատառի անհրաժեշտության դեպքում ինչպե՞ս է գրվում **և**-ը:
2. Ո՞ր բառերի սկզբում է գրվում **և**:
3. Բառամիջում Ե՞րբ է գրվում **ԵՎ** տառակապակցությունը:
4. Վանկատման և տողադարձի ժամանակ ո՞ր դեպքում է գրվում **ԵՎ**:

Վարժություն 38: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով **և** կամ **ԵՎ**:

Հար...ան, ագ...ագ, գեր...արել, գին...աճառ, դափն...արդ, ...րոպացի, կար...եր, կար...որ, համա...րոպական, հոգ...արք, ոսկ...ագ, սերկ...իլ, վաղը ...եթ, հոգ...իճակ, ուղ...որ, իջ...անել, եղ...նի, այլ...ս, ուղ...ճար:

Վարժություն 39: Արտագրե՛ք՝ ըստ անհրաժեշտության լրացնելով և կամ եվ:

Անձր....ում էր: Մի ալ....որ հոգ....որական շտապում էր հար....ան գյուղը: Իրենց գյուղի գին....աճառը՝ Գ....որզը, նրան հայտնել էր, որ այնտեղ մագաղաթյա մի հինավուրց մատյան կա: Այդ կար....որ լուրն իմանալով՝ հոգ....որականը, որը գյուղի քահանան էր, իսկույնեթ պատրաստվել էր գնալու: Հիմա նա հ....իհն քայլում էր սերկ....իլի ծառերի տակով՝ ուշադրություն չդարձնելով մաղող անձր....ին: Նրա պրպտող հոգին թ.... էր առել, ալեկոծվել: Մի՞թե դա այն մատյանն է, որն ինքը երկարատ.... որոնումներից հետո այդպես էլ չէր գտել:

Վերջապես տեղ հասավ: Հարցուփորձով գտավ այն տունը, որտեղ պահվում էր մատյանը: Երկհարկանի տուն էր՝ օղակաձ.... շրջապատված ոսկ....ազ խաղողի որթատունկերով ու լայնատեր.... ծառերով: Հյուրընկալ տանտերը, որը ար....ամ դեմքով պարթ....ահասակ մի մարդ էր, հոգ....որականին ներս հրավիրեց: Իմանալով նրա գալու պատճառը՝ տանտերը պատմեց, որ այդ մատյանը երկրորդ աշխարհամարտից հետո արևմտա....րոպական մի երկրից բերել է իր պապը: Նրան էլ այդ մատյանը տվել էր թշնամու գնդակից կար....եր խոցված մի հայրորդի, որը հոգ....արթի մեջ խնդրել էր մատյանը հասցնել Հայաստան:

Երբ տանտերը բերեց մատյանը, հոգ....որականի սիրտը թրթռաց. դա հենց այն հին ավետարանն էր, որն ինքը ապարդյուն որոնել էր շատ վայրերում: Տանտերը ոգ....որությամբ հայտնեց, որ ինքը որոշել է մատյանը հանձնել Եր....անի Մատենադարանին:

Մի քանի օր հետո տանտերն ու քահանան ակներ.... գոհունակությամբ վերադառնում էին տուն. մագաղաթյա մատյանը օթ....անել էր հազարավոր ձեռագրերի մոտ և արդեն հոգատար ձեռքերում էր:

Արտաշես Մարգարյան

ԿՐԿՆԱԿ ԲՍԿՆԱԿՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մի շարք բառերում այս կամ այն բաղաձայնը արտասանվում է տևական, ուստի գրվում է կրկնատառ:

Կրկնակ բաղաձայն ունեն մի շարք արմատներ ու նրանցից կազմված բառեր՝ *աբբա* (կաթոլիկ վանահայր), *անդորր*, *Աննա*, *Աբիլլես*, *բալլար*, *բերրի*, *Բուդդա*, *Էլլադա*, *Էմմա*, *ինն* (*ինը*), *կեցցե՛*, *կտտանք* (տանջանք), *մրրիկ* (այսինքն՝ հողմ, իսկ *մրիկ*-ը հացաբույսերի հիվանդությունն է), *Վիեննա*, *տարր*, *տոննա*, *Րաֆֆի*, *Օթելլո*, *ֆինն* և այլն:

Կրկնակ բաղաձայն ունեն մեծ թվով բնաձայնական բառեր՝ բզզալ, դռռալ, խշշոց, ճռռալ, տզզալ, ֆշշոց և այլն:

Կրկնակ բաղաձայններ են լինում այն բաղադրյալ բառերում, որոնց բաղադրիչներից մեկն ավարտվում է այն նույն բաղաձայն հնչյունով, որով սկսվում է հաջորդ բաղադրիչը, ինչպես՝ *այբբենարան, աննահանջ, աննման, աննպատակ, երեսուրբիչ, երկկենցաղ, երկկողմ, երրորդ, ընդդեմ, չորրորդ* և այլն:

Բաղաձայնների կրկնություն է առաջանում բառակազմության ժամանակ տեղի ունեցած հնչյունափոխության հետևանքով, ինչպես՝ *արճիճ – արճճե, (զնիկ) – զննել, թուրթ – թթենի, ծնունդ – ծննդական, հովիվ – հովվական, նիւջ – ննջել, պտույտ – պտտահողմ, ուղիղ – ուղղական, (փթիթ) – փթթել, (քնիկ) – քննել, օրոր – օրրան* և այլն:

Ն բաղաձայնի կրկնություն է առաջանում ն-ով ավարտվող բազմավանկ բառերի հոգնակին **-ներ** վերջավորությամբ կազմելիս, ինչպես՝ *նստարան – նստարաններ, պատճեն – պատճեններ, սեղան – սեղաններ* և այլն:

Բաղաձայնների կրկնություն է առաջանում **ս, դ, ն** հնչյուններով ավարտվող բառերին **ս, դ, ն** հոդերն ավելացնելիս, ինչպես՝ *գլորուսս, վարսս, լյարդդ, ծնունդդ, դելֆինն, քանոնն* և այլն:

Երբ հատկացուցիչը գործածվում է հատկացյալի փոխարեն, կարող է կրկնակի հոդ ստանալ, և բառավերջում գրվում է կրկնակ բաղաձայն, օրինակ՝ *Այս հաղթանակը մեր ողջ դասարանինն է, այլ ոչ թե միայն իմը* (այսինքն՝ դասարանի հաղթանակն է *հաղթանակն* ստորոգելի փոխարեն գործածվել է նրա հատկացուցիչը՝ *դասարանի*):

Բառասկզբում (երբեմն էլ բառամիջում) իրար հաջորդող նույն բաղաձայնների միջև արտասանվում է գաղտնավանկի ը ձայնավորը՝ *զզվել, դդում, զզվել, լլկել, խխմել* (խոնավանալ և փափկել), *խխունջ, ծծումք, կկոցել, կկու, շշմել, շշուկ* և այլն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ո՞ր բառախմբերում է լինում կրկնակ բաղաձայն:
2. Բաղադրյալ բառերում ե՞րբ է լինում կրկնակ բաղաձայն:
3. Հոգնակի կազմության ժամանակ ո՞ր դեպքում է առաջանում կրկնակ բաղաձայն:

Վարժություն 40: Արտագրե՛ք՝ ըստ անհրաժեշտության լրացնելով մեկ կամ կրկնակ բաղաձայն:

Միջօրեի անդո...ն էր: Ամառային բարկ արևը տաքացնում էր, ծաղկից ծաղիկ էին թռչում թիթեռները, օդը լցված էր մեղուների բ...ո-
ցով: Երեխաները, որոնք քիչ առաջ լողում էին գետում, պառկել էին
առափնյա քարերին: Լսվում էր գետի մեղմ խ...ոցը: Հեռվում տա...ո-
րոշվում էին ու...աբերձ ժայռերը: Գետից քիչ այն կողմ՝ փ...ուն բու-
սականության մեջ, խաղում էին մի քանի աղջնակներ, որոնք նոր էին
փոխադրվելու չո...որդ դասարան: Նրանցից մեկը՝ Ա...ան, մի ...ունջ էր
տեսել ու աչքերը արևից ...ոցած՝ նայում էր, թե ինչպես է նա դանդաղ
սողում տերևի վրայով:

Հանկարծ լսվեց մի ճիչ.

- Օձը, օձը:

Բղավողը ի...ամյա Է...ան էր, որը ...ենու տակ մի օձ էր տեսել և
հանկարծակիի եկած ճչացել էր ու քարացել տեղում: Օձն էլ անշարժ էր
ու կարծես մանրագ...ին ուսումնասիրում էր իրենից ի...ը-տասը մետր
հեռու կանգնած աղջկան: Գետափին պառկած տղաներից մեկը՝ Հով-
հա...եսը, իսկույն վեր թռավ և վերցնելով կողքին դրված երե...րբիչը՝
նետեց օձի վրա: Մինչ օձը կկարողանար ֆ...ալով դուրս սողալ խ...ված
սրբիչի տակից, երեխաները արդեն շատ հեռվում էին:

Արտաշես Մարգարյան

Վարժություն 41: Արտագրե՛ք՝ կետերի փոխարեն ըստ անհրա-
ժեշտության գրելով մեկ կամ կրկնակ բաղաձայն:

Բե...ի, անդո..., Աքի...ես, բա...ադ, տա...որոշել, Ե...որդ, չո...որդ,
Է...ա, մ...իկ (հողմ), ցորնամ...իկ, մանրագ...ին, տա...ական, տո...ա,
խորաք...ին, օ...ան, ֆի...ական:

ՄՅՈՒՄ ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես պարզ դարձավ նախորդ դասերից, բաղաձայնների մի մասի
գրությունն ու արտասանությունը որոշ դեպքերում տարբեր են, և այդ
հնչյունները ճիշտ գրելու համար անհրաժեշտ է իմանալ որոշակի
կանոններ: Սակայն երբեմն հանդիպում են մյուս բաղաձայնների գրու-
թյանն առնչվող սխալներ, որոնք ոչ թե կանոններով են նախատեսված,
այլ պարզապես ոչ ճիշտ արտասանության կամ այլ հնչյունների ար-

տասանական ազդեցության հետևանք են: Դրանք հիմնականում վերաբերում են **մ-ն, ժ-շ, գ-ս** բաղաձայններին: Այդպիսի սխալներից խուսափելու համար պետք է հիշել բառերի ճիշտ գրությունը:

Մ-ն. *ամբաստանել, ամբար, ամբարձիչ, ամբարիշտ, ամբարտավան, ամբիոն, ամբոխ, ամբողջ, ամպ, ամփոփ, ամֆիթատրոն, բամբակ, բամբուկ, ըմբոստ, ըմբռնել, ըմպանակ, թմբլիկ, թմբուկ, համբավ, ճամփա, շամփուր, Սամվել, սիմֆոնիա, սմբակ, սուսամբար, փամփուշտ անբասիր, անբավ, բանբեր, Դուշանբե, Մանվել* և այլն:

ժ-շ. *ապառաժ, գույժ, դժխեմ, դշխո, դրժել, երաժշտական, երաշտահավ, ժուժկալ, խոժոռ, խոշոր, հուժկու, նաժիշտ, օժտել* և այլն:

Չ-ս. *ավտոբուս, բազպան, բզկտել, համհարզ, մզկիթ, նարզիզ, որպես, որպեսզի, ֆիզկուլտուրա* և այլն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ո՞ր բաղաձայններն ունեն գրության ու արտասանության՝ ուղղագրական կանոններով նախատեսված տարբերություններ:
2. Հատկապես ո՞ր բաղաձայններն են հաճախ գրության սխալների տեղիք տալիս:
3. Ի՞նչ պատճառով են **մ-ն, ժ-շ, գ-ս** բաղաձայնները երբեմն սխալ գրում:

Վարժություն 42: Արտագրե՛ք՝ ըստ անհրաժեշտության լրացնելով բաց թողնված տառերը:

Ի՞նչ անհուն ու ան...նդգրկելի է գիտելիքների ծովը: Ահա ներս էր մտնում անտիկ գրականության դասախոսը՝ պրոֆեսոր Արամյանը, և լսարանը լցվում էր Հոմերոսով ու Սոֆոկլեսով, Էսքիլեսով ու Սոկրատեսով: Հին ու հրաշալի մի արվեստ էր հառնում պատմության թ...թաացող մշուշներից՝ լի տանջա...ուկ մարդու ազնիվ ձ...տումներով, հանապազ...ոյա տառապանքներով, խոր...ին ատելությամբ, վեհ սիրով:

Արամյանը քայլում էր լսարանում, մերթ...նդմերթ կանգ առնում, գ...ող հայա...քով ակ...նդետ նայում լռել...այն ունկ...նդրող ուսանողներին՝ ճ...նելով հասկանալ՝ ը...բռնեցի՞ն իր ասածները, թե՞ իզուր էր իր ոգ...որությունը: Մի...ահասակ Արամյանը՝ ազնվական դիմագծերով, ա...բասիր հա...ուստով, ասես հին աշխար...ից հայտնված մի փիլիսոփա ու ճարտասան էր, որ ճեմել էր Սոկրատեսի հետ, Դիոգենեսի հետ գրու...ցի նստել նշանավոր տակառի շվաքում,

Գրություն

մասնակից դար....ել Արթիմեդի հայտնագործություններին: Նա շերտ առ շերտ հետ էր տանում պատմության մութ վարա....ույրը, և ուսանողների աչքերի առա.... հինավուր.... բաղաբներ էին նկարվում, խար....լվող պարիսպներ, գահ....նկեց լինում թա....ավորներ, և գահ բարձրանում արյունար....ու բռնակալներ:

- Իսկ հիմա լսենք Յոմերոսին,- այնպես անակ....նկալ ու կտրուկ էր հնչում նրա խոսքը, որ առօր....ա ամեն ինչից կտրված ուսանողները ակամա նայում էին դռան կողմը. գուցե ուր որ է Նե՛րս կմտնի Յոմերոսը:

Եվ սկսվում էր արկածալից ու առե....ծվածային ճա....փորդությունը դյու....ազն Ողիս....սի հետ:

Անակ....նկալ զանգը կտրում էր պրոֆեսորի ոգ....որության թելը, և նա, հի....ասթափված նայելով զանգի ձայնից աշխուժացած ուսանողներին, հեռուներում թողնելով սիրելի հերոսներին, դուրս էր գնում, որ հաջոր.... ժամին նոր հերոսներ բերի լսարան, հաղոր....ակից անի նոր իրադար....ությունների:

Ըստ Լիպարիտ Մարգարյանի

Վարժություն 43: Գտե՛ք, թե յուրաքանչյուր շարքի որ բառում է բաց թողնված ն տառը:

1. ա....բարիշտ, ա....բարտավան, ը....բոստ, ա....բավ
2. բա....բակ, բա....բուկ, ա....բասիր, սի....ֆոնիա
3. սուսա....բար, ճա....ապարհ, ա....բար, ը....պանակ
4. ա....բաստանել, ա....բողջ, թ....բլիկ, ա....բարբառ
5. ա....բացատրելի, ճա....փորդ, հա....բավ, թ....բուկ,
6. ա....բարձիչ, ա....բիոն, ը....բռնել, ա....բարեկիրթ
7. ա....եոբա, ա....բնակ, ա....փոփ, ս....բակ
8. հա....բավ, ա....ֆիթատրոն, հա....պատրաստից, հա....բերություն

ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՌԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բաղադրյալ բառերում պահպանվում են ձայնավորների և բաղա-
ձայնների ուղղագրության ընդհանուր կանոնները: Բաղադրյալ բառերի
ուղղագրական առանձնահատկություններն առնչվում են նրանց բա-
ղադրիչների միասին, անջատ կամ գծիկով գրվելուն: Բաղադրյալ բառերը
ծիշտ գրելու համար անհրաժեշտ է հիշել հետևյալ կանոնները:

1. Կրկնավոր բարդ բառերը գրվում են գծիկով, օրինակ՝ *արագ-
արագ, գույն-գույն, երկու-երկու, զույգ-զույգ* և այլն: Բաղադրիչներից

մեկը կարող է հնչունափոխված լինել, ինչպես՝ *բարակ-մարակ, մանր-մունր, պարապ-սարապ, կաս-կարմիր, լեփ-լեցուն, ճեփ-ճերմակ* և այլն:

2. Հիմնականում անջատ են գրվում **առ**-ով կազմված կրկնավոր բաղադրյալ բառերը, օրինակ՝ *ժամ առ ժամ, տող առ տող, բառ առ բառ* և այլն: Սրանց մի մասը կարող է գրվել նաև միասին, ուստի գրության երկու ձևերն էլ ճիշտ են համարվում, օրինակ՝ *դեմառդեմ, միառմի, փոխառփոխ* և այլն:

3. Միևնույն խոսքի մասին պատկանող բառերից կազմված բաղադրյալ բառերը, որոնց բաղադրիչները միմյանց նկատմամբ հոմանշային, հականշային, առնչակից հարաբերություն ունեն, կամ փոխադարձաբար մեկը բնութագրում է մյուսին, գրվում են գծիկով, օրինակ՝ *ամառ-ձմեռ, ասել-խոսել, ուտել-խմել, գիշեր-ցերեկ, գրական-գեղարվեստական, հյուսիս-արևմուտք, տուն-թանգարան* և այլն:

4. Տարբեր ժողովուրդներ ու պետություններ անվանող բաղադրիչներով կազմված բառերը գրվում են գծիկով, օրինակ՝ *հայ-ռուսական, չին-տիբեթական, անգլո-ամերիկյան, գերմանա-իտալական* և այլն:

5. **Տեր, մելիք, բեկ, միրզա** և նման բաղադրիչներով կազմված ազգանունները հիմնականում գրվում են գծիկով, օրինակ՝ *Տեր-Գրիգորյան, Մելիք-Մուսյան, Միրզա-Ավագյան* և այլն: Սակայն կան այնպիսի ազգանուններ, որոնք միասնական են արտասանվում և գրվում են միասին, ինչպես՝ *Բեկնազարյան, Մելիքսեթյան, Միրզախանյան* և այլն:

6. Մի շարք անուններ ավանդաբար գրվում են գծիկով, ինչպես՝ *Գամառ-Զարթույա, Խնկո-Ապեր, Նար-Դոս, Սայաթ-Նովա* և այլն:

7. Հողակապով միացած բաղադրիչները գրվում են միասին, օրինակ՝ *գիտահետազոտական, դրամաիրային, ռազմածովային, բառաբերակա-նական* և այլն:

8. Եթե բաղադրիչներից առաջինը որոշիչ է, երկրորդը՝ որոշյալ, ապա բաղադրիչները գրվում են առանձին, օրինակ՝ *ալ կարմիր, բաց կանաչ, թղթակից անդամ, Նոր Չելանդիա, Հեռավոր Արևելք, Փոքր Ասիա* և այլն: Այսպիսի տեղանուններից ծագած ածականները գրվում են միասին, ինչպես՝ *Նորգելանդական, հեռավորարևելյան, փոքրասիական* և այլն:

9. Եթե բաղադրիչներից մեկը քերականական քարացած ձև է, ապա բաղադրիչները գրվում են միասին, օրինակ՝ *ամսեամիս, գյուղեգյուղ, երկրեերկիր, աշխարհեաշխարհ* և այլն:

10. Եթե բաղադրիչներից մեկը ինքնուրույն իմաստ ունեցող հոլովված բառ է, ապա բաղադրիչները գրվում են առանձին, օրինակ՝ *գյուղից գյուղ, ձեռք ձեռքի, ուս ուսի* և այլն: Սրանց հետ չպետք է շփոթել գծիկով գրվող

այն բառերը, որոնց բաղադրիչներից մեկը հոլովվել է այլ բառի կապակցվելու համար, օրինակ՝ «*Նա եկել է հեռու-հեռվից*»:

11. Բառասկզբի **ի** բաղադրիչը հիմնականում առանձին է գրվում, ինչպես՝ *ի շահ, ի ծնե, ի լուր* և այլն: **Իզուր, իհարկե, իսպառ** բառերում **ի**-ն գրվում է միասին: **Իմիջիայլոց** բառը գրվում է նաև **ի միջի այլոց**, թեև տարածված է միասին գրությունը: Բառամիջում **ի** ունեցող կրկնավորները գրվում են միասին, օրինակ՝ *հևիհև, փոխնիփոխ* և այլն:

12. **Ինչ** դերանունով կազմված և անորոշություն արտահայտող բառերը գրվում են գծիկով՝ *ինչ-որ, փոքր-ինչ, դույզն-ինչ, ինչ-ինչ*: Անորոշություն արտահայտող և գծիկով գրվող *ինչ-որ* դերանունը հիմնականում կապակցվում է գոյականներին, օրինակ՝ *ինչ-որ մարդ* և այլն: Իսկ *ինչ* դերանունը և նրա հետ գործածվող *որ* շաղկապը (թարմատարը) գրվում են առանձին և կապակցվում են բայերին, օրինակ՝ *ինչ որ խոստացել էր, կատարեց*:

13. Անջատ են գրվում **դա, դը, դե, դել, վան, ֆոն, ալ, էլ** և նման բաղադրիչներով կազմված օտար անունները, օրինակ՝ *Լեոնարդո դա Վինչի, Լյուդվիգ վան Բեթհովեն, Յարուն ալ Ռաշիդ* և այլն:

14. Միասին են գրվում **ըստ, ց, գ** բաղադրիչով կրկնավոր բաղադրյալ բառերը, օրինակ՝ *օրըստօրե, ինքնըստինքյան, օրեցօր, տարեցտարի, հետզհետե* և այլն:

15. Բառասկզբի **ընդ, ց, գ** բաղադրիչները գրվում են միասին, օրինակ՝ *ընդամենը, ընդառաջ, ընդարձակ, ցտեսություն, ցպահանջ, զգեսնել* (զետին տապալել) և այլն: **Առ** բաղադրիչը հիմնականում գրվում է միասին, ինչպես՝ *առայժմ, առմիշտ, առնվազն, առձեռն* և այլն: Որոշ բարացած կառույցներում **առ**-ը գրվում է առանձին, օրինակ՝ *առ Աստված, առ այն* և այլն:

16. Միաժամանակ գործածվող չափման միավորները, որոնք տարբեր չափանիշներով են բնորոշում չափը, գրվում են գծիկով, օրինակ՝ *կիլոմետր-ժամ, լիտր-վայրկյան, կիլովատտ-ժամ* և այլն:

17. Կոտորակային թվականների և հարյուրից բարձր բաղադրյալ թվականների բաղադրիչները գրվում են առանձին, օրինակ՝ մեկ երկրորդ, *երկու երրորդ, զրո ամբողջ հինգ տասնորդական, հազար ինը հարյուր քսանհինգ*:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպե՞ս են գրվում կրկնավոր բարդությունները:
2. Ինչպե՞ս են գրվում հոմանշային, հականշային, առնչակից հարաբերությամբ բաղադրիչներով բառերը:
3. Ինչպե՞ս են գրվում տարբեր ժողովուրդներ ու պետություններ անվանող բաղադրիչներից կազմված բառերը:
4. Ինչպե՞ս են գրվում հոդակապ ունեցող բաղադրյալ բառերը:

Վարժություն 44: Գտե՛ք, թե յուրաքանչյուր շարքում միասին գրվող քանի բառ կա:

1. (հինգ) վեց, (մաս) մաս, (հատիկ) հատիկ, (գյուղե) գյուղ
2. (հյուսիս) արևելյան, (չին) տիբեթական, (մի) քանի, (վայր) էջք
3. (կես) օր, (ծայն) տալ, (դեմ) դիմաց, (դափ) դատարկ
4. (դուռ) լուսամուտ, (բառա) տետր, (օրեց) օր, (ի) շահ
5. (մերձ) արևադարձային, (հարավ) կորեական, (դաշտ) ու ձոր, (մեկ) մեկ
6. (առ) այժմ, (շնա) գայլ, (ծառից) ծառ, (մուգ) կարմիր
7. (հլու) հնազանդ, (երկրե) երկիր, (դանդաղ) ընթաց, (կողք) կողքի
8. (ցուցահանդես) վաճառք, (ճեփ) ճերմակ, (դափնե) պսակ, (փոքր) ինչ
9. (շերտ) շերտ, (ուս) ուսի, (այ) կարմիր, (ց) պահանջ
10. (հեռու) մոտիկ, (պատե) պատ, (գոռում) գոչուն, (արքայից) արքա

Վարժություն 45: Գրե՛ք «Չբոսայգում» վերնագրով փոքրիկ շարադրություն՝ գործածելով գծիկով գրվող առնվազն տասը բառ:

Վարժություն 46: Փակագծում տրված բաղադրիչը գրե՛ք միասին, անջատ կամ գծիկով:

1. մեծ (մեծ), քսան (ութ), լեփ (լեցուն), մուգ (կանաչ)
2. հարավ (արևմուտք), հինգ (վեց), ռուս (թուրքական), փունջ (փունջ)
3. բազմ (երանգ), վաղուց (ի) վեր, ծառ (ու) ծաղիկ, շուտ (շուտ)
4. հուր (հրեղեն), վառ (կարմիր), թեթև (բաշային), դեմ (դիմաց)
5. աշխարհ (ընկալում), ծովից (ծով), ոսկե (դարյան), թև (ամենել)
6. հայ (հունական), ծափ (ծիծաղ), բրոնզի (դար), գանգ (ոսկր)
7. դիցուք (թե), քարե (քար), տարեց (տարի), տարուց (տարի)

8. գագ (օջախ), փոխ (զիջում), ի (հարկե), հագած (կապած)
9. ծիլ (ծաղիկ), կիսով (չափ), ի (տարբերություն), սարն (հ) վեր
10. տուն (թանգարան), ծառից (ծառ), քար (կոծել), հարյուր (հինգ)
11. հագար (հարյուր) վեց, դույզն (ինչ), անցնող (դարձող), մի (մի)
12. դռնե (դուռ), լայն (լայն), հագիվ (թե), ձեռք (տալ)
13. ի (զուր), հարավ (կորեական), մի (փոքր), ձեռքից (ձեռք)
14. ադամ (որդի), երկու (երրորդ), ինչ (որ) մեկը, մեկ (ընդ) միշտ
15. գնալ (գալ), հյուր (ընկալություն), դյուր (ընթեռնելի), մի (քանի)
16. լույս (ընծայել), ինչ (ինչ), առ (սվազն), գիշեր (ու) ցերեկ
17. ամեն (ոք), առ (և) տուր, փայտ (փորիկ), ի (շահ)
18. շաքար (ավագ), գույն (գ) գույն, մեն (միայն), թավալ (գլոր)
19. կապտա (կանաչ), բուժ (բույր), մաս (մաքուր), ամեն (ինչ)
20. քանի (քանի), հարյուր (քսան) հինգ, ամպ (հովանի), ականջ (օղ)

Մեծերը՝ հայոց լեզվի մասին

Հայ լեզուն է այն սարսափելի ուժը, որի ընդդեմ տկար են նաև միլիոնավոր բարբարոսների սվինները: Լեզուն է ազգությանց դրոշակը, լեզուն է նոցա որպիսության և վիճակի հայտարարը:

Միքայել Նալբանդյան

Հայոց լեզու, դու մեր անկողոպտելի գանձը եղար, մեր անընկճելի հայրենիքը: Մեր ժողովուրդը կորցրեց գահ և թագ, զորք և իշխանություն, ավեր եղան և ավար մեր բերդերն ու քաղաքները, ավար եղան մեր ինչքն ու գույքը, բայց դու մնացիր միայն կանգուն, մնացիր հաղթական: Յնցոտի հազավ մեր ժողովուրդը, բայց դու ծիրանիով ծածկեցիր նրա հոգին, թշնամին ջախջախեց նրա սրունքները, դու թևեր տվիր նրան՝ ժողովրդին:

Ավետիք Իսահակյան

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լեզվում կան հնչյուններ, բառեր, բառերից կազմված նախադասություններ: Օրինակ՝ «**Ներկայացումն ավարտվեց:**» նախադասությունը կազմված է **Ներկայացումն** և **ավարտվեց** բառերից, իսկ այդ բառերն էլ՝ **ն-ե-ր-կ-ա-յ-ա-ց-ու-մ-ն, ա-վ-ա-ր-տ-վ-ե-ց** հնչյուններից: Հնչյունները, բառերը, նախադասությունները ուսումնասիրվում են լեզվաբանության տարբեր բաժիններում: Այդ բաժիններն են հնչյունաբանությունը, բառագիտությունը և քերականությունը: Քերականությունն էլ ունի երկու ենթաբաժին՝ ձևաբանություն և շարահյուսություն:

Բառագիտությունը լեզվաբանության այն բաժինն է, որում ուսումնասիրվում են բառերի ծագումը, ձևը, իմաստը, կառուցվածքը, ինչպես նաև բառարաններն ու նրանց տեսակները: Բառի հատկանիշների ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի: Մարդիկ իրենց հայտնի բոլոր իրողությունները՝ անձերը, կենդանիները, առարկաները, զգացումներն ու զգացմունքները, հատկություններն ու գործողությունները, անվանում են բառերով: Բառերի, հատկապես նրանց ծագման ուսումնասիրությունը հետաքրքրական ու զարմանալի շատ երևույթներ է բացում մեր առաջ: Օրինակ՝ հայտնի է, որ անապատ կոչում են Երկրի շոգ ու ծայրահեղ չորային շրջանները: Իսկ ի՞նչ ծագում ունի *անապատ* բառը: Եթե ուշադիր լինենք, ապա կտեսնենք, որ **-ապատ** բաղադրիչը կա նաև մի քանի այլ բառերում (օրինակ՝ *Վաղարշապատ*): Այս բառը պահլավական է (միջին պարսկերեն) և նշանակում է *շեն, քնակելի*, իսկ **անապատ** նշանակում է *անշեն, անքնակ*: Սակայն այս ամենը պարզ է դառնում միայն մասնագիտական ուսումնասիրության շնորհիվ, ուստի ժամանակակից հայերենի համար **անապատ** բառը կազմությամբ պարզ է համարվում: *Անապատ* է կոչվում նաև այն մեկուսի վայրը՝ մենաստանը, որտեղ առանձնացած ապրում են ճգնավորները: Ուրեմն այս ևույն ձևն ունեցող բառով անվանվում են երկու հասկացություններ՝ երկրագնդի չորային վայրերը և ճգնավորների մենաստանները: Սակայն այս ամենով չի սպառվում **անապատ** բառի ուսումնասիրությունը: Պետք է որոշել նաև նրա իմաստային-ոճական նրբերանգները, գրության ու արտասանության ձևերը և այլն: Բառերի այսպիսի բազմազան հատկանիշները, ինչպես նշվեց, ուսումնասիրվում են **բառագիտություն** բաժնում:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են լեզվաբանության հիմնական բաժինները:
2. Ո՞րն է բառագիտության ուսումնասիրության հիմնական միավորը:
3. Ի՞նչ է ուսումնասիրվում բառագիտության մեջ:

Վարժություն 1: Հաշվե՛ք, թե քանի բառ կա բերված բանաստեղծության մեջ:

Ժայռի կողին պղնձակում՝

Բերդի պատեր,

Տաճարի դուռ.

Ու սուրբ գրեր հնամենի.



Բերդը չկա,

Տաճար չկա,

Բայց երգը կա այս ամենի:

Մարո Մարգարյան

Վարժություն 2: Գտե՛ք յուրաքանչյուր նկարում պատկերված առարկայի անվանումը:



Ուսադիր, արքայախնձոր, ջրհորդան, հեղույս և մանեկ, ստեղնաշար, ծխնի, չմուշկ, սիզամաղ:

Վարժություն 3: Յուրաքանչյուր կապակցության իմաստն արտահայտե՛ք մեկ բառով:

Երեք գույն ունեցող, հին ոճի, նուրբ կազմվածք ունեցող, ոսկուց ձուլված, քարից կերտված, քաղցր համ ունեցող, եկամուտ բերող, շանթի հարված ստացած, լուրջ մտածող, ձեռքով կերտված, փետուրներով զարդարված, միշտ վառվող, ինքնակրթությամբ ուսում ստացած, անունների ցանկ, աղեղի ձև ունեցող, հնությունից մաշված, ինքն իր կամքով, ընթերցել սիրող, երախտիքը մոռացող, բարձր աստիճան ունեցող:

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Ամեն մի լեզու ունի իր բառերի ամբողջությունը՝ **բառապաշարը**: Բառապաշարը թեև ամբողջություն է, սակայն բարացած չէ և ժամանակի ընթացքում փոփոխվում է: Լեզուն զարգանում է, և լեզվի մյուս բաղադրիչների հետ փոփոխվում են նաև բառերը: Այդ պատճառով էլ գրաբարի, միջին հայերենի ու ժամանակակից հայերենի միջև բառապաշարային բազմաթիվ տարբերություններ կան: Ամեն մի լեզվի բառապաշարն արտահայտում է այդ լեզվով խոսող ժողովրդի կենցաղը, մշակույթը, սովորույթները, աշխարհագրական պայմանները, հասարակական կյանքի փոփոխությունները և այլն: Օրինակ՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո հայերենի բառապաշար մտան **բուլջևիկ**, **մենշևիկ**, **կոլտնտեսություն** և շատ այլ բառեր, որոնք արտացոլում են պատմական այդ իրադարձությունը: Խորհրդային կարգերի վերացումից հետո այդ բառերն աստիճանաբար դարձան անգործածական: Բառապաշարի ուսումնասիրությունից պարզ է դառնում, թե տվյալ ժողովուրդն ինչ հագուստ է հագնում, ինչ ուտելիքներ է ուտում, ինչ ծեսեր ունի, մշակութային ինչ իրողություններ են նրան բնորոշ և այլն: Օրինակ՝ **խաչքարը** հայկական մշակույթի ստեղծագործություն է, և այդ բառը սովորաբար չեն թարգմանում, այլ ուրիշ լեզվով մեկնաբանում են նրա նշանակությունը:

Բառապաշարն անընդհատ հարստանում է, այսինքն՝ ավելանում են նորանոր բառեր: Ժամանակակից հայերենի բառապաշարում կա շուրջ 250000 բառ: Հարստացումը կատարվում է երկու միջոցով. լեզվում եղած արմատներով ու ածանցներով նոր բառեր են կազմվում, կամ այլ լեզուներից բառեր են փոխառվում: Այսինքն՝ բառապաշարի հարստացման միջոցներն են **բառակազմությունը** և **փոխառությունը**:

ՀԻՇԵ՛Ք

Ինչպիսի բառ դու ասես, այնպիսին էլ պատասխան կլսես:

Հոմերոս (Հին Հունաստանի բանաստեղծ)

Մի անգամ արձակված բառը հետ չի դառնա:

Հորացիոս (հռոմեացի բանաստեղծ)

Նետերը խոցում են մարմինը, իսկ չար բառերը՝ հոգին:

Գրասիան (իսպանացի քահանա, գրող, փիլիսոփա)

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է բառապաշարը:
2. Ի՞նչ է արտացոլում բառապաշարը:
3. Ի՞նչ ճանապարհներով է հարստանում բառապաշարը:

Վարժություն 4: Աջ սյունակից ընտրե՛ք յուրաքանչյուր կապակցության իմաստն արտահայտող բառը:

- | | |
|---|---------------|
| 1. մրգահյուսված զովացուցիչ ըմպելիք | 1. փեթակ |
| 2. մեղք գործել | 2. հողաթափ |
| 3. ծաղիկ աճեցնելու ծաղկաման | 3. հովել |
| 4. գինի մատուցող անձ | 4. օշարակ |
| 5. մեկի մոտ սովորել | 5. մատռվակ |
| 6. ծարավից տանջվել, տոչորվել | 6. ճարմանդ |
| 7. հագուստի, գոտու ծայրերը միացնող օղակեռ | 7. աշակերտել |
| 8. ամառանոց եկած անձ | 8. դասավանդել |
| 9. մեղունների բույն | 9. մեղանչել |
| 10. տնային բաց ոտնաման | 10. թաղար |
| 11. դաս տալ, ուսուցանել | 11. ողկույզ |
| 12. խիտ թփերով ու ծառերով պատված տեղ | 12. պապակել |
| 13. չորանալ և կծկվել | 13. իջևան |
| 14. ճամփորդների հանգրվանելու վայր | 14. սմբել |
| 15. մեկ ցողունին աճած պտուղների ամբողջություն | 15. թավուտ |

**Վարժություն 5: Տրված բառերը խմբավորե՛ք հետևյալ ձևով՝
հագուստի անվանումներ, ուտելիքի անվանումներ, սպասքի
անվանումներ, բնակավայրերի անվանումներ:**

Գյուղ, լավաշ, կարաս, շեն, պատմուճան, ավան, կուլա, տարագ, մա-
ծուն, փարչ, չամչարակ, պարեգոտ, աղանդեր, սկահակ, քաղաք,
ծիրանի:

ՓՈՒՍԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ժողովուրդը՝ իբրև աշխարհի հնագույն ու զարգացած ժողո-
վուրդներից մեկը, դարեր շարունակ քաղաքական, տնտեսական, մշա-
կութային փոխադարձ շփումների մեջ է եղել իր հարևանների հետ, և դա
էլ բնականաբար առաջացրել է լեզվական փոխազդեցություններ: Դրանք
առաջին հերթին արտացոլվում են բառապաշարում բառային փոխա-
ռություններով:

**Փոխառությունները մի լեզվից մի այլ լեզվի անցած բառերն ու
քերականական իրողություններն են:**

Աշխարհում չկա մի լեզու, որը հարևան լեզուներից այս կամ այն
չափով փոխառություններ չունենա:

Փոխառությունները լինում են **անմիջական** և **միջնորդված**: **Անմի-
ջական** են տվյալ բառի սկզբնաղբյուր լեզվից ուղղակիորեն վերցրած
բառերը: Հայերենը բազմաթիվ անմիջական փոխառություններ ունի
պարսկերենից, հունարենից, արաբերենից, ասորերենից, վրացերենից,
թուրքերենից և այլն: **Միջնորդված** են այն փոխառությունները, որոնք
կատարվում են ոչ թե տվյալ բառի սկզբնաղբյուր լեզվից, այլ մի ուրիշ՝
միջնորդ լեզվից: Այսպես՝ լատիներեն **ռադիո**, **էքսկուրսիա**, **կապիտալ**,
կոլեկտիվ բառերը հայերենին են անցել ռուսերենի միջոցով, այլ ոչ թե
ուղղակիորեն լատիներենից, ռուսի և միջնորդված փոխառություններ են:

Ռուսերենը փոխառել է հայերեն **մածուն** բառը, որը ռուսերենում
ունի **մացունի** ձևը: Բառի՝ վրացերենին բնորոշ **ի** վերջավորությունը
վկայում է, որ փոխառությունը կատարվել է ոչ թե անմիջականորեն
հայերենից, այլ վրացերենի միջոցով:

Ըստ Հ. Աճառյանի հաշվումների՝ հայերենի շուրջ տասնամեկ հազար
արմատներից փոխառյալ է 4015-ը, որոնք հիմնականում հայերենին են
անցել հայոց լեզվի նախաաշխարհաբարոյան շրջանում: Դրանք հատկա-
պես այն ժողովուրդների լեզուների բառերն են, որոնց հետ հայերը

տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ կապեր ու հարաբերություններ են ունեցել:

Հայերենն ամենաշատ փոխառություններ է կատարել պարսկերենից, որոնց թիվը հասնում է 1410-ի:

Պարսկերենից կատարած փոխառությունները վերաբերում են արտաքին աշխարհի, հասարակական կյանքի տարբեր իրողություններին, երկրագործությանը, վարչական, ռազմական ոլորտներին, ինչպես՝ *թուրք, արմավ, կաղամբ, մանուշակ, հասմիկ, շաղգամ, պարտեզ, զենք, զրահ, թշնամի, իշխան, սեպուհ, վահան, նիզակ, պետ, բղեջի, դար, գումարտակ* և այլն:

Հունական փոխառությունները հայերենին են անցել 3-4-րդ դարերում: Հունարենից հայերենին է անցել մոտավորապես 900 բառ, որոնք իմաստային տարբեր խմբերի են պատկանում: Հատկապես գերիշխող են կրոնական, եկեղեցական, մշակութային կյանքին վերաբերող բառերը, ինչպես՝ *եկեղեցի, կաթողիկոս, եպիսկոպոս, ակադեմիա, ամֆիթատրոն, բեմ, գավաթ, գաղափար, եթեր, երգեհոն, զեփյուռ, կիթառ, պոետ, կաթոլիկ, մատուռ, փիլոն, պատրիարք* և այլն: Հունարենից են անցել նաև բազմաթիվ անձնանուններ՝ *Անդրեաս, Բարսեղ, Կիրակոս, Հեղինե, Մինաս, Պետրոս, Պողոս, Սուքիաս, Երանոս, Վասիլ* և այլն:

Ավելի ուշ շրջանի են արաբական փոխառությունները՝ շուրջ 700 բառ, ինչպիսիք են՝ *մուսետիկ, ալբիմիա, նարինջ, թուրինջ, գազար, բակլա, հինա, թաս, կողպեք, սնդուկ* և այլն:

Նորագույն շրջանում փոխառությունները հիմնականում կատարվում են ռուսերենից և եվրոպական լեզուներից:

Հայերենը ոչ միայն փոխառություններ է կատարել բազմաթիվ լեզուներից, այլև ինքը ևս փոխատու լեզու է: Հայերենից, բնականաբար հնչյունական, արտասանական զգալի փոփոխություններով, այլ լեզուների են անցել բազմաթիվ բառեր: Դրանցից են *մածուն, լավաշ, խաչքար, մատենադարան* և այլ բառեր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է փոխառությունը:
2. Հայերենում բանի՞ փոխառյալ արմատ կա ըստ Հ. Աճառյանի հաշվումների:
3. Ո՞ր լեզուներից է հայերենը հիմնականում բառեր փոխառել:

Վարժություն 6: Համեմատելով ձեզ ծանոթ օտար լեզուների հետ՝ առանձնացրե՛ք այն բառերը, որոնց փոխառյալ լինելը գիտակցվում է:

Աշխարհ, դեկտեմբեր, ապակի, երակ, պահակ, նեկտար, փիղ, մաթեմատիկա, հարազատ, հիշատակ, օվկիանոս, էքսկուրսիա, ժամ, վարդ, լեյտենանտ, բժիշկ, ալբոմ, տեխնիկա, փարթամ, պարտեզ, քիմիա, թմբուկ, շոկոլադ, հոկեյ, սպիտակ, ֆաբրիկա, էստրադա, լոտո, վագր, չեմպիոն:

Վարժություն 7: Ռուսերենի հետ համեմատելով՝ գտե՛ք և գրե՛ք փոխառյալ տասը բառ:

ԲԱՌԱՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐ

Փոխառությունների համակարգում տարբերակվում են բառապատճենումները:

Բառապատճենումը լեզվական այն իրողությունն է, երբ օտար լեզվի որևէ բարդ բառի առանձին բաղադրիչներ նույնությամբ, բառացի թարգմանվում են, և նրանց միավորումով ստեղծվում են նոր բառեր: Հայերենում կան ռուսերենից կատարված բազմաթիվ բառապատճենումներ, օրինակ՝ *ինքնազնաց* (самород), *ինքնաթիռ* (самолёт), *ինքնատե* (самовар), *ինքնաձիգ* (автомат), *բուժքույր* (медсестра), *ընդհատակ* (подполье):

Բառապատճենումների միջոցով վերջին տասնամյակում մեր լեզվի բառապաշարը հարստացել է «**видео**»՝ «**տես(ա)**» արմատի բազմաթիվ բառաբարդումներով, ինչպես՝ *տեսախցիկ*, *տեսաժապավեն*, *տեսաերիզ*, *տեսագրել*, *տեսահոլովակ*, *տեսավարձույթ* և այլն:

Կառուցվածքայինից բացի՝ պատճենումները լինում են նաև **իմաստային**, այսինքն՝ փոխառվում է օտար բառի իմաստը: Օրինակ՝ հայերեն *ոչինչ* բառը ռուսերենի ничего-ի ազդեցությամբ, իր բուն իմաստից բացի, ստացել է *ոչ վատ* իմաստը, օրինակ՝ *ինչպե՞ս ես* հարցին շատերը պատասխանում են՝ *ոչինչ*: Նույն ձևով *մկնիկ* բառն սկսել է գործածվել նաև համակարգչային սարքի իմաստով և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է բառապատճենումը:
2. Ի՞նչ է իմաստային պատճենումը:

Վարժություն 8: Գտե՛ք, թե հայերեն որ բառը ռուսերեն որ բառի պատճենումն է:

ինքնաթափ	самоучитель
հնգամյակ	самообслуживание
ուղղաթիռ	самокат
կիսապաշտպան	самосвал
ինքնուսույց	пятилетка
սանհանգույց	вертолёт
հակազագ	пересмотреть
վերանայել	полузащитник
ինքնագլոր	санузел
ինքնասպասարկում	противогаз

Վարժություն 9: Գրե՛ք երեքական բառապատճենման օրինակներ, որոնց առաջին բաղադրիչները լինեն՝ ինքն(ա)-, վեր(ա)-, կիս(ա)-:

ՓՈՒՍԱՌՅԱԼ ԵՎ ԲՆԻԿ ԲԱՌԵՐԻ ՀԱՍՍՐԺԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Բառային փոխառությունները յուրաքանչյուր լեզվի բառապաշարի հարստացման ու կատարելագործման անհրաժեշտ միջոցներ են: Դրանցով լեզուն հնարավորություն է ստանում անվանելու այն առարկաները, իրերը, երևույթները, հասկացությունները, որոնք վերցվում են հարևան ժողովուրդներից, մեկ այլ լեզվից:

Փոխառությունների հարցում անհրաժեշտ է ցուցաբերել մեծագույն զգուշություն: Պետք է փոխ առնել միայն այն բառերն ու արտահայտությունները, որոնք մայրենի լեզուն տվյալ պահին չունի և չի կարող փոխարինել ազգային ձևով: Փոխառությունները պետք է գործածել այբան ժամանակ, բանի դեռ լեզուն չի ստեղծել դրանց համարժեք ձևերը: Եթե հայերենը ստեղծում է փոխառությունների համարժեքները, և դրանք ընդունվում ու գործածվում են հանրության կողմից, ուրեմն տվյալ փոխառյալ ձևերը դառնում են **օտարաբանություն**:

Այս հարցում նկատելի է երկու իրարամերժ միտում:

Առաջինն այն է, որ մարդիկ աշխատում են ամեն ինչ թարգմանել, եթե նույնիսկ թարգմանված բառերը ընդունելի և գործածական չեն. սա



մաքրամոլություն է: Անհրաժեշտ է մերժել այս մոտեցումը: Այսօր մենք ունենք **տրամվայ, տրոլեյբուս, ակադեմիա, պրոֆեսոր, դոցենտ, դեկան** և նման բազմաթիվ բառեր, որոնք չեն թարգմանվել:

Այս փոխառությունները պետք է գործածվեն, բանի որ հայերենը չի ստեղծել դրանց համապատասխան իմաստային և կիրառական առումով համարժեք ձևեր:

Երբ 1960-ական թթ. կենցաղ մտավ հեռուստացույցը, հայերը չունեին դրա անվանման համապատասխան համարժեքը և գործածում էին **տելեվիզոր** բառը: Ժամանակի ընթացքում մեր լեզվի բառակազմական հնարավորությունների շնորհիվ ստեղծվեց **հեռուստացույց** բառը, որը շատ գեղեցիկ է ու գործածական: Կազմվեցին նաև բազմաթիվ նորանոր բառեր՝ *հեռուստադիտող, հեռուստակենտրոն, հեռուստածրագիր, հեռուստակառավարում, հեռուստահաղորդիչ, հեռուստապատկեր, հեռուստատեսություն* և այլն:

Վերջին տարիներին բազմաթիվ նոր բառեր ստեղծվեցին նաև **համակարգիչ** բառով:

Երկրորդ միտումն այն է, որ հաճախ ոչինչ չեն ուզում թարգմանել և փորձում են պահպանել փոխառյալ, օտար բառերը այն դեպքում, երբ լեզվում արդեն իսկ ստեղծվել են դրանց համարժեք ազգային ձևերը: Սա արդեն անհարկի **օտարամոլություն** է, որը նույնպես մերժելի է: Եթե հայերենը ունի օտար բառի համարժեքը, ուրեմն պետք է գործածել դա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ է. Աղայանի՝ 1976թ. լույս տեսած «Արդի հայերենի բացատրական բառարանում» ընդգրկված բազմաթիվ փոխառություններ (շուրջ 20.000) այսօր չեն գործածվում, և արդեն ընդունելի ու գործածական են դրանց հայերեն համարժեքները: *Դրանցից են՝ կուլտուրա – մշակույթ, տուրիստ – զբոսաշրջիկ, սովետ – խորհուրդ, տրադիցիա – ավանդույթ, ֆունկցիա – գործառույթ, միտինգ – հանրահավաք, պրոցես – գործընթաց, պարտիա – կուսակցություն, բիոլոգ – կենսաբան, էտապ – փուլ, էպիզոդ – դրվագ, դեպուտատ – պատգամավոր* և այլն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ե՞րբ է փոխառությունը վերածվում օտարաբանության:
2. Ո՞ր բառերի փոխառումն է անհրաժեշտ:
3. Ի՞նչ մոտեցում է անհրաժեշտ փոխառությունների գործածության հարցում:

Վարժություն 10: Գտե՛ք, թե աչ կողմի սյունակի որ բառը ձախ կողմի սյունակի որ օտար բառի համարժեքն է:

- | | |
|-----------------|----------------|
| 1. դելեգատ | 1. եզրափակիչ |
| 2. ստարտ | 2. մենաշնորհ |
| 3. վայլուտա | 3. մարգասարք |
| 4. էպիզոդ | 4. մեկնարկ |
| 5. ֆինալ | 5. արժույթ |
| 6. մոնոպոլիա | 6. դրվագ |
| 7. տրենաժոր | 7. խորհրդատու |
| 8. բորսա | 8. պնակիտ |
| 9. լոմբարդ | 9. պատկերամուտ |
| 10. դիսկետ | 10. կարգավար |
| 11. սկաներ | 11. խնամառու |
| 12. կոնսուլտանտ | 12. սակարան |
| 13. դիսպետչեր | 13. պատվիրակ |
| 14. պացիենտ | 14. առևտրային |
| 15. կոմերցիոն | 15. գրավատուն |

Վարժություն 11: Արտագրե՛ք տեքստը՝ ընդգծված օտարաբանությունները փոխարինելով տեքստից հետո տրված համարժեքներով՝ անհրաժեշտության դեպքում դրանք քերականորեն փոփոխելով:

Այդ օրը կազմակերպվել էր *բիուրոգիայի* համաբաղաբային *կոնկուրս*: Աշակերտները արդեն լրացրել էին պատասխանների *անկետաները* և անհամբեր սպասում էին, թե քանի *քալ* են ստանալու: Շենքը, որտեղ անցկացվում էր քննությունը, մի հին *մոնումենտալ* շինություն էր: Սյունազարդ դահլիճը բզզում էր մեղվափեթակի պես: Ահա *դիրեկտորը* մոտեցավ *միկրոֆոնին*, և բոլորը լռեցին: Նա ասաց, որ *կոմայուտերով* արդեն ստուգվել են բոլոր պատասխանները, և հիմա կհրապարակվեն քննության *օֆիցիալ* տվյալները:

Կես ժամ անց հաղթողները ուրախ ծիծաղում էին, իսկ պարտվածները շնորհավորում էին իրենց մրցակիցներին: Վերջում *մինիստրը* շտամպով հաստատված պատվոգրեր հանձնեց հաղթողներին:

Ձևաթերթիկ, կենսաբանություն, կոթողային, խոսափող, պաշտոնական, տնօրեն, նախարար, միավոր, համակարգիչ, դրոշմակնիք, մրցույթ:



Վարժություն 12: Արտագրե՛ք՝ նշվածներից ընտրելով յուրաքանչ-յուր օտար բառի համարժեքը:

1. ինտերնետ - *համակարգիչ, համացանց, ստեղնաշար*
2. ֆաբս - *հեռագիր, պատճենահան, հեռատիպ*
3. ինտերվյու - *հարցազրույց, պահանջագիր, հեռարձակում*
4. կուլտուրա - *արհեստ, մշակույթ, քանթար*
5. պեյզաժ - *դիմանկար, գծանկար, բնանկար*
6. պրոֆեսիոնալ - *արհեստավոր, արվեստագետ, արհեստավարժ*
7. կորպուս - *մասնաշենք, համալիր, սյունաշար*
8. սիստեմ - *ուղենիշ, համակարգ, նշագծում*
9. տուրիստ - *ճանապարհորդ, օտարական, զբոսաշրջիկ*
10. մոզաիկա - *մանրանկար, ծաղրանկար, խճանկար*
11. կոմերցիոն - *առևտրային, մարզական, շահումային*
12. էլաստիկ - *գունավոր, առածգական, փխրուն*
13. ցիվիլիզացիա - *քաղաքակրթություն, հետադիմություն, քաղաքականացում*
14. սիսեմա - *գծապատկեր, գծանկար, կետագիծ*
15. ֆոնոգրամա - *լուսանկար, ձայնագիր, հեռախոսազրույց*

Վարժություն 13: Գտե՛ք, թե աջ կողմի սյունակի որ բառը ձախ կողմի սյունակի որ օտար բառի համարժեքն է:

ակցիա	կազմախոսություն
ակումուլյատոր	կուտակիչ
անատոմիա	բաժնետոմս
անսամբլ	առաջապահ
ավանգարդ	համույթ
արենա	ասպարեզ
Էվոլյուցիա	արգանակ
ռեֆորմ	գրասենյակ
դիրեկտոր	դրամատուն
գաստրոլ	բարեշրջություն
բուլյոն	բարեփոխում
բյուրո	հյուրախաղ
բանկ	տնօրեն



ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՉԵՎԻ ԵՎ ԻՍՍՍՏԻ ՓՈԽՉԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ

Բառերը տարբեր հատկանիշներ ունեն և այդ պատճառով էլ դասակարգվում են տարբեր մոտեցումներով: Եթե բառերը դասակարգվում են ըստ ծագման, ապա հաշվի է առնվում, թե բառը հայերենին անցել է հնդեվրոպական մայր լեզվի՞ց, թե՞ այլ լեզուներից: Եթե բառերը դասակարգվում են ըստ կազմության, ապա հաշվի են առնվում նրանց կառուցվածքային հատկանիշները, այսինքն՝ քանի՞ արմատ կամ ածանց կա բառում: Ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության դասակարգելիս էլ հաշվի է առնվում այն հանգամանքը, թե բառերի ձևերը և իմաստները ինչ հարաբերություն ունեն: Բերենք հետևյալ նախադասությունները.

Չաղթանակի տոնը եզրափակվեց գեղեցիկ հրավառությամբ. Նա փոխեց ձայնի տոնը: Առաջին նախադասության մեջ **տոն** նշանակում է **տոնախմբություն**, իսկ երկրորդ նախադասության մեջ՝ **ձայնաստիճան**: Չետևաբար նշված երկու բառերը նույն ձևն ունեն, սակայն արտահայտում են միանգամայն տարբեր իմաստներ: Բերենք այլ նախադասություններ.

Նորակառույց շենքի լուսամուտները տեղադրեցին: Նորակառույց շենքի պատուհանները տեղադրեցին: Այս նախադասություններում **լուսամուտները** և **պատուհանները** բառերը տարբեր ձևեր ունեն, սակայն անվանում են միևնույն առարկան:

Այսպիսով՝ բառերը, ըստ իրենց ձևի և իմաստի, միմյանց նկատմամբ տարբեր փոխհարաբերություններ են ունենում: Մի դեպքում կարող են ձևով նույնը լինել, բայց արտահայտել տարբեր իմաստներ, մյուս դեպքում կարող են տարբեր ձևեր ունենալ, բայց նույն իմաստն արտահայտել: Բառերն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության դասակարգելիս հաշվի են առնվում այս և մի քանի այլ ձևաիմաստային հարաբերություններ:

ՉԻՇԵՂԸ

Խթանել նշանակում է առաջ մղել: Խթանը հեծյալի կոշիկների կրունկներին ամրացվող մետաղյա հարմարանք է, որով հեծյալը թեթևակի հարվածում է ձիուն՝ նրա քայլքը կամ վագքը արագացնելու համար:

Մեղանչել նշանակում է մեղք, հանցանք գործել:

Չակամետ նշանակում է տրամադիր, հակված, միտված լինել:



ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ սկզբունքներով են դասակարգվում բառերը:
2. Ըստ ձևի և իմաստի դասակարգելիս ի՞նչ հատկանիշներ են հաշվի առնվում:

Վարժություն 14: Դո՛ւրս գրեք ընդգծված բառերը և խմբավորե՛ք հետևյալ չափանիշներով. ա) բառեր, որոնք ունեն նույն ձևը, սակայն տարբեր իմաստներ են արտահայտում. բ) բառեր, որոնք տարբեր ձևեր ունեն, սակայն մոտ իմաստներ են արտահայտում:

Մեր ուղին ձգվում էր Արարատյան դաշտի՝ իրար հաջորդող գյուղերի երկայնքով: Մարտի վերջն էր: Արդեն զգացվում էր բնության զարթոնքը: Անֆալտապատ ճանապարհը, որը նոր էին վերանորոգել, գնում, ձուլվում էր մշուշոտ հեռուներին: Շեներից մեկով անցնելիս մեր մեքենան խափանվեց: Մինչ վարորդը պարզում էր խափանման պատճառը, հյուրընկալ բնակիչներից մեկը հրավիրեց մեզ՝ իր հարկի տակ հանգստանալու: Մենք անցանք մի հուշարձանի մոտով, որը նվիրված էր գյուղի ինքնապաշտպանական մարտում զոհվածների հիշատակին, և մտանք տուն: Վայելեցինք գյուղական տան բարիքները և գեղջկական անկեղծ խոսք ու զրույցի անմիջականությունն ու մտերմությունը: Տանտերը պատմեց գյուղի պատմությունից, իրենց առօրյայից, հողի աշխատանքից, իրենց վճարած հարկերից ու զանազան խնդիրներից: Մենք խոստացանք գյուղի հիմնահարցերի մասին հոգվածներ գրել և հնարավորության դեպքում նպաստել դրանց լուծմանը: Շուտով եկավ վարորդը և հայտնեց, որ կարող ենք շարունակել ուղևորությունը: Նա էլ ճաշակեց գյուղի անարատ բարիքներից, և մենք, խորին շնորհակալություն հայտնելով, հրաժեշտ տվեցինք բարի ու հյուրասեր մարդկանց:

Արտաշես Մարգարյան

Վարժություն 15: Գրե՛ք հինգ զույգ բառ, որոնք ձևով նույնը լինեն, իմաստով՝ տարբեր, և հինգ զույգ բառ, որոնք ձևով տարբեր լինեն, սակայն արտահայտեն մոտ իմաստներ:

Վարժություն 16: Կազմե՛ք նախադասություններ՝ գործածելով նախորդ վարժության բառերը:

ՀՈՍԱՆԻՑ ԲԱՌԵՐ

Բառային հոմանիշները միևնույն խոսքի մասին պատկանող բառեր են, որոնց իմաստները լիովին կամ մասնակիորեն համընկնում են: Դրանք կարող են տարբերվել ոճական կիրառությամբ, հուզաարտահայտչական գունավորմամբ, կիրառության ոլորտով ու հաճախականությամբ, ինչպես նաև ուրիշ բառերի հետ կապակցվելու հնարավորություններով:

Հոմանիշների երկու տարատեսակներ են տարբերակվում՝ **համանիշներ**, որոնք արտահայտում են մոտ, մերձավոր իմաստներ, և **նույնանիշներ**, որոնք արտահայտում են նույնական իմաստներ: Օրինակ՝ *մաքուր – պարզ – հասարակ – վճիտ* բառերը հոմանիշներ են, որովհետև արտահայտում են իրար մոտ հասկացություններ: Իսկ *լուսամուտ – պատուհան, մայրաքաղաք – քաղաքամայր* բառերը նույնանիշներ են, քանի որ անվանում են նույն իրողությունը: Սակայն նույնանիշներն էլ ոճականորեն տարբեր են. օրինակ՝ *քաղաքամայր*-ը *մայրաքաղաք*-ի համեմատությամբ ավելի բարձր ոճի է պատկանում:

Իրար հոմանիշ բառերը միասին կազմում են **հոմանշային շարք:**

Հոմանիշների շարքը բառերի, բառակապակցությունների, դարձվածքների այն խումբն է, որի մեջ մտնող անդամներն իրար կապված են հոմանշային կապերով ու հարաբերություններով: Հոմանշային շարքի մեջ մտնող միավորները հիմնականում արտահայտում են միևնույն հասկացությունը, բայց իրարից տարբերվում են կամ իմաստային նրբերանգներով, կամ ոճական կիրառությամբ ու գործածության հաճախականությամբ:

Հոմանիշների շարքում սովորաբար առանձնանում է բաղադրիչներից մեկը, որը տվյալ դեպքում հասկացությունն արտահայտող հիմնական, ելակետային բառն է: Այն ունի ընդհանուր իմաստ, ոճական առումով չեզոք է, ավելի հաճախ գործածելի և կոչվում է հոմանշային շարքի հիմնաբառ, ինչպես՝ *մազ – հեր, գես, վարս, ծամ*, կամ **հիանալի – հրաշալի, սքանչելի, զմայլելի, անզուգական** և այլն:

Հոմանշային շարքեր կարող են կազմվել գրեթե բոլոր խոսքի մասերով. առավելապես տարածված են գոյականներով, ածականներով, բայերով կազմված հոմանիշները, բայց գործածական են նաև այլ խոսքի մասերով կազմված հոմանիշներ, ինչպես՝ դերանուններով՝ *ամբողջ – ողջ – համայն – բոլոր, ուրիշ – այլ – այլևայլ*, կապերով՝ *տակ – ներքո,*

մասին – վերաբերյալ, **բացի** – զատ – առանց, **փոխարեն** – փոխանակ – տեղ – դիմաց, շաղկապներով՝ **և** – ու, **բայց** – սակայն, **թեև** – թեկուզ – թեպետ – թեպետև, վերաբերականներով՝ **երևի** – հավանաբար – գուցե – թերևս – ըստ երևույթին, **իրոք** – իսկապես – անշուշտ – արդարև, ծայրարկություններով՝ **ա՛խ** – ջա՛ն – վա՛յ – ուխա՛յ և այլն:

Հոմանիշների դերը խոսքում հիմնականում ոճական է. դրանք նպաստում են խոսքի պատկերավորությանը, հաղորդում հուզակա- նություն, խոսքը գերօ պահում միօրինակությունից, առանձին բառերի ու արտահայտությունների անհարկի կրկնություններից:

ՀԻՇԵՐ

Վտառ նշանակում է ձկների խումբ:

Պարս նշանակում է մեղունների խումբ:

Ոհմակ նշանակում է գայլերի (սաև շների) խումբ:

Հոտ նշանակում է ոչխարների խումբ:

Նախիր նշանակում է խոշոր եղջյուրավոր կենդանիների խումբ:

Հորան նշանակում է այծերի խումբ:

Բուլուկ նշանակում է խոզերի խումբ:

Ասպականի նշանակում է որսաշների խումբ:

Երամակ նշանակում է ձիերի խումբ:

Երամ նշանակում է թռչունների խումբ:

Խորդերամ նշանակում է կռունկների խումբ:

Նբողակ նշանակում է սողունների խումբ:

Ճահուկ նշանակում է աղվեսների խումբ:

Բույլ (սաև համաստեղություն) նշանակում է աստղերի խումբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են հոմանիշ բառերը:
2. Ի՞նչ տեսակների են բաժանվում հոմանիշները:
3. Որո՞նք են համանիշները:
4. Որո՞նք են նույնանիշները:



Վարժություն 17: Գտե՛ք ընդգծված բառերի հոմանիշները:

Դու ես բարը
Եվ սրբատաշ մեր **պատշարը**,
Չացը օրվա
Եվ նեղ ժամի մեր **պաշարը**,
Մեր փակ հոգին, բաց **աշխարհը**,
Սրբագործված մեր նշխարը.
Եվ մեր **ճարը՝**
Օտարամուտ **ախտի** դիմաց,
Խնկածավալ մեր **տաճարը՝**
Օտարահոտ **աղտի** դիմաց,
Վերադարձի մեր պատճառը՝
Մեր հարկադիր **գաղթի** դիմաց,
Համահավաք մեր **հանճարը՝**
Ազգասըփյուռ **բախտի** դիմաց...

Վարժություն 18: Տրված հոմանիշ բառերը խմբավորե՛ք ըստ ոճական երանգավորման, այսինքն՝ բարձր ոճի, չեզոք ոճի և ցածր ոճի:

1. մեռնել, վախճանվել, սատկել, հոգին ավանդել, երկինք համբարձվել, նահատակվել, մահանալ, ոտքերը ձգել, գետնի տակն անցնել, գրողի ծոցը գնալ, հրեշտակների հետ խոսել, շարքերից հեռանալ, մարտիրոսվել, կյանքից զրկվել
2. խանդավառել, սրտապնդել, ոգևորել, քաջալերել, քաջասրտել, խրախուսել, հուսադրել, թև տալ, հորդորել, գոտեպնդել

Վարժություն 19: Կազմե՛ք բառակապակցություններ տրված հոմանիշներից յուրաքանչյուրով:

1. փոթորիկ, բամի, սյուբ, մրրիկ, բորան, սամում, բուբ, խորշակ, զեփյուռ
2. հռիռալ, ծիծաղել, ժպտալ, խնդալ, բրբջալ, փռթկալ, կչկչալ
3. գեղանի, սիրուն, գեղասքանչ, չքնաղագեղ, վայելչատես, հաճելի, գեղեցիկ, դուրեկան, գողտրիկ, լավիկ, գրավիչ
4. հզոր, ուժեղ, առնական, քաջ, խիզախ, արի, անվեհեր, աներկյուղ, անվախ, կորովի, առյուծասիրտ, հերոսական, կտրիճ



Վարժություն 20: Արտագրե՛ք՝ փակագծերում տրված հոմանիշներից ընտրելով իմաստով համապատասխանողը:

1. Իր (միապաղաղ, միալար) առօրյան ձանձրացրել էր նրան:
2. Գիշերվա այդ ուշ ժամին բոլորը քնած էին, և գյուղի փողոցները (ամայի, անմարդաբնակ) էին:
3. Նոր հրատարակված գրքում շատ փաստեր խեղաթյուրված էին, ուստի մասնագետները բազում հողվածներով այդ գիրքը (քննադատեցին, հանդիմանեցին):
4. Գրավոր աշխատանքը ստուգելիս նա (նշմարեց, նկատեց) ուղղագրական որոշ սխալներ:
5. Չորավարը, որը պարսպի վրայից հետևում էր հակառակորդի տեղաշարժմանը, (խորհեց, մտածեց), որ իր զինվորների դիրքավորումն էլ պետք է փոխվի:
6. Պտտածողից բռնելով՝ մարմնամարզիկն իր (ճկուն, առածգական) մարմնով մի քանի բարդ վարժություններ կատարեց:
7. Նոր ստեղծված այդ սարքի (ճառագայթումը, շողարձակումը) խիստ վնասակար է առողջության համար:
8. Հանրախանութում մանկական նոր (խմիչք, ըմպելիք) էին վաճառում:
9. Ծորակից (հոսող, հորդող) ջրի բարակ շիթը երբեմն ընդհատվում էր:
10. Ամառային (զուլալ, վճիտ) երկնքում շողում էր արևը:

Վարժություն 21: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք տողասկզբում գրված բառի հոմանիշը:

1. կտրիչ – սրիչ, բրիչ, հատիչ, կտրիճ
2. սին – դարավոր, ունայն, կասկածելի, գորավոր
3. իրազեկ – տեղյակ, անգիտակից, անիրական, օտարոտի
4. հակամետ – հակադիր, հակադարձ, միտումնավոր, տրամադիր
5. հաղթահասակ – ցածրահասակ, պարթևահասակ, մանկահասակ, մեծահասակ
6. հույժ – լոկ, սաստիկ, մտացածին, փոթորկուն
7. հապաղել – շտապել, միավորել, դանդաղել, խորհել
8. ադամորդի – կենդանի, թռչուն, միջատ, մարդ
9. ականակիտ – դյուրաբեկ, վճիտ, խավարչտին, հորդահոս
10. հյունն – կավագործ, երկաթագործ, ատաղձագործ, գորգագործ

11. ջնարակ – ապակեներկ, ջրհորդան, այծենակաճ, ըմպանակ
12. խոժոռվել – խորհել, մռայլվել, ժպտալ, երկմտել
13. սփոփանք – հուզմունք, կասկածանք, մխիթարություն, խինդ
14. համբավ – բաղձանք, հռչակ, գովեստ, անձկություն
15. բողարկել – ծանուցել, ընդլայնել, հաղթահարել, թաքցնել

Վարժություն 22: Ամեն տողում գտե՛ք տրված բառի մեկ հոմանիշ:

ա) Ապակողմտորոշվել

1. հուսալքվել, շփոթվել, ալեկոծվել
2. տեղեկանալ, հուզվել, շվարել
3. մոլորվել, լքել, հակադարձել

բ) Հավաքել

1. գետեղել, կուտակել, հարադրել
2. ընդարձակել, դիզել, հայտնաբերել
3. հուսադրել, անրջել, ամբարել

գ) Հուզիչ

1. անձկալի, հուսաբեկ, սրտառուչ
2. սրտամմիկ, կարոտաբաղձ, ավետաբեր
3. տաղտկալի, հոգեթրթիռ, անվերադարձ

դ) Հրաշալի

1. անդորրավետ, բնանկարային, հիանալի, կախարդական
2. աշխարհիկ, ջնաշխարհիկ, բարձրաշխարհիկ, բնաշխարհիկ
3. անապական, ականակիտ, հոյակապ, պատկերազարդ

ե) Խիզախ

1. մոլեգին, անվեհեր, ինքնահավան, ապերասան
2. նենգ, հպարտ, արի, վես
3. անզուսպ, հայրենանվեր, կտրիչ, կտրիճ

Վարժություն 23: Գտե՛ք իրար հակադրված հոմանիշ բառերը և բացատրե՛ք դրանց իմաստային տարբերությունները:

Ես նա եմ նաև,

Որ տարբերում է պաչը համբույրից,
 Ինչպես սիրողին՝ սիրահարվածից
 Եվ մահացումը՝ մեռնելուց:

Իրոք,

Ի՞նչ է իմ գործը,



Եթե ոչ չուկել
 Ո՛չ թե կեղծիքը ճշմարտությունից,
 Այլև տարբերել սուտը կեղծիքից,
 Ճիշտը՝ ճշմարտից և ճշգրտից,
 Գութը՝ խղճալուց...
 Իսկ երբ ես շատ եմ ինքըս ինձ նման,
 Այսինքն՝ բարձր ինքըս ինձանից,
 Ես տարբերում եմ մուժը մշուշից
 Ու մառախուղից մեզն եմ տարբերում:
 Տարբերում եմ
 Բախտավորություն ու երջանկություն,
 Ոճիր ու հանցանք:
 Ու երբ ես շատ եմ ինքըս ինձ նման,
 Այսինքն՝ բարձր ինքըս ինձանից,
Չարեանույ՜ր բան,
 Ես՝ Տարբերողս,
 Բնա՛վ ամենից ինձ չեմ տարբերում...

Պարույր Սևակ

ՀԱԿԱՆԻՉ ԲԱՌԵՐ

Հականիշները իրար հակադիր իմաստ արտահայտող բառերն են:
 Դրանք խոսքի մեջ գործածվում են զանազան նպատակներով և ոճական տարբեր երանգներով:

Հականիշները իմաստային առումով լինում են **բացարձակ** և **ժխտական**:

Բացարձակ հականիշները ցույց են տալիս տրամաբանորեն իրար հակառակ հասկացություններ (առարկա, հատկանիշ, գործողություն), ինչպես՝ *բարեկամ – թշնամի, հարուստ – աղքատ, հարց – պատասխան, հեռու – մոտիկ, կարճ – երկար, բարձրանալ – իջնել, սիրել –ատել, ճիշտ – սխալ, արագ – դանդաղ* և այլն:

Ժխտական են այն հականիշները, որոնց զույգերի մեջ մտնող անդամներից մեկը ժխտում է, բացասում մյուսի արտահայտած հատկանիշի առկայությունը: Ժխտական հականիշները սովորաբար կազմվում են **ան-**, **ապ-**, **դժ-** և այլ ժխտական նախածանցներով, ինչպես՝



ազնիվ – անազնիվ, վստահելի – անվստահելի, բարեխիղճ – անբարեխիղճ, ազգային – ապազգային, գոհ – դժգոհ և այլն:

Հականիշներ են առաջանում նաև այն դեպքում, երբ միևնույն բառից նոր բառեր են կազմվում հականիշ ածանցներով կամ արմատներով, ինչպես՝ *հոմանիշ – հականիշ, վերերկրա – ստորերկրյա, ներլեզվական – արտալեզվական, ներգաղթ – արտագաղթ, մերձակետ – հեռակետ* և այլն:

Կազմության առումով հականիշները լինում են **նույնարմատ** և **տարարմատ**: **Նույնարմատ** են նույն արմատից կազմված հականիշները, օրինակ՝ *դիմավոր – անդեմ, աղմկոտ – անաղմուկ, արատավոր – անարատ, զգայուն – անզգա* և այլն:

Տարարմատ հականիշները կազմվում են տարբեր արմատներով, ինչպես՝ *մեծ – փոքր, երկար – կարճ, ուշ – շուտ, հեռու – մոտիկ, սիրել – ատել* և այլն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են հականիշ բառերը:
2. Իմաստային առումով ի՞նչ տեսակների են լինում հականիշները:
3. Կազմության առումով ի՞նչ տեսակների են լինում հականիշները:

Վարժություն 24: Դո՛ւրս գրե՛ք հականիշները և մեկնաբանե՛ք դրանց արտահայտչական երանգավորումը.

...Աղաչում եմ,-
Մի՛ վրդովվե՛ք, եթե ասեն
Փառասերին հենց փառասեր,
Ոչ թե համեստ,
Սրիկային՝ հենց սրիկա,
Ոչ թե ազնիվ,
Հեռակային՝ հենց հեռակա,
Ոչ թե ներկա...

Պարույր Սևակ

Վարժություն 25: Յուրաբանցուր շարքում գտե՛ք տողակզբում գրված բառի հականիշը:

1. Ժրաջան – խոժոռ, համառ, ծույլ, բիրտ
2. ուսյալ – ուշիմ, հետաքրքրասեր, անփույթ, տգետ



3. առույգ – կենսախիղ, ալևոր, տկար, կորովի
4. կարծր – կոշտ, ողորկ, փուխր, դյուրահալ
5. վեհանձն – վեհերոտ, խիզախ, մռայլ, ստոր
6. մեներգ – եղերերգ, օրհներգ, խմբերգ, պարերգ
7. երաշտային – լեռնային, դաշտային, անձրևային, ճահճային
8. գազաթ – լանջ, կատար, ստորոտ, անձավ
9. լավատես – բարեստես, հեռատես, կարճատես, հոռետես
10. ջրարբի – անջրդի, ջրառատ, բերրի, փթթուն
11. բազում – բյուր, սակավ, հոծ, մերթընդմերթ
12. ըմբոստ – խիզախ, մոլեգին, հնազանդ, ազնիվ
13. ապացուցում – հիմնավորում, պնդում, մեկնաբանում, հերքում
14. ակնհայտ – ակնբախ, ծածուկ, հանիրավի, բացեիբաց
15. փառաբանել – ներբողել, սահմուկել, սբանջանալ, պախարակել

Վարժություն 26: Գրե՛ք «Էքսկուրսիա» վերնագրով շարադրություն՝ օգտագործելով վաղ – ուշ, հեռու – մոտիկ, բարձր – ցածր, հիշել – մոռանալ, կորցնել – գտնել, ուրախանալ – տխրել, թրջվել – չորանալ, հոգնել – հանգստանալ հակահիշները:

ՀՄՍՆՈՒՆ ԲԱՐԵՐ

«Տուն վերադառնալու համար նա նստեց համար 5 ավտոբուսը»:
Այս նախադասության մեջ առաջին անգամ գործածված **համար** բառը նշանակում է **նպատակով**, իսկ երկրորդ **համար**-ը նշանակում է **հաջորդական կարգ ցույց տվող թիվ**: Այսինքն՝ միևնույն ձևն ունեցող բառերով արտահայտվել են լիովին տարբեր իմաստներ: Այսպիսի բառերը կոչվում են համանուններ: **Համանուն են այն բառերը, որոնք ունեն նույն ձևը, սակայն տարբեր իմաստներ են արտահայտում:** Ձև ասելով՝ նկատի են առնվում բառի հնչյունական կազմը, գրությունը, արտասանությունը: Այսինքն՝ առաջին հերթին համանուն են այն բառերը, որոնք կազմված են նույն հնչյուններից և գրվում ու արտասանվում են նույն ձևով: Սակայն համանունների որոշ տեսակներ կարող են գրվել նույն ձևով, բայց արտասանվել տարբեր կերպ կամ հակառակը և այլն: Այսպիսի և մի քանի այլ տարբերությունների հիման վրա էլ առանձնացվում են համանունների տեսակները:

Համանունները լինում են՝ **1) բառային, բառաբերականական և քերականական. 2) լիակատար և մասնակի. 3) բուն, նույնահունչ և նույնագիր:**

1. Բառային, բառաբերականական և բերականական համանուններ: Եթե համանունները բերականորեն չփոփոխված, ուղիղ ձևով բառեր են, կոչվում են **բառային**, օրինակ՝ **մարտ** (տարվա երրորդ ամիսը) – **մարտ** (կռիվ, ճակատամարտ), **հոտ** (քույր) – **հոտ** (ոչխարների խումբ) և այլն: Եթե բառերից մեկը ուղիղ ձև է, իսկ մյուսը՝ բերականորեն փոխված բառածև, ապա այդպիսի համանունները կոչվում են **բառաբերականական**, օրինակ՝ **օղի** (ոգելից խմիչք) – **օղի** (օղ բառի սեռականը), **անցավ** (առանց ցավի) – **անցավ** (*անցնել* բայի անցյալ կատարյալը) և այլն: Եթե համանուն են դարձել բերականորեն փոխված բառածևերը, ապա այդպիսի համանունները կոչվում են **բերականական**, օրինակ՝ **ջրի** (*ջուր* գոյականի սեռական հոլովածևը) – **ջրի** (*ջրել* բայի ըղծական եղանակի բայածև) – **ջրի** (*ջրել* բայի ժխտական ձևաբայը) և այլն:

2. Լիակատար և մասնակի համանուններ: Բառային համանուններից շատերը ուղիղ և բերականորեն փոփոխված ձևերում համընկնում են, օրինակ՝ **փող** (խողովակ) և **փող** (դրամ) բառերի եզակի և հոգնակի հոլովները ձևով նույնն են՝ **փողի** և **փողի**, **փողեր** և **փողեր** և այլն: Սրանք կոչվում են **լիակատար** համանուններ: Համանունները կարող են իրենց համանունությունը պահպանել բերականական ոչ բոլոր ձևերում. օրինակ՝ **զատիկ** (քրիստոնեական տոն) և **զատիկ** (կարծրաթև միջատ) բառերը ուղղական հոլովում համանուն են, բայց սեռական հոլովում արդեն համանուն չեն՝ **զատկի** և **զատիկի**: Նույն ձևով **սեր** (զգացմունք) և **սեր** (սերուցք) համանունները՝ **սիրո** – **սերի**, նաև՝ **սիրուց** – **սերից**, **սիրով** – **սերով** և այլն: Սրանք կոչվում են **մասնակի** համանուններ:

3. Բուն, նույնահունչ և նույնագիր համանուններ: **Բուն** են նույն ձևով գրվող ու արտասանվող համանունները, օրինակ՝ **բարակ** (ոչ հաստ) – **բարակ** (որսաշան տեսակ), **վարել** (հողը հերկել) – **վարել** (ղեկավարել, կառավարել) և այլն: **Նույնահունչ** են այն համանունները, որոնք արտասանվում են նույն ձևով, բայց գրությամբ տարբեր են, օրինակ՝ **ուղտ** (սապատավոր կենդանի. արտասանվում է *ուխտ*) – **ուխտ** (դաշինք, երգում), **աղտ** (կեղտ. արտասանվում է *ախտ*) – **ախտ** (հիվանդություն) և այլն: **Նույնագիր** են այն համանունները, որոնք գրվում են նույն ձևով, բայց տարբեր են արտասանությամբ, օրինակ՝ **հորդ** (վարար) և **հորդ** (թո հորը, արտասանվում է *հորըրդ*) և այլն:

Համանունները գեղարվեստական խոսքում հաճախ են գործածվում ոճական նպատակներով. նրանցով ստեղծվում են խորհմաստ ասույթներ, հուզական տողեր, հետաքրքիր բառախաղեր և այլն, ինչպես՝

Անունս տվել ու ասել է նա.

«Ականջդ կանչի»:

Եվ արծազանքն է այս երգն էլ տխուր
Այդ մաշված կանչի:

Համո Մահյան

Լողանում են Սևանում,
Չովանում են Սևանում:
Պառկում տաքուկ ավազին
Սևանում են Սևանում:

Յուրի Մահակյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐժՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ո՞ր բառերն են կոչվում համանուն:
2. Ի՞նչ տեսակներ ունեն համանունները:
3. Որո՞նք են բառային, բառաբերականական և քերականական համանունները:
4. Որո՞նք են լիակատար և մասնակի համանունները:
5. Որո՞նք են բուն, նույնագիր և նույնահունչ համանունները:

Վարժություն 27: Հետևյալ համանունների տարբեր իմաստներով կազմե՛ք նախադասություններ:

Աղային, օղի, հորդ, ամպեր, այրի, հարկ:

Վարժություն 28: Գտե՛ք համանունները, որոշե՛ք տեսակը:

Մի օր անապատում
Ես ուղտավոր էի...
Մի օր՝ ուխտի ճամփա
Եվ ուխտավոր էի:

Առաքելու է, ինչ էլ որ լինի,
Իր ծուխն առ երկինք երդը նաիրյան:
Եվ ոչ մի օրով աշխարհի երթից
Հետ չի մնալու երթը նաիրյան:

Շատ է եղել, որ սրտիդ հետ,
Խորհուրդ արել, վճռել ես դու՝
Վեր կենալ մի պատեհ պահի,
Պահի խորհուրդն Աստված պահի,



Գնալ, պատմել, ով պատահի,

Գլխիդ եկած-պատահածը:

Հավքի հետ էիր թև առած թռչում,

Ամպի մեջ էիր թևերդ թրջում:

Համո Մահյան

Վարժություն 29: Յուրաքանչյուր երեք կապակցություններից որի՞ ընդգծված բառն է համանուն մյուս երկուսի ընդգծված բառերին:

1. ձայնի տոն, հաղթանակի տոն, ծննդյան տոն
2. թաղված գանձ, պատարագի գանձ, թանգարանային գանձ
3. անարգել պատիվը, անարգել մարդուն, անարգել հեռանալ
4. ծիրանի փող, անաշխատ փող, ծախսված փող
5. գեղեցիկ վայր, վայր ընտրել, վայր գցել
6. միալար նվագարան, միալար ձայն, միալար երգ
7. կիսել և ուտել, կիսել խմել, հաց կիսել
8. փոքր-ինչ ավել, երեք ժամ ավել, կոտրված ավել
9. կարող ուժ, կարող վարպետ, զգեստ կարող
10. մանուկների պար, խմբային պար, լեռների պար

ՀԱՐՍՆՈՒՆ ԲԱՐԵՐ

Հարանուն են կոչվում այն բառերը, որոնք հնչյունական կազմով իրար մոտ են կամ նման: Օրինակ՝ **հասկացություն – հասկացողություն, մախաթ – մախաղ** և այլն:

Քանի որ հարանունները իրար բավականին նման են, երբեմն էլ մոտ են իրար իրենց արտահայտած իմաստներով, ուստի հաճախ տարբեր կիրառություններում առաջացնում են իմաստային շփոթ, այսինքն՝ մեկի փոխարեն սխալմամբ գործածվում է մյուսը, ինչպես՝ **ցուցում – ցուցմունք, արհեստ – արվեստ, պաշտպանել – պահպանել** և այլն:

Հարանունների մի մասը իմաստային ոչ մի կապ ու ընդհանրություն չունի: Դրանք իրար նմանվում են սոսկ իրենց հնչյունական կազմով, ձևով, ինչպես՝ **սպորդել** (աչքից վրիպելով՝ պատահաբար մեջ ընկնել, վրիպել) և **սփրթնել** (գույնը գցել, գունատվել), **կոհակ** (ալիք) և **կողակ** (ծկան տեսակ) և այլն:

Հարանունների մյուս մասը կազմվում է նույն արմատից, ինչպես՝ **գործուն – գործոն, հնչուն – հնչուն, հրատարակություն – հրատարակչություն** և այլն:

Չարանուններ կարող են լինել տարբեր խոսքի մասերի պատկանող բառագույգեր, ինչպես՝ **վաղորդայն** (վաղ առավոտ) և **վաղորդյան** (առավոտյան), **առաջի** (առջևի) և **առաջին** (*մեկ* թվականի դասականը) և այլն:

Չարանունները չպետք է շփոթել նույնահունչ և նույնագիր համանունների հետ: Չամանունները բառի երեք հատկանիշներից գոնե մեկով՝ հնչյունական կազմով, գրությամբ կամ արտասանությամբ, համընկնում են, իսկ հարանունների դեպքում սրանցից ոչ մեկը նույնը չէ:

Չարանունները խոսքում, առավել ևս գեղարվեստական երկերում գործածվում են ոճական որոշակի երանգավորման նպատակով: Բանաստեղծական խոսքում գործածվելով տարբեր հաջորդականությամբ և տողերի վերջում՝ ստեղծում են համապատասխան ռիթմ և հանգավորում, ինչպես՝

Վտարանդի երկրում **աղոտ**,
Լուսեղ քեզ եմ երագում,
Եվ հնչում է որպես **աղոթք**
Արքայական քո լեզուն:

Վահան Տերյան

Չարանունների ոճական արժեքը նկատելի է հատկապես բառախաղեր կազմելիս և ժողովրդական ասացվածքներում, ինչպես՝ «Ուշ լինի, նուշ լինի», «Ով ալարի, ո՛չ դալարի», «Չա՛յ-հա՛յը գնացել, վա՛յ-վա՛յն է մնացել» և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են հարանուն բառերը:
2. Ինչո՞ւ է անհրաժեշտ հարանունների իմացությունը:

Վարժություն 30: Արտագրե՛ք, գտե՛ք հարանունները և մեկնաբանե՛ք դրանց իմաստային տարբերությունները:

1. Ունենալով անբասիր վարք՝ նա լավ վարկ ձեռք բերեց իր միջավայրում:
2. Այգեբացի օրերին գյուղացին այգաբացից մինչև աղջամուղջ աշխատում էր:
3. Հիացնելով իր պճնանքով՝ արքայադուստրը պջրանքով հեռացավ:
4. Շառաչուն հողմը տապալեց ծառը, և լսվեց ուժգին շառաչյուն:



5. Նրա խոսքը վեճերի տեղիք տվեց, շատերն առարկեցին, և նա ստիպված տեղի տվեց:
6. Օրավուր ծաղկում էր նրա մի օրավար հողը:
7. Վերոբերյալ փաստերից պարզ է դառնում, որ ոչ ոք նրա վերաբերյալ բացասական կարծիք չի հայտնել:
8. Գուհանը բամբիչի համար բամբիռ էր նվագում:
9. Հրատարակչությունը նախապատրաստում է այդ գրքի երկրորդ հրատարակությունը:
10. Իր արվեստանոցից ելնելով՝ նկարիչը մտավ կոշկակարի արհեստանոցը:

Վարժություն 31: Արտագրե՛ք շուտասելուկները և գտե՛ք հարանունները:

Քանի՞ նուռ կա մի բռան մեջ,
 Քանի՞ հատիկ՝ մի նռան մեջ,
 Քանի՞ հատիկ՝ ճաքած նռան,
 Ճաքած նռան բաց դռան մեջ:

Վարա՛գ, գնա՛ մարագ, արի՛:
 Արա՛գ գնա՛ մարագ, արի՛,
 Թե՛ մարագում կարագ գտար,
 Կարագը ա՛ն, արա՛գ արի՛:

Յուրի Սահակյան

Վարժություն 32: Հետևյալ հատվածներում գտե՛ք հարանունները:

- ա) Հյուրասիրում եմ
 Ձմռան վերջերին խաղողի ճուրղով,
 Եթե չեք ճաշել՝ կաքավի ճուտով:
- բ) Ես ուզում եմ, որ կարապը ոչ թե մեռնի,
 Որ կարապը ապրի երգով.
 Ես ուզում եմ, որ տարափը տեղա արտի,
 Ոչ թե հզոր ծովի վրա:
 Ես ուզում եմ, որ քարափը քարայծ պահի,
 Ոչ թե օձեր ու մողեսներ:

Պարույր Սևակ



Վարժություն 33: Գտե՛ք հարանունները, մեկնաբանե՛ք դրանց իմաստային առանձնահատկությունները և հնարավորության դեպքում գտե՛ք դրանց հոմանիշներն ու հակահիշները:

Դու մեր հաստատ Մասիս սարը՝
Վստահելի թիկունքն ես մեր,
Մեր երգերի Ծովասարը
Ու բյուրակյան ակունքն ես մեր,
Մեր արնոտված հավքի լեզուն,
Մեր կարոտած ֆիդան յարը,
Մեր լեփ-լեցուն հոգիների ձայնատարը,
Մեր երգերի խա՛ղը-նոտա՛ն-ձայնատա՛ռը:
Ձայնասըվիյո՛ւռը կենդանի
Ու ձայների թանգարա՛նը,
Մեր հայկական երգարա՛նը...
Արտը մեզնից՝ դու ես մաճկալ,
Հարդը մեզնից՝ ցորենը դու,
Հարթը մեզնից՝ կատար դու սեգ.
Լուրթը մեզնից՝ երկինքը դու,
Շուրթը մեզնից՝ դու համբույրը,
Ցուրտը մեզնից, իսկ դու՝ կրակ,
 Իսկ դու՝ օջախ,
 Իսկ դու՝ թոնիր...

Պարույր Սևակ

Վարժություն 34: Փակագծերում տրված հարանուններից ընտրե՛ք նախադասությանը համապատասխանողը:

1. Նրա առաջարկությունը բուռն քննարկումների (տեղի տվեց, տեղիք տվեց):
2. Խոսքը (վերաբերում, վերաբերվում) է միայն մրցույթի մասնակիցներին:
3. Նա իր գործին շատ լուրջ է (վերաբերում, վերաբերվում):
4. Տերմիններն օգտագործվում են գիտական (հասկացությունները, հասկացողությունները) արտահայտելու համար:
5. Այդ հասկացությունն ըմբռնելու համար (հասկացողություն, հասկացություն) պետք է ունենալ:
6. Ղեկավարությունը ամեն կերպ (խթանում, խցանում) է արտադրության ծավալների ընդլայնումը:

7. Նրանք միջոցառմանը մասնակցելու (հրավեր, հրավերք) էին ստացել:
8. Արդեն վաճառվում է գրքի երկրորդ (հրատարակչությունը, հրատարակությունը):
9. Հուզված բազմությունը (խառնվել, խռնվել) էր հրապարակում:
10. Նա զարմացած (թոթովեց, թոթվեց) ուսերը:

Մենիմաստ և բազմիմաստ բառեր

Մարդիկ իրենց հայտնի իրողություններն անվանում են բառերով, այսինքն՝ բառերը ծառայում են տարբեր իմաստներ հաղորդելուն: Բառերի մի մասը անվանում է մեկ իրողություն, օրինակ՝ **խնձորենի** բառը նշանակում է **խնձորի ծառ**: Սակայն կան բառեր, որոնցով խոսողը կարող է մեկից ավելի իրողություններ անվանել: Բերենք հետևյալ նախադասությունը **«Մուլք գիշերով նա կատարեց իր մուլք գործը»**: **Մուլք** բառն առաջին դեպքում նշանակում է **խավար**, իսկ երկրորդ դեպքում **անօրինական, վատ, դատապարտելի**:

Միայն մեկ իմաստ արտահայտող բառերը **մենիմաստ** են, իսկ մեկից ավելի իմաստներ արտահայտողները՝ **բազմիմաստ**:

Բազմիմաստ բառերն ունենում են հիմնական և երկրորդական իմաստներ: Բերված օրինակի սկզբում **մուլք** բառը գործածվել է իր հիմնական՝ **խավար** իմաստով, իսկ հետո՝ երկրորդական իմաստով: Երկրորդական իմաստները սովորաբար հասկանալի են դառնում, երբ բազմիմաստ բառը կապակցվում է այլ բառերի: Օրինակ՝ **ոսկի** բառն առաջին հերթին ազնիվ մետաղի անվանում է, իսկ **ոսկի ձեռքեր, ոսկի աշուն** կապակցություններում արդեն արտահայտում է **շնորհալի և վառ դեղին** իմաստները:

Բազմիմաստ բառերի միջոցով հեղինակները գեղարվեստական ստեղծագործություններում ոճական զանազան հնարներ են ստեղծում, օրինակ՝

Հաշվեցե՛ք նաև մի վերջին՝ անգամ,

Թե այդ ի՞նչ ձևով,

Ի՞նչ մեքենայի օգնությամբ բարի

Դեռ կարելի է **մարդուն մա՛րդ** պահել

Եվ կամ նո՛ր միայն **մարդուն** դարձնել **Մա՛րդ...**

Պարույր Սևակ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են մենիմաստ բառերը:
2. Որո՞նք են բազմիմաստ բառերը:
3. Իրար նկատմամբ ի՞նչ հարաբերություններ են ունենում բազմիմաստ բառերի իմաստները:

Վարժություն 35: Գտե՛ք գործածված բազմիմաստ բառերն ու նրանցով կազմված դարձվածքները և մեկնաբանե՛ք դրանց արտահայտած իմաստները:

Խեղճ աղբատը դառը դատի,
Դատարկ նըստի... Է՛յ աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վըրա, քա՛ր աշխարհ:

Ավետիք Բասիակյան

Ես իմ օրերից գլուխ չեմ հանում,
Ջոկել չի լինում էլ ճիշտը ստից....
Սառնամանիքին ձյունի պես հալվում,
Շոգ ու կրակին դողում եմ ցրտից:
Գլուխ չեմ հանում իմ անտեր գլխից,
Էն գլխից է, որ գլուխ չեմ հանում,
Չի զանազանում նա մուխը ծխից
Եվ բախտը գաղթից չի զանազանում:

Լափը տալիս են ճիշտ ժամանակին,
Երբեք չեն խաբում:
Իսկ եթե լափը ուշացավ հանկարծ,
Խեղճ հովվի գլխին շան լափ են թափում:
Շունը տիրոջը շան տեղ չի դնում:

Համր Մահյան

Վարժություն 36: Տրված բազմիմաստ բառերից յուրաքանչյուրով կազմե՛ք երկուական նախադասություն՝ բառերը գործածելով տարբեր իմաստներով:

Մութ, ընդունել, հաց, սառը, ծանր:



Վարժություն 37: Դո՛ւրս գրեք ընդգծված բառերը, նշե՛ք թե որոնք են բազմիմաստ և ինչ իմաստով են գործածվել:

Աշնան մի պայծառ առավոտ էր. Արարատյան դաշտի հրաշագեղ աշունը. փոշոտ ցանկերի միջից փայլվում էին խաղողի ոսկեղեն ողկույզները, նուռն ու խնձորները, ասես հրեղեն գնդակներ լինեին. հուռթի այգիներից լիության անուշ բուրմունք էր խնկում. վերև՝ բաց կապույտում, հավթերի շղթան էր ձգվում, ներքև՝ ցողաթուրմ արհեսներով, հայ գեղջուկի սայլերն ու ձիերն էին անցնում՝ բարձած աշնան հազար ու մեկ բերքերով:

Երկու ընկերով գնում էինք հիևավուրց Արմավիրի բլրի տակով. մեր գլխի վրա ծփում էր մեհենական սոսիներու խորհրդավոր սոսափը. երկուսս էլ լուռ էինք՝ տարված մեր տեսիլներով:

Ավետիք Բասիակյան

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆ ԵՎ ՈՉ ԳՈՐԾՈՒՆ ՀԱՏՎԱՆԻՇՆԵՐԻ

Հայերենի բառապաշարի ոչ բոլոր բառերն են, որ հավասարապես լայն գործածություն ունեն: Բառեր կան, որոնք շատ կենսունակ են և մարդկային գործունեության տարբեր բնագավառներում ակտիվորեն մասնակցում են հաղորդակցման գործընթացին, իսկ մյուսները, ընդհակառակը, հազվադեպ են գործածվում:

Ըստ այդմ առանձնացվում են բառապաշարի գործուն և ոչ գործուն շերտեր:

Լեզվի **գործուն** բառաշերտն ընդգրկում է ամենօրյա գործածություն ունեցող, համագործածական բառերը (*մարդ, կին, քույր, եղբայր, ընկեր, ծով, լիճ, հաց, տուն, գիշեր, ցերեկ, ուտել, խմել, քնել* և այլն):

Բառապաշարի **ոչ գործուն** շերտին են պատկանում հազվադեպ գործածվող բառերը, օրինակ՝ նեղ մասնագիտական, բարբառային բառերը, ինչպես նաև հնացած ու նոր բառերը՝ հնաբանություններն ու նորաբանությունները, օրինակ՝ *տեգ, աշտե, համաբանություն, ներերակային* և այլն:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Արդյո՞ք բառապաշարի բոլոր շերտերը հավասար չափով են գործածվում:
2. Ո՞ր բառերն են մտնում գործուն բառաշերտի մեջ:
3. Ո՞ր բառերն են մտնում ոչ գործուն բառաշերտի մեջ:

Վարժություն 38: Տրված բառերը խմբավորե՛ք ըստ գործուն և ոչ գործուն լինելու:

Սեղան, աթոռ, ջերմամանրեագերծում, ճանապարհ, հեռուստատեսություն, գահավորակ, լույս, ավազագտիչ, անոթազարկագրիչ, հագուստ, հողմապտուտաչափ, պահեստ, ածխածնազերծում, խաղաղություն, հատապտղաբույծ, կամուրջ, սառցատեղախախտում, մոխրաջրազատիչ:

ՀՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնարանություններն այն բառերն են, որոնք գործածվել են լեզվի զարգացման նախորդ փուլերում և հետագայում տարբեր պատճառներով դուրս են մնացել գործածությունից: Անհրաժեշտության դեպքում դրանք կարող են գործածվել արդի հայերենի բառապաշարում:

Հնարանությունները բաժանվում են երկու խմբի՝ **պատմաբառեր** և **հնաբառեր**:

Պատմաբառեր են կոչվում այն բառերը, որոնք լեզվի զարգացման որոշակի փուլում անվանել են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ առարկաներ, երևույթներ և ժամանակի ընթացքում դադարել գործածվելուց, երբ այդ իրողությունները տարբեր պատճառներով վերացել են:

Այսպես՝ հնում գործածական են եղել **նիզակ**, **աշտե**, **տեգ** և այլ զենքեր, որոնք հետագայում փոխարինվել են նոր զենքերով: Բնական է, որ այդ զենքերի դուրս գալու հետ գործածությունից դուրս են մղվել նաև դրանց համապատասխան անվանումները: Կամ հնում եղել են **հազարապետ**, **սենեկապետ**, **բղեշխ** պաշտոնները: Դրանց անվանումներն էլ արդեն գործածական չեն:

Պատմաբառերը հիմնականում արտահայտում են տվյալ ժամանակաշրջանին հատուկ անվանումներ:

ա) Ռազմական տարբեր հասկացությունների, զենքերի, սարքերի անվանումներ, ինչպես՝ *այրուձի*, *գեղարդ*, *աշտե*, *կապարծ*, *նիզակ*, *տապար*, *սակր*, *բարան* և այլն:

բ) Տարբեր պաշտոնների, վարչական միավորների, հասարակական տարբեր խմբերի պատկանող անձանց անվանումներ՝ *սեպուհ, սպարապետ, ախոռապետ, մոզպետ, կուսակալ, փոխարքա, կուլակ, գզիր, նեպման* և այլն:

գ) Պետական մարմինների, հիմնարկ-ձեռնարկությունների, կազմակերպությունների և այլ անվանումներ, ինչպես՝ *լիկկայան, պատկոմ, գավիտեղկոմ, գավլուսքաժին, բանգյուղտեսչություն, ՅՕԿ* և այլն:

Պատմաբանների դերը խոսքի մեջ ոճական է: Դրանք առավելապես գործածվում են պատմական թեմայով գրված երկերում անցած պատմական ժամանակաշրջանի երանգավորում ստեղծելու, տվյալ շրջանին բնորոշ հասկացություններ անվանելու, ինչպես նաև այդ ժամանակաշրջանի և միջավայրի գործող անձանց խոսքը ոճավորելու նպատակով: Առանց պատմաբանների գործածության հնարավոր չէ պատմական թեմայով որևէ գեղարվեստական երկ ստեղծել:

Որոշ պատմաբաներ աստիճանաբար մուտք են գործում արդի գրական լեզվի բառապաշար իմաստային որոշակի փոփոխություններով, ինչպես՝ *նախարար, ատենակալ, մարզպետ* և այլն:

Ջնաբաները այն հնաբանություններն են, որոնք արդի գրական հայերենում ունեն իրենց համարժեք ձևերը, բայց այս կամ այն նպատակներով (հատկապես ոճական) դեռևս գործածվում են: Օրինակ՝ Ե. Չարենցը իր պոեմներից մեկում գործածել է գրաբարյան **լյառն** բառը (լյառն այն վսեմ), որը գրական հայերենում ունի համապատասխան *լեռ* ձևը, մեկ այլ դեպքում՝ **մարմարիոնյա** բառը՝ *մարմարյա* բառի փոխարեն, Պ. Սևակը գրում է. «Եվ **այր** մի Մաշտոց անուն», **այր** բառը գործածվում է *մարդ*՝ *տղամարդ* բառի փոխարեն: Ուրեմն, ի տարբերություն պատմաբանների, հնաբաները անփոխարինելի չեն, ունեն իրենց համարժեք ձևերը ժամանակակից հայերենում: Այսօրվա գրական լեզվում հաճախ են հանդիպում գրաբարյան *գի, քանզի, մամլո, նախարարաց* և այլ ձևեր, որոնց գործածությունը հանձնարարելի չէ, քանի որ կան *որ, քանի որ, մամուլի, նախարարների* և այլ համարժեքներ:

Ջնաբանությունները գեղարվեստական խոսքում ունեն ոճական որոշակի արժեք. օգնում են վերականգնելու տվյալ դարաշրջանի պատմական երանգավորումը, խոսքին հաղորդում են հանդիսավորություն, հուզաարտահայտչականություն, ինչպես նաև գեղարվեստական խոսքում նպաստում են կերպարների խոսքի անհատականացմանը:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է հնաբանությունը:
2. Ի՞նչ տեսակների են բաժանվում հնաբանությունները:
3. Ո՞ր հնաբանություններն են կոչվում պատմաբաներ:
4. Ո՞ր հնաբանություններն են կոչվում հնաբաներ:
5. Հիմնականում ի՞նչ նպատակով են գործածվում հնաբանությունները:

Վարժություն 39: Գտե՛ք հնաբանությունները, որոշե՛ք դրանց տեսակները:

Սենյակի հատակը պատած էր նախշուն բրդեղեն օթոցներով, անկյուններում դրված էին զանազան ձևերով՝ ծանր ու թեթև նիզակներ, տեգեր, գեղարդներ, ջիզաներ, աշտներ և երկաթյա ահագին լախտեր՝ բոլորը գեղեցիկ քանդակներով զարդարած, բոլորը ոսկեհուռ դրվազներով ազուցած: Իսկ սենյակի այն ճակատի վրա, որ կողմը դրված էր նրա գահավորակը, պատի վրա մեխած էր մի լայն վագրի մորթի: Նրա վրայից քարշ էին ընկած զանազան գեներ. կապարճ՝ լի նետերով, աղեղ՝ լայնալիճ, տապարներ՝ երկաթյա երկար կոթով, թեթև վահան՝ ուղտի թափանցիկ կաշուց պատրաստված, ծանր ասպար՝ պողովատից շինված և խոշոր կոճակների նման բևեռներով գամված, սաղավարտներ, զրահ՝ երկաթյա մանր օղակներից գործված, պղնձյա հաստ լանջապան, զանազան թրեր, դաշույններ, վաղրներ՝ երկար ու կարճ:

Ըաֆֆի

Վարժություն 40: Գտե՛ք հնաբանությունները, որոշե՛ք տեսակները և բացատրե՛ք դրանց իմաստները:

Այրուծի, մոգպետ, հրացան, աշտե, ծառուղի, սեպուհ, նամակ, բագին, շինություն, հեռանալ, ցորյան, լեռան, վարդ, մատուցանել, գնահատել, հատուցանել, հրովարտակ, լրագիր, ի փառս, հուշել, անսալ:

Վարժություն 41: Նախորդ վարժության հնաբանություններով կազմե՛ք նախադասություններ:

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասարակական կյանքի զարգացումը առաջ է բերում նոր առարկաներ, երևույթներ ու հասկացություններ, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս իր նոր անվանումով՝ բառերով կամ արտահայտու-

թյուններով: Լեզվի մեջ նոր մուտք գործող բառերն ու արտահայտությունները **Նորաբանություններ** են:

Նորաբանությունները հիմնականում առաջանում են երկու եղանակով:

Առաջին եղանակն այն է, երբ անհրաժեշտ է անվանել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում *Նոր կիրառություն ստացած* առարկաներ, երևույթներ ու հասկացություններ, և այդ նպատակով կազմվում են նոր բառեր: Այսպես՝ 60-ական թթ., երբ ստեղծվեց դեպի տիեզերք թռչող սարքը, այն պետք է ունենար իր անվանումը, ուստի և ստեղծվեցին **տիեզերանավ**, ապա նաև **տիեզերագնաց**, **տիեզերագնացություն** և նման բազմաթիվ նորաբանություններ: Նույնը նաև հեռախոսի, հեռուստացույցի, համակարգչի՝ կենցաղ մտնելուց հետո:

Չիշենք, որ նման դեպքերում մինչև ազգային համարժեք ձևերի ստեղծումը ժամանակավորապես գործածվում են որոշ փոխառություններ, որոնք հետագայում՝ համարժեք ձևերի ստեղծումից հետո, վերածվում են օտարաբանությունների (ինչպես՝ *տելեվիզոր*, *կոսմոնավտ*, *վիդեո* և այլն):

Նորաբանությունների առաջացման երկրորդ եղանակի դեպքում արդեն իսկ *գործածության մեջ եղած* և օտար բառով անվանված առարկան, երևույթը անվանվում են նոր բառերով ու արտահայտություններով, այսինքն՝ փոխառյալ ձևերի փոխարեն գործածվում են ազգային համարժեք բառերը, ինչպես՝ *հիմն* – *օրհներգ*, *ֆոնդ* – *հիմնադրամ*, *պառլամենտ* – *խորհրդարան*, *վալյուտա* – *արժույթ*, *տուրիստ* – *զբոսաշրջիկ*, *կոլտուրա* – *մշակույթ*, *պրոցես* – *գործընթաց*, *ֆունկցիա* – *գործառույթ* և այլն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է նորաբանությունը:
2. Ի՞նչ եղանակներով են առաջանում նորաբանությունները:

Վարժություն 42: Գտե՛ք նորաբանությունները և որոշե՛ք, թե դրանք ինչ խոսքի մասի են պատկանում:

Ծինարար, ճանապարհ, ինքնամաղթել, լողասառույց, ժողովրդահաճո, դասագիրք, ինքնաախտազերծում, լճափ, լեզվաբաղաբականություն, խնդրահարույց, զբոսայգի, ծառագրկում, գրասեղան, լրավճարել, բարձրահարկ, կանգառ, նյութաշահադիտական, անտառային, հրաժարվել, խուճապահարույց:



Հեղինակային նորաբանություններ

Ի տարբերություն բուն կամ լեզվական նորաբանությունների՝ առանձնացվում են նաև **հեղինակային** նորաբանություններ, որոնք հիմնականում ստեղծում և գեղարվեստական գրականության մեջ կամ մամուլի ժանրերում ոճական տարբեր նպատակներով գործածում են առանձին հեղինակներ:

Այսպես՝ Գր. Նարեկացին կերտել է *ծիծաղախիտ, անմահարձան, գիսախոռիվ, անասնակենցաղ* բառերը, Զովհ. Թումանյանը՝ *քաղցրահուշիկ, հայրենատենչ, սիրանվեր, սիրատանջ, վշտակոտոր, ահեղասաստ, նրբահնչյուն, զարդափայլ, ծաղկադալար*, Վ. Տերյանը՝ *նրբահյուս, հրդեհավառ, քնքշաբույր, անրջանք, հոգեթով, հուսաշող, լուսակարկաչ, նրբանուրբ* և այլ նորաբանություններ:

Հեղինակային նորաբանությունները գեղարվեստական խոսքում ամենից առաջ ստեղծվում են խոսքի արտահայտչականության, պատկերավորության նպատակով, իսկ մամուլի լեզվում և գիտական բնագրերում նրանք ունեն նաև անվանողական դեր, այսինքն՝ ծառայում են կոնկրետ բնորոշման համար:

Նորաբանությունների թվին են պատկանում նաև **դիպվածային** բառերը: Սրանք հեղինակային այն նորակազմություններն են, որոնք գործածվում են և՛ բանավոր խոսքում, և՛ հրապարակախոսական, և՛ գեղարվեստական ոճերում, հատկապես մամուլում՝ խոսքային տվյալ իրավիճակում նյութի թելադրանքով կամ հեղինակի որոշակի նպատակադրումով: Այս նորաբանությունները սովորաբար մեկանգամյա գործածություն են ունենում: Հենց այս առումով էլ սրանք դիպվածային կազմություններ են:

Դիպվածային բառերը սովորաբար ստեղծվում են արդեն եղած բառերի նմանողությամբ: Այսպես՝ հայերենի բառապաշարում գործածական չեն *ցրտերեն, ովություն, լեզվասպան, ամենահայ, շիրազավարի, տերյանոտ, սիրադող, անդրանիկվել* բառերը, որոնք ստեղծվել են առանձին հեղինակների կողմից այս կամ այն առիթով: Նշված բառերը որոշակի իմաստ կարող են արտահայտել միայն տվյալ բնագրում, ինչպես՝ «**Ձկնուհին**, ձկան բաց կրծքին փարված, պղպջակներ էր բարբառում շրթից» («Գրական թերթ», 4.2.1985), կամ «երանի մարդիկ ավելի շատ զբաղվեն հողագործությամբ, քան **փողագործությամբ**» («Ոգնի», 11, 1985) և այլն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է հեղինակային նորաբանությունը:
2. Հայ ի՞նչ հեղինակների նորաբանություններ գիտեք:
3. Ինչո՞վ են տարբերվում դիպվածային բառերը բուն նորաբանություններից:

Վարժություն 43: Գտե՛ք հեղինակային նորաբանությունները և որոշե՛ք, թե դրանք ինչ խոսքի մասի են պատկանում:

Բայց սֆինքսվեցիք լռությամբ դժնյա,
Երբ քրիստոնյա հայ ազգն էր խաչվում:

Մինչ այստեղ, նայի՛ր, մի՞թե չես նողկում
Այս մեղսածովից դժոխավայրագ....

Էլ ինչո՞վ է հայն հնդեվրոպացեղ,
Երբ ձուլարանի հետ է խելահեղ...

Հովհաննես Շիրազ

Աշխարհը շրջվեց բերանի վրա և ապա մեջքի....
ավազախրված-խեղդվող ձկան պես
և թավալ տվեց....

Այլ քանի գևար, պիտի որ հանգեր
Անծուխ-գտաբոց անշեջ կրակի
Եվ տառապալից մեր օրերի մեջ
Լիներ կենարար զվարթ կիրակի:

Հարություն տվող շունչն է գգացվում
Պոլսո թաղերում հայրենապապակ:

Պարույր Սևակ

Վարժություն 44: Հետևյալ հատվածներում առանձնացրե՛ք հեղինակային նորակազմությունները և նշե՛ք դրանց անվանողական և ոճական արժեքը:

- ա) Ու գնում էինք ոգեխումբ ու լուռ
Հետքերով ճերմակ այն ձիավորի՝



Դեպի նոր դժոխքն այս դանթեական,
Դեպի մեղքի ծովն այն մեղավորի...

Հովհաննես Ծիրազ

- բ) Նորից երգում, մորմոքում է աստվածային Կոմիտասը,
Կախարդում է ու մոգում է աստվածային Կոմիտասը...
Ամենամեծ դու նահատակ, ամենահայր, ամենահայ,
Գիևու կարասն ուրիշներին, մեզ հերիք է քո մի թասը:

Ներսս հացադուլ է հայտարարել հիմա,
Ու սիրադուլ՝ սիրոսս:
Եվ ոտներս են միայն, որ չեն հայտարարում
Իրենց գործադուլը...

Պարույր Սևակ

- գ) Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սագի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արևանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման
Ու նահիրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում:

Եղիշե Չարենց

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՋ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԵՐՔԵՐԸ ԸՍՏ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՏԱՐՔԵՐ ՓՈՒԼԵՐԻ

Ժամանակակից հայերենն ունի ճոխ և հարուստ բառապաշար: Ի՞նչ շերտերից է կազմված այն: Հայտնի է, որ 5-րդ դարից՝ այբուբենի ստեղծումից հետո հայերենն անցել է զարգացման երեք շրջան՝ գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար, որը ժամանակի ընթացքում երկփեղկվեց արևելահայերենի ու արևմտահայերենի: Գրական լեզվին զուգահեռ գոյություն են ունեցել և ունեն բարբառներ: Ժամանակակից հայերենի բառապաշարում կան զարգացման տարբեր շրջաններից եկող բառեր: Եթե ժամանակակից հայերենի բառապաշարում ըստ զարգացման փուլերի առանձնացնենք բառաշերտեր, ապա կլինի 4 շերտ՝ **ընդհանուր հայերեն բառեր, գրաբարյան բառեր, միջինհայերենյան բառեր, նոր հայերեն բառեր:**

Ընդհանուր հայերեն են այն բառերը, որոնք գործածական են հայերենի բոլոր փուլերում: Օրինակ՝ *մարդ, բույր, եղբայր, հաց, ջուր, տուն* և այլն: Այդ բառերի մի մասի իմաստը փոխվել է: Օրինակ՝ **զևացք**

գրաբարում նշանակել է ընթացք, շարժում, իսկ ժամանակակից հայերենում նշանակում է փոխադրամիջոցի տեսակ:

Գրաբարյան են այն բառերը, որոնք գործածվել են գրաբար մատենագրության մեջ և աշխարհաբարին են անցել ոչ թե ժառանգաբար, այլ վերցվել են գրաբար բնագրերից որպես փոխառություններ ու կիրառվել ոճական և այլ նպատակներով: Օրինակ՝ Թումանյանը **ծիծաղախիտ** բառը վերցրել է Նարեկացուց, Տերյանը գործածել է գրաբարյան **ոսկեհանդերձ** բառը, Ն. Չարյանը՝ **ոսկեմայր** բառը և այլն:

Գրաբարից են վերցված նաև **լուսատեսակ, խոտածարակ, կորուսիչ, պատվասիրել, քաղաքամայր** և բազմաթիվ այլ բառեր:

Միջինհայերենյան շերտի մեջ են մտնում այն բառերը, որոնք ժամանակակից հայերենին են անցել լեզվի զարգացման միջին փուլից՝ միջին հայերենից, օրինակ՝ *գաթա, ճորտ, մասուր, մշուշ, պարոն* և այլն:

Նոր հայերեն են այն բառերը, որոնք գոյությունն չունեին ո՛չ գրաբարում, ո՛չ միջին հայերենում, ո՛չ էլ որևէ բարբառում: Դրանք ստեղծվել են նոր շրջանում, օրինակ՝ *ջրագնդակ, ջրապտույտ, գեղասահք, հեծանվավագք, հեծանվորդ, ծանրամարտիկ, անտառազանգված, հեռախոսահամար, մասնաշենք, խոսափող* և այլն: Նոր բառերի բառաշերտ կա թե՛ արևելահայերենում, թե՛ արևմտահայերենում, և ժամանակի ընթացքում բառեր են անցնում մեկից մյուսին:

Առանձնացվում է նաև բարբառային բառաշերտ: Բարբառային շերտի մեջ են մտնում այն բառերը, որոնք հայերենի տարբեր բարբառներից անցել են գրական լեզվին, և նրանց բարբառային լինելը արդեն չի գիտակցվում, օրինակ՝ *աղաման, աղցան, իրիկուն, լացակումել, լեղապատառ, կիսամաշ, ձգձգել* և այլն:

ՀԱՐՑՆԵՐ ԵՎ ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Չարգացման ո՞ր փուլերից են բառեր անցել ժամանակակից հայերենի բառապաշարին:
2. Ժամանակակից հայերենին գրաբարից անցած ի՞նչ բառեր գիտեք:
3. Ժամանակակից հայերենին միջին հայերենից անցած ի՞նչ բառեր գիտեք:
4. Ժամանակակից հայերենին բարբառներից անցած ի՞նչ բառեր գիտեք:
5. Որո՞նք են համարվում նոր հայերեն բառեր:



Վարժություն 45: Տրված նոր հայերեն բառերով կազմե՛ք նախադասություններ:

Շաբաթօրյակ, վերելակ, դիմորդ, գեղասահք, տպաքանակ, վերջնականգառ, ցայտաղբյուր, հուշադրամ, ջրացատկորդ, հեծանվավագ:

Վարժություն 47: Գտե՛ք ընդգծված բառի իմաստը:

աշակերտել

*դասավանդել
կրթել
մեկի մոտ սովորել
մեկին սովորեցնել*

խթանել

*խճողել
փորագրել
թափ հաղորդել
խոչընդոտել*

մեղանչել

*մեղք գործել
ներում խնդրել
աղերսել
նախատել*

երամակ

*թռչունների խումբ
ծիերի խումբ
ծկների խումբ
ոչխարների խումբ*

սրդողել

*սարսափել
բարկանալ
խղճալ
զղջալ*

մատուցակ

*հաց թխող անձ
գինի մատուցող անձ
ապուր եփող անձ
գինի քամող անձ*



ԲԱՌԱԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ

Բառակազմությունն ուսումնասիրում է լեզվի բառերի կազմության եղանակներն ու օրինաչափությունները:

Բառակազմության նպատակն է բացահայտել, թե ինչ կառուցվածք ունի և ինչ բաղադրիչներից է կազմված բառը. ինչ դեր ունեն և ինչ իմաստ են արտահայտում բառերի բաղադրիչ մասերը:

Բառապաշարի հարստացման երկու միջոց կա. առաջինը օտար լեզուներից կատարվող բառային փոխառություններն են (արտաքին միջոց), իսկ երկրորդը գրական լեզվի տվյալ փուլի բառակազմական տարբեր եղանակների շնորհիվ նոր բառերի ստեղծումն է (ներքին միջոց):

Մեր գրական լեզուն այսօր ունի բառակազմական երեք եղանակ՝ **ածանցում, բառաբարդում և հապավում:**

ԱԾԱՆՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՌԱԿԱՉՄՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿ

Ածանցումը բառակազմական այն եղանակն է, որի դեպքում բառահիմքին ավելանում են ածանցներ, և կազմվում են նոր բառեր, ինչպես՝ **տուն – տնակ, տնային, անտուն** և այլն: Ածանցումը՝ որպես բառակազմության գործուն եղանակ, մեծ դեր ունի մեր լեզվի բառապաշարի հարստացման գործում:

Հայերենը հարուստ է բազմաթիվ ածանցներով, որոնք առաջացել են լեզվի զարգացման տարբեր փուլերում տարբեր ուղիներով:

Ածանցների առաջացման առաջին ուղին արմատի իմաստի մթազնումն է: Օրինակ՝ **-ատ** ածանցը ծագել է **հատել** բայից, որը գործածվում է թե՛ առանձին, թե՛ բաղադրյալ բառերում, ինչպես՝ **փայտահատ**: Այս ածանցը հաղորդում է *կտրված, հատված, զուրկ լինելու* իմաստներ, օրինակ՝ *պոչատ, կիսատ, գունատ* և այլն:

Ածանցներ են առաջանում նաև քերականական վերջավորություններից, օրինակ՝ սեռական հոլովի վերջավորությունից՝ **աղ-ի**, ենթակայական դերբայի վերջավորությունից՝ **ծն-ող** և այլն: Կան նաև փոխառյալ ածանցներ, օրինակ՝ **դժ-**, **-ական**, **-ուհի** (իրանական լեզուներից), **-իզմ** (եվրոպական լեզուներից) և այլն:

Ածանցներով կազմվում են խոսքի տարբեր մասեր: Ըստ այդմ՝ առանձնացվում են գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ, մասամբ՝ թվականակերտ և բայակերտ ածանցներ:

Գոյականակերտ են այն ածանցները, որոնք, դրվելով տարբեր հիմքերի վրա, կազմում են գոյականներ:

Գոյականակերտ ածանցները հիմնականում վերջածանցներ են, ինչպես՝ **-անակ** (ժամանակ, ցուցանակ), **-անք** (կշտամբանք, հարգանք), **-արք** (գործարք, լուծարք), **-իք** (կեղծիք, չարիք), **-ուհի** (տիրուհի, ուսանողուհի), **-պան** (ուղտապան, ծիապան) և այլն:

Ածականակերտ են այն ածանցները, որոնք, դրվելով տարբեր հիմքերի վրա, կազմում են ածականներ, ինչպես՝ **դժ-** (դժգոհ, դժբախտ), **ապ-** (ապերջանիկ, ապաբախտ), **տ-** (տգետ, տմարդի), **-ոտ** (ժանգոտ, խանդոտ), **-վետ** (սիգավետ, ծաղկավետ), **-լիկ** (թխլիկ, կարծիկ), **-վուն** (կարմրավուն, կլորավուն) և այլն:

Թվական անուններից դասական թվականներ են կազմվում **-րորդ**, **-երորդ** ածանցներով (երկրորդ, երրորդ, հազարերորդ), իսկ բաշխական և կոտորակային թվականներ՝ **-ական** ածանցով, ինչպես՝ երկուական, տասական, զրո ամբողջ հինգ տասնորդական և այլն:

Մակբայակերտ են այն ածանցները, որոնք, դրվելով տարբեր հիմքերի վրա, կազմում են մակբայներ, օրինակ՝ **-բար**, **-պես**, **-որեն**, **-գին**, **-ովին**, **-իվ**, **-պատիկ** (միասնաբար, ապօրինաբար, մոտավորապես, ջերմորեն, կարոտագին, հիմնովին, կամովին, խստիվ, մեղմիվ, հնգապատիկ, բազմապատիկ և այլն):

Բայակերտ ածանցները մյուս խոսքի մասերը կերտող ածանցներից տարբերվում են նրանով, որ միաժամանակ քերականական վերջավորության արժեք ունեն, օրինակ՝ **-ել**, **-ալ**, **-անալ** ածանցները բայեր են կազմում այլ խոսքի մասերից (աշակերտ - աշակերտել, գութ - գթալ, սև - սևանալ), բայց նաև անորոշ դերբայի վերջավորություններն են: Միաժամանակ բառակազմական և քերականական դեր ունեն նաև մյուս դերբայների վերջավորությունները՝ **-ած**, **-ող**, **-իս**:

Ժամանակակից հայերենի բայի կազմության մեջ առկա են նաև **-ան-**, **-են-**, **-ն-**, **-չ-** սուկածանցները (զարմանալ, պարծենալ, մտնել, փախչել և այլն), **-ացն-**, **-եցն-**, **-ցն-** պատճառական ածանցները (խաղացնել, պարեցնել, թոցնել), **-ատ-**, **-ոտ-**, **-կոտ-**, **-տ-** բազմապատկական ածանցները (կտրատել, ջարդոտել, թռչկոտել, կտրտել) և **-վ-** կրավորական ածանցը (սպանվել, գանգատվել, հագնվել): Սրանք բոլորն էլ հիմնականում քերականական դեր ունեն:

Որոշ ածանցներ հանդես են գալիս մեկից ավելի խոսքի մասերի կազմության մեջ: Օրինակ՝ գոյական ու ածական են կազմում հետևյալ ածանցները՝ **-ածո՝ պահածո** և **բրածո**, **-ակ՝ զնդակ** և **գիտակ**, **-ան՝ փական** և **դուրեկան**, **-ացի՝ բաղաբացի** և **բառացի**, **-իչ՝ երգիչ** և **բուժիչ**, **-որդ՝ վարորդ** և **հաջորդ**, **-ուչ՝ տեսուչ** և **վայելուչ**, **-ուն՝ սողուն** և **փայլուն** և այլն:

Ածանցները խմբավորվում են նաև ըստ հիմքի նկատմամբ ունեցած դիրքի: Ըստ այդմ լինում են՝ **նախածանցներ**, **վերջածանցներ**, **միջածանցներ** (ներածանցներ):

Հայերենի նախածանցներից են՝ **ան-**, **անդր-**, **ապ-**, **արտ-**, **բաղ-**, **բաց-**, **գեր-**, **դեր-**, **դժ-**, **ենթ-**, **ընդ-**, **թեր-**, **հակ-**, **համ-**, **մակ-**, **նախ-**, **ներ-**, **չ-**, **ստոր-**, **վեր-**, **տ-**, **տրամ-** և այլն:

Հայերենի վերջածանցներից են՝ **-ակ**, **-ական**, **-ակի**, **-ային**, **-ան**, **-անի**, **-անոց**, **-անք**, **-ավետ**, **-ավոր**, **-ավուն**, **-ատ**, **-արան**, **-արք**, **-ացի**, **-ացու**, **-բան**, **-բար**, **-գին**, **-գործ**, **-եղ**, **-եղեն**, **-ենի**, **-ենք**, **-եստ**, **-եցի**, **-ի**, **-ին**, **-պան**, **-վետ**, **-ցու** և այլն:

Հայերենի միջածանցները բայական ածանցներն են, որոնք դրվում են բայահիմքի և վերջավորության միջև. դրանք են՝ **-ան-**, **-են-**, **-ն-**, **-չ-**, **-ացն-**, **-եցն-**, **-ցն-**, **-ատ-**, **-ոտ-**, **-կոտ-**, **-տ-**, **-վ-**:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ածանցումը:
2. Հիմնականում ի՞նչ ճանապարհով են առաջանում ածանցները:
3. Ի՞նչ խոսքի մասեր են կազմվում ածանցներով:
4. Զանի՞ տեսակի են լինում ածանցներն ըստ դիրքի:

Վարժություն 1: Կազմե՛ք երեքական բառ **-ակ**, **-ային**, **-մունք**, **-եղեն**, **-բար** ածանցներով:

Վարժություն 2: Դո՛ւրս գրեք ածանցավոր բառերը (բացի բայերից) և առանձնացրե՛ք ածանցները: Որոշե՛ք, թե ածանցավոր բառերն ինչ խոսքի մասի են պատկանում:

Չանգվի ձորում Կոնդի դեմ դիմաց՝ գետի աջ ափին, հսկա ուղտի պես չոքած բլուրը կոչվում է Ծիծեռնակաբերդ: Այստեղ նպատակային պեղումներ դեռ չեն կատարվել, բայց դեպի խորածորը նայող մասում

մինչև վերջերս էլ երևում էին կիկլոպյան հսկա քարերով կառուցված բերդի պարիսպների մնացորդները: Այստեղ նոր կառույցների շինարարության ժամանակ հայտնաբերվել են խեցեղեն ամաններ, նետի սլաքներ: Ենթադրում են, թե ժամանակին Ծիծեռնակաբերդը գոյություն է ունեցել որպես պաշտպանական կառույց, քանի որ ամուր դիրք ունի, իսկ արևելյան մասում Չանգվի խոր ձորն է՝ թեթև լանջերով ու դժվարամատույց: Պատմաբանների կարծիքով Ծիծեռնակաբերդը ամրոց-քնակավայր է եղել և գոյություն է ունեցել երկար տարիներ: Շատ լեգենդներ են կապված այս բլրի հետ: «Լուսմա» ամսագրում 1906թ. բժիշկ Լևոն Տիգրանյանը տպագրել է ժամանակին լսած մի ավանդություն: Բլրի վրա դարեր առաջ մի հզոր բերդ է եղել, որը սիրո դիցուհու՝ Աստղիկի անունով կոչվել է Աստղկաբերդ: Ավանդությունը պատմում է նաև, որ բերդը ունեցել է մի բարձր աշտարակ, որտեղ բույն էին դրել ծիծեռնակները՝ դիցուհու սուրհանդակները: Եվ այդ իսկ պատճառով հին անունը մոռացվել է և դարձել Ծիծեռնակաբերդ: Մի ուրիշ ավանդություն վկայում է, որ բերդում շրջապատված Սմբատ իշխանը, երբ տեսնում է, որ թշնամուն այլևս դիմադրել չի կարող, աստծուն խնդրում է ներսում պատսպարված ժողովրդին ծիծեռնակ դարձնել: Աստված կատարում է նրա խնդրանքը: Մարդիկ ծիծեռնակներ են դառնում և ազատվում: Ինքը՝ Սմբատ իշխանը, նստում է իր ձին ու թափով թռչում դեպի հանդիպակաց ափը: Ձիու սմբակը խփվում է մի ժայռակտորի: Մինչև օրս էլ Չանգվի ձախ ափին փռված այգիներում մնում է այդ ժայռակտորը՝ վրան սմբակի հետքը:

Էդուարդ Ավագյան

Վարժություն 3: Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական նախածանց և արմատ՝ կազմե՛ք վեց նախածանցավոր բառ:

դժ	աղելնածև
տ	լուսամփոփ
արտ(ա)	շրջադարձ
նախ(ա)	բախտախնդիր
ներ	ճաշկերույթ
անդր(ա)	սահմանակից

Ճ	ուղղագիծ
տրամ(ա)	բայածանց
բաղ(ա)	թունավոր
մակ	բարեբախտ
ապ(ա)	ցածրածայն
հակ(ա)	ինքնակամ
ստոր(ա)	լուսարծակ
ենթ(ա)	ինքնամփոփ
մակ	հայրենադարձ
ընդ	ազգանուն
անդր(ա)	բարշակ
ներ	վարպետորեն
գեր(ա)	խեղդամահ
ց	ձեռնաշղթա
առ	արքայական
փոխ	կարողություն
ապ	կշռաբար
տ	երախտապարտ
թեր	պահանջատեր
դժ	հանրահայտ
նախ(ա)	խնդրագիրք
ց	ուսումնարան
բաց(ա)	հորեղբայր
գեր	կամավոր

Վարժություն 4: Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական արմատ և վերջածանց՝ կազմե՛ք վեց վերջածանցավոր բառ:

բաղաբանայր	որդ
ուղեկից	արան
սիգանճեմ	ոն
հոգեհմա	եղեն
բարեգործ	ային
ոսկեպատ	իջ

մտազբաղ	եղ
արքայանիստ	ու
դառնահամ	եղեն
սրալեզու	մունք
ազդեցիկ	արան
հրացան	անի

ուժասպառ	ուհի
երկաթագործ	ում
լողափ	ե
Նաիրյան	գին
հիմնահարց	որդ
լավատես	ություն

բալագունյն	յա
հերոսական	անք
լուսամուտ	ենի
թիթեղածածկ	(ա)բար
հոգնատանջ	ք
ջրասույզ	ակ

մշտադալար	ոց
ամրակ	(ա)վետ
գովասանք	(ա)պես
անուշաբույր	եստ
աղակալում	ակի
թեթևասահ	ի

Վարժություն 5: Գտե՛ք, թե յուրաքանչյուր շարքի որ բառում կա տողասկզբում նշված նախածանցը:

1. *ան-* – անագ, անագորույն, անձավ, անմիտ
2. *ան-* – անկյուն, անգղ, անհաշտ, անձնական
3. *ան-* – անձրև, անձև, անուն, անուրջ
4. *ան-* – անջատ, անոթ, անող, անօդ
5. *ապ-* – ապականել, ապակի, ապահով, ապաբախտ
6. *ապ-* – ապառաժ, ապաստան, ապարանջան, ապերջանիկ
7. *ապ-* – ապուխտ, ապարդյուն, ապուր, ապստամբ

8. *դժ* - դժվար, դժխեմ, դժգոհ, դժոխք
9. *տ-* - տոմար, տամուկ, տկար, տրտում
10. *չ-* - չքնաղ, չմուշկ, չամիչ, չկամ

Վարժություն 6: Յուրաքանչյուր տողում եղած բառերից ընտրված համապատասխան արմատով և տողասկզբի ածանցով կազմե՛ք մեկական բառ (առանց երկրորդ ածանցի):

1. *-ություն* - անհոգի, անկայուն, հասուն, լիաբերան
2. *-իչ* - մասուր, ինքնուսույց, մարզպան, գրախանութ
3. *-ուկ* - բամբակե, ճնճղապաշար, անգիր, գոմեշ
4. *-ոտ* - զայրանալ, մտացածին, մաքրակար, թխպամած
5. *-իկ* - անմարդկային, շողարձակում, մագիլ, երթուղային
6. *-ային* - ազնվացեղ, թաղար, առաջնորդ, աղբյուր
7. *-ակի* - բեռնակիր, ինքնատեռ, խճուղի, մասնաբաժին
8. *-գին* - քաղաքագլուխ, անալի, ջերմաչափ, թանկարժեք
9. *-ուն* - քարաղ, թթվասեր, ինքնաթիռ, շրջայց
10. *-ացի* - չնչին, տեղաբնակ, իրավագետ, վարսավիր
11. *-ակ* - հնակարկատ, հնադար, ջրհորդան, մեղրածոր
12. *-ական* - իրավաբանություն, անգոյություն, խճուղի, տարրորշել
13. *-իք* - իրիցկին, քարաղ, արժան, չարածճի
14. *-եղ* - բարձրագույն, ձայնասկավառակ, համանուն, ասացվածք
15. *-որդ* - տեսաերիզ, միջնաբերդ, առաջնային, վարչական

Վարժություն 7: Զաղաք, ժողովուրդ, գիր, լեռ, տեղ, խորհուրդ, դաս, ազգ բառերով և -ային, -ական ածանցներով կազմե՛ք բառեր և որոշե՛ք, թե ստեղծված բառերը իմաստային ինչ տարբերություններ ունեն:

Վարժություն 8: Գտե՛ք, թե յուրաքանչյուր շարքի որ բառում կա տողասկզբում նշված վերջածանցը:

1. *-յակ* - կղզյակ, որդյակ, պատանյակ, շաբաթօրյակ
2. *-ան* - դաժան, սեղան, շարան, գերան
3. *-գին* - թանկագին, փրկագին, սակագին, ջերմագին
4. *-ուն* - ազգանուն, ծորուն, գարուն, դեղատուն
5. *-ույն* - դարձնագույն, վարդագույն, ոսկեգույն, հնագույն
6. *-ակ* - դանակ, դիտակ, նամակ, հասարակ
7. *-ոն* - մրահոն, կանոն, կիտրոն, ջարդոն



8. *-ուտ* – ճահճուտ, կարկուտ, արծվաճուտ, իրիկնամուտ
9. *-ատ* – գթառատ, գորգապատ, վաստակաշատ, գունատ
10. *-ուկ* – դաշտամուկ, գաղտնածածուկ, շուտասելուկ, սնդուկ

ԲԱՌԱԲԱՐՂՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՌԱԿԱՆՍՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿ

Բառաբարդումը արմատների կամ առանձին բառերի միացումով նոր բառեր կազմելու եղանակն է: Օրինակ՝ **գիր** և **տախտակ** բառերը, **ա** հոդակապով կապակցվելով իրար, կազմում են **գրատախտակ** բարդ բառը: Իսկ **լաց** և **լինել** բառերն էլ, իմաստային ամբողջություն դառնալով, կազմում են **լաց լինել** բառը, թեև գրությամբ չեն միանում իրար: Այսինքն՝ բարդ բառերի բաղադրիչները միասնաբար մեկ բառի իմաստ են արտահայտում, սակայն կարող են գրվել և՛ միասին, և՛ առանձին: Ըստ դրա՝ բարդ բառերը լինում են **համադրական** և **հարադրական** (վերլուծական):

Համադրական բարդություններում բաղադրիչները կարող են և՛ հոդակապով կապակցվել, և՛ առանց հոդակապի: Օրինակ՝ *տանտեր, տանտիկին, այսօր, ձկնորս* բարդությունների բաղադրիչները իրար են միացել առանց հոդակապի, իսկ *գրասեղան, մեծամիտ, լրագիր, ժայռապատկեր* բառերի բաղադրիչները կապակցվել են *ա* հոդակապով: Ինչպես տեսնում ենք, բառաբարդման ժամանակ արմատները կարող են հնչյունափոխվել, օրինակ՝ **գիր-գրատախտակ** (**ի**-ն դարձել է **ը**), **տուն-տնամերձ** (**ու**-ն դարձել է **ը**), **ծան(ը)ր-ծանրամարտ** (գաղտնավանկի **ը**-ն սղվել է) և այլն: Եթե հոդակապը հաջորդում է **ի** ձայնավորին, ապա դարձյալ տեղի է ունենում հնչյունափոխություն, օրինակ՝ **այգի+ա+պան=այգեպան**: Այսինքն՝ **այգեպան** բառում էլ հոդակապ կա, որը հնչյունափոխված է: Միավանկ **ծի, մի, լի, դի, թի** բաղադրիչների **ի**-ն հոդակապից առաջ չի հնչյունափոխվում, օրինակ՝ *ծիաբեր, միաշարք, լիասիրտ, դիաթավալ, թիավարել* և այլն:

Համադրական բարդությունների բաղադրիչները կարող են կապակցվել նաև **ու**-ով, **և**-ով, օրինակ՝ *անցուղարձ, արդուզարդ, առևտուր, ելևէջ* և այլն:

Հարադրական (վերլուծական) բարդությունների բաղադրիչները, ինչպես ասվեց, գրվում են առանձին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է բառաբարդումը:
2. Ինչպե՞ս կարող են գրվել բարդության բաղադրիչները:
3. Ինչպիսի՞ն են լինում բարդությունները:
4. Ինչպե՞ս են կապակցվում համադրական բարդության բաղադրիչները:

Վարժություն 9: Դեմ դիմաց գրված բառերից ընտրելով մեկական արմատ՝ կազմե՛ք վեց բարդ բառ:

խճուղի	մայրական
վիշապագորգ	երկաթուղի
մեծամիտ	տառացի
գնորդ	փրկօղակ
կապտականաչ	Նախշազարդ
Նկարակալ	լուսամուտ

հյութալի	մրգատու
քարարժիվ	կոփածո
ձգձգել	Նետահար
գևաճ	փրկություն
ծովեզր	զարդարուն
տնամերձ	դեղահաք

խաղավարտ	դաշտամուկ
թռիչքուղի	ինքնուս
ամփոփիչ	լուսամուտ
խառնակիչ	մաքրաջուր
որսորդ	շնածուկ
վերջնագիր	գոհասեղան

այստեղ	չափաբաժին
բաղցրահամ	ինչունական
ծովառյուծ	ափհանում
ստվարաթուղթ	դրամանենգ
արվեստանոց	գեղեցկություն
ծխասալլ	գետափ



դեղատուն
մանկական
բարեկիրթ
արծաթագույն
ծեռագիր
ծաղկեփունջ

մերձավոր
հրաշալիք
գագօջախ
ծուլածո
տախտակամած
արևազօծ

Վարժություն 10: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բառը, որը կազմված է միայն երկու արմատից:

1. միջնաբերդ, խնդրագիրք, ջրհոր, խաչմերուկ
2. ազդօրինակ, վիպասան, տանուտեր, տանտեր
3. գազայրիչ, թիկնաթոռ, խճանկար, շաբաթօրյակ
4. լեռնաշխարհ, առողջարան, մայրաքաղաքային, գրապահարան
5. բերքառատ, փորձանոթ, անհեռատես, ծխածածկույթ
6. սփյուռքահայ, վերավաճառք, լուսամփոփ, ծովեզրյա
7. այլմոլորակային, համազգային, ժամանակացույց, շաբարավազ
8. երգչախումբ, լուսանկարիչ, ակնթարթ, բյուրեղապակյա
9. ճարտասան, բազմազգ, ասֆալտապատում, լեռնադահուկորդ
10. նույնանուն, հոմանիշ, հականիշ, համանուն

Վարժություն 11: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բառը, որում հոդակապ չկա:

1. գրասեղան, ծաղկաման, պատվասեր, արագավազ
2. ցլամարտ, ձյունապատ, լայնարձակ, սրտամոտ
3. տարեդարձ, պարեղանակ, փոշեհատիկ, գինետուն
4. բեռնատար, սրճաղաց, հողածին, ինքնաթիռ
5. քչախոս, ելակետ, սալաբար, հորդառատ
6. արձակագիր, աշխատավարձ, մեծարժեք, տպագիր
7. լուսամուտ, գրատախտակ, գծագիր, ազատյաց
8. վազանց, մշտադալար, երանգապնակ, սակագին
9. մեծամիտ, եզրագիծ, գովազդ, տնամերձ
10. եսասեր, սրտամոտ, եռակողմ, բազմազգ

Վարժություն 12: Գրե՛ք տասը բառ, որոնցում հոդակապը հնչունափոխված լինի:

Վարժություն 13: Յուրաքանչյուր շարքում գտե՛ք այն բառը, որի առաջին արմատը հնչունափոխված է:

1. ջրամբար, խոզապուխտ, հացաբույս, գահընկեց
2. շաքարեղեգ, ծառուղի, լուսամուտ, կարճամիտ
3. մայրուղի, հացատուն, հորդաբուխ, խճանկար
4. ժամանց, հարցարկղ, ծանրամարտ, ծովախորշ
5. քաղցրահունչ, լայներիզ, գետափ, մայրաքաղաք
6. սարահարթ, գունանյութ, երկաթուղի, նկարակալ
7. ծովափ, նավավար, փորձանոթ, սրտացավ
8. անցագիր, ծաղկաշղթա, մարդասեր, տերևաթափ
9. հուզառատ, լիառատ, հորդառատ, ձյունառատ
10. արծաթագույն, մանուշակագույն, նարնջագույն, հողագույն

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲՈՌՍԿԱՅՍՈՒԹՅԱՆ ԵՂԱՆՍԿ

Հարադրական բարդ բառերը կարող են կազմվել միևնույն բառի (արմատի) կրկնությամբ: Օրինակ՝ *մեծ-մեծ, փունջ-փունջ, արագ-արագ, տաք-տաք* բառերը կազմված են միևնույն բառի կրկնությամբ: Միևնույն բառի կամ արմատի կրկնությամբ կազմված հարադրական բարդությունները կոչվում են **կրկնավոր**:

Կրկնության միջոցով հիմնականում կազմվում են ածականներ, մակբայներ, թվականներ, ձայնարկություններ, նաև դերանուններ: Ընդ որում, կրկնվող բառը կարող է պատկանել ուրիշ խոսքի մասի, իսկ նրանից կազմված բառը՝ ուրիշ: Օրինակ՝ *խումբ-խումբ, տեսակ-տեսակ, շերտ-շերտ, իրեն-իրեն* ածականներն ու մակբայները կազմված են գոյականի ու դերանվան կրկնությամբ: Սակայն ածականներ ու մակբայներ, որոշ դերանուններ կազմվում են նաև հենց ածականների, մակբայների ու դերանունների կրկնությամբ, օրինակ՝ *սուր-սուր, հին-հին, արագ-արագ, ինչ-ինչ* և այլն:

Թվականների ու ձայնարկությունների կրկնությամբ մեծ մասամբ կազմվում են թվականներ ու ձայնարկություններ, ինչպես՝ *երեք-երեք, հինգ-հինգ, հե՛յ-հե՛յ, վա՛յ-վա՛յ* և այլն: Սակայն կարող են կազմվել նաև այլ խոսքի մասեր, օրինակ՝ թվականի կրկնությամբ կազմված *հազար-հազար* բառը ածական է:

Կրկնությունը շեշտում, սաստկացնում է իմաստը, նաև հաղորդում բազմակիության ընդհանուր գաղափար: Այդ պատճառով էլ այն գոյականները, որոնք կրկնավոր բարդությամբ արտահայտված որոշիչ լրա-



ցում են ստանում, հիմնականում դրվում են հոգևակի թվով, օրինակ՝ *խանութում շարված էին տաք-տաք հացեր*։ **Փունջ-փունջ աղջիկներ** սարերը *ելան՝ Վիճակ հանելու աշխույժ երգերով* (Յ. Թումանյան)։ Վարդը ունի **սուր-սուր փշեր** և այլն։

Կրկնավոր բարդությունների բաղադրիչներից մեկը կարող է հնչունափոխված լինել, օրինակ՝ *պարապ-սարապ, մանր-մունր, աման-չաման, ակաս-պակաս*, ինչպես նաև՝ *կաս-կարմիր, լեփ-լեցուն, սեփ-սև, միս-մենակ, շիփ-շիտակ, ճեփ-ճերմակ* և այլն։

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ո՞ր բարդություններն են կոչվում կրկնավոր։
2. Հիմնականում ի՞նչ խոսքի մասեր են կազմվում կրկնավորների միջոցով։
3. Ո՞ր թվով են դրվում կրկնավոր բարդությամբ արտահայտված որոշիչ լրացում ունեցող գոյականները։

Վարժություն 14: Տրված բառերով կազմե՛ք կրկնավոր բարդություններ՝ բառերն անհրաժեշտության դեպքում հնչունափոխելով։

Մեծ, հին, աման, քանի, պարապ, շուտ, օղակ, երամ, ծույլ, փալաս։

Վարժություն 15: Նախորդ վարժության պահանջով կազմված կրկնավորները գործածե՛ք նախադասություններում։

Վարժություն 16: Գտե՛ք, թե տրված կրկնավորների որ բաղադրիչն է հնչունափոխված։

Մանր-մունր, պարապ-սարապ, բարակ-մարակ, աման-չաման, սուտ-մուտ, բիչ-միչ, թելիկ-մելիկ, փոքր-մոքր, ավալ-թավալ, ակաս-պակաս։

ՀԱՐԱԳՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՌԱԿԱՆՍՈՒԹՅԱՆ ԵՂՍԵՍԿ

Բարդ բառերի բաղադրիչները, ինչպես ասվել է, կարող են առանձին գրվել, սակայն դրանք միասնաբար մեկ իմաստ են արտահայտում և այդ պատճառով էլ մեկ բառի արժեք ունեն։ Օրինակ՝ *ծափ տալ* նշանակում է *ծափահարել, պատասխան տալ՝ պատասխանել, կռիվ անել՝ կռվել, լաց լինել՝ լալ, թույլ տալ՝ թույլատրել* և այլն։ Բառակազմության այս եղանակը կոչվում է **հարադրում**։ Հարադրել նշանակում է կողք կողքի դնել։ Հարադիր են այն բարդությունները, որոնց բաղադրիչները գրվում

Գրականություն



են առանձին, սակայն միասնաբար արտահայտում են մեկ իմաստ: Հարադրությունները լինում են **անվանական** և **բայական**: Անվանական հարադրությունները կազմվում են գոյականից, ածականից, թվականից, դերանունից և մակբայից, օրինակ՝ *ամառ-ձմեռ, աջ-ձախ, հինգ-վեց, այստեղ-այնտեղ, հեռու-մոտիկ*, ընդ որում երկու բաղադրիչն էլ պատկանում են միևնույն խոսքի մասին: Բայական հարադրությունները կազմվում են այլ խոսքի մասերից ու բայերից կամ էլ միայն բայերից, օրինակ՝ *ծեռք բերել, զինաթափ անել, սկիզբ առնել, դուրս բերել* բառերը կազմված են այլ խոսքի մասերից ու բայերից, իսկ *թողնել-փախչել, գնալ-գալ, երգել-պարել, չափել-ծնել, ծլել-ծաղկել* հարադրությունները կազմված են միայն բայերից:

Այսպիսով՝ բարդ բառերը լինում են **համադրական** և **հարադրական (վերլուծական)**: Համադրական բարդությունները լինում են **հոդակապով** և **անհոդակապ**, իսկ վերլուծականները լինում են **կրկնավոր** և **հարադրավոր**:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է հարադրումը:
2. Ի՞նչ տեսակների են լինում հարադրությունները:
3. Ի՞նչ առանձնահատկություններ ունեն անվանական հարադրությունները:
4. Ինչպե՞ս են կազմվում բայական հարադրությունները:
5. Ի՞նչ տեսակների են լինում բարդ բառերը:

Վարժություն 17: Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական բառ՝ կազմե՛ք տասը հարադրություն:

ամառ	տալ
տուն	ձմեռ
գիշեր	առնել
լավ	գալ
թև	թանգարան
լաց	թռչել
ներս	լինել
վեր	ցերեկ
մոտ	վատ
ծայն	ընկնել

Վարժություն 18: Առանձին սյունակներով դ՛ուրս գրեք անվանական և բայական հարադրությունները:

Մեքենան կանգ առավ աղբյուր-հուշարձանի մոտ: Ուղևորները իջան մեքենայից՝ փոքր-ինչ շունչ քաշելու և նախաճաշելու: Հուշաքարի վերևում բանդակված էին նետ-աղեղով, գեւք-գրահով մարդիկ, իսկ ներքևում մետաղյա փայլուն խողովակն էր, որից ջուրը քթքոցով լցվում էր քարե թասի մեջ: Զիչ հեռու՝ ծառերի մոտ, երկաթե սեղան-նստարան կար: Ուղևորները բաց արին իրենց ուղեբեռը, հանեցին հաց-պանիր, բանջարեղեն և նստելով ծառերի տակ՝ սկսեցին նախաճաշել ու դիտել շուրջբոլորը: Հեռվում անթիվ-անհամար բլուրներ էին, իսկ ավելի մոտ՝ այգիներ էին ու արտեր, որոնցում ութ-ինը մարդ էր աշխատում: Մոտակա ծառերի վրա կարմրին էին տալիս մրգերը: Շուտով մի բեռնատար կանգնեց արտերի մոտ, և մի մարդ, մեքենայից իջնելով, մոտեցավ աշխատողներին: Աղբյուրի մոտից չէին լսվում նրանց գոռում-գոցյունները, բայց ձեռքերի շարժումներից երևում էր, որ եկողը ցույց է տալիս հեռվում երևացող գյուղը ու ինչ-որ բան բացատրում, իսկ մյուսներն առարկում են: Վերջապես նրանք համաձայնեցին, ու բոլորը միասին բարձրացան բեռնատարի թափքը: Մեքենան ծուխ արձակելով շարժվեց: Աղբյուրի մոտ նախաճաշողներն էլ վեր կացան, հավաքեցին ուտելիքները և վայելելով սառնորակ ջուրը՝ ճանապարհ ընկան:

Արուստես Մարգարյան

ՀԱՊԱՎՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՌՍԿԱՉՍՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿ

Ածանցումից և բառաբարդումից բացի՝ բառակազմության եղանակ է նաև հապավումը: Հապավումներ են կոչվում այն բարդությունները, որոնք կազմված են կրճատված բաղադրիչների միացմամբ: Օրինակ՝ *Հայաստանի Հանրապետություն – ՀՀ, դասարանի ղեկավար – դասղեկ* և այլն: Հապավումները կազմվում են տեղ և ժամանակ խնայելու նպատակով: Դեռևս հնուց հայերենում եղել են կրճատ գրության տարբեր ձևեր, օրինակ՝ *ԱԾ – Աստված, ՅՍ – Յիսուս, ՍԲ – սուրբ* և այլն: Հետագայում կրճատ գրության ձևերն ավելի ու ավելի են տարածվել, ավելի ուշ՝ կանոնավորվել, և դրանց հիման վրա առաջացել են համառոտագրություններն ու հապավումները:

Ժամանակակից հայերենում հապավումները լինում են երեք տեսակի՝ **տառային, վանկային (կամ բառամասային), խառը:**

Տառային հապավումները կազմվում են հապավվող կապակցության բաղադրիչ բառերի սկզբնատառերից, օրինակ՝ *Միավորված ազգերի կազմակերպություն – ՄԱԿ, Երևանի պետական համալսարան – ԵՊՀ* և այլն:

Վանկային (կամ **բառամասային**) հապավումները կազմվում են հապավվող կապակցության բաղադրիչ բառերի առաջին վանկերից կամ մասերից, օրինակ՝ *աշխատանքի դեկավար – աշխդեկ, ուսումնական մասի վարիչ – ուսմասվար, գինվորական կոմիսար – գինկոմ* և այլն:

Խառը հապավումները կազմվում են հապավվող կապակցության թե՛ սկզբնատառերով, թե՛ վանկերով ու մասերով, թե՛ ամբողջական բառերով, օրինակ՝ *խնայողական դրամարկղ – խնայդրամարկղ, շինարարական հրապարակ – շինհրապարակ, տեխնիկական բաժին – տեխբաժին, Տաթևի հիդրոէլեկտրակայան – Տաթևհէլ* և այլն: Երբեմն տառային հապավումների վերջին բաղադրիչը մնում է ամբողջական և գրվում է առանձին, օրինակ՝ կրթության և գիտության նախարարությունը կարելի է հապավել *ԿԳՆ* կամ *ԿԳ* նախարարություն:

Տառային հապավումները հիմնականում գրվում են մեծատառով՝ բացի մի բանիսից, օրինակ՝ *բուհ, հէկ, ջէկ, աէկ* և այլն: Հապավված բաղադրիչներից հետո կետ չի դրվում:

Եթե մեծատառերով գրվող տառային հապավումը քերականորեն փոփոխվում է, ապա գծիկով նրան է կցվում համապատասխան վերջավորությունը, օրինակ՝ *ԵՊՀ-ում, ՀՀ-ից* և այլն:

Տառային հապավումները չեն տողադարձվում:

Հապավմամբ կազմվում են միայն գոյականներ, սակայն նրանցից կարող են կազմվել այլ խոսքի մասեր, օրինակ՝ *բուհ – բուհական, դասղեկ – դասղեկական* և այլն:

Կան նաև օտար լեզուներից փոխառյալ հապավումներ, որոնք հայերենի համար ըստ էության հապավումներ չեն, բանի որ կազմվել են այլ լեզուներում, և հայերենը փոխառել է հապավական պատրաստի կազմությունները: Դրանց գրությունը փաստորեն այդ բառերի հայերեն տառադարձություն է, օրինակ՝ *ՅՈՒՆԵՍԿՕ – United Nations Educational Scientific and Cultural Organization (Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն), ՆԱՏՕ – North Atlantic Treaty Organization (Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն)* և այլն:

Այլ լեզուների տառանուններից կազմված հատուկ գոյականների յուրաքանչյուր տառանվան առաջին տառը հայերենում գրվում է մեծատառ, օրինակ՝ *BBC – ԲիԲիՍի, CNN – Սիէնէն* և այլն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է հապավումը:
2. Ի՞նչ տեսակներ ունի հապավումը:
3. Ինչպե՞ս են գրվում տառային հապավումները:

Վարժություն 19: Տրված կապակցությունները վերածե՛ք հապավումների:

Շինարարական վարչություն, աշխատանքային օր, դասարանի ղեկավար, աշխատանքի ղեկավար, Հայաստանի Հանրապետություն, ինայոդական դրամարկդ, գիտությունների ակադեմիա, Ռուսաստանի Դաշնություն, բարձրագույն ուսումնական հաստատություն, ուսումնական մասի վարիչ, արտաքին գործերի նախարարություն:

Մեծերը՝ հայոց լեզվի մասին

Մայրենի լեզուն մարդու հետ է միշտ և նույնիսկ, երբ մարդ բոլորովին մենակ է:

Լևոն Շանթ

* * *

Ձեր հնամենի լեզուն ես չգիտեմ, բայց սիրում եմ այն: Դրա մեջ Արևելքն եմ զգում, դարերն եմ նշմարում այնտեղ, տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի շողարձակումը: Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվելը:

Վիկտոր Հյուգո

(«Թշվառներ» վեպի թարգմանության առիթով)

ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Բառարանը տիեզերք է՝ այբբենական կարգով:
Բառարանը գիրք է՝ բառիս ամենալայն իմաստով:
Մյուս բոլոր գրքերը գետնդիպած են բառարանի մեջ.
բանը միայն այդ գրքերը նրանից դուրս կորզելն է:
Վոյտեր (Ֆրանսիացի գրող, փիլիսոփա)*

Բառարանագրությունը բառագիտության մի առանձին բաժինն է, որն ուսումնասիրում է բառարանների տեսակները, ինչպես նաև բառարան կազմելու կանոնները: Բառարանագրությունը սերտորեն առնչվում է լեզվաբանության մի շարք բաժինների՝ բառագիտությանը, իմաստաբանությանը, ստուգաբանությանը, ոճագիտությանը: Բառարանի նպատակը կոնկրետ բառի նկարագրությունն է, նրա իմաստային և ձևային տարբեր հատկանիշների վերհանումը: Այդ առումով խիստ կարևոր է իմաստաբանության դերը: Բառարանագիրը պետք է ճշգրիտ բացատրի տասնյակ հազարավոր բառերի արտահայտած իմաստները, դրանց նրբերանգները, ցույց տա բառիմաստի կրած փոփոխությունները, մեկ կամ մի քանի լեզուներում դրանց համապատասխանությունները:

Բառարանագրությունը սերտորեն առնչվում է նաև ստուգաբանությանը, երբ անհրաժեշտություն է առաջանում բացատրելու այս կամ այն բառի ծագումը, կապը ցեղակից լեզուների հետ կամ դրանց փոխադարձ առնչությունները, իսկ երբեմն էլ հարկ է լինում բացատրել բառի կազմի մեջ մտնող բաղադրիչները, բացահայտել դրանց կապը բառի ընդհանուր իմաստի հետ:

Բառերի ոճական առանձնահատկությունների նշումը ևս բառի բնութագրերից է: Դրանք նպաստում են բառերի ճիշտ և տեղին գործածությանը, պատկերացում են տալիս դրանց կիրառության ոլորտների, հուզաարտահայտչական երանգավորման մասին, ինչպես օրինակ՝ **գավառական, ժողովրդախոսակցական, գրքային, հնացած, գռեհկաբանություն, արևմտահայերեն** և այլն:

ՀԱՐՅԵՐ

1. Ի՞նչ է ուսումնասիրում բառարանագրությունը:
2. Լեզվի ո՞ր բաժիններին է առնչվում բառարանագրությունը:

ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ


Ընդհանուր առմամբ բառարանները բաժանվում են երկու մեծ խմբի՝ **հանրագիտական և բանասիրական (լեզվաբանական):** **Հանրագիտական** բառարաններում տրվում են գիտական և գիտահանրամատչելի տեղեկություններ բառի նշանակած առարկայի, երևույթի մասին, իսկ **լեզվաբանական** բառարանում բառը ներկայացվում է որպես **լեզվական միավոր**, տրվում են բառերի իմաստները կամ դրանց համապատասխանությունները այլ լեզուներում և այլն: Օրինակ, **արջ**-ը հանրագիտական բառարանում կմեկնաբանվի որպես կաթնասուն կենդանի՝ իր հատկանիշներով, իսկ **լեզվաբանական** բառարաններում կբնորոշվի որպես բառ՝ իր ուղղակի և փոխաբերական իմաստներով, հոմանիշներով, ուղղագրությամբ և այլն՝ պայմանավորված բառարանի տեսակով:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս տիպի բառարաններն այլ կերպ անվանվում են նաև **հանրագիտարան (Էնցիկլոպեդիա):** Դրանք պարունակում են անհրաժեշտ գիտելիքներ շրջապատող աշխարհի ու բնության, հասարակական կյանքի, գիտության ու մշակույթի, տնտեսության, տեխնիկայի ու սպորտի, ինչպես նաև նշանավոր մարդկանց մասին: Հանրագիտական բառարանում հակիրճ ներկայացվում է մարդկային գիտելիքների առկա վիճակը այն բնագավառների վերաբերյալ, որոնք ընդգրկված են բառացանկերում:

Հանրագիտական բառարանները լինում են համընդհանուր և մասնաճյուղային: Համընդհանուր հանրագիտական բառարանների հայտնի նմուշներ են անգլիական «Բրիտանիկան», ֆրանսիական «Լառուսը» և «Ռոբերը», «Խորհրդային մեծ հանրագիտարանը» և այլն: Համընդհանուր հանրագիտական բառարան են նաև 12-հատորանոց «Հայկական սովետական հանրագիտարանը», «ԻՆՆ Է, Ո՛Վ Է» բառարանը, «Դպրոցական մեծ հանրագիտարանը»:


Մասնաճյուղային առանձին հանրագիտարաններից են «Բժշկական հանրագիտարանը», «Փիլիսոփայական բառարանը», Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը»,



Հայկական սովետական հանրագիտարանը 12 հատորով

Է. Ջրբաշյանի և Յ. Մախչանյանի «Գրականագիտական տերմինների բառարանը», Յ. Պետրոսյանի «Յայերենագիտական բառարանը» և այլն:

Յանրագիտական բառարանի կազմումը և հրատարակումը շատ բարդ և աշխատատար գործ է և վկայում է տվյալ ժողովրդի մտավոր ներուժի և գրատպության բարձր մակարդակի մասին:



Յայերեն հանրագիտական բառարաններ կազմելու փորձեր արվել են դեռևս 18-րդ դարից սկսած, սակայն, ցավոք, դրանք կիսավարտ հրատարակություններ են: Դրանցից կարելի է հիշատակել Յ. Առաքելյանի «Յանրագիտական բառարանը» (1915, Թիֆլիս), որի միայն առաջին հատորն է լույս տեսել, Մ. Պոտուրյանի «Յայ հանրագիտարանը» (1938, Բուխարեստ), ինչպես նաև մի քանի այլ մասնաճյուղային բառարաններ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԿԱՄ ԼԵՉՎԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Բառարանների այս տեսակում տրվում են բառերի ու դարձվածքների բացատրությունները, տարբեր լեզուներում դրանց իմաստային համապատասխանությունը, ուղղագրությունը, ուղղախոսությունը և այլն:

Բանասիրական բառարանները լինում են բացատրական, թարգմանական, հոմանիշների, հականիշների, համանունների, դարձվածաբանական, ուղղագրական, ստուգաբանական, օտար բառերի, տեղանունների և այլ տեսակների: Բացատրական բառարաններում բացատրվում են լեզվի մեկ կամ մի քանի շրջանի մեջ մտնող բառերը: Իմաստները առավել ցայտուն ցուցադրելու համար հաճախ բերվում են բնագրային օրինակներ, ինչպես նաև քերականական ու ոճական նշումներ: Կան նաև օտար բառերի բացատրական բառարաններ, որոնցում ներկայացվում են գրական, երբեմն նաև խոսակցական լեզվում գործածվող օտար բառերի բացատրությունները:

Ստուգաբանական բառարաններում տրվում են բառերի ծագումը, նրանց առնչակցությունը ցեղակից ու ոչ ցեղակից այլ լեզուների հետ: Յայտնի է Յ. Աճառյանի «Յայերեն արմատական բառարանը»:

Տեղանունների բառարաններում ներկայացվում են աշխարհագրական տեղանունները, դրանց տարբերակները, երբեմն էլ՝ ստուգաբանությունները, նշվում են այդ անունով կոչվող վայրերը:

Ըստ բառերի ձևաիմաստային դասակարգման կազմվում են հոմանիշների, հականիշների, համանունների բառարաններ:

Գրական
Գրական




Գործնական կարևոր նշանակություն ունեն ուղղագրական բառարանները, որտեղ տրվում են բառերի ճիշտ գրությունները:

Դարձվածաբանական բառարաններում արտացոլվում է լեզվի դարձվածքների հարստությունը: Տրվում են դարձվածքների բացատրությունները, երբեմն նաև տեղեկություններ դարձվածքների ծագման մասին, ինչպես նաև ոճական նշումներ:

Թարգմանական բառարանները լինում են երկլեզվյան և բազմալեզվյան: Թարգմանական բառարաններում ներկայացվում են երկու և ավելի լեզուների բառերի ու դարձվածքների թարգմանական համապատասխանությունները և իմաստային ու ոճական համարժեքությունները:

Անշուշտ, բառարանների տեսակները թվարկածներով չեն սպառվում, ստեղծվում են նորանոր տիպի բառարաններ: Բացի այդ՝ միևնույն բառարանում կարող են զուգակցվել տարբեր տիպի բառարանների հատկանիշները, օրինակ՝ երկլեզվյան (թարգմանական) դարձվածաբանական, ուղղագրական-բառակազմական և այլն:

Բառարանների հիմնական տեսակների գծապատկերը



ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ՆՐԱՆՅԻՅ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Բառարանների բառացանկը կազմող բառերը (այսինքն՝ բացատրվող կամ մեկնաբանվող բառերը) կոչվում են **գլխաբառեր**: Բառարաններում բառերը սովորաբար դասավորվում են խիստ այբբենական կարգով: Ընդ որում դա վերաբերում է ոչ միայն առաջին տառերին, այլև դրանց հաջորդող բոլոր տառերին: Այսպես օրինակ՝ *գրանիշ, գրանիտ, գրանիտակերտ, գրանիտե, գրանիտոյա, գրանշան, գրանշել, գրանշվել, գրանշում, գրանոց* և այլն:

Ինչպես տեսնում ենք, բառերը դասավորվում են այբբենական կարգով, որը հնարավորություն է տալիս հեշտությամբ գտնելու փնտրվող բառը: Սակայն որոշ բառարաններում բառերը կարող են ունենալ թեմատիկ դասակարգում: Միևնույն իմաստային խմբի մեջ մտնող բառերը կարող են ներկայացվել փնջերով, իսկ դրանց մաս կազմող բառերը՝ կրկին այբբենական կարգով: Այսպես, բառերի ձևաիմաստային խմբերն ընդգրկող բառարանը կարող է հոմանիշների, հականիշների, համանունների բառախմբերը ներկայացնել առանձին-առանձին, բայց այդ խմբերի ներսում բառերը կրկին դասավորվում են այբբենական կարգով:

Ամենից առաջ պետք է իմանաք, թե ինչ ենք փնտրում, որպեսզի ընտրենք համապատասխան բառարանը: Չպետք է մարշալ Բադրամյանի կենսագրությունը փնտրել ուղղագրական բառարանում կամ **ամանոր** բառի գրությունը փորձել ճշտել անձնանունների բառարանում: Անհրաժեշտ բառարանում այբբենական կարգով որոնում և գտնում ենք հետաքրքրող բառը: Այն կարող է ունենալ քերականական-ոճական այլևայլ նշումներ, որոնք տալիս են բառի խոսքիմասային պատկանելությունը, սեռականի ու հոգնակիի կազմությունը, եթե անկանոն բայ է՝ տարբեր հիմքերը, բառի ոճական բնութագրումը, նրա կիրառության բնագավառը և այլն: Բերենք մի քանի օրինակ էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից»:

ԳՉԵԼ, նք. 1. Բուրդը, բամբակը ևն գործիքով մաքրել ու պատրաստել մանելու համար: 2. փխբ. Զաշքշել, չարչարել, ծեծել, ծեծկել: 3. Խայտառակել, խիստ նախատել, դատապիտել: 4. փխբ. (խսկց.): Չարդարանքի համար մազերը սանրով փետել:

Ծովածաղիկ, դկի, գ. 1. Ծովային՝ ծովում բացված ծաղիկ: 2. Ծովում աճող ծաղկաբույս:



Գլխաբառից հետո համառոտագրությամբ տրվող բացատրությունների ցանկը սովորաբար բերվում է բառարանի սկզբում, օր.³ *Վիսք*. – փոխաբերական, *Նք*. – ներգործական բայ, *գվռ*. – գավառական և այլն:

Կան նաև հակադարձ բառարաններ կամ հանգաբառարաններ, որոնցում գլխաբառերը դասավորվում են հակառակ կարգով՝ ոչ թե բառասկզբի, այլ բառավերջի տառերի այբբենական հերթականությամբ:

ՀԱՅԵՐԵՆԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ*

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

«Հայկական սովետական հանրագիտարան»: Հայերենով կազմված հանրագիտական բառարանների մեջ իր ազգային բնույթով, ամբողջականությամբ, հետևողականությամբ ու գիտականությամբ աչքի է ընկնում «Հայկական սովետական հանրագիտարանը», որը հրատարակվել է 1974-87 թվականներին: Հետագայում հանրագիտարանի խմբագրակազմը կազմեց և հրատարակեց մասնաճյուղային մի շարք հավելված-հատորներ, որոնցից հիշատակելի են՝ «Երևան», «Քրիստոնյա Հայաստան», «Մեծ Եղեռն», «Հայկական համառոտ հանրագիտարան», «Ով ով է» և այլն: Հայկական հանրագիտարանի կազմությունը և հրատարակությունը մշակութային և գիտական անգնահատելի երևույթ էր հայ ժողովրդի կյանքում:

Պատկերացում տալու համար հայկական հանրագիտարանի ընդգրկումների ու ճոխության մասին՝ նշենք մի քանի վիճակագրական տվյալներ և բնորոշ առանձնահատկություններ.

– *Հանրագիտարանը հրատարակվել է 12 հատորով (գումարած 1 լրացուցիչ հատոր), բառացանկը պարունակում է շուրջ 50 հազար տերմինահողված, յուրաքանչյուր հատոր պարունակում է մոտ 1500 նկար, քարտեզ կամ գծապատկեր:*

– *Իբրև ազգային հանրագիտարան՝ նրանում առանձնահատուկ տեղ է հատկացված հայ ժողովրդի պատմության հանգուցային հարցերին, ինչպես նաև տնտեսությանը, գիտության, արվեստի ու մշակույթի նվաճումներին:*

– *Բառարանը հարուստ տեղեկություններ է պարունակում Հայաստանի բնության, նրա բուսական և կենդանական աշխարհի, կլիմայի և ընդերքի հարստությունների մասին:*

* «Բառարանագրություն» թեմայի վերաբերյալ օժանդակ կյութեր:

– Բառարանում կենսագրական տեղեկություններ են տրվում պետական նշանավոր գործիչների, գիտության և մշակույթի անվանի ներկայացուցիչների, պատերազմի հերոսների, մարզական սիրանք գործած հայորդիների մասին:

– Մեծ տեղ է հատկացված պատմական Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձաններին, աշխարհագրական անուններին, բնակավայրերի նկարագրությանը:

Գիտե՞ք, որ...

– Հայ առաջին տպագրիչը Հակոբ Մեղապարտն է, որը հայերեն առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրքը», տպագրել է 1512 թվականին՝ Գուտենբերգի գյուտից 57 տարի հետո:

– Հայ առաջին տպագիր բառարանը 1621 թվականին հրատարակել է Միլանի Ամբրոսյան դպրոցի դասախոս, հայագետ Ֆրանչեսկո Ռիվոլան («Հայերեն-լատիներեն բառարան»): Նույն բառարանը 1633 թվականին վերահրատարակվում է Փարիզում:

– 1695թ. Հռոմում լույս է տեսնում լեհահայ Աստվածատուր Ներսեսովիչի «Լատիներեն-հայերեն բառարանը». պարունակում է ջուրջ 17 500 բառահոդված:

– 1714թ. դարձյալ Հռոմում հրատարակվում է Հակոբ Վիլլոդի «Լատիներեն-հայերեն նոր բառարանը», որը պարունակում է ջուրջ 25 հազար բառահոդված:

Հայերեն հանրագիտական առաջին բառարանը կազմել է Արսեն դպիր Կոստանդնուպոլսեցին: Այն լույս է տեսել 1749 թվականին և կոչվում է «Գիրք սահմանաց յոգևադիմի իրողութանց»:

ԴԱՊՈՑ
ՀԱՅԿԻ
ԳԻՏՈՒՄ



* * *

Հայերեն ուղղագրական առաջին բառարանը կազմել է Արիստակես Գրիչը 12-րդ դարում:

* * *

Հայ իրականության մեջ առաջին կենսագրական բառարանը Մատթեոս Մաղաք-Թեոփիլյանցի «Կենսագրութիւն երեւելի արանց» երկհատոր աշխատությունն է, որը լույս է տեսել 1839 թվականին Վենետիկում:

* * *

2006 թվականին ԱՄՆ-ում լույս է տեսել «Համաշխարհային ֆուլկոր և ժողովրդական կենցաղ» քառահատոր հանրագիտարանը, որի երկրորդ հատորը նվիրված է Հարավարևելյան Ասիային, Հնդկաստանին, Կենտրոնական Ասիային, Մերձավոր և Միջին Արևելքին: Այնտեղ հոդվածներ կան Հայաստանի, Իսրայելի, Լիբանանի, Պաղեստինի, Իրանի, Եմենի, Թուրքիայի ժողովրդական բանահյուսությունների մասին: Յուրաքանչյուր երկրի հատկացվել է 9 էջ, իսկ Հայաստանին, որպես հնագույն և հարուստ մշակույթ ունեցող երկրի, հատկացվել է 15 էջ: «Հայաստան» հոդվածի հեղինակն է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, բանասիրության դոկտոր Վերժինե Սվազյանը: Հայ ժողովրդի բանահյուսությունը ներկայացված է պատմական հենքի վրա՝ սկսած պատմահայր Մովսես Խորենացու և այլ պատմիչների հաղորդած բանահյուսական նշխարներից («Հայկ և Բել», «Երվանդյաններ», «Արտաշես և Սաթենիկ», «Տիգրան Մեծ», «Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ», «Արշակ և Շապուհ»), այնուհետև «Սասնա ծռեր» էպոսից՝ իր չորս ճյուղերով: Ներկայացված են նաև Բագրատունյաց և Ռուբինյանց թագավորությունների ժամանակ հյուսված ժողովրդական բանավոր ստեղծագործությունները: Հանրագիտարանում նշված է նաև, որ Մեծ եղեռնի ընթացքում (1915–1923) հայ ժողովուրդը 1,5 միլիոնից ավելի զոհ է տվել, իսկ ներկայիս Հայաստանի Հանրապետությունը երբեմնի պատմական Հայաստանի 1/10 մասն է կազմում:

Վարժություն 1: «Հայկական սովետական հանրագիտարանից» դ՛րս գրեք տվյալներ հայ նշանավոր գորավարներ Անդրանիկի, Հայկ Բժշկյանցի, Հովհաննես Բաղդամյանի և Համազասպ Բաբաջանյանի մասին և դրանք գործածե՛ք ստեղծագործական շարադրություններում:

Հրայր Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը»: Հինգիստորանոց այս բառարանը կազմված է հանրագիտական և բանասիրական բառարանների սկզբունքների միավորմամբ: Այստեղ բերվում են հայերեն անձնանունների և՛ լեզվաբանական-ստուգաբանական մեկնաբանություններ, և՛ պատմական-մատենագիտական տեղեկություններ այդ անունները կրող անձանց մասին:

Այս բառարանում ընդգրկված են 5-ից 15-րդ դարերում հայոց մատենագրության մեջ հիշատակված և գրավոր հուշարձանների միջոցով մեզ հասած բոլոր անձնանունները, իսկ 16-17-րդ դարերից առկա են միայն պատմական ու գրական նշանավոր դեմքերը: Բառահոդվածը բաղկացած է երկու բաժնից. առաջին բաժնում տրվում է անձնանունը՝ նշելով սեռը, այդ անվան ծագումը, օտար տարբերակներն ու փաղաքական կամ կրճատ ձևերը: Երկրորդը աղբյուրագիտական և տեղեկատու-մատենագիտական բաժինն է, որտեղ տրվում է անվանակիրների կենսագրությունը, ինչպես նաև այն աղբյուրների ցանկը, ուր նրանք հիշատակվում են:

Պատկերացում տալու համար բառարանի կառուցվածքի մասին՝ բերում ենք դրանից մի բառահոդված:

* ՎԱԶԳԷՆ, ար. Հիրան. Ե՞ն մասնիկով կազմված փաղաքշական անուն (Հիրքշ. 90). ըստ իս դնդ. ՎԱԶԱԿՏ «գորտ» բառից (տե՛ս իմ Հայկականք Ծ, № 28):

— Վազգէն, բղեղի Վրաց, ամսանացով Քաշ Վարդանի դուստր Շուշանի հետ. ուրացավ քրիստոնեանքը և շարշարելով նահատակեց իր կնոջ.— Ցայսմ. դեկտ. 25.— սեռ. Վազգենայ՝ Ցայսմ. դեկտ. 25, մրտ. 30.— սեռ. Վասիկոյ՝ Սիմ. ապար. 58 և Վազգենի՝ Սիմ. ապար. 58:— Տե՛ս և Վի. Շուշ.— Լ. Միլիբուսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Ա. 11 (վրացերեն կոչում է Վառսեն), 21, 193—194 (այս վերջինում գրված է Վառսեն. «Սումիսթում կար մի իշխանաց որդի Վասքեն անուն, որն ամուսնացած էր իշխանազն Շուշանիկ կոչեցյալի՝ Վարդանի դստեր հետ»): Վրաց. Բակուր Թագավորը զորքով գնաց նրա վրա, հաղթեց և սպանեց նրան, ըստ Վրաց աղբ. Ա. 194, իսկ ըստ Սիմ. ապար. վրաց Վասթանիկ Թագավորն է սպանել նրան:



Ահա այսպիսի ճշգրտությամբ ու մանրամասնությամբ կազմված անձնանունների բառարանը դառնում է հայոց անձնանունների թե՛ բանասիրական-լեզվաբանական և թե՛ պատմական-մատենագիտական տեղեկությունների անգնահատելի աղբյուր:

ԲՆՃԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը: Գրաբարի՝ գիտական սկզբունքներով կազմված առաջին բացատրական բառարանը Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանն է: Այն բաղկացած է երկու հատորից (1749 և 1769): Բառարանի առաջին հատորը ամբողջովին գրաբարի բացատրական բառարանն է, պարունակում է շուրջ 40 հազար բառ և արտահայտություն: Երկրորդ հատորը բաղկացած է մի քանի ինքնուրույն մասերից, որոնք առանձին բառարաններ են: Սրանցից առավել կարևորները չորրորդ և հինգերորդ մասերն են՝ գրաբար-աշխարհաբար և աշխարհաբար-գրաբար բառարանները:

Գրաբարի բառապաշարի ամբողջական ընդգրկմամբ, բառիմաստների լիակատար բացատրությամբ և բնագրային հարուստ օրինակներով աչքի է ընկնում Նոր հայկազյան բառարանը, որի հեղինակները՝ Գաբրիել

<p>ՏՄՊԱԿ. ի. կամ՝ ոյ, աջ. Գ. Τηγάριον. Sargago. վջ. փապակի. ա. փապա, Բապ. Թ. Բա. Թ. Բա. Թ. Անթ. ասպակիչ, կամ խոր. մեղայ՝ ի տապ հրոյ՝ իւղով զմտնոր, զձուկն, զմիս, և այլն. սան պղծնի կամ երկաթի. * Զա՛՛ ի տապակէ՝ նաշի՛ն զանդեալ իւղով: ի կասկարայս կմ՝ ի տապակի: Եփեայ զբլ. լիթնն, և առ զտապակն, և թափեաց առաջն հորա: Տապակ երկաթի: Զհուռ. ցանել տապակս և կաթնայս շենձերն՝ ի տապակէ անտի ելեալ գիզացեալ ծառանայր. և այլն: * Եաշի՛ն իւղով զանդեալ, և արարեալ սապակաւ. Կիւրլ. շափ: * Արկանել զմանս յեւացեալ կաթնայս, և դրոյս խորովել ի տապակո: Խորովել զձուկն՝ ի տապակ. Վր. Կ. Ժ. Բ. Բ. * Հանել յերկաթեմէնն ասպակ: Տապակս և հուր ի մէջ բերէին: Տապակ հրացու. ցանել: Տարածեաց զմէն ի մերայ հրացեալ տապակին: Սք վկայու. Հին կայր ի մերայ եռանդան ասպակին. Խոր. Բ. 12: Ե. Կ. Գ. 5: Ճ. Զ. * Զ ասպակոյն յայտնէր. նև. Է. Է. Է.:</p> <p>ՏՄՊԱԿ. * Ἀσπίδιον. Scatulum. Վահանակ, կմ՝ ասպարաձև զարդ.՝ նման տապակի. * Զարդարեցին զնոքս. . . սակի պահօք, և սակ. ուլք ասպակօք. ն. Կ. Բ. 57:</p>	<p>Ավետիքյանը, Խաչատուր Սյուրմեյանը և Մկրտիչ Ավգերյանը, գործել են հիրավի պատմական սխրանք՝ սերունդներին հանձնելով գրաբարի բառապաշարը, որն ամփոփված է 5-17-րդ դարերի ձեռագիր ու տպագիր մատյաններում: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի». այսպես է կոչվում 1836-37թթ. Վենետիկում լույս տեսած այս կոթողային երկհատոր բառարանը, որը պարունակում է շուրջ 51 հազար բառահոդված: Այն իբրև պատմական բառարան ընդգրկում է գրաբարի գրեթե ողջ բառազանձը, իսկ գրաբարյան բառերի հունարեն, լատիներեն ու</p>
--	--

թուրքերեն համարժեքները այն միաժամանակ դարձնում են թարգմանական-բազմալեզվյան բառարան:

Մ. Ավգերյանը, համառոտելով Նոր հայկազյան երկհատոր բառարանը, կազմում և 1846թ. Վենետիկում հրատարակում է «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» խորագրով Նոր աշխատությունը, որը սովորաբար անվանում են **առձեռն բառարան**: Նույն բառարանի առավել մշակված և 5 հազար Նոր բառերով հավելված տարբերակը լույս է տեսնում 1865թ. Վենետիկում: Հեղինակը, անփոփոխ թողնելով Նոր հայկազյան երկհատոր բառարանի բառացանկը, կրճատել է քերականական որոշ Նշումներ, բաց է թողել բնագրային օրինակները և հունարեն ու լատիներեն համարժեքները, որով բառարանը ձեռք է բերել առավել գործնական և հանրամատչելի բնույթ: Ուշագրավ է, որ այս բառարանում գրաբարյան բառերի բացատրությունները տրվում են գրական արևմտահայերենով:

2000թ. լույս տեսավ Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանը», որը գալիս է լրացնելու գրաբարի հանրահայտ բառարանները: Այստեղ ընդգրկվել են Նախորդ բառարաններում տեղ չգտած, բանասերների ուշադրությունից վրիպած և իմաստի տարբեր առումներ արտահայտող բառեր ու արտահայտություններ:

Հիշատակելի է նաև Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանը»:

Ստեփանոս Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը»:

Այս բառահատոր բառարանը լույս է տեսել 1944-45 թվականներին և ընդգրկում է հայերենի բոլոր փուլերի ու դրսևորումների՝ գրաբարի ու միջին հայերենի, բարբառների, արևելահայերենի ու արևմտահայերենի շուրջ 120 հազար բառ և դարձվածքային միավոր: Սա մի կողմից արդի գրական հայերենի բառարան է՝ բառերի ու դարձվածքների ժամանակակից իմաստների տարբերակմամբ, դրանց գործառական ոլորտների և ռճական նրբերանգների հաշվառումով: Բառացանկը քաղված է տարբեր աղբյուրներից՝ բառարաններ, գեղարվեստական և գիտական գրականություն, մամուլ, պարունակում է արևմտահայերեն, ժողովրդախոսակցական լեզվի, բարբառների բառեր: Այնուամենայնիվ, իբրև այս բառարանի թերություն Նշվում է, որ ժամանակակից արևելահայերենը և արևմտահայերենը բառարանում պատշաճ մակարդակով ներկայացված չեն: Մոտավոր հաշվումներով շուրջ 40-50 հազար արդի գրական լեզվի բառեր տեղ չեն գտել բառարանում: Նշենք, որ բառարանը գրված է դասական ուղղագրությամբ:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»: 1969-81թթ. լույս տեսավ ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցների կազմած քառահատոր «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը», որն ընդգրկում է արդի գրական հայերենի շուրջ 120 հազար բառ և դարձվածքային միավոր: Այն կազմվել է հատկապես Ստ. Մալխասյանցի բառարանի, ինչպես նաև հիշյալ ինստիտուտի կազմած համաբարբառի հիման վրա, որն ընդգրկում է



գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական գրականության մեջ, մամուլում և այլուր տեղ գտած լեզվական նյութը, որ չէր արտացոլվել Ս. Մալխասյանցի բառարանում:

Բառերի ու դարձվածքների արտահայտած իմաստային նրբերանգները ցայտուն դրսևորելու համար այս բառարանում պարտադիր կարգով բերվում են գրականությունից, մամուլից ու դասագրքերից քաղված

բնագրային օրինակներ: Այս հանգամանքը բառարանը դարձնում է կարևոր սկզբնաղբյուր հայոց լեզվի բառապաշարի ու դարձվածքների հարստությունը ուսումնասիրելու համար: Ներկայացնենք բառարանի ամենաձավալուն բառահոդվածներից մեկը:

ՉԱՅ, ի, դ. 1. Այլուրից շաղախված և բռնում՝ փռում քիված ուտելիք: Անեկ հաց: Անխմոր հաց: Քարթու հաց: Մատնաբաշ հաց: Լավաշ հաց: Տնշտնեղ լի հաց լինի, դռնեղ միշտ բաց լինի (ՀԹ): 2. Հացահատիկ, ցորեն, գարի: Ես տարի էլ հացը բարակ էր, խեղճ հերդ զրոով ծեփն ա հասցնում (ՀԹ): 3. Հացահատիկ ցանած արտեր: 4. Ընդհանրապես ուտելիք, սնունդ, ապրուստ, ապրուստի միջոց: Նրա համար, որ ինձ օգնեն, հաց աշխատենք, ապրուստ անենք (ՀԹ): Տեր դառնա ուսմիկն իրեն սուրբ վարատակին, արդար հացին (ԱԿ): 5. Ճաշ, ընթրիք, սեղան: Էլ ի՞նչ նստիչ ես քու հացին (ՀԹ): 6. Հացկերույթ, կոշտնեղ, խնջույթ: 7. Մեղրահաց, խորխոխ: □ Կ ե ո շ ա տ հ ա գ ու պ ա ն ի ր պ ե ա է լ ու տ ն ս — դեռ շատ պեւեւ է սովորես, դեռ շատ պեւեւ է փորձվես: Ի ր հ ա գ ր ու տ ե լ — պատժվել: Կ ե ր ա ժ ր զ հ ա գ ր ա չ է զ ք ա ճ ի (Անեծժ) — կերածդ հարամ լինի, բռնահառ: Հ ա զ ա ր մ ա դ ի հ ա գ կ ե ր ա ծ — շատ փորձված, բեկած-եյած: Հ ա գ ու հ ա գ — աե՛ս Հագեհաց: Մ ե կ ի հ ա գ ր կ ա ր ե լ — 1) մեկին ապրուստի միջոցից գրկել, մեկի պաշտոնը ձեռքից առնել. 2) մեկի հյուրասիրությունը ընդունելով նրան մեծ պատիվ անել: Աղաչում ենք՝ շեղահանես, դաս մեր հացը կարես (ՀԹ): Մ ե կ ի հ ա գ ի ն յ ու ղ է ս ե լ — 1) խոստով կամ զործով օգնել մեկին. 2) շոքաբերել, ծծնել: Մ ի ա ս ի ն հ ա գ կ ա ր ե լ — բարեկամ լինել, աղուհացով իրար հետ կապված լինել, բարեկամանալ: Ն ր ա հ ա գ ի մ ե շ ա ղ շ կ ա — նրա արած լավությունը բռնել տեղ չի անցնում: Յ ա մ ա ֆ հ ա գ Պ ա ր հ ա գ — լոկ՝ միայն հաց առանց արիչ հավելյալ ուտելիքի: Մ ե ր ա պ ր ո ս տ ն ի ն է, մ ի

կտոր չոր հաց (ՀԹ)։ Փ ա Ր Ի ց հ ա ց ք ա մ ե լ՝ հ ա ն ե լ —
 որեւէ կերպ՝ դժվարությամբ ապրուստ հայրայրքի։ *Խնդհ աղ-
 բատի հողին դուրս դա, բարից, հողից հաց քամե (ԱԻ)։ Օ Ր —*
 վ ա հ ա ց ց ի կ ա Ր ո տ — խիստ աղքատ՝ խնդհ։ Հ ա ց ա շ-
 խ ա տ ե լ — ապրուստ հայրայրքի։ Հ ա ց դ ն ե մ՝ հ ա ս ի,
 ր ա ն դ ն ե մ՝ փ ա խ ի (Առած) — ուտելու պատրաստ են,
 աշխատելու՝ ծուլ։ Հ ա ց ի գ ո ո, ր ա ն ի ք ա ո — շատ ու-
 տաղ, բայց աշխատանքից խուսափող։ *Այդ սհացի զոռ, բանի
 քոսին» գյուղ ուղարկենք (ՍԽ)։ Հ ա ց շ ի ն ե լ՝ գ ց ե լ —*
 հացի՝ հաշի պատրաստություն տեսնել։ *Հարսներ հաց շինե-
 ցիք, հաղարիցը մի անգամ Սոսը մեր տունն ա էկել (ՊՊ)։*
 Հ ա ց ու ն ե ն ա լ — հացի տեր լինել, կարողություն չունե-
 նալ։ Հ ա ց ք ա շ ե լ — սեղան բաց անել։ *Գեհ, լավ, հաց քա-
 շիք, հաց քաշիք, անոթի մեռանք, հրամայից Սոսըստը (ԱԻ)։*
 Հ ա ց ու պ ա ն ի ր — հասարակ բան, հեշտ բան։ *Չեզ հա-
 մար սերը սհաց ու պանիրն է, այսօր այտեղ եք, էզուց
 այնտեղ (ՎՏ)։ Հ ա ց ու շ ու Ր տ ա լ — ապրուստ տալ,
 ապրեցնել։ Ո՞վ կտա մեզ հաց ու շուր (Ժող. երգ)։ Հ ա ց ք
 դ Ր ա մ՝ ր ա ն ն ա ն ի ծ ա ծ (Առած) — երբ հույր զբված է,
 աշխատանքը պետք է դադարեցնել։ Հ ա ց ք կ ո տ ե մ ի ն
 հ ա գ ի վ հ ա ս ց ն ե լ — հագիվ ծայրը ծայրին հասցնել։
 Հ ա ց ր հ ա ն ե լ — ապրուստը հանել, ապրուստ հայրայրքի։
Աշխատանքն փախող չեմ, այնքան որ հացս հանեմ (ԱԻ)։
 Հ ա ց ի խ ն դ ի Ր — ապրուստի խնդիր, գոյությունը պահպա-
 նելու խնդիր (Պռոշյանի հայտնի վեպի վերնագիրը)։ Հ ա ց ի
 հ ա ս ց ն ե լ — 1) եույնն է Հացի տեր անել. 2) (հեզն.)
 փորձանքի մեջ գցել։ Հ ա ց ի ն ս տ ե լ — հաշի, ետևյալ ետ-
 շելու։ *Գաղանների մտա հացի կեստեմ (ԱԻ)։ Հ ա ց ի տ ե Ր*
ա ն ե լ՝ շ ի ն ե լ — մեկին օգնել, որ իր ապրուստը հարի։
 Հ ա ց ի տ ե Ր դ ա ո ն ա լ, Հ ա ց ի տ ի Ր ա ն ա լ — անկա-
 բառ ապրել, ապրուստի տեր դառնալ։ Հ ա ց ի ք ա ո (բբ.) —
 անհյուրասեր, ժլատ։ Հ ա ց ի ն ք ա ց ո վ ա ս լ — իր օգուտը
 չճանաչել, իր օգուտից հրաժարվել։ Հ ա ց ի ց գ ց ե լ — աղ-
 քատացնել։ Հ ա ց ի ց ք ն կ ն ե լ — աղքատանալ, ապրուստի
 միջոցներից զրկվել։ Հ ա ց ո վ մ ա Ր Չ — հյուրասեր մարդ։
*Հայրս հայտնի էր իբրև շատ հացով մարդ (ՂԱ)։**

**Վարժություն 2: Զետևյալ բառերը դասավորե՛ք այբբենական կար-
 գով:**

1. ամաչել, արագություն, ազատ, ամոթ, անգին, վրաերթ, զգալ, ֆուտբոլ, միամիտ, գրականություն, բարակ, բարաք, բռնել, երկու, ճանճ, ճմռթել, ծուղակ, ծաղիկ, դել, գարուն, գրել
2. սպասել, այգի, տնակ, տատիկ, տնկի, մնալ, երևալ, եսասեր, հմայիչ, հսկա, լուսավոր, հարկային, գանձ, օրինակ, տեղեկանք, փափուկ, դահուկ, պարտք, ուզել, դասարան, բաղաբային, մառան, քրեական, քստմունքի
3. մարզիչ, արևելք, տղա, նայել, հանգիստ, լավագույն, հասկանալ, ճակատագիր, յուրովի, օրինական, ստուգել, ճահիճ, տեղափոխ-
 վել, հրաման, աշխատել, չիբուխ, զսպանակ, ոչնչացնել, ցրտա-
 դիմացկուն, ցավագար

Գրադպրակ

Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը»:

1976թ. լույս տեսած այս բառարանը պարունակում է մոտ 136 հազար բառ և շուրջ 10 հազար դարձվածքային միավոր: Բառարանի ներածության մեջ հեղինակը հստակորեն սահմանում է «արդի հայերեն» տերմինը, որը նշանակում է աշխարհաբար կամ

նոր հայերեն գրական լեզուն իր երկու

տարբերակներով: Բառարա-

նում ներկայացված են ոչ մի-

այն արդի հայերենի համա-

գործածական բառերը, այլև ոչ


գործուն բառապաշարի միավորները

(գրաբարյան, միջինհայերենյան ու բարբառային

բառեր, նորաբանություններ ու փոխառություններ):

Թեև բառարանում չեն բերվում բնագրային օրինակներ, սակայն բառահոդվածների գիտական մշակվածությունը, համանունների ու բազմիմաստ բառերի տարբերակվածությունը, ուղղագրական տարբերակների ու քերականական սխալների առանձնացումը այս բառարանն այսօրվա վիճակով դարձնում են հայերենի բառարանագրության վերջին խոսքը:

Համեմատության համար բերենք նույն՝ *հաց* բառահոդվածը Է. Աղայանի բառարանից:



ՀԱՅ, ի, գ. 1. Ալյուրից թխած ամենօրյա ուտելիք: 2. Հացահատիկ (ցորեն, գարի): 3. Հացահատիկի արտեր: 4. Առհասարակ՝ ուտելիք, ուտեստ, սնունդ: 5. Ճաշ: 6. Հացկեթույթ: 7. Մեղրի բլիթ, մեղրահաց, խորիխ: 8. փխբ. Ապրուստ, ապրուստի միջոց: 9. փխբ. Եկամուտ: 10. փխբ. Երախտիք, բարերարություն:

-Հաց գնդի — խմորադնդի պատրաստելի հաց թխելու համար:

-Հաց գցել՝ դնել — սեղան պատրաստել:

-Հաց կտրել կամ ուտել (խառ եհտ՝ միասին) — աղուհացով իրար հետ կապված լինել:

-Հաց ունենալ — հաց թխելով զբաղված լինել:

-Հաց ու պանիր — նույնն է՝ Պանիր հաց:

-Հաց ուտել — 1. Ուտել: 2. Սեղան նստել (ճաշել, նախաճաշել, ընթրիլ):

-Հացը ուտել — պատժվել:

-Հացի բնկնել — ուտելու ախորժակը բացվել (հիվանդությունից ապաքինվելիս):

-Հացի խնդիր — ապրուստի՝ գոյությունը պահպանելու խնդիր, գոյության կոպի:

-Հացի ձեն — հյուրասիրության լուր:

-Հացի մեջ (կամ միջև) աղ շիկնել — արած լավությունը անտես լինել, երախտիքը շահաչլիկել:

-Հացի նստել — հաց ուտել:

-Հացի ջուր, տե՛ս Հատջուր:


—Հացի տեր գառնալ, հացի տիրանալ —
 1. Ապրուստի միջոցներ ձեռք բերել (ժառանգության՝ արհեստի մտնելով կամ որոշ ունեցվածք ստանալով): 2. Արհեստ՝ մասնագիտություն սովորել՝ ապրուստն ապահովելու համար:

—Հացի եռ, (ծղ.) — անհյուրանք, ժլատ
 —Մեկի հացին յուղ եսել — 1. Մեկին շողորթրթիլ: 2. Մեկին նպաստավոր դիրք բանել, իր խոսքով կամ գործով անուղղակիորեն մեկին օգնել:

—Հացին քացով տալ — իր գործով՝ վարձուրով իրեն վնասել, իրեն վիճակված օգուտին չկարողանալ տիրանալ:

—Հացից բեկնել — 1. Աղքատանալ, ապրուստից զրկվել: 2. Ուտել չկարողանալ:

—Հացից ուտել, տե՛ս Հացի ուտել:
 —Հացով մարդ — հյուրանք, ապստամբություն:




Այժմ կազմված և տպագրության ընթացքում է գտնվում Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի աշխատակիցների կազմած «Հայերենի նոր բացատրական բառարանը», որն ընդգրկում է աննախադեպ ընդարձակ բառացանկ՝ շուրջ 250 հազար բառ և դարձվածքային միավոր:

Վարժություն 3: Եղ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից» դո՛ւրս գրեք տասական մենիմաստ և բազմիմաստ բառեր և դրանցով կազմե՛ք նախադասություններ:

Վարժություն 4: Եղ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից» դո՛ւրս գրեք տասը համանուն բառեր և դրանք գործածե՛ք նախադասություններում:

ՍՏՈՒՂԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս տիպի բառարաններում տրվում են լեզվի բառերի ծագումը, նրանց առնչությունները ցեղակից ու ոչ ցեղակից այլ լեզուներին: Գ. Աճառյանի «Արմատական բառարանը» նման ստուգաբանական բառարանի մի կատարյալ օրինակ է: Շատ քիչ ժողովուրդներ կարող են հպարտանալ նման մանրակրկիտ և փաստառատ բառարանով:



Բառարանի առաջին հրատարակությունը կատարվել է 1926–35թթ. 7 հատորով (6 հատորը՝ ապակետիպ,

Հայոց
Լեզու

7-րդ հատորը՝ տպագիր), 2-րդ հրատարակությունը լույս է տեսել 4 հատորով, 1971–80 թթ.: Բառարանն ընդգրկում է մոտ 11 հազար բառարմատ, որից 2221 արմատ համարված է անվավեր, մնացած 8775 արմատներից ստուգաբանված է 5095-ը, որից 927-ը համարված է բնիկ՝ հնդեվրոպական, 4015-ը՝ փոխառյալ, 155-ը՝ բնածայնական, 3680-ը՝ դեռևս չստուգաբանված:

«Արմատական բառարանի» յուրաքանչյուր բառահոդված բաղկացած է հիև գ բաժնից:

Առաջին բաժնում տրվում է գլխաբառը, ապա՝ նրա հոլովման կամ խոնարհման ձևերը, բառիմաստն ու նրա կրած փոփոխությունները, դրանց վկայությունները հայ մատենագրությունից. այս բաժինը բառմատի իմաստաբանական և բառակազմական ուսումնասիրությունն է՝

*ԱՆՈՒՌ «ձիու կամ էշի ախոռ» Սեբ. էջ 68, 95. Վրբ. հց. (ՆՀԲ դնում է ո հղ. բայց չունի վկայութիւն). որից ախոռապետ Բուդ. ախոռապաճ Մարթին. տե՛ս և շահախոռապետ:

= պրս. آخوړ āxūr «ախոռ», պհլ. āxvar «ախոռ», āxvar i stōrān «գոմ», քրդ. آخوړ axūr «ախոռ, մսուր», աֆղան. āxōr, որոնք դալիս են դնդ. *āxvarəna ձևից և այս էլ ծագում է xvar «ուտել, խմել» արմատից՝ ā մասնիկով, ըստ այսմ ախոռ բուն նշանակում է «ուտել-խմելու տեղ»: Իրանեաններից փոխառեալ են նաև ասոր. ܐܚܘܪ axur, չաղաթալ. axor «մսուր», արեել. թրք. آخوړ axōr «ձիու ախոռ», օսմ. آخوړ axor «ախոռ, ahər «ախոռ» (և սրա միջոցով նլն. آخوړ, բուլղար. yahər, yaər, əhər, avər, սերբ. hahar, bar), վրաց. ახორი, ახორის «ախոռ», թալմուդ. אַחוּר «ախոռապետ»: — Հիւբշ. 93:

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ, Lag. և այլն:

ԳԴԲ.—Սլմ. ախոռ, Ախց. Ակն. իրբ. Կր. Շմ. Զղ. Ռ. Սեբ. Տիգ. ախոռ, Երև. ախոռ, ՀՃ. ախար, Մշ. յախոռ, Գոր. Ղրբ. ախոռ, Մրդ. Տփ. ախուր, Զթ. յախոռ, Ասլ. ախվեօր, Ազլ. ահուռ, իսկ Պլ. ախրո՝ նոր փոխառութիւն է տաճկերէնից: Երև. Ղրբ. Սլմ. և Մրդ. տեղական թուրքերէնի ազդեցութեան տակ՝ իմաստի փոքր փոփոխութեամբ դարձել է «մսուր». այսպէս է հասկանում նաև Բառ. երեմ. էջ 216, որ մեկնում է մսուր «ախոռ»:

հնչունափոխական օրինաչափություններով հանդերձ:

Երկրորդ բաժինը կազմում է բառարանի բուն ստուգաբանական մասը: Այս բաժնում բնիկ հայերեն բառերի դիմաց տրվում է բառի հնդեվրոպական նախաձևը, այնուհետև՝ համապատասխան ձևերը ցեղակից լեզուներում: Փոխառյալ բառերը ստուգաբանելիս նշվում են փոխատու լեզուն, բառի հնչումն ու գրությունը այդ լեզվում, ինչպես նաև ստուգաբանությունն առաջարկողի անունը և աղբյուրը: Այն բառերը, որոնք բնիկ կամ փոխառյալ չեն և չեն կապվում որևէ լեզվի հետ, համարվում են չստուգաբանված:

Երրորդ բաժնում բերվում են եղած ստուգաբանությունները, դրանց հեղինակները և աղբյուրները:

Չորրորդ բաժնում բնկվում են արմատի բարբառային տարբերակները, տրվում են դրանց հնչյունափոխական առանձնահատկությունները հայերենի 30 բարբառներում:

Հինգերորդ բաժնում բնկվում է հայերենի ազդեցությունն ուրիշ լեզուների վրա, հայերենից այլ լեզուների կատարված փոխառությունները:

3. Աճառյանի «Արմատական բառարանի» գիտական արժեքը դուրս է եկել հայ բառարանագրության սահմաններից և դարձել է համաշխարհային բառարանագրության սեփականությունը:

Վարժություն 5: 3. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանից» դ՛րս գրեք.

- ա) Բնիկ հայերեն տասը բառ:
- բ) Հունարենից փոխառյալ հինգ բառ:
- գ) Պարսկերենից փոխառյալ տասը բառ:

ԲԱՐԲԱՐԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Բարբառային կամ գավառական բառարաններում ընդգրկված բառապաշարը ներկայացնում է համաժողովրդական լեզվի տարածքային տարբերակների բառային ու դարձվածքային միավորները և նրանց իմաստների բացատրությունը:

Հայտնի են Ս. Ամատունու, 3. Աճառյանի և Կ. Գաբիկյանի գավառական բառարանները:

Ս. Ամատունու բառարանը կոչվում է «Հայոց բառ ու բան» (Վաղարշապատ, 1912թ.): Ինչպես ցույց է տալիս անվանումը, հեղինակի նպատակն է եղել բառարանում ընդգրկել ազգագրական և գեղարվեստական տարբեր աղբյուրներում հանդիպող ժողովրդական ծագում ունեցող, ժողովրդի կենցաղն ու սովորույթներն արտացոլող բառերն ու պատկերավոր արտահայտությունները: Մի խոսքով, այս բառարանը մի գանձարան է, որտեղ կարելի է գտնել հայ ժողովրդի դարավոր իմաստությունն արտահայտող առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, փոխաբերաբար գործածվող կայուն կապակցություններ և, առհասարակ, բառեր ու բառաձևեր, որոնք մատենագրության մեջ տեղ չեն գտել, ինչպես օրինակ՝ *աբեղածագ, ակրատ, աթար, այլանի, ակնկոր, աներծագ, մրտիմ, աման-չաման, ամբաղ-գամբաղ, ճոճ, լակել* և այլն:

3. Աճառյանի «Հայերեն գավառական բառարանը» պարունակում է շուրջ 30 հազար բարբառային բառ և դարձվածքային միավոր: Բառարանում տրվում են նաև բառերի տարածման վայրերը, դրանց իմաստ-

ները տարբեր բարբառներում, ինչպես նաև բառակազմական ու ստուգաբանական վերլուծություններ:

4. Գաբիլյանի «Բառգիրք սեբաստահայ գավառալեզվի» աշխատության մեջ տրվում են Սեբաստիայի հայերի ժողովրդախոսակցական լեզվում տարածված բառերն ու արտահայտությունները:

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը կազմել և հրատարակել է հնգահատոր «Հայոց լեզվի բարբառային բառարանը» (Երևան, 2001–2008) գրավոր աղբյուրների և բարբառագիտական գիտարշավների ընթացքում հավաքած նյութերի հիման վրա: Բառարանում ամփոփված է հայերենի 220 բարբառների և խոսվածքների նյութը: Տրվում են բարբառային շուրջ 100 000 բառերի բացատրությունները և նշվում է, թե որ բարբառներում են դրանք առկա:


Այս բառարանների դերը մեծ է ոչ միայն պատմական, այլև արդիական տեսակետից, քանի որ հազարավոր բարբառային բառեր, կորստից փրկվելով, համալրում են արդի գրական հայերենի բառազանձը:

Վարժություն 6: Զո մայրենի բարբառում գտի՛ր և նշի՛ր.

- ա) 10 բառ, որոնք չունեն գրական համարժեքներ,
- բ) 10 բառ, որոնք ունեն գրական համարժեքներ:

ՀՈՍԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Այս տիպի բառարաններում ընդգրկվում են լեզվի որևէ փուլին կամ տարբեր փուլերին պատկանող բառերի ու դարձվածքային միավորների հոմանիշները: Որևէ հիմնաբառի շուրջը միավորվում են հոմանշային շարքերը, որոնք արտահայտում են մոտավորապես նույն իմաստները: Հայ իրականության մեջ հայտնի է Հ. Գայայանի «Բառարան-գանձարան հայոց լեզվի հոմանիշներու» (Կահիրե, 1938թ.), որը պարունակում է հիմնականում արևմտահայերենի 15 հազար հոմանիշներ: Հայ բառարանագրության ակնառու նվաճումներից է Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը» (Երևան, 1967թ.), որի երկրորդ՝ բարեփոխված հրատարակությունը՝ «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանը», 2003թ. արժանացել է ՀՀ Պետական մրցանակի:



Ա. Սուբիասյանի հոմանիշների բառարանը անհամեմատ հարուստ է, ընդգրկում է շուրջ 100 հազար հոմանիշ բառ և դարձվածքային միավոր, այդ հարստության շնորհիվ կատարում է նաև ուղղագրական և բացատրական բառարանի դեր: Հոմանիշները տարբերակված են ըստ իմաստային նրբերանգների ու ոճական կիրառության:

Բառահոդվածի օրինակ Ա. Սուբիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանից»:


ՔԱՐՉՐԱՆԱԼ, ցր. 1. Ելնել, ամբառնալ (դեպի վեր ձգվել): 2. Ելնել, վեր կենալ, ոտքի ելնել (կանգնել) (նստած կամ պառկած տեղից): 3. Երկարել, աճել, հասակ առնել (նետել), (ժող.) բոյ անել (քաշել, քշել) (դեպի վեր մեծանալ): 4. Բազմել (բարձր՝ պատվավոր տեղ նստել): 5. Ավելանալ (ջերմաստիճանը): 6. Ուռչել, փքվել, մեծանալ (կուրծքը շնչառության, հուզմունքի ժամանակ): 7. Մասուկանալ, ուժեղանալ (ճնշումը, հակազդեցությունը ևն): 8. Առաջադիմել, զարգանալ (հասարակության նյութական, հոգևոր, մշակութային ևն մակարդակը): 9. Առաջադիմել, առաջ գնալ (պաշտոնում, նոր՝ բարձր պաշտոն ստանալ): 10. Լավանալ (տրամադրությունը): 11. Արծարծվել, քննվել, քննարկվել, առաջ քաշվել (քննության՝ քննարկման նյութ դառնալ): 12. Ծառանալ, լեռնանալ, կոհակվել, ծառս լինել (ալիքը): 13. Բարձրություն վերցնել (երկրի մակերևույթից դեպի վեր թռչել):

Վարժություն: Ա. Սուբիասյանի «Հայերենի հոմանիշների բառարանում» գտե՛ք և դո՛ւրս գրե՛ք հետևյալ բառերի հոմանիշները:

1. ապառաժ, գնալ, դատարկություն, պատառուտել, տեսակետ
2. հրահրել, հսկա, շինծու, պախարակել, փափուկ
3. երեխա, թափառել, ծիծաղել, կռիվ, օգնել

ԳՐԱՉԱՍՏԱՐԱՆԱԿՍՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Յուրաքանչյուր լեզու ունի իր դարձվածային համակարգը, որն ամփոփում է այն կայուն բառակապակցությունները, որոնք ունեն փոխաբերական իմաստ: Հայոց լեզվի դարձվածքներն ամփոփված են Ա. Սուբիասյանի և Ս. Գալստյանի կազմած «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» (Երևան, 1975թ.): Բառարանն ամփոփում է մոտ 20 հազար դարձվածք և ընդգրկում է գրականության մեջ ու ժո-



ղովրդախոսակցական լեզվում գործածվող կայուն կապակցությունները: Բացի դրանից՝ բառարանում ընդգրկված են նաև ժողովրդական խոսքում տարածված և դարձվածային արժեք ունեցող բազմաթիվ առած-ասացվածքներ, անծեքներ և այլն: Օրինակներ

թևավոր խոսքեր, օրհնանքներ, բառարանից:

Գլխին ԳԱԼ.—1. Գլխին խփել՝ հարվածել: Եղանակ մագու գլխին եկավ (Հ Բ Բ): 2. Մեկին դժբախտություն՝ փորձանք պատահել, Սա բա՞ն էր, որ եկավ մեր գլխին (Ը Թ): Զնայած ոգիից խմիչճենից իմ գլխին եկած փորձանքներին,—Գարեհատիկ Զոհր շարունակում էր ծաղրել և իր մտաշնչությամբ գրավել ինձ (Թ ա ր գ մ.): 3. Պատահել, կատարվել: Պետրոսը պատմեց յուր գլխի եկածը դժգոհությամբ խոսքերով (Մ): Մարգս շի իմանում, թե վաղն յուր գլխին ի՞նչ պետ է գա (Պ Պ):

Լեզուն ԳՏՆԵԼ (Մ Ե Կ Ի Լ Ե Տ, Ի Ր Ա Ր Լ Ե Տ),—Իրար հետ համերաշխ լինել, իրար հասկանալ, մի հարց լուծելու համար համաձայնության գալ, համաձայնել: Ավետիքն անդադար խնդրում, համոզում, հուրդարում էր աղչկան, բայց ոչ մի կերպ նրա հետ լեզու չէր գտնում (Թ Թ): Ես կարծում էի, որ հեշտությամբ լեզու կգտնեմ նրա հետ, բայց արի տես, որ մեր հարաբերությունները խիստ պաշտոնական դուրս եկան (Պ Զ): Կարելի էր համապատասխան հասունում խոստանալ, հետհետք լեզու գտնել (Թ ա ր գ մ.):



Վարժություն 7: Դարձվածաբանական բառարաններից գտե՛ք հետևյալ դարձվածքները, բացատրե՛ք դրանց իմաստները և դրանցով կազմե՛ք նախադասություններ:

- ա) Աչքը բռնել. բանը բուրդ է. գլխին դնել. ծայրը ծայրին հասցնել. ծանր խոսք:
- բ) Բակլան խաշած ցանել. գլխի ճարը տեսնել. դու ես, որ կաս. ինչպես ձուկը ջրում:
- գ) Անարգանքի սյունին գամել. անոսկոր լեզու. բարևը կտրել. կրակե շապիկ. պատռած բերան:

Գրություն



Վարժություն 8: Դարձվածաբանական բառարաններից գտե՛ք հետևյալ դարձվածքները, բացատրե՛ք դրանց իմաստները և նշե՛ք առաջացման աղբյուրը:

ա) Ավգյան ախոռ, աքիլլեսյան գարշապար, գորոյան հանգույց, դամոկլյան սուր, լուկուլիսյան խրախճանք, Մորփեոսի գիրկն ընկնել, պրոկրուստյան մահիճ:

բ) Երգ երգոց, բաբելոնյան աշտարակաշինություն, ձայն բարբառո հանապատի, Նոյի ագռավ, նոյան տապան, փշե պսակ, Գողգոթա ելնել:

գ) Անմեղ մեղավորներ, մեծապատիվ մուրացկաններ, հողմադացների դեմ կռվել, դառնանք մեր ոչխարներին, քաղբենին ազնվական:

ՄՐԵՎԵԼԱՅԱՅ-ՄՐԵՎՍՏԱՅԱՅ ԲԱՌՍՐԱՆՆԵՐ

Արդի գրական հայերենի երկու դրսևորումների՝ արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարների զուգադրման և դրանց տարբերությունների վերհանման նպատակով կազմվել են համապատասխան բառարաններ՝ նպատակ ունենալով հաղթահարելու հայության լեզվական տարանջատվածությունը և բավարարելու միմյանց գրականությանը առավել մոտիկից ծանոթանալու ձգտումը:

Նման մի աշխատություն՝ «Արևմտահայերենի բառարան» վերնագրով, 1991թ. հրատարակել է Ա. Սարգսյանը: Այս բառարանն ընդգրկում է մոտ 4 հազար բառ և արտահայտություն:

2000 թվականին լույս տեսավ Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարանը», որն ընդգրկում է շուրջ 16 հազար բառ և դարձվածքային



միավոր: Այս բառարանում գետեղված են այն բառերը, որոնք արևելահայերենում և արևմտահայերենում գոնե մեկ ձևախմբաստային հատկանիշով տարբերվում են իրարից: Այս բառարանի կարևոր առանձնահատկությունը նաև բառերի արևմտահայ արտասանությունը նշելն է, որով այն դառնում է ուղեցույց արևմտահայ բանավոր խոսքին տիրապետելու համար:



Օրինակներ.

Խնայուի [խընայվի], կբ.չբ. Խնայվել:
Խնդարարոյ [խընթափարօ], ած. Կենսորախ բնավորություն ունեցող:
Խնդայ [խընթայ], չբ. Ուրախանալ:
Խնդալիք [խընթալիք], ած. 1. Խնդալու, զվարճանալու: 2. Ծիծաղելի: 3. գ. Ծաղրի առարկա:
Խնդակցիլ [խընթակցիլ], չբ. 1. Ուրախությունը կիսել: 2. Շնորհավորել:
Խնդակցութիւն [խընթակցութիւն], գ. 1. Ուրախությունը կիսելը: 2. Շնորհավորանք:
Խնդամոյ [խընթամօյ], ած.գ. 1. Կատակասեր: 2. Տեղի-ամտեղի ծիծաղող:
Խնդիր [խընթիր], գ. 1. Հարց, մտահոգության նյութ: 2. Աղերսանք:
- *Խնդիր է գիտնալ* [խընթիր է քիտնալ], — Կարևոր է իմանալ:
- *Խնդիր հանել* [խընթիր հանել], — Հոգս, պրոբլեմ ստեղծել:
- *Խնդիր հարուցանել* [խընթիր հարուցանել], — 1. Վիճարանել: 2. Հոգս, պրոբլեմ ստեղծել:
- *Խնդիր հրահրել* [խընթիր հրահրել], — Գրգռել: «...»

Վարժություն 9: Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական» բառարանից դո՛ւրս գրե՛ք տասը բառ, որոնք գործածական են միայն արևմտահայերենում, և նշե՛ք դրանց արևելահայերեն համարժեքները:

Վարժություն 10: Օգտվելով նույն բառարանից՝ նշե՛ք տրված արևմտահայերեն բառերի արևելահայ տարբերակները:

1. քերդող, դրկել, ճիտ, իրապաշտ, աճապարել, հեռատեսիլ, ձայնասփյուռ, գործատուն, ընթերցավարտ, կաղանդ, խպնիլ, Էրիկ, գրատուն

2. կռփամարտ, ստկել, շտկել, կարգել, ախոյան, գրագետ, ծրար, հոն, ասանկ, ատիկա, խամաճիկ, մանչ, մելան, պուլպրիկ, ճատրակ, բանախոս, մեծկակ

3. գոց, բնալույծ, գայթիլ, ակռա, հյուլե, ատեն, կաճառ, գեղոն, գլխագիր, բարկօղի, ձայնանիշ, ուսուցչապետ, երգահան, նվագավար, ձեռնադաշնակ, աքասիա, ճարտարագետ


Վարժություն 11: Նշե՛ք հետևյալ հատուկ անունների արևելահայ տարբերակները:

1. Արժանթին, Ալճերիա, Աղեքսանդրիա, Ափրիկե, Պելճիբա, Պուլկարիա, Չվիցերիա, Շվեդ, Մարսիլիա, Մոնթրեալ, Պոյուսել, Պեյրուբ, Ռումանիա, Տանեմարթա, Պուբրեշ, Ֆրանսա, Լիթվանիա, Գանատա, Սպանիա, Տփղիս, Վոսիոր, Պարսելոն, Բարիզ, Նիս, Ռուսիա, Ֆիլատելֆիա

2. Ալպեր, Արթուր, Բաբգեն, Բոլ, Եղուարդ, Ժագ, Էսկար, Լուբվիկ, Ճանիկ, Ճոն, Ռոպեր, Պաղտասար, Վախթանկ. Ստեփաննոս, Այտա, Նուպար, Օննիկ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Ուղղագրական բառարանները ծառայում են ուսումնական նպատակների: Դրանք ընդգրկում են ուղղագրական դժվարություններ կայացնող բառերը: Հայ բառարանագրության մեջ հայտնի են բազմաթիվ ուղղագրական բառարաններ:



Դրանցից են Ն. Ալլավերդյանի «Նոր ուղղագրական բառարանը» (1930), Ա. Ղարիբյանի «Ուղղագրական համառոտ բառարանը» (1940), Ա. Ղարիբյանի և Գ. Պարիսի «Դպրոցական ուղղագրական բառարանը» (1956), որին կցված է նաև ուղղախոսական բառացանկ, և այլն: Նշված բառարանները անշուշտ նպաստել են դպրոցական-կրթական գործին, կատարել են իրենց վերապահված դերը:

Նման կարգի բառարանների մեջ նյութի ընդգրկման ամբողջականությամբ և գիտական մոտեցումներով աչքի է ընկնում Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» (1973): Այն պարունակում է արդի գրական հայերենի բառերի ու եզրույթների մոտ 152 հազար միավոր: Բառացանկում տեղ են գտել նաև տարածված հապավումները: Իբրև նորմատիվ բառարան՝ տրվում են նաև այն բառերի արտասանական տարբերակները, որոնց գրության ու արտասանության միջև առկա են տարբերություններ, այսինքն՝ կա-

տարվում է ուղղախոսական նորմը կարգավորելու փորձ: Վերջապես, այս բառարանը վստահելի ուղեցույց է նաև բառերի ու եզրույթների ոճական ու կիրառական հարստությունը յուրացնելու համար:

Ամբարձել
Ամբարձիկ (տեխ.)
Ամբարձիչ, -ձիչ, -ձիչի (տեխ.)
Ամբարձիչային (տեխ.)
Ամբարձ (իշավար (մսեղ.))
Ամբարձիչավոր (տեխ.)
Ամբարձիչատակ
Ամբարձչաբեռնիչ, -ի (տեխ.)
Ամբարձչորդ [-բց-բթ] (մսեղ.)
Ամբարձուղեջ (հեղ.)
Ամբարձում, -ձման

Վերջին տարիներին լույս են ընծայվել մի շարք ուղղագրական բառարաններ, որոնցից նշելի են Աշոտ և Քնարիկ Սուքիասյանների «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարանը (2002թ.), Փ. Մեյթիխանյանի «Չայերենի ուղղագրական նոր բառարանը» (2005թ.):

Վարժություն 12: 3. Բարսեղյանի «Չայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարանից» դ՛րս գրեք.

- ա) Ուղղագրական դժվարություն ներկայացնող տասը բառ:
- բ) Գրության և արտասանության տարբերություն ունեցող տասը բառ:
- գ) Տարբեր բնագավառների վերաբերող տերմիններ և որոշե՛ք դրանց կիրառության ոլորտը:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Թարգմանական բառարանները լինում են երկլեզվյան և բազմալեզվյան, իսկ նյութի ընդգրկման առումով բաժանվում են երկու տեսակի՝ թարգմանական ընդհանուր բառարաններ և թարգմանական տերմինաբանական բառարաններ:

Թարգմանական ընդհանուր բառարաններում ընդգրկվում են երկու (կամ ավելի) լեզուների համագործածական բառերն ու դարձվածքները, տրվում են դրանց իմաստային համարժեքները այլ լեզուներում: Չայ բառարանագրությունը հարուստ է թարգմանական բառարաններով:

Գրություն


Դրանցից առավել հայտնի են Յ. Դադբաշյանի «Լիակատար ռուս-հայերեն բառարանը» (Թիֆլիս, 1908թ.), պարունակում է մոտ 125 հազար բառ, Նույնի «Լիակատար հայ-ռուսերեն բառարանը» (Թիֆլիս, 1911թ.), պարունակում է մոտ 70 հազար բառ և դարձվածքային միավոր, Թ. Ավդալբեկյանի, Պ. Սոտնիկյանի, Ե. Տեր-Մինասյանի, Վ. Փոթեյանի երկհատոր «Ռուս-հայերեն նոր բառարանը» (Եր., 1933–35), ընդգրկում է մոտ 80 հազար բառ ու արտահայտություն:

Խորհրդային շրջանում լույս տեսած ռուս-հայերեն բառարանների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Ե. Տեր-Մինասյանի, Վ. Փոթեյանի, Յ. Կուսիկյանի, Յ. Յամբարձումյանի, Մ. Գևորգյանի կազմած «Ռուս-հայերեն բառարանը» (Եր., 1954–58):

Հայտնի է նաև Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանը» (Եր., 1968), որն առ այսօր մնում է ամենագործածականը նման բառարանների մեջ:

Հայ բառարանագրությունը հարուստ է նաև եվրոպական լեզուներին առնչվող թարգմանական բառարաններով: Հայտնի են՝ Յ. Չազմազճյանի «Ընդարձակ բառարան անգլերեն-հայերեն» (Բոստոն, 1922թ.), Մ. Գույումճյանի «Ընդարձակ բառարան հայերեն-անգլերեն» (Կահիրե, 1950թ.), Գ. Լուսինյանի «Նոր բառգիրք ֆրանսահայ» (1-ին հ. Փարիզ, 1894–1903, 2-րդ հ. Պոլիս, 1910թ.), Գ. Անդրեասյանի «Գերմաներեն-հայերեն բառարանը» (Եր., 1976թ.), Յ. Ասմանգուլյանի «Անգլերեն-հայերեն բառարանը» (Եր., 1984թ.), Ա. Լազարյանի, Ն. Յամբարձումյանի, Ա. Հայրապետյանի «Անգլերեն-հայերեն բառարանը», «Հայերեն-անգլերեն բառարանը»՝ Ն. Բարաթյանի խմբագրությամբ (Եր., 2004թ.) և այլն:

Թարգմանական-տերմինաբանական բառարաններն ընդգրկում են մի լեզվի որոշ բնագավառի տերմինները և տալիս են դրանց համարժեքները այլ լեզուներով: Նման բառարան-տերմինաբաններից հայտնի են Մ. Աբեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանը» (Եր., 1925թ.), Թ. Ավդալբեկյանի «Տնտեսագիտական տերմինների ռուս-հայերեն բա-



նարանը» (Եր., 1964թ.), «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը» (Եր., 1957թ.), մի շարք բժշկական տերմինների բառարաններ, ինչպես՝ Մ. Արեղյանի, Լ. Յովհաննիսյանի, Ա. Տեր-Պողոսյանի «Լատիներեն-ռուս-հայերեն բժշկական բառարանը» (Եր., 1951թ.) և այլն: Նորագույն շրջանի ուշագրավ բառարաններից են Ռ. Ղազարյանի բուսանունների և կենդանիների անուններին նվիրված բազմալեզվյան բառարանները:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Ինչ տեսակների են բաժանվում բառարանները:
2. Ստուգաբանական բառարաններում ինչ տեսանկյունով է ներկայանում բառը:
3. Որո՞նք են հայերենի նորագույն բացատրական բառարանները:
4. Ինչ բառամթերք է ներկայացվում գավառական (բարբառային) բառարաններում:
5. Ո՞ր բառարանում է տրվում բառերի ճիշտ գրությունը:

Վարժություն 13: Գտե՛ք, թե որ բառահոդվածը բառարանի որ տեսակին է բնորոշ:

ա)

Սեղան, ի, գ. 1. Սովորաբար շորս ոտքերի կամ որևէ կարգի հենարանի վրա ամրացված տախտակյա (մետաղյա, պլաստմասսայի են) հարթ մակերեսով կարասի՝ զանազան գործածությունների համար: Հացի՝ հանդեսների՝ թղթախաղի ա.: 2. փխբ. Ատանդիղեններ, այն, ինչ որ գրվում է սեղանին՝ ճաշի, բնօրհիթի, հյուրասիրության են ժամանակ, ինչ համեզ սեզաններ ունենե՛ք (Ավ. Խահակյան): 3. փխբ. Հացկերույթ, ճաշկերույթ, հրավերք: Եղևու նրան սիրելի անձնավարություննե՛ք... շնանակցեցին սեղանին (Րաֆֆի): «...»

-Սեղան բազմել—ճաշի՝ ճաշկերույթի նըստել:

-Սեղան բանալ՝ բացել՝ բաց անել—1. ճաշկերույթ՝ հրավերք սարքել: 2. ճաշի համար սեղանը պատրաստել, ճաշի ուտելիղենը և պարագաները սեղանի վրա դնել՝ դասավորել: «...»

բ)

Սեղան, ի 1. Стол. 2. Званый обед. 3. Алтáрь. 4. (կկեղ.) Жертвенник. 5. (երկր.) Трапéция. ◊ Աշակերտական սեղանին նստել садиться, сесть за парту. Հացեների սեղան անըստный стол. Սեղան բազմել сесть, восседа́ть, воссесть за стол, садиться, сесть обеда́ть. Կահալ սեղան Լոմբերный, зелéный, карточный стол. Կյոս սեղանի շուրջը за круглым столом. Սեղան բանալ՝ բաց անել՝ գցել накрывáть, накрыть стол, собирать, собрать на стол. Սեղանը նավաքել убирать, убрáть, собирать, собрáть со стола. Սեղան(ը) գառատել накрывáть, накрыть (на) стол. Սեղանը վեր Բազել, տե՛ս Սեղանը նավաքել: Սեղանը տախտակ պիր оживился. Սեղան նստել садиться, сесть за стол. Սեղան սարքել, տե՛ս Սեղանը պատրաստել: Սեղանի աղ столовая соль. Սեղանի գինի столовое вино. Սեղանի բենիս (սպորտ.) настольный теннис, пинг-понг.

զ)

ՍԵՂԱՆ, ո հլ. (խակ Յուդթ. դ. 10, Եղեկ. գ. 5 գրծ. սեղանօֆ) «սեղան, մանաւանդ ճաշի. 2. կերակուր, հացկերոյթ, կոշունք. 3. կումայափոխի ևն սեղան. 4. զոհի սեղան, զոհարան, բազին. 5. տաճարի սեղանը. 6. Քրիստոսի խաչը» ՄԳր. Ագաթ. Ոսկ. Եփես. «ծամող ատամ» Տաթև. ձմ. խղ. որից սեղանատ «...»

ԳԻՌ.—Ջղ. Սլմ. Սլ. Վն. սեղան, Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Պլ. Սեք. սեղան, Ազլ. սէղոն, սէղան, Ասլ. սէղա, ՀՏ. ՀՄշ. սէղօն, Ջթ. սէղօն, սէղոն, որոնք նշանակում են «սեղան». խակ Սվեղ. սիդուն «կերակրի սալա», Ննթ. սէղան «սեղանատամ» «...»

ՆՁԲ պրս. շիլան (իմա՝ ܣܠܢܐ sēlān «Քաղաւորական սեղան», որից ևն արևել. թրք. ܣܠܢܐ sēlan «սուլթանների և էմիրների սեղան «...»

դ)

ՍԵՂԱՆ մ ա թ Ե մ ա տ Ի կ ա յ ու մ, քառանկյուն, որի երկու կողմերը զուգահեռ են, իսկ մյուս երկուսը՝ ոչ: Ջուգահեռ կողմերը կոչվում են Ս-ի հիմքեր, իսկ ոչ զուգահեռ կողմերը՝ Ս-ի սրուերքներ (կողմնային կողմեր): Հավասար սրուերքներ ունեցող Ս. կոչվում է հավասարասրուն Ս.: Եթե Ս-ի սրուերքերից մեկը ուղղահայաց է հիմքերին, ապա Ս. կոչվում է ուղղանկյուն Ս.: Ս-ի սրուերքերի միջեակետերը միացնող հատվածը (Ս-ի միջին գիծ) զուգահեռ է Ս-ի հիմքերին և հավասար նրանց



Կիսազումարին: Ս-ի մակերեսը հավասար է միջին գծի և բարձրության (հիմքերի հեռավորության) արտադրյալին:

Մեծերը՝ հայոց լեզվի մասին

Այո՛, մեր նախնիները մեզ և աշխարհին փոքր ժառանգություն չեն կտակել: Բայց մենք պիտի հասկանանք և հասկանալով շնորհանք երբեք, որ մեր ժառանգության մեծագույն գանձը մեր լեզուն է:

Այդ լեզուն «մայրենի» կոչելը մեծ պատիվ է:

Այդ լեզվով խոսելն ու մտածելը մեծ բախտ է:

Բայց այդ լեզվի խնամքը, նրա անաղարտությունը, նրա պահպանությունն ու պաշտպանությունը դրված է մեզ վրա»:

Պարույր Սեակ



ՏԵՔՍՏԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Ինչպես որ բառը, բառակապակցությունը, նախադասությունը ունեն իրենց կառուցվածքային առանձնահատկությունները, այնպես էլ տեքստը՝ որպես լեզվական միավոր, ունի կառուցվածքային մի շարք հատկանիշներ: Տեքստը պետք է այնպիսի կառուցվածք ունենա, որ նրանում արտահայտված մտքերը կապակցվեն իրար, հակասություններ, անհամապատասխանություններ չառաջանան, տեքստում ասվածը լինի ճիշտ և հասկանալի: Տեքստն ունի որոշակի մասեր: Այդ մասերի հերթականությունն ու իմաստային կապերը ծառայում են ընդհանուր իմաստի ճիշտ արտահայտմանը: Տեքստը հիմնականում ունենում է **սկզբնամաս, հիմնամաս և ավարտամաս:**

Սկզբնամասում ներկայացվում են ասելիքի նպատակները, առաջ բաշվելիք խնդիրները, տեքստում գործածվող հասկացությունները և այլն, այսինքն՝ ստեղծվում են պայմաններ, որ ընթերցողը կամ ունկնդիրը տրամադրվի, պատրաստ լինի տեքստը ընկալելուն:

Հիմնամասում ներկայացվում է հեղինակի բուն ասելիքը:

Ավարտամասում ամփոփվում է ասելիքը, կատարվում են եզրակացություններ ու ընդհանրացումներ:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ հիմնական մասեր ունի տեքստը:
2. Ի՞նչ է ներկայացվում սկզբնամասում:
3. Ի՞նչ է ներկայացվում հիմնամասում:
4. Ի՞նչ է ներկայացվում ավարտամասում:

Վարժություն 1: Կարդացե՛ք և առանձնացրե՛ք սկզբնամասը, հիմնամասը և ավարտամասը:

Հայոց ռազմի աստված խաժակն Վահագնի և սիրո աստվածուհի կճափայլ (*մարմարափայլ*) Աստղիկի հարսանիքն էր: Աստվածների հայր Արամազդը Աստղիկի ուսին սպիտակափառ մի լավաշ էր գցել:

Սակայն փեսայի տուն գնալու ճանապարհին լավաշն ընկավ հարսի ուսից: Վահագնի սիրով արբած Աստղիկը չնկատեց դա: Արամազդը զայրացավ և Աստղիկին ասաց.

- Հացը գետնին գցողը չի կարող կին ու մայր դառնալ:

Հարսանիքն անմիջապես խաթարվեց: Այդպես էլ Վահագնին ու Աստղիկին չհաջողվեց ամուսնանալ, և նրանք ամբողջ կյանքում մնացին սիրահարներ:

Այնուհետև Հայաստանում սովորություն դարձավ հարսի ուսին լավաչ գցելը: Հարսները զգույշ են քայլում հարսանիքի ժամանակ, թե չէ լավաչը կսահի նրանց ուսից, և նրանք կընկնեն Աստղիկ աստվածուհու օրը:

Հայկ Խաչատրյան

Վարժություն 2: Կարդացե՛ք և դասավորե՛ք սկզբնամասը, հիմնամասը և ավարտամասը: Մեկնաբանե՛ք, թե ինչի հիման վրա տարբերակեցիք տեքստի մասերը:

Կան անապատային և՛ բույսեր, և՛ կենդանիներ, որոնք տարբեր ձևերով են պաշտպանվում շոգից ու ջրագրկումից: Բույսերի մեծ մասը փոքր տերևների շնորհիվ կրճատում է գոլորշիացումը, իսկ կենդանիները ցերեկը մեծ մասամբ թաքնվում են խոր փորված զով բներում և դուրս են գալիս գիշերը կամ վաղ առավոտյան, երբ ավազը դեռ չի շիկացել: Նրանց օրգանիզմները դիմացկուն են. անապատային կենդանիները կարողանում են երկար ժամանակ մնալ առանց ջրի և սննդի:

Թվում է, թե անապատներում չպետք է լինեն ո՛չ բույսեր, ո՛չ կենդանիներ, քանի որ նման չորային պայմաններում չեն գոյատևի:

Անապատները Երկրի շոգ և չորային շրջաններն են. այնտեղ ջրի գոլորշիացումը մինչև երեսուն անգամ գերազանցում է մթնոլորտային տեղումների քանակը:

Ըստ «Դպրոցական մեծ հանրագիտարանի»

Գիտե՞ք, որ...

Թուրքն սկսել է արտադրվել Չինաստանում Զ.ա. 123թ.:

Թղթի գյուղը Հայաստան է հասել IX-X դարերում, սակայն «թուրթ» բառը հայերենում կար գրաբարից և նշանակում էր գրություն, գրվածք, նամակ, գիրք:

ՎԵՐՆԱԳԻՐ ԵՎ ԲՆԱԲՆ

Ամենապարզ վերնագիրը ամենալավն է:

Իվան Տուրգենև (ռուս գրող)

Գրավոր տեքստերը, երբեմն էլ նրանց հատվածները մեծ մասամբ ունենում են վերնագիր: Վերնագիրը այն բառը, բառակապակցությունը կամ նախադասությունն է, որը բերվում է որպես տվյալ տեքստի կամ նրա հատվածի անուն: Տեքստերը կարող են նաև վերնագիր չունենալ: Օրինակ՝ քառյակները և այլ չափածո փոքր ստեղծագործությունները, գործնական տարբեր գրությունները: Հեղինակները երբեմն բանաստեղծություններն էլ չեն վերնագրում: Վերնագիր չունեցող տեքստի մասին խոսելիս տեքստը սովորաբար անվանում են նրա առաջին մի քանի բառերով: Օրինակ՝ Ավետիք Իսահակյանի «Ծաղիկ էի նորաբողբոջ...», «Գիշերն եկավ, զով-հովն ընկավ...», «Օտա՛ր, ամայի՛ ճամփեքի վրա...» և շատ այլ բանաստեղծություններ վերնագրեր չունեն և անվանվում են առաջին տողով:

Վերնագիրը ընդհանրացնող, խորհրդանշական դեր ունի, այսինքն՝ վերնագիրը կարդալով՝ իմանում ենք, թե ընդհանուր առմամբ ինչին է վերաբերում տեքստը: Գիտական և վարչական տեքստերի վերնագրերը մեծ մասամբ ուղղակիորեն արտահայտում են տեքստի ընդհանուր բովանդակության անվանումը, օրինակ՝ «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Հայոց լեզու», «Ձեռնարկության եկամուտների տարեկան հաշվետվություն» և այլն: Գեղարվեստական ստեղծագործությունների վերնագրերը սովորաբար ավելի հուզական են լինում և խորհրդանշող բնույթ են ունենում, ինչպես Հովհ. Թումանյանի «Չարի վերջը», Շիրվանզադեի «Բառսը», «Պատվի համարը», Պ. Սևակի «Անլռելի գանգակատունը» և այլն: Տեքստերը կարող են անվանվել նաև գլխավոր հերոսների անուններով, օրինակ՝ Հովհ. Թումանյանի «Անուշը», Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարին», Մուրացանի «Գևորգ Մարգալետունին», Րաֆֆու «Սամվելը» և այլն:

Տեքստերը և նրանց հատվածները կարող են ունենալ նաև ենթավերնագրեր: Եթե տեքստի ընդհանուր վերնագրից հետո է նշվում ենթավերնագիր, ապա դա մասնավորեցնում, կոնկրետացնում է ընդհանուր վերնագիրը: Օրինակ՝ «Հայոց լեզու» վերնագրից հետո կարող է նշվել «Շարահյուսություն»: Տեքստի հատվածների ենթավերնագրերը անվանում են տվյալ հատվածը, օրինակ՝ «Գոյական անուն» վերնագրով

ԴԱՍԿԱԿ
ԻՎԱՆ

տեքստում կարող են լինել «Գոյականի թիվը», «Գոյականի հոլովումը» ենթավերնագրերը, որոնք նշում են, թե ինչին է վերաբերում տվյալ հատվածը:

Տեքստերը կամ նրանց հատվածները կարող են ունենալ նաև **բնաբան**: Բնաբանը խորիմաստ ասույթ է, որը ընդհանրացնող, բնութագրող դեր է կատարում տվյալ տեքստի բովանդակության համար: Բնաբանը կարող է լինել տվյալ տեքստի հեղինակի ասույթ, այլ հեղինակի ասույթ կամ որևէ առած, ասացվածք և այլն: Բնաբանը հիմնականում գրվում է վերնագրից հետո աջ կողմում: Ահա Գ. Շիրազի պոեմներից մեկի վերնագիրը և բնաբանը.

ԲԻԲԼԻԱԿԱՆ

*Ցավը տվեց սարերին,
Սարերը չտարան...
Ցավը տվեց մարդուն,
Սարդը տարավ:
(Մոդու խոսքերից)*

Պ. Սևակը «Ականջդ բե՛ր՝ ասեմ» շարքի համար բնաբան է ընտրել Վ. Տերյանի «Ես էլ դու եմ, ես չկամ...» տողը: Րաֆֆին «Խենթը» վեպի համար որպես բնաբան միանգամից երեք առած է բերել. «Խենթը մի քար գլորեց փոսը, հարյուր խելոքներ հավաքվեցան, չկարողացան դուրս հանել». «Մինչև խելացին կմտածե, խենթը գետից անց կկենա». «Խենթից՝ ուղիղ պատասխան»: Ա. Բակունցի «Կյորես» վեպն ունի «O tempora, o mores... Օ՛ Չանգեզուր, օ՛ Կյորես...» բնաբանը, որը ստեղծել է Բակունցը (առաջին մասը նշանակում է *օ՛ ժամանակներ, օ՛ բարբեր*, որը հռոմեացի ճարտասան Մարկոս Տուլիոս Ցիցերոնի (Ք.ա. 106–43թթ.)՝ թևավոր խոսք դարձած արտահայտությունն է. ասվել է հռոմեացի քաղաքական գործիչ Կատիլինայի դատավարության ժամանակ):

ՀԱՐՑՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է վերնագիրը:
2. Ինչպիսի՞ն են լինում վերնագրերը:
3. Ի՞նչ է ենթավերնագիրը:
4. Ի՞նչ է բնաբանը և ի՞նչ դեր ունի:



Վարժություն 3: Հետևյալ վերնագրերով գրե՛ք ստեղծագործական փոքրիկ շարադրություններ:

«Ես մեղավոր չեի», «Անակնկալ հանդիպում», «Ծննդյան տոնի նվեր», «Ճիշտ ընտրություն», «Լռության ձայնը», «Մեծ աշխարհի իմ անկյունը», «Պատահական հանդիպում», «Ճանապարհորդություն դեպի...», «Առեղծվածային նամակ»:

Վարժություն 4: Տրված բառերով գրե՛ք ստեղծագործական փոքրիկ շարադրություններ և ընտրե՛ք համապատասխան վերնագրեր:

ա) Ինքաթիռ, վայրէջք, հոծ բազմություն, նեոնային լույսեր, ծաղկեփնջեր, համբույրներ, այրող հայացք, հիշողություններ, անցյալի բեռ, հույսի կամուրջներ:

բ) Չբոսայգի, ծառուղի, հանդիպում, ներել, այրող, կարոտ, զղջում, ուրախության արցունքներ, հավատարմություն, մեծահոգություն, լճակ, երջանկություն:

Վարժություն 5: Փորձե՛ք վերնագիր տալ բերված բանաստեղծություններին, որոնք հեղինակները չեն վերնագրել:

Ծիլը ծլեց մայթի չսպիացած վերքից,
Փողոցներով անցավ տաք, միջանցուկ բամին,
Կարմիր դարձան բոլոր բողբոջները մեկից,
Եվ գարունը եկավ հենց այդ ժամին:

Պատից, պատշգամբից, տանիքներից դեռ թաց
Ճերմակեղեն կախվեց ու փռփռաց բամուն.
Ձմեռն իր սպիտակ դրոշները պարզած՝
Լուռ հանձնվեց կանաչ իր թշնամուն:

Հրաչյա Հովհաննիսյան

Կորցրածը շատ,
Գտնվածը քիչ.
Իսկ ո՞ր էի ես
Այսբան անհատնում ուժերս թափում.
Փորձված, իմաստուն
Ու բարի՛ մարդիկ,



Գուցե դո՞ւք ասե՞ք՝
Աշխարհի վրա
Երջանկությունը ինչո՞վ են չափում:


Մարո Մարգարյան

Ճամփից հեռու է ծնվել աղբյուրը,
Կարկաչը նրա ոչ ոք չի լսել,
Ու ակից բխող սառնորակ ջուրը
Մի տխո՛ւր-տխո՛ւր երգով է հոսել:
Քամիներն են խենթ հետո օրեցօր
Աչքի մեջ նրա լցրել հող ու խիճ,
Եվ անհուն վիշտը սրտի մեջ՝ մի օր
Աղբյուրը, ավա՛ղ, դարձել է ճահիճ...:

Լիպարիտ Մարգարյան

Վարժություն 6: Շարունակե՛ք տրված պատմությունը՝ ընտրելով հետևյալ վերնագրերից մեկը՝ «Անակնկալ հանդիպում», «Սոռազված պատմություն», «Չերոսական արարք», «Պահպանե՛ք մայր բնությունը», «Ինչո՞ւ ես տխրեցի»:

Չբոսայգու շատրվանները նոր էին վերանորոգել, և կարծես նրանք էլ էին ուրախացել ու սովորականից ավելի բարձր էին խշշում: Գուցե ինձ էր այդպես թվում, որովհետև ես երկար էի սպասել դրանց նորոգման ավարտին: Չբոսայգին մեր տան մոտ էր գտնվում, և գարնան սկզբից մինչև աշնան վերջը գրեթե ամեն երեկո գնում էի մի փոքր հանգստանալու: Ամեն եղանակին այգին մի յուրահատուկ ձևով էր հմայում. գարնանը ուրախացնում էին նոր բողբոջող ծառերն ու հետզհետե փարթամացող թփերը, ամռանը ամեն ինչ աչք էր շոյում իր գմբուխտ կանաչով, իսկ աշնանը այգին բոցավառվում էր աչք շլացնող բազմազան գույներով: Վերջին տարիներին այգին անխնամ էր. որոշ ծառեր չորացել էին, այստեղ-այնտեղ փշաբույսեր էին աճել, նստարանները, ցանկապատերն ու խողովակները վաղուց չէին ներկվել: Բայց այս տարի զբոսայգին բարեկարգվեց, ու հիմա ամենուր գույնզգույն նստարաններ են,



ԳՐԱԴԱՐԱՆ

բուրավետ ծաղիկներ, գեղեցիկ ծառուղիներ, ու գվարթ խշշում է շատրվանը: Ես իմ ամենօրյա զբոսանքն էի կատարում ու հիանում բնության ու մարդու ստեղծածի այդ գեղեցիկ համադրությամբ, երբ հանկարծ....

Վարժություն 7: Գրե՛ք հինգ բանաստեղծության, հինգ պատմվածքի, հինգ հեքիաթի վերնագիր՝ նշելով նրանց հեղինակներին:

Վարժություն 8: Կարդացե՛ք Պարույր Սևակի «Վերնագիրը վերջում» շարքը և քննարկե՛ք վերնագրման գեղարվեստական յուրահատկությունները:

Վարժություն 9: Տրված առածներից ու թևավոր խոսքերից բնաբաններ՝ ընտրե՛ք Հովհաննես Թումանյանի «Չարի վերջը», «Մի կաթիլ մեղրը», Աթաբեկ Խնկոյանի «Ճպուռն ու մրջյունը», Դերենիկ Դեմիրճյանի «Պույ-պույ մուկիկը» ստեղծագործությունների համար:

Ազահությունը հենց ազահի թշնամին է:

Չնչին բանից՝ շատ աղմուկ:

Ծառի տակ պառկողի բերանը խնձոր չի ընկնում:

Փորձված աղվեսը երկու ոտքով է թակարդն ընկնում:

ՍՈՍՉԱԲԱՆ, ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՉԱԲԱՆ

Տեքստն ունի սկզբնամաս, հիմնամաս և ավարտամաս: Ծավալուն տեքստերի դեպքում սկզբնամասը և ավարտամասը կարող են առանձնացված լինել: Սկզբնամասն առանձնացվում է որպես առաջաբան, նախաբան կամ ներածություն, իսկ ավարտամասը՝ վերջաբան:

Առաջաբանում նախնական խոսք է ասվում, թե ինչ պետք է ներկայացվի հիմնամասում: Առաջաբանները տարբեր են լինում: Գիտական տեքստերի առաջաբաններում սովորաբար նշվում է, թե ինչ նյութ է ուսումնասիրվելու, ինչ մոտեցումներ է կիրառել հեղինակը, ինչ կառուցվածք ունի տվյալ ուսումնասիրությունը, ինչ տերմիններ են

գործածվել, ինչ կարծիքներ կան քննվող հարցերի վերաբերյալ և այլն: Վարչական տեքստերում ներկայացվում են փաստաթղթի դերն ու նպատակը, ում է այն ուղղված և այլն: Գեղարվեստական տեքստերի առաջաբաններում հեղինակները շարադրում են իրենց գեղագիտական ըմբռնումները, ստեղծագործություններում կատարած հարցադրումները, սակայն կարող են նաև պարզապես գեղարվեստական մուտք ստեղծել, որով ընթերցողին նախապատրաստում են ընթերցանության: Օրինակ՝ Խ. Աբովյանը «Վերք Յայաստանի» վեպի առաջաբանում խոսում է գրականության այնպիսի հարցերի մասին, որոնք այդ ժամանակաշրջանում մեծ կարևորություն ունեին. մասնավորապես անդրադառնում է ստեղծագործության լեզվի խնդրին, բովանդակությանը և հերոսի ընտրությանը: Յ. Թումանյանը «Անուշ» պոեմի նախերգանքում ներկայացնում է փերիների թախծալի երգը վաղամեռ սիրահարների մասին՝ դրանով նախապատրաստելով ընթերցողին կարդալու հուզիչ մի պատմություն: Առաջաբանները վերնագրվում են տարբեր ձևերով՝ «Առաջաբան», «Նախաբան», «Յեղինակի կողմից», «Երկու խոսք», պոեմներում՝ «Նախերգանք», «Նախերգ» և այլն:

Ներածությունը առաջաբանից տարբերվում է մի քանի հատկանիշներով: Նախ՝ առաջաբանը վերաբերում է ամբողջ տեքստին, իսկ ներածությունն անհրաժեշտության դեպքում կարող են ունենալ նաև տեքստի համեմատաբար ընդարձակ հատվածները, օրինակ՝ գլուխները: Ներածությունը նախորդում է հիմնականում գիտական տեքստերին, քանի որ ներածության մեջ շարադրվում են գիտական սկզբունքներին վերաբերող նախնական տեղեկություններ: Ներածությունները վերնագրվում են տարբեր ձևերով՝ «Ներածություն», «Ներածական գիտելիքներ», «Ընդհանուր գիտելիքներ», «Ընդհանուր տեղեկություններ» և այլն:

Վերջաբանում կատարվում են եզրակացություններ ու ընդհանրացումներ, գեղարվեստական տեքստերում նաև իրադարձությունների հանգուցալուծումներ և այլն: Վերջաբանները վերնագրվում են տարբեր ձևերով՝ «Վերջաբան», «Եզրակացություններ», «Վերջերգ» (պոեմներում) և այլն:

Տեքստի ներածությունը, հիմնամասը և եզրակացությունները ստեղծում է տեքստի հեղինակը, մինչդեռ առաջաբանը կամ վերջաբանը կարող է գրել նաև ուրիշ անձ, որը ներկայացնում է տեքստի հեղինակին, տեքստի տարբեր հատկանիշները, վերլուծում ու արժևորում է դրանք:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է առաջաբանը և ի՞նչ դեր ունի:
2. Ինչո՞վ է տարբերվում ներածությունն առաջաբանից:
3. Ինչո՞վ են տարբերվում գիտական և գեղարվեստական տեքստերի առաջաբանները:
4. Ի՞նչ է վերջաբանը:

Վարժություն 10: Նշե՛ք ձեր կարդացած գրքերից երեքը, որոնք ունեն առաջաբան կամ վերջաբան, և մեկնաբանե՛ք, թե ինչ հարցեր են առաջ քաշված առաջաբանում կամ վերջաբանում:

Վարժություն 11: Հանրագիտարաններից և այլ աղբյուրներից օգտվելով՝ գրե՛ք փոքրիկ աշխատանքներ հետևյալ թեմաների մասին՝ առանձնացնելով առաջաբանը և վերջաբանը:

«Հայ մանրանկարչությունը», «Հայ ճարտարապետությունը», «Իմ սիրած գրողը», «Իմ սիրած նկարիչը», «Իմ ծննդավայրը»:

Գիտե՞ք, որ...

Հայ բանաստեղծներից առաջինը, որի գործը լույս է տեսել տպագրությամբ, Գրիգոր Նարեկացին է. «Մատյան ողբերգության» պոեմից մի հատված գետնովել է հայ առաջին տպագիր գրքում՝ «Ուրբաթագրքում» (1512թ.): Առանձին գրքով ամբողջությամբ առաջինը տպագրվել է Ներսես Օսորիալու «Հիսուս որդի» պոեմը (1643թ.): Առաջել Դավրիժեցին առաջին հայ պատմիչն է, որի «Պատմությունը» լույս է տեսել իր կենդանության օրոք (1669թ.):

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Տեքստը կազմվում է նախադասությունների միջոցով, սակայն տեքստ կազմող բուն միավորները առանձին նախադասությունները չեն: Տեքստի կազմում առանձնացվում են պարբերություններ, որոնք իմաստային համեմատաբար ինքնուրույն հատվածներ են: Տեքստի բաղադրիչ միավորը պարբերությունն է: **Պարբերությունը նախադասություն է կամ նախադասությունների կապակցություն, որը, տեքստի կազմում իմաստային որոշակի ինքնուրույնություն ունենալով, հանդես է գալիս որպես տեքստի բաղադրիչ նվազագույն միավոր:** Մեկ պարբերությունն

Էլ ինքնին կարող է հանդես գալ որպես տեքստ: Բանավոր տեքստում պարբերություններն առանձնանում են արտասանական դադարներով, որոնք ավելի մեծ են, քան նախադասությունների միջև եղած դադարները: Գրավոր տեքստում յուրաքանչյուր նոր պարբերություն գրվում է նոր տողից:

Պարբերությունների կազմի մեջ մտնող նախադասությունները իմաստային և քերականական սերտ կապեր ունեն: Սակայն պետք է նշել, որ պարբերությունների առանձնացումը կարող է նաև ինչ-որ չափով պայմանական լինել: Երբեմն հեղինակը որևէ միտք շեշտելու համար կարող է առանձնացնել և առանձին պարբերությամբ գրել մեկ կամ մի քանի նախադասություն, թեև իմաստային տեսակետից դրանք չեն առանձնանում: Օրինակ՝ Ա. Բակունցի «Մինա բիբին» պատմվածքն սկսվում է այսպես. *«Մինա բիբուն ասել էին, որ երեկոյան հարսն ու որդին գյուղ պիտի հասնեն: Եվ դեռ երեկո չեղած՝ նա կտրից տուն չէր ուզում գա:»*

Կանգնել էր կտուրի վրա՝ մի ձեռքը ճակատին, մայր մտնող արևի շողերից աչքերը ծածկելով՝ նայում էր հեռուն՝ կածանի կեռումեռ պտույտին, և սպասում էր, թե երբ են երևալու:»

Առաջին երկու նախադասություններն առանձնացված են մեկ պարբերության մեջ, թեև երրորդ նախադասությունը ևս իմաստով սերտորեն կապված է նրանց: Հեղինակը այդպիսի առանձնացումով շեշտել է սպասողի անհամբերությունը, սպասման մեծությունը: Եթե շեշտման անհրաժեշտություն չկա, հեղինակները պարբերություններն առանձնացնում են՝ իմաստային ամբողջականությունից ելնելով: Պարբերությունները պարտադիր առանձնացվում են նաև մեջբերվող ուղղակի խոսքի դեպքում: Անջատման գծիկով գրվող յուրաքանչյուր մեջբերվող խոսք և նրան հաջորդող նոր նախադասությունը անպայման գրվում են նոր տողից:

Պարբերության նախադասությունների կապերի սերտությունը պայմանավորվում է տարբեր միջոցներով ու եղանակներով: Առաջին հերթին պարբերության նախադասությունները միահյուսվում են իմաստներով: Դրանից բացի՝ կարևոր են նաև ներկայացվող գործողությունների տրամաբանական հաջորդականությունը, նախադասությունների շարադասությունը, դերանունների (**այս, այդ և այլն**), շաղկապների (**որովհետև, որպեսզի, ուստի և այլն**), վերաբերականների (**ընդհակառակը, վերջիվերջո և այլն**), հոմանիշ բառերի գործածությունը, գեղջումները, կրկնությունները և այլն:



ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ո՞րն է տեքստի հիմնական բաղադրիչ միավորը:
2. Ի՞նչ է պարբերությունը:
3. Ինչպե՞ս են առանձնացվում պարբերությունները:
4. Ինչպե՞ս են կապակցվում պարբերության նախադասությունները:

Վարժություն 12: Իմաստային կապերի հիման վրա առանձնացրե՛ք տրված տեքստի չորս պարբերությունները:

Ձմերուկը դոմագիների ընտանիքի ներկայացուցիչ է: Նրա հայրենիքը Աֆրիկան է: Հարավային Աֆրիկայի տափաստաններում մինչև այժմ էլ աճում է նրա վայրի տեսակը: Ձմերուկը հնուց տարածված էր հատկապես Աֆրիկայի հյուսիսում գտնվող Եգիպտոսում, որի մասին վկայում են հիանալի պահպանված պատկերները: Եվրոպայում, մասնավորապես հին հռոմեացիներին, ձմերուկը հայտնի դարձավ համեմատաբար ուշ՝ մեր թվարկության առաջին հարյուրամյակներում: Այն օգտագործում էին և՛ թարմ, և՛ կեղևները չորացնում էին, և՛ աղով թթու էին դնում, ինչպես վարունգը: Չինացիները ձմերուկը հավանաբար ստացել են եվրոպացիներից, բանի որ այն անվանում էին «արևմուտքի սեխ»: Արդեն մեր թվարկության ութերորդ դարից սկսած՝ Չինաստանում սեպտեմբերին նշում էին ձմերուկի հյուրասիրության տոնը: Հայաստանում ձմերուկը եղել է դարեր շարունակ: Ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը, անդրադառնալով *ձմերուկ* բառի ստուգաբանությանը, նշում է, որ այն ծագում է *ձմեռ* բառից: «Թե ինչո՞ւ է այդպես կոչված այս պտուղը, հայտնի չէ, բայց երևի թե իր առատ զովացուցիչ ջրի պատճառով է. մինչև այսօր էլ գյուղացիք ծարավ ժամանակ արտից մի ձմերուկ են բաղում և նրանով իրենց ծարավն անցկացնում», - գրում է Հ Աճառյանը:

Արտաշես Մարգարյան

Վարժություն 13: Տրված տեքստում գտե՛ք պարբերությունների նախադասություններն իրար կապող միջոցները՝ դերանունները, շաղկապները, զեղչումները, գործողությունների տրամաբանական հաջորդականությունն արտահայտող նախադասությունները և այլն:

Մրտիմները շատ փոքրամարմին բաղեր են, իսկ մեզ մոտ հանդիպող տեսակները քարակաթավից էլ փոքր են: Բայց ամեն ինչով բաղ են՝

արտաքին տեսքով, սովորություններով, մսի համով: Բաղի նման սևվում են թե՛ ջրում, թե՛ նրա ափերին՝ դաշտում: Արտերում ուտում են հացահատիկներ, մանավանդ գարի, վարսակ, կորեկ, իսկ ջրում՝ խխունջներ, շերեփուկներ, ճիճուներ, ջրային բույսեր: Թռչում են կատաղի արագությամբ: Սևանի արևելյան ափին փետրվարի մի սառնամանիք օր մրտիմների մի քանի խմբեր շատ անգամ անցան իմ թաքստոցի վրայով, բայց ես ոչ մի անգամ չհասցրի կրակել, քանի որ երամները գալիս էին հողմի արագությամբ և մինչև հրացանիս մեկնելը այնքան էին հեռանում, որ կրակելն անիմաստ էր: Մրտիմը թռչում է վայրկյանում 20–25 մետր արագությամբ:

Մեծ տարածություններ են կտրում մրտիմները իրենց չուկ ճանապարհին: Ղուռու-Արագում որսորդները մի մրտիմ խփեցին, որի ոտքին այլումինե օղակ կար հագցրած: Օղակի գրերից և թվերից պարզեցին, որ այդ թռչունն օղակավորվել է Կանադայում: Ուրեմս Ջայաստան հասնելու համար այդ թռչունները կտրել էին 12–13 հազար կիլոմետր օդային ճանապարհ:

Վահրթանգ Անանյան

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՑԱՆԿԵՐ, ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ, ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

Գրավոր տեքստերը կարող են ունենալ **ծանոթագրություններ, ցանկեր, ամփոփումներ և հավելվածներ:**

Ծանոթագրությունները պարունակում են տեքստի վերաբերյալ զանազան տեղեկություններ, մեկնաբանություններ, հղումներ այլ աղբյուրների և այլն: Ծանոթագրություններ հատկապես ունենում են գիտական տեքստերը, գեղարվեստական տեքստերի ակադեմիական հրատարակությունները: Բերենք մեկ օրինակ Բաֆֆու՝ Երևանում տասներկու հատորով հրատարակված (1983–1999թթ.) երկերի ժողովածուից՝ «Սամվել» վեպի ծանոթագրություններից. «Էջ 321, տ. 31. Նա հասավ Թարվեզ¹ – Թարվեզը Թավրիզ անվան հին ձևն է (Բուզանդի տեքստում օգտագործված է երկու ձևով՝ Թաւրէջ և Թաւրէշ)»: Ծանոթագրությունները ներկայացվում են տարբեր ձևերով: Տվյալ էջում աստղանիշով կամ թվահամարով նշվում են այն բառը, կապակցությունը, նախադասությունը, որոնք պետք է մեկնաբանվեն, և նույն էջի տողատակում բերվում է ծանոթագրությունը: Ծանոթագրությունները կարող



են նաև ըստ համարակալման ցուցակով բերվել տեքստի կամ նրա առանձին մասերի վերջում: Կան նաև ծանոթագրման այլ ձևեր:

Ցանկերը տարբեր տեղեկություններ հաղորդելու նպատակով կցվում են գրավոր տեքստերին: Ամենատարածված ցանկը տեքստի նյութերի ցանկն է՝ բովանդակությունը, որում նշվում են տեքստի մասերի ու հարակից նյութերի վերնագրերը և նրանց զբաղեցրած էջերը: Այսպիսի ցանկերը կցվում են կա՛մ տեքստի սկզբում, կա՛մ վերջում: Դրանց միջոցով ընթերցողը հեշտությամբ գտնում է տեքստի՝ իրեն անհրաժեշտ մասը: Գիտական, վարչական, երբեմն էլ գեղարվեստական տեքստերին կարող են կցվել նաև այլ տեղեկությունների պարունակող ցանկեր՝ մասնագիտական տերմինների, օգտագործված գրականության, աշխարհագրական տեղանունների, անձնանունների և այլն:

Յավելվածները կցվում են տեքստերին և պարունակում են հավելյալ տեղեկություններ: Դրանք կարող են լինել վիճակագրական աղյուսակներ, զանազան վավերագրեր ու փաստաթղթեր, որոնց մասին խոսվում է տեքստում, բարտեզներ, տեքստում եղած առաջադրանքների լուծումներ և այլն:

Ամփոփումները հիմնականում բերվում են գիտական տեքստերին կից: Դրանք համառոտ, ամփոփ ձևով ներկայացնում են տեքստի բովանդակությունը: Ամփոփումները մեծ մասամբ գրվում են մեկ կամ երկու օտար լեզուներով: Դրանց նպատակն է ընթերցողին հակիրճ ներկայացնել այն խնդիրները, որոնց վերաբերում է տեքստը: Ամփոփումների օգնությամբ ընթերցողը կողմնորոշվում է, թե տվյալ տեքստում ներկայացված խնդիրները որքանո՞վ են իրեն հետաքրքրում: Յատկապես միջազգային գիտական հրապարակումներում շատ կարևոր է ամփոփումների դերը:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է ծանոթագրությունը:
2. Ինչպե՞ս են ներկայացվում ծանոթագրությունները:
3. Ի՞նչ է ցանկը և ի՞նչ տեսակներ ունի:
4. Ի՞նչ է հավելվածը:
5. Ի՞նչ է ամփոփումը:

Վարժություն 14: Ծանոթագրե՛ք տեքստի ընդգծված բառերը բերված օրինակի նման: Անհրաժեշտության դեպքում օգտվե՛ք հանրագիտարաններից, համացանցից և այլ աղբյուրներից:

Գրադպրակ



Հայ միջնադարյան *մանրանկարչության* մեջ առհասարակ քիչ տեղ չեն գրավում *թռչուն-տոտեմները**: Մեր *մագաղաթյա* ձեռագրերում բազմաթիվ *թռչուններ* կան նկարված, որոնց թիկունքից վեր է ելնում տոհմական ծառն իր ճյուղավորումներով, այսինքն՝ «տոհմական կարգերի պատկերն իր ազգակցական կապերով»: Ամբողջ ճյուղագրական տոհմածառի հիմքում կանգնած է մի *թռչուն*՝ տոհմի տոտեմը: Հետևաբար, եղել է ժամանակ, երբ մեր նախնիների պատկերացմամբ տոհմը սերվել է տվյալ *թռչուն-նախնուց*:

Արվեստի մեջ հայկական *վերածննդի* խոշորագույն դեմքը՝ *Կիլիկիայի* պալատական նկարիչ *Թորոս Ռոսլինը*, ռեալիստորեն և նրբին ճաշակով է պատկերում կենդանիներին ու *թռչուններին* իրենց իրական խառնվածքով և արարքներով: Թորոս Ռոսլինի նկարած *թռչունները*, որոնք զարդարում են 13-րդ դարի մեր *մագաղաթյա* մի քանի ձեռագիր գրքեր, այսօր էլ հիացնում են մեզ իրենց ճշմարտացիությամբ, ճշմարիտ արվեստով:

Մատենադարանում պահվող *մագաղաթյա* հին ձեռագրերի մեջ իր ժամանակի մարդիկ նկարել են բազմաթիվ ու բազմապիսի *թռչուններ* ոչ այնքան իրենց *էսթետիկական* պահանջները բավարարելու համար, որքան որոշ գաղափարներ արտահայտելու նպատակով:

Վահրթանգ Անանյան

Օրինակ. * *Տոտեմ* – ըստ ժողովուրդների հին հավատալիքների՝ ցեղի նախահայրն ու հովանավորը համարվող կենդանի, *թռչուն*, երբեմն՝ բույս:

Գիտե՞ք, որ...

Աջխարհի ամենաերկարակյաց տպագիր օրացույցը հայերեն է: 1757 թվականից Վենետիկում Մխիթարյան միաբանության կողմից լույս ընծայվող օրացույցի տպագրությունը շարունակվում է մինչև հիմա:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԺԱՆՐԵՐ

*Ընթերցանությունը մարդուն դարձնում է
գիտուն, զրույցը՝ հնարամիտ, իսկ գրի
սունելու սովորությունը՝ ճշգրիտ:*

Ֆրենսիս Բեկոն (անգլիացի փիլիսոփա)

Տեղեկատվությունը (լրատվությունը) երկու և ավելի անձերի միջև զանազան տեղեկությունների հաղորդումն է: Մարդիկ իրենց ամօրյա կյանքում անընդհատ կարիք ունեն տարբեր տեղեկություններ իմանալու և հաղորդելու: Տեղեկությունները կարող են փոխանցվել բանավոր կամ գրավոր: Դա կատարվում է տարբեր միջոցներով: Մարդիկ հաղորդակցվում են անմիջականորեն, հեռախոսով, ռադիոյով, հեռուստատեսությամբ, համացանցով (ինտերնետ), փոստային նամակներով, բացիկներով, էլեկտրոնային նամակներով, հեռագրերով, հեռատիպով (ֆաքս), մամուլում տպագրվող նյութերի միջոցով և այլն: Ինչպես տեսնում ենք, տեղեկատվության փոխանակման միջոցները բազմազան են, և փոխանակվող տեղեկություններն էլ շատ տարբեր են. դրանք կարող են լինել ամօրյա-կենցաղային իրողություններ, պաշտոնական հաղորդագրություններ, գիտական հրապարակումներ և այլն:

Լրագրության (ժուռնալիստիկայի) ասպարեզում գոյություն ունեն տարբեր ժանրեր: Դրանք լինում են **տեղեկատվական-հրապարակախոսական, վերլուծական-հրապարակախոսական, գեղարվեստական-հրապարակախոսական**: Առաջին խմբի մեջ մտնում են հարցազրույցը, ռեպորտաժը և այլն: Երկրորդ խմբի մեջ մտնում են թղթակցությունը, հոդվածը և այլն: Երրորդ խմբի մեջ մտնում են ակնարկը, ֆելիետոնը և այլն:

ՀԱՐՅԵՐ

1. Ի՞նչ է տեղեկատվությունը:
2. Ի՞նչ միջոցներով է հաղորդվում տեղեկատվությունը:
3. Ի՞նչ խմբերի են բաժանվում տեղեկատվական ժանրերը:

ՍԿՆԱՐԿ

Ակնարկը գեղարվեստական-հրապարակախոսական այնպիսի գրվածք է, որում իրականությունը պատկերվում է կոնկրետ փաստերի հիման վրա, սակայն գեղարվեստական երանգավորումով: Ակնարկը



փաստորեն թե՛ հրապարակախոսական ժանր է, թե՛ գեղարվեստական: Այս ժանրը ձևավորվել է 18-րդ դարում Եվրոպայում: Ակնարկի հեղինակը իրական անձերի, գործողությունների ու իրադարձությունների նկարագրության միջոցով ներկայացնում է բնութագրական մի գրվածք: Հեղինակը այդ ամենի ականատեսն է. **ակնարկ** բառը կազմված է **ակն** (աչք) և **արկ** (նետում, նետել) արմատներից: Սակայն սա չի նշանակում, թե հեղինակը սոսկ գրի է առնում այն, ինչ տեսել ու լսել է: Նա ընտրում և ընդգրկում է այն դրվագներն ու փաստերը, որոնք առավել տիպական են նկարագրվող հերոսի համար, ավելի կոնկրետ ու տպավորիչ են ներկայացնում նրան: Ակնարկի հեղինակը կարող է գործածել գեղարվեստական որոշ հնարներ, որպեսզի ավելի գրավիչ ու բազմազան դարձնի իր խոսքը: Սակայն այս ամենը պետք է կատարվի չափավոր, և բոլոր դեպքերում ասվածի հիմքում պետք է լինեն իրական փաստերը, այսինքն՝ գեղարվեստականությունից չպետք է տուժի նյութի վավերականությունը: Ակնարկները լինում են ուրվանկարային (որևէ միջոցառման, իրադարձության վերաբերյալ), դիմանկարային (որևէ անձի կյանքի ու գործի կամ կոնկրետ արարքի վերաբերյալ), ուղեգրական (ուղևորության ընթացքում տեղի ունեցած հանդիպումների, տպավորությունների նկարագրություն և վերլուծություն), հուշագրական (հուշի ձևով որևէ դեպքի, անձի ներկայացում) և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ակնարկը:
2. Ե՞րբ է ձևավորվել ակնարկի ժանրը:
3. Ի՞նչ է նշանակում *ակնարկ* բառը:
4. Ի՞նչ հիմնական տեսակներ ունի ակնարկը:

Վարժություն 15: Գրե՛ք ակնարկ ձեզ ծանոթ որևէ անձի մասին:

Վարժություն 16: Կարդացե՛ք Գևորգ Էմինի «Վարպետ Հովհան-նեսը» ակնարկը (կրճատումներով) և բնևարկե՛ք: Փորձե՛ք առանձնացնել փաստական նյութն ու գեղարվեստական բնորոշումները:

Նրանից խոսք պոկելը նույնքան դժվար է, ինչքան որձաքարից մի կտոր պոկելը: Զառասուհին՞գ տարվա աշխատանքը քարի հետ նրան դարձրել է զուսպ ու լռակյաց: Նրա փոխարեն խոսում են նրա քանդակած զարդաքարերն ու արձանները:



- Վարպե՛տ Յովհաննես, ինչպե՛ս եղավ, Է...

- Եղա՛վ, Էլի՛, - սեղմում է նա իր առանց այն էլ սեղմված շուրթերը և խոսքը փոխելու համար բարձրացնում է բաժակը:

- Գառնիի բարերի կենս՛ջը...

Իսկ այն, ինչ եղել է, զարմանալի է, ուրախալի...

Քարտաշ Յովհաննես Քարամյանն ընդունվել է... Ճարտարապետների միության անդամ:

Վարպետը չի խոսում. չեն օգնում նաև նրա որդիների և կնոջ հորդորները: Բայց արժե՛ պատմել նրա մասին: Ճի՛շտ է, թեև կցկուտը, բայց արժե՛:

...1886 թվականին Նախիջևանի Ազա գյուղի ինքնուս ուսուցչի առանց այն էլ բազմանդամ ընտանիքում մի երեխա ևս ծնվեց:

Փոքրիկ Յովհաննեսի մանկությունը շատ կարճ տևեց, կարճ և ծանր: 1900 թվականին նա արդեն թիֆլիսում, մարմարի փոշուց խեղդվելով, ագահորեն նայում էր գերեզմանաբարեր պատրաստող իտալացի վարպետի ջղուտ ձեռքերին, որոնք չոր բարից մոմի պես փափուկ ու թեթև հրեշտակներ էին քանդակում...

1914 թվական. պատերազմ. թիկունքային զորամասի գինվոր Յովհաննես Քարամյանը բեռներ էր կրում Պարսկաստանից Ջուլֆա: 1917 թվականին նա վերադարձավ իր հայրենի գյուղը: Երանի թե չվերադառնար ու մնար քանակում: Դեռ հայրենի գյուղի կարոտը չէր ամել, երբ... կարոտը մնաց, իսկ գյուղը ոչնչացավ: Յովհաննեսը հաստատվեց Մեղրու շրջանի Լիճք գյուղում:

- Ի՞նչ էիք կառուցում 1917-21 թվականներին, - հարցնում եմ նրան, որովհետև նրա բուն կենսագրությունը հաշվվում է ոչ թե տարիներով ու դեպքերով, այլ շենքերով:

- Գերեզմանաբարե՛ր, - կարճ պատասխանում է նա:

Եվ իսկապես, գերեզմանաբարից բացի ինչի՞ պահանջն էր ավելի շատ, և ի՞նչ կարող էին պատվիրել նրան իր հայրենակիցներն այդ տարիներին: Խորհրդային կարգերի օրոք Քարամյանի կառուցած առաջին շենքը Լիճք գյուղի դպրոցի շենքն էր: Ի՞նչը կարող է ավելի պերճախոս լինել, քան դպրոցի շենքի պատվերը նախորդ տարիների գերեզմանաբարերի պատվերից հետո:

Այնուհետև, ինչ էլ որ նա կառուցեր՝ ծննդատուն, ակումբ, ջրաղացի բար, թե աղբյուր, կապված էր կյանքի հետ: Եվ Յովհաննեսը կառուցում էր շենք շենքի հետևից:

....1930 թվական: Վարպետ Յովհաննեսին հրավիրում են Երևան՝ աշխատելու անասնաբուժական ինստիտուտի շենքի վրա: Վարպետի համար տոն է: Երկիրը հարստանում է, ծաղկում: Նրան հանձնարարում են մայրաքաղաքում դրվող առաջին արձանների պատվանդանների, ապա նաև արձանների քանդակման գործը:

Ժողտան շինարարության օրերից նրա մեջ ամենից վառ տպավորվել է հանդիպումը ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի հետ: Մի օր նա ասաց. «Ապագայի ճարտարապետը իմ ու թո խառնուրդը կլինի, բարտաշը՝ թո և իմ»:

Կառավարական տուն... Ո՞վ չի հիացել և գեթ մի անգամ կանգ առել նրա շքեղ զարդերի ու քանդակների առաջ:

«Արարատ» գինու գործարանի շենքի վրա աշխատելիս այդ շենքի ճարտարապետը նրան մի օր ասաց. «Վարպետ, փոխանակ ամեն անգամ ճարտարապետները այս կամ այն հարցով թեզ մոտ գան, լավ չի՞ լինի, որ միանգամից դու գաս մեզ մոտ... ճարտարապետների միություն»:

Անկեղծորեն ասած՝ վարպետն այնքան էլ չզարմացավ: Ծիշտ է, ճարտարապետների միությունը նրան առաջվա նման թվում էր շատ բարձր ու խիստ պատվական հիմնարկ, բայց առաջվա նման օտար ու հեռու չէր թվում:

Ոմանք ասում են. «Կյանքս անցավ»: Վարպետն այդ չի կարող ասել իր մասին: Ի՞նչ է կյանքը՝ տարիներ: Ի՞նչ են տարիները՝ նրա կառուցած շենքերը: Իսկ շենքերը, ինչպես հայտնի է, չեն «անցնում»: Կան շենքերը, ուրեմն կան և նրա կյանքի տարիները, ուրեմն կա և նրա կյանքը, և ոչինչ էլ չի անցել:

....Կտուրների վրա ճերմակ ձյուն է իջել: Բայց այսուայնտեղ եղրևանու թփերի նման ձյունի տակից ժպտում են կառուցվող նոր շենքերի տուֆաքար զարդերը:

Նիհար մի ծերունի դանդաղ տաշում է կարմիր մի տուֆաքար: Նրա մազերին նույնպես ճերմակ ձյուն է իջել, ձմեռ: Բայց քարի վրա թռչուններ են երգում, ծաղկում են ծաղիկները, հասնում է խաղողը:

Յայաստանն է սա, հայ ժողովուրդն է սա՝ ծեր ու հավերժ երիտասարդ: Յմուտ և տաղանդավոր հայ որմնադիրն է սա, որ այլևս շենքի կտուրից իրեն վար նետող Յովան չէ, մեջքը քարի տակ ջարդած Վարդան կամ անգրագետ Պողոս, այլ որմնադիր, քանդակագործ ու ճարտարապետ Յովհաննես Քարամյան, որի նմանը պատմությունը չէր կարող տեսնել մինչև այսօր:



ԹՂԹԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Թղթակցությունը տարբեր դեպքերի ու փաստերի մասին ոչ մեծ ծավալով հաղորդում է: Հեղինակը ներկայացնում է որոշակի դեպք, փաստ, սակայն ոչ միայն արձանագրում է կատարվածը, այլև դրա մասին իր կարծիքն է հայտնում, վերլուծում, եզրակացություններ անում: Այսինքն՝ կոնկրետ իրավիճակը, հիմնախնդիրը ներկայացվում են փաստերի վերլուծությամբ և լրագրողի մեկնաբանություններով: Թղթակցի նպատակն է տվյալ փաստի տարածմամբ ու լուսաբանմամբ առաջ քաշել հասարակական հնչեղություն ունեցող խնդիրներ, ընդգծել լավը, գեղեցիկը, սորը, ինչպես նաև մերժել թերությունները:

Թղթակցությունները տարբեր տեսակների են լինում՝ տեղեկատվական, հիմնախնդրային կամ հարցադրումային, քննադատական և այլն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է թղթակցությունը:
2. Ի՞նչ հիմնական տեսակների են լինում թղթակցությունները:

Վարժություն 17: Գրե՛ք թղթակցություն «Մեր մասնակցությունը շաբաթօրյակին», «Պահպանենք բնությունը», «Խնայենք ջուրը» թեմաներով:

Վարժություն 18: Կարդացե՛ք Դերենիկ Դեմիրճյանի «Ուսումնական նոր տարվա ցանկություններ» (կրճատումներով) հոդվածը, որը 1951թ. օգոստոսի 31-ին տպագրվել է «Գրական թերթում», և վերլուծե՛ք նրանում առաջ քաշված խնդիրները. արդիակա՞ն են դրանք այսօր:



Սկսվում է նոր ուսումնական տարին:

Ի՞նչ ասել կուզի, որ ուսումնական տարվա սկսվելը մեծ ուրախություն է գերազանցիկների, աշխատասերների և առհասարակ սովորող աշակերտի համար:

Սկզբնական կրթությունը, ասենք՝ միջնակարգ կրթությունը, վճռական դեր է կատարում մարդու կյանքում: Ավելի շատ այդ միջնակարգը, քան հետագայում բարձրագույնն է վճռում

բաղաբացու մտավոր, հոգեկան կազմի խնդիրը: Ուժեղ բարձրագույն կրթությունն դժվար կլինի ստանալ, երբ միջնակարգը թույլ է եղել:

Դպրոցական միջնակարգ կրթությունը անհրաժեշտ է յուրաքանչյուր բաղաբացու համար: Սակայն դպրոցական կրթությունը իր պարտադիր առարկաներով այն միևնույն գիտելիքներն է տալիս, որ պատանին պետք է ձեռք բերի:

Դպրոցականի երկրորդ ուսումը դպրոցի զուգընթաց հիմնարկում է՝ գրադարան-ընթերցարանում:

Թե ինչ է տալիս պատանուն ընթերցանությունը, հասկանալի կլինի ամեն պատանու, որ մի անգամ գոնե մի լավ գիրք է ընթերցել: Եվ ահա այստեղ, ինչպես որ ընթերցվող գիրքը հասկանալուն օգնում են դպրոցական առարկաները, ասենք՝ աշխարհագրությունը, պատմությունը, ֆիզիկան և այլն, գիրքն էլ իր կողմից է օգնում առարկաները խոր կերպով յուրացնելուն:

Բուսաբանությունը, պատմությունը, գրականությունը և մյուս առարկաները ըմբռնելուն, մտքերը կանոնավոր շարադրելուն, խելացի, սահուն խոսելուն և առհասարակ կրթված մարդ դառնալուն մեծապես նպաստում է ընտիր գրքերի ընթերցանությունը:

Ամեն մի դպրոցում դասատուն խորհուրդ է տալիս ընթերցել: Պետք է լսել դասատուի այդ խրատը:

Գրքերի ընթերցանությունը նման է բազմազան վիտամինների, որոնց մասին հաճախ տեղեկություն չունենք, բայց որոնք մեծ դեր են կատարում մեր օրգանիզմի գոյության և աճման գործում: Ընթերցանությամբ մեր հոգեբանությունը լցվում է մեզ անհայտ շատ ու շատ հատկություններով, որոնք մեզ փոխում, զարգացնում, բարձրացնում են:

Դպրոցական ուսումը անհրաժեշտ է կրթությունն ձեռք բերելու համար, իսկ ընթերցանությունը՝ զարգանալու և դաստիարակվելու, կյանքը ճանաչելու և կյանքը պատրաստ մտնելու համար:

Շնորհավորում եմ նոր ուսման տարին և ցանկանում եմ առատ և առողջ ուսման, կրթության «բերք»:

ՌԵՊՈՐՏԱԺ

Ռեպորտաժը զուտ տեղեկատվական (լրատվական) գրվածք է: Հեղինակն ականատես է լինում որևէ իրադարձության և ամփոփ ձևով ներկայացնում է նրա վերաբերյալ տեղեկությունները: Ռեպորտաժ բառը ծագում է ֆրանսերեն reportage բառից, որը նշանակում է **հաղորդում**:




Ռեպորտաժի հեղինակը հանգամանակից վերլուծություններ չի կատարում, հիմնականում խուսափում է իր կարծիքն արտահայտելուց, թեև հնարավոր են մասնակի դիտարկումներ: Այս դեպքում կարևորը լուրի ճշգրիտ ներկայացումն է: Ականատես հեղինակը նկարագրողական մեկնաբանություններով ու իր տպավորությունների հաղորդմամբ ձգտում է ընթերցողի, ունկնդրի կամ հեռուստադիտողի մեջ այդ իրադարձություններին մասնակից լինելու պատրանք ստեղծել: Լրագրային ռեպորտաժները սովորաբար ուղեկցվում են լուսանկարներով, ռադիոռեպորտաժները՝ ներկայացվող իրադարձություններին վերաբերող զանազան ձայնագրություններով, իսկ հեռուստառեպորտաժները՝ տեսագրություններով:

Ռեպորտաժները լինում են իրադարձային (կատարվող իրադարձության վերաբերյալ), թեմատիկ (տարբեր ժամանակներում կատարված, բայց նույն թեմային առնչվող իրադարձությունների միավորում), լուսանկարային (իրադարձությունների ներկայացումը լուսանկարների համադրությամբ) և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ



1. Ի՞նչ է ռեպորտաժը:
2. Ի՞նչ ծագում ունի *ռեպորտաժ* բառը:
3. Ի՞նչ հիմնական տեսակների է լինում ռեպորտաժը:

Վարժություն 19: Գրե՛ք ռեպորտաժներ նկարներում պատկերվածի մասին:



Բալայր Գրիգորյան


2



3



4



Технология
руководства

*Ուզում ես խելոք պատասխան տրանալ,
հարցրո՛ւ խելոք:*

Վոլֆգանգ Գյոթե (գերմանացի բանաստեղծ)

*Հարցերը ցույց են տալիս մտքի խորությունը,
պատասխանները՝ սրությունը:*

Ժոզեֆ Ժուրեք (ֆրանսիացի բարոյախոս)




Հարցագրույցը մեկ կամ մի քանի անձանց հետ լրագրողի վարած այն զրույցն է, որը վերաբերում է կարևոր, հրատապ, արդիական որևէ թեմայի և կարող է հետաքրքրել հանրությանը: Հարցագրույց վարողը պետք է ունենա որոշակի ունակություններ, որպեսզի կարողանա արդյունավետ հաղորդակցվել զրուցակցի հետ: Եթե հարցագրույցը հանպատրաստից չէ, ապա հարցագրույց վարողը

նախ պետք է ուսումնասիրի այն նյութը, որի վերաբերյալ հարցագրույց է վարելու, հնարավորինս տեղյակ լինի դրա մանրամասներին, նախապատրաստի հիմնական հարցերը, թեև հարցեր կարող են ծագել նաև ընթացքում: Անհրաժեշտ է ճիշտ ձևակերպել ընթացքում ծագած հարցերը: Հարցագրույց վարողը պետք է բարեկիրթ պահվածք ունենա, իր հարցերով չվիրավորի դիմացիներին, չփորձի իր կարծիքն արտահայտել՝ պատասխանելով իր իսկ հարցադրումներին: Անհրաժեշտ է պահպանել չեզոքություն և հարցերի միջոցով պարզել այն անձի (կամ անձանց) կարծիքը, որի հետ ընթանում է զրույցը: Տրվող հարցերն իրենց բնույթով կարող են լինել ուղղակի կամ անուղղակի, բաց և փակ, ճշգրտող, մերկացնող, հուշող, պասիվ և այլն: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր նպատակը:

Ուղղակի հարցով դիմողը ցանկանում է միանգամից իմանալ պատասխանը, սակայն երբեմն անհրաժեշտ է լինում անուղղակիորեն մոտենալ քննարկվող թեմային: Օրինակ՝ հենց այդ պահին որևէ բարդ աշխատանք ավարտած մարդուն ավելի լավ է սկզբից հարցնել, թե արդյո՞ք ամեն ինչ կարգին է, ընդհանուր առմամբ հաջողվե՞ց կատարել անհրաժեշտ աշխատանքը, քան թե միանգամից հարցնել, թե ինչ է արել նա:

Բաց հարցերը ընդհանուր բնույթ ունեն, և հնարավոր է դրանց երկար պատասխանել, օրինակ՝ «Պատմեք, խնդրեմ, թե ինչպես...»: Փակ հարցերը միանշանակ են, և հարց տվողն ակնկալում է դրական կամ բացասական կարճ պատասխան, օրինակ՝ «Ավարտվե՞լ է նախատեսված աշխատանքը»:

Ճշգրտող հարցերը տրվում են մշուշոտ, երկիմաստ պատասխանի դեպքում, երբ հարցազրույց վարողը ցանկանում է ճշգրտել որևէ իրողություն: Այդ հարցերը կարող են տարբեր ձևերով կազմվել, օրինակ՝ «Ձեզ ճիշտ հասկացա...»: «Արդյո՞ք դրանց մասին տվյալներ կան...»: «Կարո՞ղ եք կոնկրետ թվեր հաղորդել...» և այլն:



Մերկացնող հարցերը տրվում են այն դեպքում, երբ խոսողն ակնհայտորեն ինչ-որ փաստեր թաքցնում է կամ խուսափում է կոնկրետ պատասխաններից: Այդ դեպքում հարցազրույց վարողի մեջ հակադրվելու, վիճելու ցանկություն կարող է առաջանալ, սակայն պետք է զերծ մնալ կտրուկ ձևակերպումներից: Օրինակ՝ ոչ թե պետք է ասել՝ «Ես ձեզ չեմ հավատում»: «Դուք իրավացի չեք», այլ հարցերը պետք է ավելի մեղմ և դիվանագիտորեն ձևակերպել, ինչպես՝ «Դուք վստա՞հ եք, որ այդպես է»: «Արդյո՞ք հավաստի են նման փաստերը» և այլն:

Յուշող հարցերն արդեն իսկ պարունակում են պատասխանը, ուստի պետք է խուսափել նման հարցերից, օրինակ՝ «Ի՞նչ կասեք այն մասին, որ աշխատողները չեն կատարել իրենց պարտականությունները, դրանով խախտել են օրենքը և կազմակերպությանը պատճառել են խոշոր չափի նյութական վնաս»: Նման հարցերի դեպքում պատասխանողը ստիպված պետք է կրկնի հարցում կատարողի ասածը: Սակայն հուշող հարցերը որոշ իրադրություններում այնուամենայնիվ անհրաժեշտ են: Դրանք կարող են տրվել, եթե պետք է, որ գրուցակիցը հաղթահարի շփոթվածությունը կամ սկսի խոսել իր համար ցավոտ որևէ թեմայի մասին, օրինակ՝ «Դուք հավանաբար չեք մոռացել այդ տխուր դեպքը, չե՞ որ դա անհնար է մոռանալ» և այլն:

Պասիվ հարցերն ըստ էության կարճ արտահայտություններ են, որոնց միջոցով հարցազրույց վարողը հուշում է, որ հետևում է զրույցի ընթացքին, դրանով հորդորում, խրախուսում է զրուցակցին շարունակել զրույցը, օրինակ՝ «Այո՛, իհարկե». «Չասկանալի է» և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է հարցազրույցը:
2. Ի՞նչ պահվածք պետք է ունենա հարցազրույց վարողը:
3. Իրադրությամբ պայմանավորված՝ ինչպիսի՞ հարցեր կարող եք տալ հարցազրույց վարելիս:

Վարժություն 20: Հարցազրույց վարեք ձեր համադասարանցու կամ մեկ այլ անձի հետ:

Վարժություն 21: Գրե՛ք տասը հարց, որոնք կուղղեիք հարցազրույց վարելիս. ա) ծանրամարտի աշխարհի չեմպիոնի հետ. բ) հանրաճանաչ նկարչի հետ. գ) խեղդվող երեխային անձնագրի արարքով փրկած անձի հետ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առօրյա կյանքում մարդկանց անընդհատ պետք են գալիս տարբեր փաստաթղթեր: Մարդիկ սովորում են, աշխատում, թողնում աշխատանքը, որևէ հարցով դիմում ինչ-որ մեկին և այլն: Հիմնարկներում, կազմակերպություններում, անհրաժեշտության դեպքում նաև առանձին մարդկանց միջև հարաբերությունները կարգավորվում են տարբեր փաստաթղթերով: Պաշտոնական հաղորդակցման, ինչպես նաև հիմնարկների գործավարությունը հստակ կազմակերպելու համար մարդիկ գրում են զանազան գրություններ: Գործնական հարաբերությունները կարգավորելու համար գրվող գրությունները գործնական գրություններ են: Գործնական գրությունները բազմաթիվ են: Առավել հաճախ գործածվողներից են **դիմումը, ինքնակենսագրությունը, պաշտոնական նամակը, բացատրագիրը, բնութագիրը, տեղեկանքը, արձանագրությունը, քաղվածքը:**

Դիմում

Մարդկանց առօրյա կյանքում լինում են խնդիրներ, որոնք կարող են լուծել այն պաշտոնը զբաղեցնող մարդիկ, որոնց ղեկավարման ոլորտին է վերաբերում տվյալ խնդիրը: Նման դեպքերում մարդիկ զանազան խնդրանքներով դիմում են պաշտոնատար տարբեր անձանց: Օրինակ՝ թաղամասի բնակիչները դիմում են թաղապետին, որ նա կարգադրի վերանորոգել շենքի մուտքը, աշակերտները դիմում են դպրոցի տնօրենին, որպեսզի աջակցի էթսկուրսիա կազմակերպելուն և այլն:



Նման դիմումները կատարվում են գրավոր, այսինքն՝ մարդիկ իրենց խնդրանքը, դրան առնչվող հարցերը գրավոր շարադրում և ներկայացնում են համապատասխան անձին, որը ծանոթանում է գրվածին և պատասխանում, թե տվյալ խնդիրը ինչ լուծում կարող է ունենալ: Դիմումը որևէ անձի կամ անձանց՝ ընդունված ձևով գրավոր խնդրանքն է որևէ պաշտոնատար անձի:

Դիմումն ունի գրության որոշակի մշակված ձև: Նախ գրվում է, թե ում է ուղղված, այնուհետև գրվում է, թե ով է դիմողը, հետո գրվում է «դիմում» բառը, որից հետո շարադրվում է, թե ինչ խնդրի կապակցությամբ է գրված դիմումը, և ինչ է խնդրում դիմողը: Վերջում նշվում է դիմումը գրելու ամսաթիվը: Այս ամենը դիմողը հաստատում է իր ստորագրությամբ:

*Երևանի համար 205 դպրոցի փնտրեն
Ա. Հարությունյանին
նույն դպրոցի 12-րդ «գ» դասարանի
աշակերտու Աշոտ Արամի Մանուկյանից*

Պիսում

*Սույն թվականի մարտի 10-ից 15-ը հիմնադրության
պատրճառով չեմ ներկայացնել դասերին:*

ԴՆդրում եմ բացակայությունս համարել հարգելի:

*Այդ ներկայացնում եմ թժկական համապատասխան
յերեղերակ:*

18. 03. 2009

Պիսող՝ (ստորագրություն)

Դիմումի բովանդակությունը շարադրելիս պետք չէ նորից նշել, թե ում է այն ուղղված, ինչպես՝ «Հարգելի պարոն Հարությունյան, այս դիմումով...», քանի որ դիմումի սկզբում արդեն նշված է: Դիմողի ստորագրությունից հետո էլ անհրաժեշտություն չկա գրելու դիմողի անունը և ազգանունը, քանի որ դրանք էլ նշված են դիմումի սկզբում:

Հիմնարկներում կարող են լինել նաև դիմումների մշակված պատրաստի ձևեր, որոնք դիմողը լրացնում է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է դիմումը:
2. Ի՞նչ կառուցվածքով է գրվում դիմումը:

Վարժություն 22: Գրե՛ք տարբեր հարցերի վերաբերող և տարբեր անձանց ուղղված դիմումներ:

Ինքնակենսագրություն

Աշխատանքի ընդունվելիս, տարբեր մրցույթների մասնակցելու հայտեր լրացնելիս և այլ դեպքերում ընդունվողից սովորաբար պահանջում են ինքնակենսագրություն:

Ինքնակենսագրություն

Ես՝ Լուսինե Վարդանի Մելքոնյան, ծնվել եմ 1973 թվականի Տայիսի 20-ին Երևան քաղաքում, ծառայողի ընկանիքում: 1980-90թթ. սովորել եմ Երևանի համար 205 դպրոցում: 1985թ. մասնակցել եմ հայոց լեզվի համաքաղաքային օլիմպիադային և արժանացել երկրորդ մրցանակի: Դպրոցն ավարտելուց հետո՝ նույն թվականին, ընդունվել եմ Երևանի պետական համալսարանի բանասիրական (այժմ՝ հայ բանասիրության) ֆակուլտետը, որը 1995 թվականին ավարտել եմ գերազանցության դիպլոմով: 1995 թվականից աշխատանքի եմ անցել Երևանի համար 205 դպրոցում նախ որպես գրադարանավարուհի, իսկ 1997 թվականից առ այսօր՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Զանազան տարիների ընթացքում հանդես եմ եկել հայոց լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկային վերաբերող մեր մեկ Կրթության հոդվածներով:

Ամուսնացած եմ, ունեմ մեկ որդի և մեկ դուստր:

10. 05. 2009

(ստորագրություն)

Ինքնակենսագրությունը մարդու կյանքի առավել կարևոր դեպքերի, նրանց կատարման ամսաթվերի ու տարեթվերի վերաբերյալ ընդունված ձևով շարադրանքն է: Ինքնակենսագրության մեջ մարդիկ նշում են, թե երբ և որտեղ են ծնվել, ուսումնական որ հաստատություններում են սովորել, որտեղ և ինչ պաշտոններով են աշխատել, ինչ գյուտեր և հրապարակումներ ունեն, ինչ կոչումներ, պարգևներ, նաև տույժեր ու պատիժներ են ստացել, ինչպիսին է նրանց ընտանեկան կացությունը և այլն: Այս ամենը հիմնականում շարադրվում է դեպքերի կատարման հաջորդականությամբ. ընտանեկան կացությունը սովորաբար նշվում է վերջում: Ինքնակենսագրությունը շարադրելիս, եթե հատուկ չի պահանջվում, չպետք է անդրադառնալ անկարևոր մանրամասնություններին, ավելորդ հուզականություն հաղորդել գրվածքին: Ինքնակենսագրությունը վարչական գրվածք է, և նրանում պետք է արտահայտված լինեն եական փաստերը:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է ինքնակենսագրությունը:
2. Ի՞նչ կառուցվածքով են շարադրվում փաստերն ինքնակենսագրության մեջ:

Վարժություն 23: Կարդացե՛ք գեղարվեստորեն գրված այս ինքնակենսագրության հատվածը, այնուհետև, օգտվելով եղած փաստերից, սեղմ շարադրե՛ք պաշտոնական գրության ձևով:

Մի անգամ մի երիտասարդ դերձակ պատահում է մի գեղեցիկ աղջկա: Նա տեղեկանում է, որ աղջիկը նույնպես կարել գիտե: Երիտասարդը որոշում է խնդրել այդ աղջկան, որ նա իր համար վերնաշապիկ կարի: Աղջիկը համաձայնում է:

Երբ վերնաշապիկը պատրաստ է լինում, աղջիկը խնդրում է, որ երիտասարդը բերի կոճակները:

Հաջորդ օրը երիտասարդը գալիս և բերում է կոճակները: Եվ երբ նա կոճակներով լի բուռը դատարկում է աղջկա ափի մեջ, աղջիկը շիկնում է: Կոճակների հետ երիտասարդը զգած է լինում մի ոսկյա մատանի: Մինչ աղջիկը նայում է այդ մատանուն, տղան արդեն անհայտանում է: Աղջիկը հասկանում է ամեն ինչ:

Այդ գիշեր աղջիկը երկար մտածում է և ի վերջո առավոտյան հայտնում է այդ դեպքի մասին իր մորը: Մայրն էլ իր հերթին պատմում է ամուսնուն:



– Աստված շնորհավոր անի, – որոշում են ծնողները, և երիտասարդ տղան ու աղջիկը ամուսնանում են:

Այդ դեպքը տեղի է ունենում սրանից ավելի քան յոթ տասնամյակ առաջ Իրանի Թավրիզ քաղաքում:

Եվ այդ ամուսնությունից ծնվում են ես:

Ասում են՝ իմ ծննդյան գիշերը՝ 1900 թվականի դեկտեմբերի 25-ին, քաղաքի վրա իջել էր ծանր ձյուն (այս իմ ծննդյան իսկական տարեթիվն է: Պաշտոնական փաստաթղթերում նշված 1902 թվականը զագսի բժշկական քննությունն է որոշել):

Երբ ես լույս աշխարհ եմ եկել, տատս մայրիկիս բարձի տակ դրել է մի շամփուր՝ վրան մի գլուխ սոխ անցկացրած, և օրորոցիցս կախել է կանաչ հուլունքների մի շարան: Շամփուրը բարձի տակ է դրել, որպեսզի չար ոգիները չմտենային ինձ, իսկ կանաչ հուլունքները օրորոցիս է կախել, որպեսզի ինձ աչքով չտան:

....Հասան օրերը, երբ ծնողներս ինձ պետք է դպրոց ուղարկեին: Ես չեմ կարողանում որոշել՝ արդյոք որևէ ավելի ուրախ օր եղե՞լ է իմ կյանքում, քան այն օրը, երբ ես ընդունվեցի մեր քաղաքի «Արամյան» դպրոցը:

....1917 թվականին, ավարտելով Թավրիզի «Արամյան» վեցդասյան դպրոցը, ես ուսումնա շարունակեցի Լոյն քաղաքի թեմական դպրոցում:Եվ ահա եկավ, հասավ դպրոցն ավարտելու ժամանակը՝ 1920 թվականի մայիսը: Ես և ընկերներս հրաժեշտ պետք է տայինք մեր դպրոցին, ուր մենք անց էինք կացրել մեր պատանեկությունը, երազներով լի կյանքը, մենք պետք է հրաժեշտ տայինք մեր ուսուցիչներին և մտնեինք կյանք՝ նրա հորձանուտների մեջ մաքառելու:

Եվ այսպես ես կյանք մտա: Ես այն երջանիկներից էի, որոնք միջնակարգ կրթությունն ավարտելուց հետո հնարավորություն ունեին որևէ տեղ աշխատանքի անցնելու: Ես իբրև ուսուցիչ հրավիրվեցի Մարաղա քաղաքի դպրոցում պաշտոնավարելու: Այսպիսով՝ 1920-21 ուսումնական տարվանից էլ սկսվեց իմ մանկավարժական գործունեությունը: Հաջորդ՝ 1921-1922 ուսումնական տարում, ես դարձյալ աշխատում էի իբրև ուսուցիչ, բայց այս անգամ Ղարաղաղի գավառի Վինան հայաբնակ գյուղում:

....Ես որոշել էի վաղուց փայփայած իմ երազը իրականություն դարձնել: Այն, ինչ ինձ չէր հաջողվել մի տարի առաջ, որոշել էի անպայման իրագործել և վերջնականապես հաստատվել Հայաստանում:

Եվ առիթը շուտով ներկայացավ:

Մի ամբողջ ամիս Երևանում մնալուց հետո ինձ ուղարկեցին Լենինական՝ ուսուցչության:

Գեղամ Մարյան

Վարժություն 24: Մեկ էջի սահմաններում գրե՛ք ձեր ինքնակենսագրությունը:

Վարժություն 25: Գրե՛ք «Ես և իմ ընտանիքը» թեմայով փոքրիկ շարադրություն:

Վարժություն 26: Գրե՛ք «Իմ ծննդավայրը» թեմայով փոքրիկ շարադրություն:

Պաշտոնական նամակ

Աշխատանքային գործունեության ընթացքում պաշտոնատար տարբեր անձինք միմյանց զանազան լուրեր են հայտնում: Այդ լուրերը նրանք հայտնում են մի շարք միջոցներով ու եղանակներով, որոնցից է նաև պաշտոնական նամակը: Պաշտոնական նամակը որոշակի ընդունված ձևով գրվող գրություն է, որը տարբեր տեղեկություններ հաղորդելու նպատակով պաշտոնատար մեկ անձից կամ կազմակերպությունից ուղարկվում է մյուսին: Պաշտոնական նամակները անձնական նամակներից տարբերվում են նրանով, որ գրության ավելի հստակ սահմանված ձևեր ունեն և գրվում են պաշտոնական որևէ ինդիք լուծելու նպատակով: Անձնական նամակներում հեղինակը ազատորեն անդրադառնում է այն հարցերին, որոնք ցանկանում է հայտնել նամակի միջոցով, կարող է գրել տարբեր մանրամասներ և այլն: Պաշտոնական նամակն ավելի գործնական բնույթ ունի, նրանում գրվում են միայն գործին առնչվող տեղեկություններ: Պաշտոնական նամակները բազմաբնույթ են՝ հարցման, պատասխանի, ինդրանքի, տեղեկատվական, առաջարկի, բողոքի, շնորհակալական, շնորհավորանքի, ցավակցական և այլն:

Պաշտոնական նամակում, բացի նամակի բուն բովանդակությունից, նշվում են ուղարկող կազմակերպության անվանումը, լրիվ հասցեն, սովորաբար նաև հեռախոսահամարը և հեռատիպի (ֆաքսի) համարը, նամակի գրանցման համարը, գրելու ամսաթիվը, հասցեատիրոջ անուն-ազգանունը, պաշտոնը, հասցեն, ուղարկողի անուն-ազգանունը, ստորագրությունը: Անհրաժեշտության դեպքում նամակին կարող են կցվել



Նամակի բովանդակության վերաբերյալ տեղեկատվություն պարունակող փաստաթղթեր:

Եղիշե Չարենցի նամակը՝ հայ մշակույթի գործիչ, «Գեղարվեստ» հանդեսի խմբագիր Գարեգին Լևոնյանին (1872–1947):

Հարգ. Գարեգին Լևոնյան,

«Գեղարվեստ»-ի հրատարակվելիք համարի համար ես ուղարկել էի Ձեզ «Էմալե պրոֆիլը Ձեր» խորագրով հինգ բանաստեղծություններ: Խնդրեմ այդ նյութերը չստացված համարեք. ես կուղարկեմ Ձեզ նոր նյութեր: Արշավիր Խոնդկարյանի մոտ ես ունեմ բանաստեղծությունների երկու տետրակ. ես գրել եմ նրան, որ նա այդ տետրակները հանձնի Ձեզ՝ ինձ ուղարկելու համար: Խնդրում եմ, պ. Լևոնյան, իմ այդ տետրակներն ընդունե՛ք Ձեզ մոտ, մինչև ես հնարավորություն ունենամ Ձեզանից ստանալու այդ տետրակները: Ուրիշ ծանոթներ ես չունեմ և չափազանց ներողություն եմ խնդրում, որ ծանօրոյթ եմ պատճառում Ձեզ այս իմ տաղտուկ դիմումներով:

Եթե Արշավիր Խոնդկարյանը հանձնեց Ձեզ իմ տետրակները, խնդրեմ նրանցից ոչինչ չհրատարակեք: Եթե ծանոթ մարդ եղավ այստեղ գալոդ, իմ բոլոր Ձեզ մոտ եղած նյութերը ուղարկեցե՛ք ինձ: Եթե ոչ, թող մնան Ձեզ մոտ, մինչև ես հնարավորություն ունենամ Ձեզանից ստանալու:

Ընդունեցե՛ք իմ ամենախորին հարգանքներս՝

Եղիշե Չարենց

Նորից խնդրում եմ ներեցե՛ք, որ ես ծանօրացնում եմ Ձեզ:

Ե. Չ.

Երևան, 1920, սեպտեմբեր

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է պաշտոնական նամակը:
2. Ինչո՞վ է տարբերվում պաշտոնական նամակը անձնական նամակից:
3. Ի՞նչ կառուցվածքով է գրվում պաշտոնական նամակը:

Վարժություն 27: Կարդացե՛ք Դերենիկ Դեմիրճյանի նամակը՝ ուղարկված Ղազարոս Աղայանի որդուն՝ երաժշտագետ Մուշեղ Աղայանին, որը 1925-1930թթ. սովորում էր Մոսկվայի կոնսերվատորիայում և Երևանի գիտության և արվեստի ինստիտուտի գեղարվեստական բաժնի գիտական բարտուղար Դ. Դեմիրճյանի հանձնարարությամբ հետևում էր Սպիրիդոն Մելիքյանի՝ Մոսկվայում տպագրվող «Վանա ժողովրդական երգեր» ժողովածուի հրատարակման աշխատանքներին:

30 սեպտեմբերի, 1926, Երևան

Ընկեր Մուշեղ Աղայանին

Խնդրում ենք հայտնել մեզ, թե Սպիրիդոն Մելիքյանի ժողովրդական երգերի տպագրությունը ինչ պայմաններով է հանձնված տպարանին: Նաև մեզ հարկավոր է իմանալ, թե քանի՞ էջ կթոնի թուղորթ, և արդյոք այնպե՞ս է պայմանավորված, որ տպագրությունը հարմարվի մեր ինստիտուտի տեղեկագրի դիրքին, որպեսզի կցվի նրան և միասին հրատարակվի: Ապա նաև գրեցե՛ք, թե քանի օրինակ է տպվում:

Առդիր ուղարկվում է Ձեզ տեղեկագրի էջը, որպեսզի նրա չափով էլ տպագրվեն երգերը:

Կլիշեները իբրև ինստիտուտի սեփականություն պետք է նկատել, ուստի և տպագրվելուց հետո խնդրում ենք ուղարկել մեզ:

Խնդրում ենք այս կետերի մասին մի տեղեկություն ուղարկեք մեզ:

Քարտուղար գեղարվեստական բաժնի՝

Դ. Դեմիրճյան

2. Գ. Խնդրում ենք նաև ուղարկել մեզ տպարանի ստացագիրը, ուր հիշված լինի, որ ստացել է 256 ո. Հայաստանի գիտություն և արվեստի ինստիտուտից՝ Սպ. Մելիքյանի երկերի տպագրության համար: Այս հաշիվը պիտի փակվի մինչև հոկտ. 15-ը, ուստի և խնդրում ենք շտապել:

Նույն

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՐՎԵՍՏԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վարժություն 28: Կարդացե՛ք Հովհաննես Թումանյանի նամակը Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերությանը: Վերլուծե՛ք պաշտոնականի և գեղարվեստականի համադրումը նամակում:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
1912թ. դեկտեմբերի 30

Թիֆլիս

Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության պ. պ. Նախաձեռնող-
ներին

Ազնի՛վ պարոններ

Շատ եմ ուրախ Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության բացման համար և առանց հրավերի էլ ես արդեն գալու էի՝ առաջնորդվելով իմ՝ դեպի երգն ու երաժշտությունն ունեցած մեծ սիրուց:

Դուք գիտեք, որ ես շատ եմ սիրում հին խոսքը: Եվ ահա մի հին զրույց, որ սիրել եմ առանձնապես, էսպես է ասում:

Պատահեց, ասում է, որ մի ժամանակ գազան դարձավ բլբուլ ռ. բանական մարդը: Ինչ արին-չարին, հնար չեղավ գազանը նորից մարդ դարձնելու: Վերջը հայտնվեց, որ հնարը միայն երգը-երաժշտությունն է: Էս զրույցը շատ է երկար, ես կարճն եմ ասում, բայց որ ասում եմ սիրել եմ առանձնապես, դրանից էլ կիմանաք, թե ինչ նշանակություն եմ տալիս երաժշտությանը:

Խորապես ցավում եմ, որ հիվանդության պատճառով չեմ կարողանում ներկա լինել առաջին ընդի. ժողովին: Խնդրում եմ ներկա համարեք և անդամ: Լիասիրտ շնորհավորում եմ Ընկ. բացումը: Բարով է գալիս Գրական Ընկ. հրաշալի քույրը, որ, արևմուտքի մշակված երգն ու երաժշտությունը մեր մեջ տարածելով հանդերձ, հատուկ կոչում ունի հավաքելու, ներդաշնակություն բերելու և զարգացնելու արևելքի



ու մեր ժողովրդի երգն ու երաժշտությունը – հարազատ ձայների կախարդական աշխարհքը:

Թող բացվի վարագույրը, թող հնչի նրա աստվածային ձայնը, և գազանը մարդ կդառնա:

Հովհ. Թումանյան

Բացատրագիր

Իրենց ուսումնական և աշխատանքային գործունեության ընթացքում մարդիկ երբեմն կատարում են արարքներ, որոնցով խախտում են տվյալ հաստատությունում կամ առհասարակ ընդունված որևէ կանոն, չեն կատարում իրենց պարտականությունները և այլն: Իրենց արարքի դրդապատճառները բացատրելու համար նրանք գրավոր բացատրություն, այսինքն՝ բացատրագիր են ներկայացնում վերադասին: Բացատրագիրը որևէ հաստատության աշխատակցի (նաև սովորողի) սահմանված ձևով գրվածք է՝ ուղղված վերադասին, որով աշխատակիցը բացատրում է աշխատանքային ընդունված նորմերը խախտելու իր դրդապատճառները:

Օրինակ՝ աշխատակիցը կարող է բացատրել, թե ինչ պատճառով է ուշացել աշխատանքից կամ չի ներկայացել աշխատանքի, ինչու է ուշացրել իրեն հանձնարարված աշխատանքի կատարումը և այլն: Բացատրագիրը հիմնականում գրվում է վերադասի պահանջով, սակայն կարող է գրվել նաև աշխատակցի նախաձեռնությամբ, եթե նա գտնում է, որ բացատրության, արդարացման, ճշմարտության վերհանման կարիք կա:

Բացատրագիրը գրվում է հետևյալ ձևով: Սկզբում նշվում է, թե ում է հղվում բացատրագիրը, այնուհետև գրվում է «բացատրագիր» բառը, որից հետո նշվում է, թե ինչի վերաբերյալ է բացատրություն տրվելու: Սրան հաջորդում է բացատրագրի բուն տեքստը: Վերջում նշվում են ամսաթիվը, բացատրություն գրողի պաշտոնը և անուն-ազգանունը: Ամսաթիվը կարող է գրվել նաև «բացատրագիր» բառից հետո եջի ձախ կողմում:



Երևանի համար 206 դպրոցի փճօրեն
սրին Կ. Հարությունյանին

Բացատրագիր

Համադպրոցական աշխատանքից բացակայելու
ձևաթիվ

Առջին փճակների ձևերի 15-ին «հարց տեսք»
առարկայից անցկացված համադպրոցական աշխա-
տանքին չներկայանալու պատճառով, հարձակվելով եւ
հեղեղելով: Ասորի 15-ին՝ առարկային, ուղեկցելով եւ
դպրոց, սակայն ձանձուղներին պետք էր ունենալ
գրագի վրայ, որի պարզապես տրվելուց յոթն
ժամանակով դադարեցրելով էր: Տրանսպորտի բացա-
կարգին պարզապես չէր կարողանալ ներկայանալ
համադպրոցական գրավոր աշխատանքին: Կարգ-
վածի ձևին հետևաբար, պետք էր պահել հա-
մադրարարներին՝ Այսպիսով, սակայն ձև
այդ ձևին դաստիարակները հարձակվել էր դասերից հետո:
Հարցի օրը ներկայանալով եւ դասի և կարգվածի
ձևին անցածը պետք էր դպրոցի ուսուցիչներին:

17. 03. 09

12-րդ «գ» դասարանի աշակերտների՝
(արտագրություն) Տարբերակ Գալստյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է բացատրագիրը և ի՞նչ նպատակով է գրվում:
2. Ի՞նչ պատճառներով է գրվում բացատրագիրը:
3. Ի՞նչ կառուցվածքով է շարադրվում բացատրագիրը:

Վարժություն 29: Գրե՛ք տարբեր իրավիճակների վերաբերող բացատրագրեր:

Բնութագիր

Երբ աշակերտները, ուսանողները, տարբեր հիմնարկների աշխատողները ուսումնական կամ աշխատանքային մի հաստատությունից տեղափոխվում են մյուսը կամ էլ սովորելիս, աշխատելիս ցանկանում են մասնակցել տարբեր մրցույթների ու ծրագրերի, նրանցից սովորաբար պահանջում են բնութագիր: Բնութագիրը սահմանված ձևով գրվածք է, որով ուսումնական հաստատության կամ աշխատանքային հիմնարկի ղեկավարը ներկայացնում է իր ենթակայությամբ աշխատողի կամ սովորողի ունակությունները, արժանիքները, մասնագիտական կարողությունները: Այսինքն՝ բնութագրվողը ներկայացվում է և՛ իր մարդկային, և՛ իր մասնագիտական հատկանիշներով:

ԲՆՈՒԹԱԳԻՐ

Անահիտ Հայկի Մուրադյանը՝ ծնված 2000 թվականի օգոստոսի 5-ին Երևան քաղաքում, 2006 թվականից սովորում է Երևանի համար 207 դպրոցում: Ուսումնառության տարիներին Ա. Մուրադյանը իրեն դրսևորել է որպես խելացի և կարգապահ աշակերտուհի: Նա միշտ պատրաստ է ներկայանում դասերին, ժամանակին կատարում է ուսուցիչների հանձնարարությունները: Ա. Մուրադյանը դասարանի ավագն է: Նա ակտիվորեն մասնակցում է տարբեր միջոցառումների կազմակերպմանը, աջակցում հասարակական աշխատանքներին:

Իր բարեհամբույր բնավորության և պարտաճանաչության շնորհիվ Ա. Մուրադյանը սիրված դասընկեր է, օրինակելի աշակերտուհի:

20. 10. 2009

Երևանի համար 207 դպրոցի
տնօրեն՝ (ստորագրություն) Վ. Գևորգյան

Բնութագրելու համար նշվում են կենսագրական որոշ տեղեկություններ, ուսումնական կամ աշխատանքային գործունեության արդյունքներ, և դրանց հիման վրա կատարվում են բնութագրող եզրակացություններ: Բնութագրի վերջում սովորաբար լինում է ամփոփիչ-ընդհանրացնող եզրահանգում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ է բնութագիրը:
2. Ի՞նչ նպատակով է տրվում բնութագիրը:
3. Ի՞նչ տեղեկություններ են նշվում բնութագրում:
4. Ի՞նչ կառուցվածքով է շարադրվում բնութագիրը:

Վարժություն 30: Գրե՛ք բնութագրեր ձեզ ծանոթ տարբեր անձանց մասին:

Վարժություն 31: Գրե՛ք շարադրություն «Իմ ընկերը» կամ «Իմ ընկերուհին» վերնագրով:

Տեղեկանք

Տեղեկանքը որևէ փաստ, գործունեություն, իրադարձություն հաստատող փաստաթուղթ է: Տեղեկանքներ իրավասու են տալու միայն պաշտոնատար անձինք: Նրանք տեղեկանքով իրենց ղեկավարած կազմակերպության աշխատողների կամ տվյալ կազմակերպությանն առնչվող մարդկանց մասին տեղեկություններ են հայտնում հաստատելով այդ տեղեկությունը: Օրինակ՝ դպրոցի տնօրենը աշակերտին կարող է տեղեկանք տալ, որով հաստատում է, որ նա տվյալ դպրոցի աշակերտ է: Տեղեկանքը գրվում է հետևյալ ձևով: Սկզբում նշվում է «տեղեկանք» բառը, այնուհետև գրվում է, թե ում է տրվում տեղեկանքը, հայտնվում է անհրաժեշտ տեղեկությունը, որից հետո նշվում է, թե ուր է ներկայացվելու տեղեկանքը: Հետո գրվում են ամսաթիվը և տեղեկանք տվող անձի վերաբերյալ տվյալները: Հիմնարկներում սովորաբար լինում են տեղեկանքների մշակված ձևաթերթեր, որոնց վրա լրացվում են անհրաժեշտ տվյալները:

ԳՐԱԴԱՐԱՆ



ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է Տիգրան Արմենի Ազատյանին առ այն, որ նա Երևանի համար 203 դպրոցի 6-րդ «դ» դասարանի աշակերտ է:

Տրվում է ներկայացնելու Երևանի համար 98 նկարչական դպրոց:

Երևանի համար 203 դպրոցի
